

Ա. Գ. ԱՔԻԱՆԿԱՄՅԱՆ



ԱՅ ԳՐԻ
ԵՎ ԳՐՉՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ա. Գ. ԱՅՐԱՏԱՄՅԱՆ



ԱՅ ԳՐԻ
ԵՎ ԳՐՉՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



Հ Ա Յ Գ Ե Տ Հ Ր Ա Տ
ԵՐԵՎԱՆ 1959

АБРАМЯН АШОТ ГАРЕГИНОВИЧ

**История армянского письма
и письменности**

(на армянском языке)

Армянское государственное издательство

(Айпетрат),

Ереван, 1959

**Նվիրում եմ
հայ գրի և գրչության
բազմավաստակ սեղծողի՝
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ
ծննդյան 1600-ամյակին:
ՀԵՂԻՆԱԿ**

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Հին մատենագրութիւնն ունեցող բոլոր ժողովուրդներն ունեն իրենց գրի պատմութիւնը: Եգիպտական, ասորական, հունական, լատինական, արաբական, չինական, սլավոնական և այլ ժողովուրդների գրերի պատմութեան մասին կան հարյուրավոր ուսումնասիրութիւններ: Հայ ժողովուրդը, որը գտնվում է հին և զարգացած մատենագրութիւնն ունեցող ժողովուրդների շարքում, հասկանալի է, չի կարող թերանալ այս ասպարեզում:

Գրականութեան և կուլտուրայի աննախընթաց վերելքը Սովետական Հայաստանում հրամայական պահանջ են դրել աղբյուրագիտութեան առջև՝ հայագիտական օժանդակ որոշ առարկաների, այդ թվում նաև հայ հնագրութեան (պալեոգրաֆիայի) ստեղծման համար: Պատմութեամբ, գրականութեամբ և գիտութիւնների պատմութեամբ զբաղվող գիտական աշխատողները, ուսանողները, պատմութեան և գրականութեան դասատուները, հասկանալի է, առանց հնագրութեան համապատասխան ուղեցույցների, չեն կարող բավարար չափով օգտվել սկզբնաղբյուրներից: Օրավոր աճող և բազմապատկվող մտավորականութեան անհայտ պահանջները բավարարելու նպատակով է, որ մենք պատրաստել և հրատարակութեան ենք հանձնել «Հայ գրի և գրչութեան պատմութիւն» ներկա աշխատութիւնը:

Հնագրութիւնը համարվում է պատմութեան, գրականութեան և գիտութիւնների պատմութեան օժանդակ առարկաներից մեկը: Հնագրութեան դերն է՝ օգնել ուսումնասիրողներին գրավոր սկզբնաղբյուրները ճիշտ վերծանելու գործում: Նա ուսումնասիրողների ձեռքում լուրատեսակ բրիչ է՝ փորփրելու սկզբնաղբյուրները՝ նրանցից արժեքավորները լույս աշխարհ հանելու և գիտութեանը հարազատորեն ներկայացնելու համար:

Հնագրութիան առարկան բաղկացած է մի քանի մասեր դաս-
 րնթացներից: Հնագրութիան բաղկացուցիչ մասերն են կազ-
 մում դրամագիտությունը (նումիզմատիկա), որն ուսումնասիրում
 է դրամների վրա եղած գրությունները, վիմագրությունը (էպի-
 գրաֆիկա), որն ուսումնասիրում է վիմագիր արձանագրություն-
 ները, գրչագրությունը (մանուսկրիպտիկա), որն ուսումնասիրում
 է ձեռագիր գրությունները, վավերագրությունը (դիպլոմատիկա),
 որն ուսումնասիրում է արխիվային պաշտոնական գրագրությունը,
 կնքագիտությունը (սֆրագիտիկա), որն ուսումնասիրում է կնիք-
 ների վրա եղած գրությունները, և այլն:

Հայկական հնագրութիան ուսումնասիրութիան ամենակարևոր
 սկզբնաղբյուրները հանդիսանում են գրչագիր գրությունները (ձե-
 ոագրերը): Ձեռագիր են կոչվում հնում և միջին դարերում ձեռքով
 գրված ոչ թե ամեն մի թերթ կամ պատառիկ, այլ հարյուրավոր
 էջերից բաղկացած ստվարածավալ ամբողջական գրքերը, որոնք
 մեծ մասամբ, լինում են տախտակյա կաշեպատ կազմերով:

Մեզ հասած հայկական ձեռագրերի թիվն աշխարհում հաս-
 նում է մոտ 25.000-ի: Նշված թվի մեջ չեն մտնում ձեռագիր
 պատառիկները և պահպանակները, որոնք ամբողջական բնագրեր
 չեն, այլ կորած կամ ոչնչացած ձեռագրերի անգամահատված ներ-
 կախուցուցիչները: Այդ թվի մեջ չեն մտնում նաև այն ձեռագրերը,
 որոնք գրված են 18-րդ դարից հետո:

Դժբախտաբար, այժմ պահպանված ձեռագրերը մեր ունեցած
 երբեմնի հարուստ գրադարանների խղճուկ բեկորներն են միայն:
 Անցյալի գրադարանների հազարավոր ու հազարավոր հարուստ ժո-
 զովածուներ ժամանակի ընթացքում կողոպտվել են Հայաստան
 խուժած օտարերկրյա ավարառուների կողմից: Հայտնի են շատ
 դեպքեր, երբ նվաճողները նպատակադրված ձևով ոչնչացրել են
 հազարավոր ձեռագրեր: Ի դեպ, նրանք ալդպես են վարվել ձեռա-
 գրերի հետ ո՛չ միայն Հայաստանում, այլև իրենց գրաված բոլոր
 երկրներում: Հայտնի փաստ է, որ 640 թվականին Պալիֆաթի
 զորքերը, Աղեքսանդրիան շրջապատած ժամանակ, երբ դիմել են
 Ամր խալիֆին և հարցրել, թե ինչպես վարվել ավար վերցրած
 հունարեն ձեռագրերի հետ, նա պատասխանել է. «Եթե հունաց գր-
 քերը մեր ղուրանին համաձայն են, ավելորդ են, և պետք չէ պա-
 հել, իսկ թե մեր դեմ են խոսում, ուրեմն միասակար են,
 պետք է ոչնչացնել»¹: Այդ հրամանից հետո հազարավոր ձեռա-

¹ «Բագմավէպ», 1851, էջ 173:

գրեր բաժանել են բաղնիքներին, որպես վառելանյութ օգտագործելու համար:

Վալրենի այս մտայնութիամբ Հայաստանի նվաճողները հաճախ են փորձել ոչնչացնել ու շնչել հալ ժողովրդի ստեղծած այն բոլոր արժեքները, որոնք խորթ են եղել իրենց ըմբռնումներին: XIII դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը վկայում է, որ սելջուկները 1170 թվականին Տաթևի վանքը գրավելիս, նրա գրադարանում ոչնչացրել են ավելի քան 10000 ձեռագիր¹:

Մեծ թվով ձեռագրեր փչացել են նաև անշնորհք պահպանման հետևանքով: Ականատես մի անձնավորություն պատմում է, որ 1778—1799 թվականների միջև ընկած ժամանակամիջոցում Հաղբատի ս. Նշան վանքում Պետրոս անունով մի կրոնավոր, վանքը «մաքրելու» նպատակով, հավաքել է այնտեղի գրադարաններում եղած քայքայված ձեռագրերը, դարսել զանգակատան առջև ու, կազմելով 10—12 ոտնաչափ բարձրությամբ մի շեղջ, այլել է «Իբրև անպիտան» գրականություն²: Ջարմանալի չէ, որ Հաղբատի վանքի ձեռագրական հարուստ ժողովածուից, որը պահվելիս է եղել լոթ տարբեր սրահներում, մեզ հասել են միայն աննշան բեկորներ:

Հնում ավելի անփութ են վարվել առանձնապես վավերագրերի հետ: Ըստ Թաղիադյանի վկայությամբ, 1824 թվականին, երբ Կաթողիկոսական արխիվը ցանկացել են էջմիածնից Հաղբատ տեղափոխել, նրա միջից ընտրել են միայն գրամական արժեք ունեցող վավերագրերը, իսկ մյուսներն այլել են որպես անպետք թղթեր³:

Մեզ հասած ձեռագրական անգնահատելի ժառանգությունը, դժբախտաբար, ցրված է աշխարհով մեկ: Կարելի է ասել, որ երկրագնդի վրա չկա մի անկյուն, շատ թե քիչ խոշոր մի գրադարան, ուր կարելի չլինի գտնել հայկական ձեռագրեր: Միջին դարերում, մեր երկրում ստեղծված ծանր պայմանների հետևանքով, հալ ժողովրդի որոշ հատվածները թողել են իրենց հայրենի հողը և «գորէնս աստեղաց մոլորական կոչեցելոց», ինչպես պատկերավոր բնորոշել է հալ ողբերգակ պատմիչ Արիստակես Հաստիվերտցին, տարագրության ցուպը վերցրած, ցրվել են աշխարհով մեկ. ցրված

¹ Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1910, էջ 336:

² «Բազմավէպ», 1956, էջ 109—110:

³ Ճանապարհորդութիւն Մեսրոպրայ Դ. Թաղիադեանց... ի Հայս, հատ. I, Կալկաթա, 1847, էջ 333:

հայության հետ միասին ցրվել են նաև հայկական ձեռագրերն ու կուլտուրական արժեքները: Արտասահմանյան հայկական գաղթավայրերում հալ ձեռագրերի արտագրման աշխատանքները չեն դադարել, այլ շարունակվել են: Տարիներ առաջ, հայկական ձեռագրերի հիշատակարանների հիման վրա, երբ մենք ցանկացանք կազմել հալ գրչության օջախների տեղագրությունը, ապա հարկ եղավ գծել ողջ աշխարհի քարտեզը: Պարզվեց, որ հայերեն շատ ձեռագրեր են գրվել Հնդկաստանում, Չինաստանում, Եգիպտոսում, Լեհաստանում, Գիպրոսում, Ճավա կղզում և հեռավոր այլ վայրերում:

Հայկական ձեռագրերի մի մասը գտնվում է անհատների մոտ, իսկ ավելի մեծ մասը կենտրոնացված է Թանգարանների կամ գրադարանների ձեռագրական ժողովածուների մեջ:

Հալ ձեռագրական ամենախոշոր ժողովածուն գտնվում է Հայկական ՄՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Մատենադարանում, որն ունի մոտ 10000 ձեռագիր¹: Ձեռագրական այս ժողովածուն միայն Էջմիածնի նախկին ժողովածուից չի կազմված, ինչպես սխալմամբ կարծում են որոշ հայագետներ: Էջմիածնի ձեռագրական ժողովածուից բացի, նրա մեջ մտել են Ներսիսյան դպրոցի, Լազարյան ճեմարանի, Տաթևի, Սևանի և մի քանի մանր այլ ժողովածուներ: Բացի այդ, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևմտյան Հայաստանից բերվել են բավականին թվով ձեռագրեր, որոնք նույնպես հանձնվել են Մատենադարանին: Իսկ վերջին տարիներս Մատենադարանի վարչությունը մասնավոր գնումների և նվիրատվությունների ճանապարհով ավելի է հարստացրել Մատենադարանի ձեռագրական ժողովածուն:

Հայկական երկրորդ խոշոր ժողովածուն գտնվում է Վենետիկի Մխիթարյանների մոտ՝ Ս. Ղազար կղզում: Այստեղ պահվում է ավելի քան 4000 ձեռագիր, որից միայն 318 ձեռագրի նկարագրությունն է լույս տեսել Հ. Բարսեղ Սարգիսյանի կազմած Վենետիկի ձեռագրաց «Մալր ցուցակ»-ում:

Հայկական ձեռագրերի մեծ հավաքածու ունի Երուսաղեմի Ս. Հակոբյանց միաբանությունը (Երուսաղեմի Ազգային Պատրիարքարանը), որի ժողովածուն պարունակում է մոտ 4000 ձեռագիր: Այս հավաքածուի ձեռագրաց ցուցակը հրատարակվում է այժմ. առաջին հատորը հրատարակել է Արտավազդ Կախկոպոս Սյուր-

¹ Ձեռագրական այս ժողովածուի, ինչպես և հետո հիշվող մյուս բոլոր ժողովածուների ձեռագրաց ցուցակների ցանկը բերել ենք աշխատության հավելվածում:

մեկանը, իսկ մյուս հատորները ձեռնարկել ու հրատարակում է Նորայր եպիսկոպոս Պողարյանը, որը լույս է ընծայել երկրորդ, երրորդ և չորրորդ հատորները:

Կարևոր է Նոր Զուգայի Ամենափրկիչ վանքի մատենադարանի հավաքածուն, որը բաղկացած է շուրջ 1000 ձեռագրից: (Այս հավաքածուի 580 ձեռագրի նկարագրութիւնը ժամանակին կատարել է պրոֆ. Ս. Վ. Տեր-Ավետիսյանը: Այս ցուցակը, ձեռագիր վիճակում, այժմ պահվում է Հայկական ՍՍՌ Գիտութիւնների ակադեմիայի Պատմութիւն ինստիտուտի արխիվում):

Ձեռագրական արժեքավոր մի Հավաքածու գտնվում է Վիեննայի Մխիթարյանների մոտ: Այդ ժողովածուն կազմված է մոտ 1200 ձեռագրից, որից 573-ի նկարագրութիւնը հրատարակել է Հ. Հակոբոս Տաշյանը՝ իր կազմած Վիեննայի ձեռագրերի արժեքավոր ցուցակում:

Բացի նշված ձեռագրական հավաքածուներից, ձեռագրական փոքրիկ ժողովածուներ կան նաև Լոնդոնի Բրիտանական թանգարանում (ձեռագրերի ցուցակը հրատարակել է Ֆ. Կոնիքերը), Փարիզի Ազգային գրադարանում (ձեռագրերի համառոտ ցուցակը հրատարակել է Ֆրեդերիկ Մակլերը), Վրաստանի Պետական թանգարանում, որն ունի 207 ձեռագիր, Լենինգրադի Արեւելագիտութիւն ինստիտուտի գրադարանում, որն ունի 316 ձեռագիր, Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան հանրային գրադարանում, որն ունի 90 ձեռագիր, Օքսֆորդի Բողեյան գրադարանում (այստեղ գտնվող 132 ձեռագրի մանրամասն նկարագրութիւնը կատարել են Կոնիքերը և Ս. Պարոնյանը, որոնց ցուցակը հրատարակվել է, և Տիրայր եպիսկոպոսը, որի ձեռագիր ցուցակը գտնվում է Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանում), Զմմառի միաբանութիւն գրադարանն ունի մոտ 200 ձեռագիր: Բացի այդ, հայերեն ձեռագրեր ունեն նաև Անթիլիասի մատենադարանը, Կոստանդնուպոլսի Ազգային Պատրիարքարանի գրադարանը և այլ գրադարաններ:

Վերջին տարիներս հայկական շատ ձեռագրեր, տարբեր ճանապարհներով, կենտրոնանում են Ամերիկայ Միացյալ Նահանգների Նյու-Յորք, Վաշինգտոն և Ֆրեզնո (Կալիֆոռնիա) քաղաքների գրադարաններում և մասնավոր մարդկանց մոտ: Համաշխարհային առաջին պատերազմի սարիներին Արևմտյան Հայաստանում հայերից խլված ձեռագրերն այժմ Թուրքիայում վաճառքի են հանվում. նրանց մեծ մասը գնվում և տեղափոխվում է Ամերիկա:

Հալ հնագրութիւն ուսումնասիրութիւն մյուս կարևոր աղ-

բյուրը վիմագրութունն է: Վիմագիր արձանագրութունները ցրված են ինչպես պատմական Հայաստանի տերիտորիայում, այնպես էլ սփյուռքի հալ գաղթավայրերում: Վիմագրերը մեզ հանդիպում են եկեղեցիների, վանքերի և այլ հուշարձանների պատերին, ինչպես և տապանաքարերի և խաչարձանների վրա:

Հայկական վիմագրերի քանակը, նույնիսկ մոտավոր ձևով, ճշտված չէ: Հայագետների կողմից տարբեր ժամանակներում հրատարակած վիմագրական ժողովածուները չեն տալիս հալ հնագրութիան ամբողջական պատկերը: Հրատարակված վիմագրական ժողովածուներից ու աշխատություններից, այնուամենայնիվ, ուշագրութիան արժանի են՝ Կ. Կոստանյանի «Վիմակա տարեգիր» ժողովածուն, պրոֆ. Կ. Ղաֆազարյանի «Հովհաննավանքի վիմագիր արձանագրութունները», Մեսրոպ եպիսկոպոսի Երուսաղեմում հրատարակած Տաթևի վանքի վիմագիր արձանագրութունները, Գ. Կաթողիկոս Հովսեփյանի «Պոռչյանք կամ Խաղաղականք»-ում հրատարակված Վալոց Ձորի որոշ վիմագրերը, ակադ. Հ. Օրբելու կողմից «Христианский Восток»-ում տեղավորված արձանագրութունները և այլն: Հայկական առանձին վիմագրեր հրատարակվել են «Հանդէս ամսօրեայ»-ում, «Արարատ»-ում, «Էջմիածին» ամսագրում, «Բագմավէպ»-ում, «Սիրոն»-ում և հայկական այլ պարբերականներում: Այժմ հայկական վիմագրերի հավաքման և հրատարակութիան գործով լուրջ զբաղվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի հնագիտության սեկտորը: Ակադեմիկոս Հ. Օրբելին արդեն հրատարակության է հանձնել Անիի վիմագիր արձանագրութունների մեծարժեք ժողովածուն: Պատմական գիտ. թեկ. Ս. Բարխուդարյանը հրատարակում է Սյունիքի վիմագիր արձանագրութունների առաջին ժողովածուն: Հրատարակության է պատրաստված նաև մեծանուն գիտնական, ակադ. Հ. Աճառյանի «Հայարձան»-ը, որը պարունակում է հայկական արձանագրութունները սկզբից մինչև 1550 թվականները:

Հայկական հնագրության համար հարուստ նյութեր են պարունակում նաև պատմական արժեք ներկայացնող վավերագրերը, որոնք, համեմատաբար, ավելի նոր են: Միջին դարերում հայկական պետականության բացակայությունը և վավերագրերի նկատմամբ գոյություն ունեցող անփութ վերաբերմունքը հին հայկական վավերագրերի մեծագույն մասի կորստյան պատճառ են դարձել:

Մեզ հասած հին վավերագրերը բնագրեր չեն, այլ պատճեններ: Այս կարգի վավերագրերից կարելի է մատնացույց անել «Գիրք

թղթոց» վավերագրերի ժողովածուն: Հայ պատմիչների աշխատութիւնների մեջ ևս մեկ-մեկ բերվում են առանձին վավերագրերի պատճեններ: Ինքնագրերով վավերագրեր մեզ հասել են միայն XIV—XV դարերից:

Վավերագրերի մի քանի հարյուր հազար ժողովածու գտնւրվում է Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանում: Ավելի նոր շրջանի՝ XVIII—XX դարերի միլիոնավոր հայերեն վավերագրեր կենտրոնացված են Երևանի, Թբիլիսիի, Բաքվի, Մոսկվայի, Լենինգրադի և Սովետական Միութեան այլ քաղաքների արխիւներում: Վավերագրերի փոքրիկ հավաքածուներ կան նաև Վատիկանի, Վենետիկի, Վիեննայի և Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի գրադարաններում և այլն:

Համեմատաբար քիչ են դրամների վրա եղած հայերեն գրութիւնները, որովհետև հին շրջանում հալ թագավորներն իրենց դրամները դրոշմել են հունարեն տառերով: Հայկական գրութիւններով դրամներ գրոշմել են միայն Գիլիկյան հայկական թագավորութեան շրջանում:

Հայկական դրամներին նվիրված ուսումնասիրութիւններից արժեքավոր են Ատրպետի ուսումնասիրութիւնները, որոնք հրատարակված են «Ազգագրական հանգէս»-ում, Վիտոր Լանգուայի «Numismatique générale de l'Arménie» աշխատութիւնը, որը լույս է տեսել 1859 թվականին, և Կ. Բասմաշյանի «Հայկական ընդհանուր դրամագիտութիւն, Հայաստանի վերաբերյալ դրամներ» արժեքավոր աշխատութիւնը, որը լույս է տեսել Վենետիկում 1936 թվականին, շնորհալի դրամագետ Կարապետյանի մի շարք ուսումնասիրութիւնները՝ «Հասկ»-ում, «Բազմավէպ»-ում և այլ պարբերականներում:

Անհամեմատ ավելի քիչ են կնիքների վրա եղած հայկական գրութիւնները: Հայկական կնիքներն ընդհանրապես մեզ քիչ են հասել. կնքված վավերագրերը ավելի նոր շրջանի են. նրանք շատ են առանձնապես XVII—XVIII դարերից:

Իրութիւնների ահա այս բոլոր տեսակները հնագրութեան ուսումնասիրութեան նյութն են հանդիսանում:

Ի՞նչ հիմնական խնդիրներ է դնում իր առջև հայկական հնագրութիւնը:

Հայկական հնագրութեան հիմնական խնդիրն է նախ պարզել ուսումնասիրութեան ենթակա ձեռագրերի, վավերագրերի կամ վիճագիր արձանագրութիւնների հարազատութիւնը և նրանց ժամանակը:

Հնագրություն մյուս կարևոր խնդիրն է՝ օգնել ուսումնասիրողին՝ բնագրերի վերծանության գործում: Հայտնի է, որ հին և միջին դարերում գրությունների մեջ գործ են ածվել բազմաթիվ պատվագրություններ, գաղափարագրեր, ժածկագրություններ, հակական տառանիշերով թվեր ու թվականներ, ուղղագրական և կետագրական տարբեր ձևեր և այլն: Հնագրության պարտքն է՝ ուղեցույց հանդիսանալ այս բոլոր դժվարությունները հաղթահարելու համար:

Եվ, վերջապես, հնագրության խնդիրն է, համեմատական ուսումնասիրության հիման վրա, վերականգնել ձեռագրերի ընդօրինակման ժամանակ բնագրերում թույլ տրված աղավաղումները Պետք է ասել, որ գրչական աղավաղումները, մանավանդ ոչ կրոնական-կանոնական տեքստերում, բավականին շատ են: Այդ աղավաղումների մի մասն ատաջանում է անզգուշ ընդօրինակության հետևանքով, իսկ մյուսը՝ խմբագրական և սրբագրական միջամտությունների պատճառով: Ընդօրինակող գրիչն իրավունք է համարել հին տեքստն արտագրել իր ժամանակի ուղղագրությամբ, չհասկացած բառերն ու նախադասությունները երբեմն բաց թողնել կամ ընդօրինակել իր «շտկում»-ներով և այլն:

Հնագրությունն օգնում է նաև պարզելու, թե նախադադափար ձեռագրի համեմատությամբ ինչ բառեր կրկնված են կամ ի՞նչ բառեր անզգուշությամբ բաց են թողնված:

Հնագրությունն իր գիտական ընդհանրացումներն անում է թվական ունեցող և ճշտորոշված տեքստերի հիման վրա, պարզում է նրանց առանձնահատկություններն ըստ ժամանակաշրջանների և գրչության դպրոցների ու այդ փորձի հիման վրա որոշում անթվագիր ձեռագրերի ժամանակն ու վավերականությունը:

Մի քանի խոսք հալկական հնագրության առարկայի պատմության մասին:

Հայկական հնագրությանը վերաբերող առանձին հարցեր հալ մատենագրության մեջ առաջ են քաշվել դեռևս հին հալ քերականների մոտ: Հայկական տառատեսակների և նրանց գրչական առանձնահատկությունների մասին հատվածներ կան Մովսես Քերթոզին, Դավիթ Անհաղթին և Մամբրե Վերծանողին վերագրված Դիոնիսիոս Թրակացու Քերականության հայերեն մեկնությունների մեջ: Հնագրության որոշ հարցեր առաջ են քաշված նաև Ստեփանոս Սյունեցու (VIII դար), Համամ Արևելցու (IX դար), Գրիգոր Մագիստրոսի (XI դար), Վարդան Արևելցու (XIII դար), Հովհաննես.

Երզնկացու (XIV դար) և մի քանի այլ հայ հեղինակների քերականութիւնների մեջ¹:

Հայ հնագրութիւնը վերաբերող ընդարձակ հատվածներ է պարունակում XII դարի հայ գրչութիւնն ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Արիստակես Գրչի, Կիլիկիայում ընդօրինակած «Վերլուծութիւնք բացերևապէս բայից և բառից» վերնագրով աշխատութիւնը, որը հեղինակը գրել է հայ գրչութիւնը զբաղվողների խնդրանքով՝ «ի խնդրոյ բազմաց՝ յարհեստ գրչութեան»:

Արիստակես Գրչի այս աշխատութիւնը լրացրել և մեկնել է Գևորգ Սկևոացին (XIII դար)՝ Ստեփանոս Գուլներեցանց նշանավոր մատենագրի հանձնարարութիւնը: Գևորգ Սկևոացու այս աշխատութիւնն վերնագրին է՝ «Երաւտ գրչութեան»:

Արիստակես Գրչի և Գևորգ Սկևոացու աշխատութիւնները, չնայած հիմնականում հանդիսանում են ուղղագրական ձեռնարկներ, սակայն քանի որ միջին դարերում ուղղագրութիւնը ևս հնագրութիւնն առարկայի մասն էր կազմում, ուստի և տարօրինակ չէ, որ նա վերնագրվել է «Երաւտ գրչութեան»:

Արիստակես Գրչի և Գևորգ Սկևոացու հայ գրչութիւնն արվեստի մասին գրած այս աշխատութիւնները XV դարում մեկնել է Գրիգոր Տաթևացին՝ Գլաձորի համալսարանի ականավոր ուսուցչապետը: Վերջինիս մեկնութիւնը վերնագրված է՝ «Լուծմունք դժուարիմաց բանից ի գիրս գրչութեան՝ որ յԱրիստակիսի և Գևորգայ Սկևոացւոյ»: Հայ գրչութիւնն արվեստը միջին դարերում համարվել է ուղեկոչող, կողմնորոշող գիտութիւն՝ «Քանոն և գաղափար ամենայն արուեստից», ինչպես հաճախ հիշվում է այդ բնագրերը պարունակող ձեռագրերի հիշատակարաններում: Հայ գրչութիւնն արվեստը պարտադիր կարգով դասավանդվել է դպրոցներում: Մեզ է հասել 1357 թվականին Դրիմի Սուրխաթ քաղաքում ընդօրինակված մի ձեռագիր, որի գրիչ Ստեփանոսը իր հիշատակարանում գրչութիւնն արվեստի մասին հետևյալն է գրել (բերում ենք թարգմանաբար). «Ինչպես անհնար է թոչուններին լուծ քաշել և ակոս բաց անել, կամ եզներին՝ թռչել օդում, այնպես և առանց գրչութիւնն արվեստի հետ ծանոթ լինելու, ոչ ոք կարող է հասկանալ գրչութիւնն մեծ արվեստի էութիւնը: Եվ եթե նման

¹ Հայ քերականների աշխատութիւնների մեծ մասը հավաքել և հրատարակել է պրոֆ. Ն. Ազոնցը ռուսերեն թարգմանութեամբ իր «Дюнисиі Фракийский и армянские толкователи, վերնագրով արժեքավոր աշխատութիւնն մեջ, որը լույս է տեսել Գետերբուրգում 1916 թվականին:

մեկը հանդգնի, չի կարող գլուխ բերել այն, այլ կփշացնի արվեստը և կաղավաղի գրածը: Նա նման կլինի անվարժ այն մսագործին, որը մորթում է անասունը, բայց մաշկը չգիտի»¹:

Հայ հնագրությունը գիտական տեսանկյունով մշակվել է նոր ժամանակներում: Առաջին հեղինակը, որ մասնագիտորեն ուսումնասիրել է հայ հնագրությունը և կազմել նրա դասընթացը, հանդիսացել է Հ. Տաշյանը: Նրա աշխատությունը վերնագրված է. «Ալեքանդր մը հայ հնագրության վրա»:

Հետաքրքիր է Տաշյանի հայ հնագրության դասընթացը կազմելու շարժառիթը. Շուխարդ անունով ավստրիացի մի գիտնական Նգիպտոսում հայտաբերում է հայատառ հունարեն մի պապիրոս և նրա վերծանության կապակցությամբ դիմում է Հ. Տաշյանին մի ընդարձակ հարցացուցակով՝ հայկական հնագրության տեսակների, նրանց գործածության ժամանակների և հայ հնագրությանը վերաբերող այլ հարցերի մասին պատասխան ստանալու համար: Հ. Տաշյանը մանրամասն գրում է Շուխարդի հարցումների պատասխանը և հրատարակում այն «Հանդէս ամսօրեայ»-ում, իսկ հետո, 1898 թվականին, արտատպում առանձին գրքով: Տաշյանն իր այդ արժեքավոր աշխատության մեջ կանգ է առել հայկական գրի տեսակների, նրանց գործածության ժամանակի, հայկական կրկնագրերի, բառատրոհության, կետադրության փոփոխությունների և այլ հարցերի վրա:

Հայկական հնագրության առանձին հարցեր և թեմաներ, ժամանակակից գիտական պահանջների համաձայն, բավականին հաջող ուսումնասիրել է բանասեր Իսահակ Հարությունյանն իր «Հայոց գիրը» աշխատության մեջ, որն արժանացել է Սահակ-Մեսրոպյան մրցանակաբաշխության և հրատարակվել 1892 թվականին:

Հայ գրի պատմության համար մեծարժեք գործ է հանդիսանում Գարեգին վարդ. Հովսեփյանի «Գրչության արվեստը հին հայոց մեջ» աշխատությունը, որը լույս է տեսել նախ 1913 թվականին հայկական գրի 1500-ամյակի կապակցությամբ էջմիածնում հրատարակված «Շողակաթ» անունով ժողովածուում, ապա արտատրվել առանձին գրքով: Հովսեփյանը նշված՝ աշխատության մեջ հայկական վիմագրերից և ձեռագրերից բերել է 95 լուսանկար-տախտակներ և աշխատել է ցույց տալ հայկական գրի աստիճանական զարգացումը:

Հայկական հնագրության ուսումնասիրության գործում ան-

¹ ՀԳՄ ձեռ. № 2371, Թ. 292ա:

գնահատելի վաստակ ունի նաև թեժանուն գիտնական ակադեմիկոս Ն. Աճառյանը՝ իր «Հայոց գրեքը» աշխատությամբ, որը շարադրել է 1905 թվականին, բայց հրատարակել բավականին ուշ՝ 1927 թվականին, «Հանդէս ամսօրեայ»-ում, որից և արտատպվել է առանձին գրքով 1928 թվականին: Ակադեմիկոս Ն. Աճառյանը, իրեն հատուկ գիտական բարեխղճությամբ, ուսումնասիրել է հայ հնագրության բազմաթիվ հարցեր՝ Հայաստանի նախաքնիկների գրությունները, դանիելյան գրերը, մեսրոպյան գրերը և նրանց զարգացումը, հայկական մատենագրության մեջ գործածված գաղափարագրերը, ծածկագրերը և այլն:

Վերջին տարիներս լույս տեսած աշխատություններից ուշադրության արժանի է պրոֆ. Կ. Ղաֆադարյանի «Հայկեղան գրի սկզբնեղան տեսակները» վերնագրով ուսումնասիրությունը, որը լույս է տեսել Երևանում 1939 թվականին: Այս աշխատության մեջ առանձնապես արժեքավոր է կապգրության մասին եղած բաժինը, որը հեղինակը կազմել է վիմագրության ուշադիր ուսումնասիրության հիման վրա:

Հայ հնագրության հետ որոշ չափով առնչվում է բանասեր Գ. Լեոնյանի «Հայ գիրքը և տպագրության արվեստը» խորագրով աշխատությունը, որը լույս է տեսել Երևանում նախ 1946 թվականին, ապա վերահրատարակվել 1958 թվականին:

Հայ գրչության ատաղձը և նրա նախնական ձևերը պարզաբանելու հարցում արժեքավոր ներդրում է հանդիսանում Ն. Ն. Ակինյանի «Հայերեն այբուբենի գյուտը» վերնագրով ուսումնասիրությունը, որը հրատարակվել է «Հանդէս ամսօրեայ»-ի 1938 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր միացյալ համարներում (էջ 289—318):

Մենք ևս հրատարակել ենք երկու փոքրիկ աշխատություն, որոնցից առաջինը լույս է տեսել 1940 թվականին «Համառոտ ուրվագիծ հայկեղան պալեոգրաֆիայի» վերնագրով, իսկ երկրորդը՝ 1949 թվականին «Հայկեղան պալեոգրաֆիա» վերնագրով: Նշված աշխատությունները Երևանի պետական համալսարանում մեր կարգացած դասախոսությունների համառոտ սղագրություններն են: Այդ համառոտ դասընթացները հրատարակվել են ուսանողների անմիջական պահանջները բավարարելու նպատակով և չունեն հայ հնագրության գիտական լուրջ դասընթաց լինելու հավակնությունը: Վերջին աշխատության որոշ գլուխներ և հատվածներ մենք օգտագործել ենք ներկա աշխատության մեջ:

* * *

Մագաղաթյա և խունացած Գթղթի ձեռագրերի գորշ էջերի վրա հաճախ կարելի է կարդալ մեր գրիչների հետևյալ սրտառուչ դրառումները.

«Ձեռքս երթալ դառնալ ի հող,

Գիրքս քնալ լիշատակող»:

Իսկապես, դարեր են անցել այս տողերը գրելու ժամանակից: Գրող ձեռքերը վաղուց են փոշիացել, հող դարձել, բայց գրիչների թողած ձեռագրերն ապրում են և դեռ կապրեն դարեր...

Մարդ ակամա մտածում է, որ գրի և գրականությունն նկատմամբ անցյալում գոյություն ունեցող այս հավան է գուցե խթանող պատճառներից մեկը հանդիսացել, որ հալ վաստակավոր գրիչներն աշխատել են գիշեր ու ցերեկ, աշխատել խանդաղատանքով և գրել ու մեզ են թողել ձեռագրերի բազմահազար հատորներ: Նրանք համեստ մարդիկ են եղել և իրենց մեղվաջան աշխատանքի համար գալիք սերնդին խնդրել են միայն. «Յորժամ ընթեռնուք զձեռագիրն մեր, լիշեսչիք և զմեզ»:

Հալ հնագրության ներկալ աշխատությունը, գիտական արժեք ունենալուց բացի, լուրահատուկ հուշարձան է նաև մեր երախտավոր գրիչների և փորագրիչների անմահ հիշատակին, որոնք սրի և հրի փոթորիկների մեջ, նյութական անսահման զրկանքների ծանր պայմաններում, ստեղծել են հոգևոր մշակութի հոյակապ կոթողներ և թողել մեզ՝ գալիք սերնդին, որպես «լիշատակ անջնջելի»:

Հեշտ գործ չէ ուսումնասիրել 15 դարի հնություն ունեցող հարուստ մի մատենագրություն և կազմել նրա գիտական հնագրությունը: Հայաստանում և նրանից դուրս հալ գրչության հարյուրավոր դպրոցներ են եղել, որոնք ունեցել են իրենց գրչական ուրույն կարգն ու սովորությունները: Մեզ համար դժվար էր հանգամանորեն կանգ առնել նրանց բոլորի վրա: Չնայած քիչ ժամանակ չէ, որ մենք զբաղվում ենք հայկական ձեռագրերի ուսումնասիրությամբ, սակայն մեր կատարած աշխատանքը մի կաթիլ է միայն հալ հարուստ մատենագրության ընդարձակ ժովում: Հալ մատենագրության ուսումնասիրությունը սպառելու համար տարիներ են պետք: Մեր կատարած աշխատանքը նմանեցնում ենք լալնատարած դաշտավալրի վրա արորի նոր բացած մի շավղի և այն համոզումն ունենք, որ հալ մատենագրական անդաստանը մշակելու համար սերունդների աշխատանք է պետք:



Հայկական ձեռագիր կաշեպատ կազմով:



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ



ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՅԼ ՆՇԱՆԱԳԻՆԵՐՈՎ ԵՎ ԼԵՃՈՒՆԵՐՈՎ ԳՐՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ախքան հայկական գրի մասին խոսելը, անհրաժեշտ ենք համարում համառոտակի մի քանի խոսք ասել նրան նախորդող այն գրատեսակների մասին, որոնք գործ են անվել Հայաստանում և հասել են մեզ:

Սամենահին նշանագրերը, այնպիսի ճիշտ՝ գծապատկերները, որոնք մեզ են հասել Հայաստանում ապրած մեր նախաքնիններից, դրանք, այսպես կոչված, «էծապատկերներ»-ն են: Նրանք «էծապատկեր» են կոչվում այն պատճառով, որ ժայռերի ու քարանձավների պատերին փորագրված են այժմի պատկերների ձևով: Այս նշանագրերով փորագրություններ շատ կան հատկապես Արագածի փեշերի և Սևանի լճափի քարաժայռերի վրա:

«էծապատկերներ»-ի գործածությունը, հավանական է, գալիս է տոհմատիրական հասարակության շրջանից, երբ Հայաստանի նախաքնինների գլխավոր զբաղմունքն որսորդությունն ու անասնապահությունն էր: Տնային և վայրի կենդանիների հետ գործ ունեցող մարդը, իբրև որսորդական գաղափարի հաղորդում, կամ գուցե որպես գեղարվեստական էմոցիայի (հուլզի) արտահայտություն, քարերի վրա փորագրել է այժի պատկերներ: Հիմք չունենք պնդելու, որ «էծապատկերներ»-ը սովորական հիերոգլիֆների նման Հայ գրի և գրչության պատմություն—2

իմաստավորված գրեթե են. ամենից հավանականն այն է, որ նրանք ունեցել են սիմվոլիկ նշանակություն: ●

Ստորև բերում ենք «էծապատկերներ»-ի մի նմուշ՝ վերցնելով պատմական գիտությունների թեկնածու Ս. Բարխուդարյանի «Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները» աշխատությունից¹:



Մի նմուշ էծապատկեր՝ գրությունից:

«էծապատկերներ»-ի այս ընդօրինակությունը, ըստ հրատարակողի տեղեկության, վերցված է Մարտունու շրջանի Վարդենիկ գյուղի գետափին գտնվող ժայռի էծապատկերներից:

● Հայաստանում գործածված հնագույն շրջանի նշանագրերից է «ամենհնական» կոչվող գրությունը, որի մի նմուշը հրատարակել են «Հայ ժողովրդի պատմության» դասագրքի հեղինակները²: Այս

¹ Ս. Բարխուդարյան, Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները, Երևան, 1933, էջ 44:

² Մենք օգտվել ենք «Հայ ժողովրդի պատմության» դասագրքի 1951 թվականի հրատարակությունից (էջ 71):

նշանագրերը «մեհենական» են կոչվում պայմանական ձևով. ենթադրվում է, որ նրանք հայկական մեհյաններում գործածվող գրերն են եղել, ուստի և հրատարակիչները հարմար են համարել այդ անունը տալ, թեպետ չկան այդ մասին որոշակի փաստեր: Նշանագրերի այս տեսակը դեռ մասնագիտական լուրջ ուսումնասիրության առարկա չի դարձել, և նրանց վերծանության ուղղությամբ

ՏՊԲ օօօ ՌՊԷԿԷ

Մ Ա Ջ Գ Փ Ծ Ծ Ս Ս Խ Է Է

Մեհենական կոչվող գրություն նմուշ:

փորձեր չեն արվել: Մեր կարծիքով, այս նշանագրերը պատկանում են հնագրության մեջ հայտնի պիկտոգրամների կամ պետրոգլիֆների¹ այն խմբին, որոնք հայտարարվել: են Հարավային Եվրոպայի Ալտամիրայում, Պասիեդայում (Շվեդիա) և Հյուսիսային Աֆրիկայի քարայրներում²: Այս նշանագրերի գործածության ժամանակը որոշելը դժվար է, սակայն հաստատապես կարելի է ասել, որ նրանք պատկանում են հալ ժողովրդի պատմության հեթանոսական շրջանին:

● Առաջին իմաստավորված գրությունը Հայաստանում գործ են ածել հեթիթները և ուրարտացիները: Այս երկու ժողովուրդները, ինչպես պարզված է նորագույն ուսումնասիրությունների մեջ, հիմնականում ձուլվել են հալ ժողովրդի էթնիկական կազմի մեջ, և նրանց ստեղծած կուլտուրական ժառանգությունը փոխանցվել է հալ ժողովրդին: Ուստի անկարելի է հայկական գրության մասին խոսել առանց Հայաստանի այս նախաբնիկների գրություններին անդրադառնալու: ●


Գիրը, ըստ Էնգելսի բնորոշման, առաջանում է նախնադարյան-համայնական հասարակության վերջին շրջանում, երբ սկսում է նա քայքայվել և տեղի տալ դասակարգային հասարակությանը:

¹ Հնագրության մեջ պիկտոգրամ են կոչվում բացառապես պատկերազրեբը, իսկ պետրոգլիֆները պարունակում են նույն երկրաչափական և այլ տեսակի գծագրական ձևեր:

² Լուսկոտկա, Գրի գարգացումը, Ծրեան, 1955, էջ 24:

Ա Հեթիթները, ինչպես հայտնի է, իրենց պետականությունն ստեղծեցին Հայաստանի արևմտյան մասում, Գալլ գետից արևմուտք և արևելք ընկած տարածության վրա, մոտավորապես XX դարում մեր թվագրությունից առաջ, և շարունակեցին իրենց գոյությունը մինչև XIII դարը մեր թվագրությունից առաջ: Հեթիթական պետությունը Հին Արևելքի հզորագույն պետություններից մեկն էր և մրցում էր իր ժամանակի այնպիսի խոշոր պետությունների հետ, ինչպիսիք էին Եգիպտոսը, Բաբելոնը և Ասորեստանը:

Հեթիթներն իրենց գոյության շուրջ 800 տարիների ընթացքում գործ են ածել սեպագիր և հիերոգլիֆ գրեր, որոնցից բավականին նմուշներ գտնվել են Թեյ-Ամառնայում (Եգիպտոսում, Նեղոս գետի ափին) և Բողազ-քլոյում (պատմական Խատուշաշ քաղաքի տեղում): 1906—1907 թվականներին այստեղ Վինկլերին հաջողվեց հայտարարել հեթիթական թագավորների արխիվը՝ Թըրծաղլուսի սալիկների վրա:










Հեթիթական արձանագրություն:















Արևելագետներից ոմանց հաջողվեց վերծանել այդ սալիկների գրությունները: Վերծանման գործում առանձնապես մեծ վաստակ ունի չեխ արևելագետ Հրոզնին: Վերծանումից պարզվեց, որ Թըրծաղլուսի այդ սալիկները բովանդակում են ծիսակատարության կանոններ, հրահանգներ, ռազմական հրամաններ, պալմանագրեր, սողթճքներ, հիմների տեքստեր և այլն:

Հեթիթական հիերոգլիֆ գրությունը բաղկացած է երկու մասից՝ ամբողջական բառի հիերոգլիֆ արտահայտող նշանագրեր և տառ կամ վանկ արտահայտող ձայնանիշեր։

Ընդհանուր պատկերացում տալու համար, ամբողջական բառ արտահայտող հիերոգլիֆներից կարելի է բերել հետևյալները (վերջերի ենք սկսել)։ Հ. Աճառյանի «Հայոց գրերը» աշխատությունից)։


	— մայր աստվածուհի		— Հաթի երկիրը
	— աստված		— Կարկիմիշ
	— թագավոր		— մեծ
	— իշխան		— հզոր
	— տեր		— Գուրգում կամ Մարգաշ
	— քահանայապետ		— մի թագավորի անուն
	— ծառա		— Արսանիա անուն
	— որդի, ժառանգ		— թագավորի այլ գաղափարագիր
	— երկիր		

Վանկ կամ տառ արտահայտող ձայնանիշերից կարելի է բերել հետևյալները․

	— ա, օ		— մի
	— ի, ն		— թի
	— կ, կա, ալ		— աբ
	— թ		— շտ
	— ն, նի		— թար
	— մ		— ռ, ը
	— փ		— շ

• Բավականին զարգացած գրություն են ունեցել ուրարտացիները։ Ուրարտուն, ինչպես հայտնի է, ընդգրկել է պատմական Հայաստանի տարածքը։

չաստանի միջին մասը, մոտավորապես՝ Վանա, Սևանի և Ուրմիայի լճերի միջև ընկած տարածությունը: Ուրարտուի քաղաքական կազմավորումը տեղի է ունեցել IX դարում մեր թվարկությունից առաջ: Այդ ժամանակից էլ ուրարտացիները սկսել են գործածել իրենց արուշն սեպագիր գրությունը: Ուրարտուն իր քաղաքական վերելքի շրջանն ապրից առանձնապես ութերորդ դարում՝ Արդիշտի թագավորի գահակալություն տարիներին (778-750 թթ. մ.թ.ա.):



Ուրարտական սեպագիր արձանագրություն:

Ուրարտում որպես գրանյութ օգտագործել են գանագան նյութեր, սակայն գլխավորապես պահպանվել են քարի վրա փորագրված արձանագրությունները: Երբևմն պատահում են ուրարտական սեպագիր արձանագրություններ նաև մետաղի և թրծաղյուսի վրա: Մեզ հասած ուրարտական արձանագրությունների թիվը 400-ից ավելի է:

Ուրարտական սեպագիր արձանագրությունների մասին հալ մատենագրության մեջ առաջին հիշատակությունն ունի պատմահայր Մովսես Խորենացին: Նա հիշում է Վանի քարաժայռի սեպա-

գրերը՝ կապելով նրանք Ասորեստանի Շամիրամ թագուհու անվան հետ:

XIX դարի առաջին քառորդից սկսած, ուրարտական արձանագրությունների վերծանման ուղղությամբ որոշ արևելագետներ փորձեր կատարել են: Ուրարտական արձանագրությունների առաջին հավաքողներից է եղել Ֆ. Շուլցը, որը՝ 1828—1829 թվականներին ընդօրինակել է Վանի սեպագիր արձանագրություններից մի քանիսը: Հետագայում ուրարտական սեպագրերի հավաքման և հրատարակման գործում խոշոր աշխատանք է կատարել Մեսրոպ եպիսկոպոսը: Սմբատյանը:

Սկսած XIX դարի կեսերից, երբ վերծանվել են ասորա-բարելական արձանագրությունները և քանդվել սեպագրերի խորհրդավոր հանգույցները, արևելագետները նույն մեթոդով փորձեր են արել վերծանելու նաև ուրարտական սեպագրերը: Առաջին հաջողությունն այդ ասպարեզում ունեցել է անգլիացի արևելագետ Սելսը, որը վերծանել է ուրարտական մի շարք սեպագիր արձանագրություններ: Ուրարտական արձանագրությունների վերծանման և ճշտման ուղղությամբ մեծ գործ են կատարել հետագայում ռուս և հայ արևելագետները՝ Մ. Վ. Նիկոլսկին, Յ. Յ. Մառը, Ի. Մեշչանինովը, Գ. Լափանցյանը, Ն. Ա. Օրբելին, գերմանացի արևելագետ Լեման Հաուպտը և ուրիշներ:

Ուրարտագիտության ասպարեզում մեծ աշխատանք է կատարվել և կատարվում է Սովետական Միության մեջ: Հանդես են եկել ալնպիսի շնորհալի մասնագետներ, ինչպիսիք են պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկին, որի գրչին են պատկանում Ռւրարտուին նվիրված մի քանի աշխատություններ, Գ. Ա. Մելիքիշվիլին, որը հավաքել է ուրարտական արձանագրությունները և հրատարակել «Вестник древней истории», ամսագրի մեջ՝ արժանանալով Լենինի անվան մրցանակի, պատմական գիտությունների թեկնածու Մ. Իսրայելյանը, որն զբաղված է ուրարտական արձանագրությունների վերծանությամբ ու նրանց ճշտումներով, և ուրիշներ:

Ուրարտական սեպագրությունը, հեթիթական հիերոգլիֆների նման, ունի խառը նշանագրերից բաղկացած գրության սխտեմ. նշանագրերից մի մասը գաղափարագրեր են, իսկ մյուս մասը՝ առանձին վանկերի կամ տառերի նշանագրեր: Բերենք մի քանի օրինակներ.

▶▶▼ — ափ

▶▶▶▼ — ափ

▶▶▶▶▼ — ալ

▶▶▶▶▶ — ամ

▶▶▶▶▼ — ատ

▶<<<▶ — բա

▶▶▶▶▶ — բալ¹

Հայաստանում գործածված գրություններից ուշագրության արժանի են արամեական գրություններ բովանդակող արձանագրությունները: Արամեական գրությունն իր ժամանակին գործածության մեջ է գտնվել Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում: Հայաստանը ևս, ինչպես պարզվում է այժմ, հանդիսացել է այն երկրներից մեկը, որտեղ նույնպես գործ է ածվել արամեական գրությունը:

Հայաստանում հայտաբերված² են արամեական գրությամբ փորագրված երեք արձանագրություններ. մեկը գտել է ազգագրագետ Ե. Լալայանը, 1906 թվականին, Նոր Բայազետի Կարմիր (Ղուլալի) գյուղում (Սևանա լճից մոտ 6 կիլոմետր հեռավորության վրա), մյուսը՝ պատմական գիտությունների թեկնածու Ս. Բարխուդարյանը, 1932 թվականին, Մարտունու շրջանի Կզնուտ (Ղարանլուղ) գյուղում (Սևանա լճից *4—5 կիլոմետր հեռավորության վրա) և երրորդը հայտաբերվեց վերջերս՝ Մարտունու շրջանի Ծակքար գյուղում:

Արամեական այս արձանագրությունների մասին առաջին անգամ իր հեղինակավոր կարծիքն է հայտնել ակադ. Հ. Ա. Օրբելին: Նա գտնում է, որ նշված արձանագրությունները պատկանում են Հայոց Արտաշես Ա թագավորին, որը 189 թվականին (մ. թ. ա.) ապստամբվեց Սելևկյաններից և Մեծ Հալքի թագավոր դարձավ: Նա առաջ է քաշել նաև այն կարծիքը, որ արամեական այդ արձանագրությունները կարող են լինել սահմանալին այն քարերը, որոնց մասին հիշատակություն ունի պատմահայր Մովսես Խորենացին²:

¹ Վերը բերված բոլոր սեպագրերը և նրանց վերծանությունը մենք վերցրել ենք Մեխիթիշվիլու «Урартские клинообразные надписи» աշխատությունից, որը տպվել է «Вестник древней истории, ամսագրի 1953 թվականի համարներում:

² Газета «Известия», М., 31/1, 1941:



Արամեական արձանագրություններ:

Հետագայում չալդ արձանագրությունների վերծանություններ գրողվել է Լենինգրադի Էրմիտաժի ավագ գիտական աշխատող, արամեական լեզվի մասնագետ պրոֆ. Ա. Բորիսովը, որն իր ուսումնասիրությունը հրատարակել է 1946 թվականին «Вестник древней истории» ամսագրում: Նա ապացուցել է, որ նշված արձանագրություններն, անվիճելի, արամեերեն են, գրված ը դարում մեր թվագրությունից առաջ և պատկանում են Հալոց Արտաշես I թագավորին: Սակայն նրան չհաջողվեց վերծանել արձանագրության վերջին տողը¹:

Արձանագրությունը հետևյալն է.

RTHSSY ԱՐՏԱՇԵՍ
 MI.KBBZY ԹԱԳԱՎՈՐ, ՈՐԴԻ
 ZRYTR HLI|| ՉԱՐԻԱԴԻ
 RVIVDKNHLT

Հետագայում չվերծանված այդ տողին անդրադարձան Էրմիտաժի և ՍՍՒՄ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտական

¹ А. Я. Борисов, Написки Артаксия (Арташеса), царя Армении, ВДН, 1946, № 296:

ինաստիտուտի Լենինգրադի բաժանմունքի աշխատակիցներ Ի. Մ. Դյակոնովը և Կ. Բ. Ստարկովը: Նրանք չվերծանված տողում փորձեցին գտնել «հողամաս» կամ «բաժանել» արամեական բառերը¹: Նույն կարծիքը վերջերս պաշտպանեց նաև երիտասարդ դիտական աշխատող Գ. Տիրացյանը²:

Չվերծանված չորրորդ տողի նկատմամբ բոլորովին այլ եզրակացություն է հանգել Ֆրանսիացի արամեագետ Դյուպոն-Սոմմերը, որը չորրորդ տողի մեջ ուզում է գտնել «քաշել» և «ձուկ» բառերը³:

Դյուպոն-Սոմմերի կարծիքը, ինչպես ապացուցել է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Կ. Վ. Տրևերը, համոզեցուցիչ չէ:

Չենք ուզում համաձայնել նաև Գ. Տիրացյանի հետ, որ իբր արձանագրությունն ավարտված չէ, որ իբր խոսքն այստեղ «Երկիր արքունի» թագավորական հողին վերաբերող միջոցառման մասին է, և Արտաշեսը, իրեն Երվանդյան անվանելով, իբրև «իշխող խափերի գլխավորող անձնավորություն», ցանկացել է ամրապնդել իր դիրքը և այլն: Այդ ամենը, մեր կարծիքով, չհիմնավորված եզրակացություններ են:

Կովկասագիտության մեջ կարծիք է հայտնվել նույնպես, որ նշված արամեատառ արձանագրությունների լեզուն աղվաներենն է: Այս կարծիքն արտահայտել է Ա. Պալազատը, որը փորձել է անգամ նրանք վերծանել ուղիներենով⁴:

Օտար գրերով Հայաստանում ամենից շատ հանդիպում են հունարեն արձանագրություններ: Այդպիսիք գտնվել են Արմավիրում, Տիգրանակերտում, Բաշ-Ապարանում, Էջմիածնում, Գառնիում և այլն: Այդ արձանագրությունները վերաբերում են ||| դարին մեր

¹ И. М. Дьяконов, К. Б. Старков, Надписи Артаксия (Арташеса), царя Армении (мкн «Вестник древней истории», 1956, №2):

² Գ. Տիրացյան, Արտաշես Ա-ի արամեական նորագյուտ արձանագրությունը (Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», 1957, № 10, էջ 105-109):

³ A. Dupont-Sommer, Deux inscriptions Arméniennes trouvées près du lac Sévan (Arménie), Syrie, 5. XXV, 1946-1948. № 1-2, էջ 149-155:

⁴ Ա. Պալազատ, Նյութեր հին Հայաստանի պատմության, Երևան, 1935, էջ 217-219:

Թվագրութիւնից առաջ և շարունակվում են մինչև մեր թվագրութիւն IV դարը: Արձանագրութիւնները գրված են հունարեն լեզվով և տառերով:

Հունարեն արձանագրութիւններ ամենից շատ գտնվել են Արմավիրում (յոթ արձանագրութիւն): Նրանք հայտաբերվել և ուսումնասիրվել են տարբեր ժամանակներում: Արմավիրի հունարեն արձանագրութիւնները ի մի հավաքել և հրատարակել է Ա. Ի. Բոլտուովան 1942 թվականին¹: Նույն արձանագրութիւնները, կարևոր ճշտումներով և մեկնաբանութիւններով, հրատարակել է նաև ակադ. Հ. Մանանդյանը 1946 թվականին²: Արձանագրութիւնների գրութիւն ժամանակը մեր թվագրութիւնից առաջ II—I դարերն են: Այս արձանագրութիւնները հետաքրքիր են այն տեսակետից, որ ունեն բարոյախոսական բովանդակութիւն. այսպես, նրանցից մեկը պարունակում է Հեսիոդոսի «Աշխատանքներ և օրեր» աշխատութիւնից մի հատված: Մեկ ուրիշ արձանագրութիւն մեզ հիշված է Երվանդյանների դինաստիայի վերջին ներկայացուցչի անունը, մի կարևոր փաստ, որը գալիս է հաստատելու Մովսես Խորենացու՝ Երվանդյանների մասին հաղորդած տեղեկութիւնների հավաստիութիւնը: Պրոֆ. Գ. Գոյանի կարծիքով, այդ արձանագրութիւններից մեկը պարունակում է հայոց Արտավազդ թագավորի մեզ չհասած պոեմի հատվածները³: ☩

Հայաստանում գտնված հունարեն արձանագրութիւնների շարքում բացառիկ արժեք է ներկայացնում Հայկական ՍՍՌ Գիտութիւնների ակադեմիայի ակադեմիկոս Մ. Սարյանի և գլուղատընտես Յ. Դավթյանի 1945 թվականին Գառնիում գտած արձանագրութիւնը, որը, ինչպես պարզվեց, պատկանում է Տրդատ I-ին: Այս արձանագրութիւնն առաջին անգամ վերծանել և հրատարակել է պրոֆ. Ս. Լիսիցյանը⁴: Այնուհետև նրանով զրաղվել և իրենց

¹ А. И. Болтунова, Греческая надпись Армавира («Տեղեկագիր» ԽՍՌՍ Գիտութիւնների ակադեմիայի Հայկական ֆիլիալի, 1942, № 1—2, էջ 35—61):

² Հ. Մանանդյան, Արմավիրի հունարեն արձանագրութիւնները նոր լուսարանութայն, Երևան, 1946:

³ Г. Гоян, 2000 лет армянского театра, հատ. էջ 156:

⁴ «Սովետական Հայաստան» օրաթերթ, 1945, սեպտեմբերի 25:

ΗΛΙΟΣ ΤΗΡΩΣΑΙ ΤΟΝ
ΜΕΓΑΛΗΝ ΑΡΧΗΝ ΙΑΝΝΑΝ
ΩΣ ΔΕ ΣΠΟΤΗΣ: ΑΙΚΤΙΣ ΕΝ ΑΙ
ΒΑΣΙΛΕΥΣΙ ΟΝ ΑΝΙΚΗΤΟΝ ΚΑΙ
ΑΙΤΟΥΣ: ΑΙ· ΤΗ ΣΒΑΚΤΕΙΑΝ
ΜΕΛΕΑΚΤΟΕΣ ΟΥΣΙΑΣ
ΑΙΤΟΥΡΓΟC ΤΩ ΜΕΓΑΛΩC
ΜΕΓΑΛΑΤΗ ΙΙΚΑΙ ΕΥΧΑΙ
ΤΟΥ ΑΡΤΥΡΙΟΥ

Քառնիի հունարեն արձանագրությունը:

ընթերցումներն են առաջարկել ակադ. Հ. Մանանդյանը¹, պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանը², ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Տրեվերը³ և պրոֆ. Բ. Առաքելյանը⁴: Վերոհիշյալ ուսումնասիրողների ընթերցումներն իրարից բավականաչափ տարբերվում են, այդ պետք է բացատրել նրանով, որ քարի աջ կողմը կտրված է և ուսումնասիրողներից ամեն մեկը տեքստի պակաս մասը լրացնում է իր ենթադրություն համաձայն և վերծանում իր նախասիրած ձևով:

Անհրաժեշտ ենք համարում բերել մեր վերծանությունը.

«Արեգակնափայլ Տրդատ Մեծ, Մեծ Հայքի թագավոր որպես ղեսպոս: Կառուցեց տաճար թագավորազատեր հիշատակին անպարտելի եղբայրը տաճնեմեկ տարում իր գահակալության: Մեծաշուք տան հովանոցի տակ աղոթողը առ մեծ քարայրին թող աղոթք մատուցանե»:

▲ Հայաստանում գրված օտար գրություններից ուշագրություն արժանի են նաև լատիներեն արձանագրությունները, որոնք թվով շատ չեն: Նրանցից պատմական կարևորություն ունեն միայն երեքը, երկուսը՝ Խարբերդի մոտ գտնվածները և մեկը՝ էջմիածնում:

Խարբերդի արձանագրությունները գրված են մեր թվականության սկզբում: Արձանագրությունների մեջ հիշվում է ներոն կայսրը: Ստորև բերում ենք արձանագրություններից մեկի թարգմանությունը.

«Ներոն Կլավդիոս, Կեսար, Օգոստոս, Գերմանիկոս կայսր և գերագույն քուրմ, նրա տրիբունական իշխանության 11-րդ, չորրորդ կոնսուլության, իններորդ անգամ թագավոր ու հալրենիքի հալրը (հռչակված) տարում: Գնեոս Դոմիցի, Կորբուլոնի՝ պրոպրետորի Տիտոս Ավրելիոսի, Օգոստոսի լեգատի ժամանակ: Երրորդ Գալիական լեգեոն»⁵:

¹ Я. А. Манандян, Новые заметки о греческой надписи языческом храме Гарни, Ереван, 1951:

² Ա. Գ. Աբրահամյան, Գառնիի հուշարձան արձանագրությունը («Էջմիածին» 1947, № 3—4):

³ Հայաստանում գտնված այլ լեզուներով արձանագրությունները հավաքել և հրատարակել է Տրեվերը «Очерки по истории культуры древней Арменнии, վերնագրով աշխատության մեջ:

⁴ Б. Н. Аракелян, Гарни, I, Ереван, 1951, էջ 64:

⁵ Հատիներեն բնագիրը հրատարակված է «Corpus inscriptionum latinarum» 6 III, Suppl., p. I, 1889 (էջ 1232):

Ենթադրվում է, որ վերը հիշված արձանագրությունները գրված են 64 թվականին, երբ, Պետոսի պարտությունից հետո, Կորբուլունին շնորհվեց «պրոպրետոր»-ի կոչումը և երբ Կորբուլունը գալիական լեգեոնով շարժվեց Հայաստանի վրա: Արձանագրությունը գրվել է որևէ կառուցման, հավանական է կամուրջի կառուցման կապակցությամբ:


IMPR CAESAR AVRELIANO
 NINO AVG GER
 MASAR MAXTRIB POT
 IMP VII COS III PP VEXILL
 LEGXVLPOLL SUB CAELIO CAL
 VINO LEG AVG PR PR V MM
 AGENTE ICI NIO SATVRNINO TRIB
 ML ET AVREL LABRASE) LEG EIVS DEN

Էջմիածնի լատիներեն արձանագրությունը:

Էջմիածնի լատիներեն արձանագրությունը, համեմատաբար, նոր է և գրված է մեր թվագրության 185-ին: Արձանագրության երկրորդ տողում մի բառ ջնջված է. ենթադրում են, որ այդ ջնջված բառը պետք է լինի Կոմոդոս կայսեր անունը, որը համարվել է անարժան կայսր, և հռոմեական սենատը որոշում է ընդունել նրա անունը ջնջել արձանագրությունների վրալից: Միաժամանակ կարծիքներ են եղել, որ ջնջված բառը կարող է լինել «Armenicus», («Հայկական») բառը: Այդ կոչումը գործ էածել Մարկոս Ավրելիոս Վիրիոսը՝ Վաղարշապատը վերցնելուց հետո. ենթադրում են, որ հալ հայրենասերները, չհաշտվելով արձանագրության մեջ հռոմեական կայսեր «Հայկական» մականունը գործածելու իրողության

հետ, նրա անունը ջնջել են քարի վրայից: Հավանականը այս է:

Հայաստանում գտնված են արաբական և վրացական արժեքավոր մի շարք արձանագրություններ ևս, որոնց մասին մենք չենք խոսում, որովհետև նրանք գրված են համեմատաբար ուշ շրջանում՝ հայկական ներկա գրության ստեղծումից հետո:



ԳՆՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ՀՆԱԳՈՒՅՆ ՏՎՅԱԼՆԵՐ
ՆԱԽԱՄԵՍՐՈՊԵԱՆ ՀԱՅ ԳՐԻ ԵՎ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ



րդյոք Մեսրոպ Մաշտոցից առաջ հայկական գիր և գրականություն գոյություն ունեցե՞լ է: Սա հայագիտության վիճելի հարցերից մեկն է: Խոսքը տառանիշերի մասին չէ, այլ հին հայկական գրականության մասին ընդհանրապես: Պետք է նկատի ունենալ, որ հայերը կարող էին գրականություն ստեղծել նաև այլ տառանիշերով: Հայտնի է, օրինակ, որ փյունիկյան գրերը օգտագործել են եվրոպական շատ ժողովուրդներ: Կամ՝ միջին դարերում արևելյան ժողովուրդների մեծ մասը գործ էր անում արաբական տառանիշերը, բայց ամեն մեկը գրում էր իր մայրենի լեզվով:

Նախամեսրոպյան հայ գրի և գրականության հարցում հայագետները երկու հակադիր խմբի են բաժանվում. նրանցից ոմանք կտրականապես ժխտում են Մեսրոպ Մաշտոցից առաջ հայ գրի և գրականության գոյությունը, իսկ ոմանք՝ ընդունում: Երկու խմբում էլ կան անվանի գիտնականներ: Ժխտողների շարքումն են ակադեմիկոսներ Հ. Աճառյանը, Ս. Մալխասյանցը, Հ. Մանանդյանը, Մ. Արեղյանը և ուրիշներ: Այսպես օրինակ, ակադ. Հ. Աճառյանը, Հայ գրի և գրչության պատմություն—3

մանրամասն քննություն առնելով այն փաստերը, որոնք առաջ են քաշում նախամեսրոպյան շրջանում գիր ընդունող գիտնականները, հետևյալ եզրակացությունն է հանգել. «Ս. Մեսրոբեն առաջ հայերեն գրականություն տեսնելը, որ իբր թե շնչեց լուսավորիչը՝ այրելով բոլոր հայերեն գրքերը, անմիտ հեքիաթ մ՝ է միայն»¹:

Մեսրոպ Մաշտոցից առաջ հայկական գրականության գոյությունն ընդունում են՝ պրոֆ. Գ. Պատկանյանը, ակադ. Ն. Մառը ակադ. Հ. Օրբելին և ուրիշներ: Մառն իր «ԱՅՈՒՆ» աշխատության ներածության մեջ, անդրադառնալով հին հայկական գրականության հարցին, աներկբա ընդունում է, որ՝ «Ողջ Կովկասը, ներառյալ նաև Հայաստանը, կուլտուրական է եղել դեռևս ասորա-բաբելական քաղաքակրթության ժամանակաշրջանում: Հայաստանում մայրենի լեզվով գրականություն գոյություն ուներ մեր ներկա թվականությունից մի քանի դար առաջ»²:

Նախամեսրոպյան հալ գրի և գրականության հարցով զբաղվել ենք նաև մենք: Մեր ասումնասիրությունը՝ «Նախամեսրոպյան գրականության հարցը» վերնագրով հրատարակվել է «Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի գիտական աշխատություններ»-ի մեջ: Այդ հարցին հատուկ զուլս ենք նվիրել նաև մեր «Հայկական պալեոգրաֆիա» աշխատության մեջ: Նույն խնդրին անդրադարձել ենք 1956 թվականին Անթիլիասի Կյուլպենկյան սրահում կարդացած մեր դասախոսություններից մեկի մեջ, որը լույս է տեսել Անթիլիասում հրատարակված մեր դասախոսությունների շարքում³:

Մեր կարծիքով, Մեսրոպից առաջ հալ գիր և գրականություն գոյություն է ունեցել: Ի՞նչ փաստեր են հիմք տալիս մեզ՝ նման եզրակացություն համար:

1. V դարից մեզ հասել է ինչպես ինքնուրույն, այնպես էլ թարգմանական և մեկնողական գրականություն, որն իր քերականական մշակված ձևերով, հարուստ բառապաշարով, ոճով և արժարժած հարցերի կարևորությամբ ու խորությամբ գրականության պատմության սկզբնավորությունը հատուկ ստեղծագործությունն է: Սկսնակ շրջանի երկ չի կարելի համարել ոչ Եղիշեի, ոչ Եզնիկի և ոչ էլ V դարի մյուս մատենագիրների աշխատություններից որևէ մեկը: Այդպիսին չէ նաև Աստվածաշնչի թարգմանությունը, որը «Թարգմանությունների թագուհին» է համարվում: Եթե

¹ Հ. Աճառյան, Հայոց գրքերը, էջ 106:

² Н. R. Мара, Ару. М.-Л., 1934, էջ 5:

³ Ա. Արահամյան, Յոթ դասախոսություններ, Անթիլիաս, 1955 էջ

հայկական գրականության սկիզբը իրոք V դարը լիներ, ապա հնարավոր չէր, որ օգտագործվող գրական լեզուն այնքան հարուստ բառապաշար ունենար, ինչպիսին ունի V դարի մատենագրությունը, չօգտագործեին մեծ թվով օտար բառեր և տեղի ինքնուրույն աշխատություններն սկսեին այնպիսի բարձր թեմատիկայով, ինչպես սկսել են:

Մեզ հայտնի են Սովետական Միության մեջ մտնող այնպիսի ժողովուրդներ, որոնք իրենց գիրն ու գրականությունն ստեղծել են Սովետական իշխանության տարիներին, և նրանք, երբ թարգմանություններ են կատարում, հարկադրված են լինում բնագրի լեզուններից բազմաթիվ բառեր փոխ առնել, որովհետև իրենք այդպիսիները չունեն: Եթե հայերեն գրական լեզուն V դարից սկիզբ առած լիներ, ապա այլ կերպ չէին կարող վարվել նաև հայ թարգմանիչները, իսկ իրականությունն այն է, որ հին հայկական մատենագրության մեջ օտարամուտ բառերը շատ քիչ են:

Կան հայագետներ, որոնք առաջ են քաշում Մեսրոպից առաջ Հայաստանում «բանավոր գրականության» գոյության տեսությունը: Հայերը Մեսրոպ Մաշտոցից առաջ, ասում են նրանք, ունեցել են բանավոր գրականություն: Այս տեսակետի հետ չի կարելի համաձայնել, որովհետև այն, ինչ գրի չի առնված, դեռևս գրականություն չէ, այլ բանահյուսություն, և ապա՝ նման «բանավոր գրականություն» իրենց գրականության ստեղծման նախօրյակին ունեցել են մեզ հայտնի գրեթե բոլոր ժողովուրդները, օրինակ՝ ներկայիս քրդերը, լազերը, գնչուները և մյուսները: Կան նաև հայագետներ, որոնք գտնում են, որ իբր թե III—IV դարերում Ասորիքից և Կապադովկիայից եկած քրիստոնյա քարոզիչները, քրիստոնեական ուսմունքը ժողովրդին հասկանալի դարձնելու նպատակով, Աստվածաշնչի ասորերեն և հունարեն բնագրերից անվերջ թարգմանություններ էին կատարում հայերեն, և այդ թարգմանությունների ընթացքում է, որ մշակվել է հայ գրական լեզուն: Այս կարծիքը բացահայտ անհիմն է, որովհետև III—IV դարերում Ասորիքից և Կապադովկիայից Հայաստան եկող քրիստոնյա քարոզիչները հույներն էին և ասորիները, որոնք հայերեն չգիտեին և տեղում էին սովորում: Ապա՝ եթե ընդունենք անգամ, որ հայ գրական լեզուն մշակվեց իրոք III—IV դարերում՝ թարգմանությունների ընթացքում, այդ դեպքում նման կարծիք հայտնող հայագետները հետևողական պիտի լինեն ընդունելու, որ հայկական թարգմանական գրականություն գոյություն ունի III—IV դարերում: Լեզուների

գիտական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրական լեզուները չեն ստեղծվում մեկ-երկու տարում կամ տասնամյակում, այլ նրանք երկար տարիների և մի շարք սերունդների մշակման արդյունք են:

2. Հայերը հին պետականություն ունեցող ժողովուրդ են եղել: Հայաստանի նախարնիկները զարգացած գիր և գրականություն են ունեցել դեռևս հեթիթների և ուրարտացիների ժամանակ, ուստի և չէր կարող Արտաշեսյան շրջանում զարգացած պետականություն ունեցող հայ ժողովուրդը չժառանգեր իր նախորդների գրավոր ավանդույթը և կառավարվեր առանց սեփական գրի և գրականության, չվարեր, օրինակ, պետական գրագրություն, չունենար ֆինանսական հաշիվներ և այլն:

Հին մատենագիրների վկայությունից երևում է, որ Արտաշեսյան շրջանում Հայաստանում, իրապես, գոյություն է ունեցել քավականին զարգացած հելլենիստական կուլտուրա: Հայտնի է, որ հայ թագավորներն իրենց արքունիքում ընդունել և հովանավորել են հույն պատմաբանների, փիլիսոփաների, հոստորների և այլ գիտնականների (Անփիկրատես, Մեթրոդորոս և ուրիշներ): Ակադ. Հ. Մանանդյանի կարծիքով, Տիգրանակերտը հանդիսացել է ոչ միայն միջազգային առևտրի, արհեստների և արդյունագործության, այլև հելլենիստական գիտության, արվեստի ու գրականության կենտրոն¹: Պլուտարքոսի տեղեկություններից հայտնի է, որ Տիգրան II-ի որդին՝ Արտավազդ թագավորը (55—34 թթ. մ. թ. ա.), ողբերգություններ, ճառեր և պատմական երկեր է գրել, որոնց մի մասը մնացել է մինչև Պլուտարքոսի ժամանակը: Այդ մասին Պլուտարքոսը գրում է. «ὁ δ' Ἀρταῦστος καὶ τραγῳδίας ἐποίησεν καὶ λόγους ἔγραψε καὶ ἱστορίας ὧν ἔταί»²: («Արտավազդը գրում էր ողբերգություններ, ճառեր և պատմական երկեր, որոնց մի մասը պահվել է»):

Չպետք է ժխտել, որ Արտաշեսյան դինաստիայի շրջանում հայ թագավորները հունարեն էին գրոշմում իրենց դրամները, սակայն այդ դրամները գործածության մեջ էին դնում ո՛չ միայն Հայաստանում, այլ նրանից դուրս՝ հելլենիստական Արևելքում: Հունարեն են գրոշմել իրենց դրամները հելլենիստական Արևելքի

¹ Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր I, Երևան, 1944, էջ 172:

² Plutarchus Crassus, XIII, 1—5:

ըրզապտուլտի մեջ մտած գրեթե բոլոր երկրները՝ Պարսկաստանը, Կապադոկիան, Կիլիկիան, Պոնտոսը, Մոփքը և մյուսները:

3. Պատմահայր Խորենացին վկայում է, որ II դարում Բարդաթան անունով քրիստոնյա մի քաթաղիչ գալիս է Հայաստանի Դարանաղյաց գավառի Անի ամրոցը, որը հնում հայ թագավորների գահանիստ կենտրոնն է եղել, տեղի մեհենական արխիվից մի պատմութուն է թարգմանում ասորերեն և իր հետ տանում: Հետագայում այդ աշխատությունը ասորերենից թարգմանվում է հունարեն, որից և օգտվել է Խորենացին: Պատմահայրն այդ մասին գրում է. «Զրուց է մեզ գայս Բարդաթան, որ լծդեսիայ: Քանզի նա լաւուրս Անտոնինոսի վերջնոյ երեկեցաւ պատմագրող... եկն նա այսր, որպէս զի աշակերտել զոք կարասցէ ի խուժ հեթանոսացս. և իբրև ոչ ընկալեալ եղև՝ եմուտ նա լամուրն լԱնի, և ընթերցեալ զմեհենական պատմութիւնն, լորում և զգործս թագաւորացն, լաւելլով իւր և որ ինչ առ իւրեան, և փոխեաց զամենայն ի լեզու ասորի, որ և ապա անտի լեղաւ ի լոյն բան: Յորում պատմէ ի մեհենիցն պաշտամանց՝ վերջին Տիգրանայ արքայի Հայոց... Յայսմ պատմութենէ առեալ մեր երկրորդեցաք քեզ ի թագաւորութենէն Արտաւազդայ մինչև լԱրձանն Խոսրովու»¹:

Չորրորդ դարում օտար լեզուներով Հայաստանում քաղաքացիութուն ունեին հունարենը և ասորերենը. եթե Բարդաթանի արտագրածը ոչ ասորերեն էր և ոչ հունարեն, ապա մնում է ենթադրել, որ նա գրված պետք է լիներ տեղական լեզվով՝ հայերեն:

4. Նախամեսրոպյան գրականության մասին վկայող կարևոր փաստ է մեհենական գրականության գոյությունը. հեթանոսական Հայաստանում եթե կալին մեհյաններ, ապա այդ մեհյաններում պետք է որ գոյություն ունենար նաև գրականություն: Ոչ մի հիմք չունենք պնդելու, որ հայ քրմերն ամեն ինչ անգիր արած էին ժեսակատարություններ կատարում և չունեին կրոնական ժեսակատարությունների համար պատրաստված հատուկ գրքեր: Պետք է նկատի ունենալ, որ ինչպես մյուս բոլոր ժողովուրդների, այնպես և հայերի մոտ, մեհյանները, կրոնական կենտրոններ լինելուց բացի, եղել են նաև իրենց ժամանակի մշակույթի, գրականության և գիտության օջախներ:

5. Հայ հեթանոսական աստվածների պանթեոնում հիշվում է Տիր անունով աստված, որը, ըստ Ագաթանգեղոսի վկայության,

¹ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 201—202,

արվեստի, գիտության և ճարտարության աստվածն էր հանդիսանում: Նրա մեհյանը գտնվելիս է եղել Զվարթնոցի մոտերքում, որը հետո կործանվեց Տրդատի կողմից: Ագաթանգեղոսը Տիր աստծու մեհյանի մասին հետևյալ ուշագրավ տեղեկությունն է հաղորդում. «Ապա ինքն իսկ թագաւորն խաղայր գնայր ամենայն զօրօքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքէ՝ երթեալ լիւրտաշատ քաղաք, աւերել անդ գրագինան Անահտական դիցն, և որ յերազմոյն տեղիսն անուանեալ կայր: Նախ դիպեալ ի ճանապարհի երազացոյց երազահան պաշտաման Տրի դից, դպրի գիտութեան քրմաց, անուանեալ դիւան գրչի Որմզդի, ուսման ճարտարութեան մեհեան»¹:

Աստվածները չեն, որ մարդ են ստեղծել, այլ մարդն է, որ աստվածներ է ստեղծել: Մեր ժողովուրդը չի ստեղծել ծովի աստված, որովհետև դրա կարիքը չի ունեցել: Հույները, հռոմեացիները ստեղծել են ծովի աստվածներ, որովհետև նրանց կարիքը ունեցել են:

Ագաթանգեղոսի հիշած Տիր աստվածը համապատասխանում է Եգիպտական Թոթ և հունական Հերմես աստվածներին: Նա հալ ժողովրդի հիշողության մեջ ավանդաբար պահվել է «Գրող» աստծու անունով. «Գրողը տանի քեզ»՝ անիծում են, «Գրողն իր դափտարից անունդ ջնջի», «Գրողը քո անունը չիքերի դափտարում գրի» և այլն: Ըստ երևութիւն, Գրող աստծուն վերագրվում է մի պաշտոն, որի պարտականությունն էր ծնվողներին մուտք անել, մահացածների անունները ջնջել կենդանի մարդկանց մատյանից և ուղեկցել մահացածին հանդերձյալ կյանք:

Մի ժողովուրդ, որ ստեղծել է դպրության աստված, ուրեմն նա անպայման ունեցել է նաև դպրություն:

Նախամեսրոպյան հալ գրականության գոյությունը ժխտող գիտնականներն այս փաստը հերքելու համար պնդում են, թե Տիրը հայկական աստված չէ, այլ փոխ է առնված պարսիկներից: Այս առարկությունը հիմնավոր չէ, քանի որ նախ՝ հարցական է, թե ո՞վ ումից է փոխառություն կատարել: Բայց եթե անգամ հայկականը փոխառություն է պարսկերենից, ապա կասկած լինել չի կարող, որ նման աստծու կարիքը Հայաստանում եղել է:

6. Հունական մատենագրության մեջ հայտնի է Փիլոստրատոս անունով մի հեղինակ, որն ապրել է III դարում: Սա իր «Վարք Ապողինոս Տվանացու» վերնագրով աշխատության մեջ

¹ Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1909, էջ 404:

վկայում է, որ իր ժամանակ Տավրոսում մի հովազ են բռնել, հովազի վզին ոսկե մանյակ, մանյակի վրա հայերեն տառերով գրուած. «Արշակ թագավորից՝ նվեր Նյուսիայի աստծուն» εὐπέγραπτο Ἀρμενίου γράμασι. Βασιλεὺς Ἀρσάκης θεῶ Νυσίῳ)¹: Մենք չգիտենք, թե ով է եղել այս Արշակ թագավորը, որի գազանանոցից, հավանաբար, փախած է եղել մանյակի վզնոցով հովազը, բայց մեզ համար անվիճելի է հուշն հեղինակի այն տեղեկութունը, որ հովազի վզի մանյակի վրա եղած գրութունը հայերեն էր:

Փիլոստրատոսի հաղորդած այս տեղեկութւան մասին կասկածանք է հայտնել ակադ. Հ. Աճառյանը: Նա գտնում է, որ հայերի մոտ ընդհանրապես արդէ ժամանակ Արշակ թագավոր չի եղել և այս թագավորը «ավելի պարթև թագավորի մ' անունն ըլլալու է և այն մատենագրութունն ալ ավելի պահլավերեն, քան թե հայերեն»²: Այս պատճառաբանութունը համոզեցուցիչ չէ, քանի որ Փիլոստրատոսը որոշակի խոսում է հայերեն գրերի (մասին: Բայց մի ըրոպե եթե ընդունենք, որ Փիլոստրատոսը սխալմամբ շփոթել է՝ պահլավերեն գրերը հայերեն է կարդացել, այն դեպքում արդ ավելի է հաստատում հայերեն գրութւան գոյութւան փաստը: Ուրեմն հայերեն գրութունը III դարում այնքան տարածված և հանրածանոթ եղած պետք է լիներ, որ Արեւելքում քաջ հայտնի պահլավերենը շփոթում էին հայերենի հետ: Ինչ վերաբերում է Արշակ թագավորին, ապա մենք հիմք չունենք ժխտելու նրա գոյութունը I—III դարերի հալ գահակալների խառնաշփոթ ցանկում:

7. Հիպոլիտոս անունով մի հուշն հեղինակ Աղեքսանդր Մամիայի թագավորութւան 13-րդ տարում (այսինքն՝ ներկա թվականութւան 234-ին) գրած իր «Ժամանակագրութւան» մեջ թվարկում է իրեն հայտնի բոլոր այն ժողովուրդների անունները, որոնք ունեն գրականութուն, և այս ցանկում հիշում է նաև հայերին: Նա այդ մասին գրում է. «Οἱ δὲ ἐπιστάμενοι αὐτῶν γράμματα εἰσὶν: Ἰβηρες, Λατίνοι, οὗς Ἰρωταὶ οἱ Ῥωμαῖοι, Σπαῖνοι, Ἑλληγες, Μηδοί, Ἀρμένιοι»:

«Մրանցից (այսինքն՝ իր թվարկած ժողովուրդներից—Ա. Ա.), որոնք ունեն դպրութուն, հեռակալներն են. եբրայեցիները, լատինացիները, որով և հռոմայեցիներն են վարում, սպանացիները, հույները, մարերը և հայերը»³:

¹ Տես Philostrati de vita Apollonis Tianei երկրորդ հրատարակութունը C. L. Kayser-ի, հատ. 1, էջ 44:

² Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 65:

³ Hippolitus Werke, 4 Bd., Die Chronik.

Հիպոլիտեսի «Ժամանակագրության» վավերականության մասին կասկածանքներ չեն եղել: Գտնված է հեղինակի կիսանդրին՝ իր աշխատությունների ցանկով, ուր հիշված է նաև «Ժամանակագրություն»-ը: Աշխատության գրելու թվականի մասին նույնպես վեճ չի եղել: Եթե III դարի հույն հեղինակը այսպիսի տեղեկություն է հաղորդում հայկական գրության մասին, ի՞նչ հիմք ունենք չհավատալու նրան, ի՞նչ շահ ուներ նա կեղծելու իրականությունը:

Հարց է առաջանում՝ եթե հնագույն հայ գրականությունն իրոք եղել է, ինչ՞և ոչ մի նմուշ մեզ չի հասել: Այդ տարօրինակ թող չերևա, քանի որ դարեր են անցել, ժողովուրդներ են անհետացել Հին Արևելքում՝ առանց հետք թողնելու, քաղաքներ են կորել, որոնց տեղերն այժմ փնտրում ենք, ի՞նչ իրավունք ունենք այդքան խստապահանջ լինելու: Ո՞ւր է մեր հարեան աղվան ժողովրդի գրականությունը, որն ստեղծվել է համեմատաբար ավելի ուշ շրջանում՝ V—XII դարերում, ինչո՞ւ նրանից ոչ մի նմուշ մեզ չի մնացել:

Պետք է նկատի ունենալ նաև, որ նախամեսրոպյան, այսինքն՝ հեթանոսական հայկական գրականությունը սպանիչ հարված հասցրեց քրիստոնեությունը: Ըստ պատմիչների վկայության, Տրդատն իր գործի գլուխ անցած, Լուսավորչի հետ միասին, քանդում, ավերում էր հեթանոսական մեհյանները և նրանց տեղում քրիստոնեական վանքեր և եկեղեցիներ կառուցում: Այսպես, Ագաթանգեղոսը պատմում է, որ «ինքն իսկ թագաւորն խաղալր գնալր ամենայն զօրօքն հանդերձ ի Վաղարշապատէ» մեհյանները քանդելու: Արտաշատի ճանապարհի վրա նրանք նախ Տիր աստծու տաճարը «քակեալ աւերեալ քանդեցին», Արտաշատում՝ «ամենայն շինուածք մեհենին ի հիմանց դղրդեալ տապալեցան», Թորդանում՝ «սպիտակափառ» կոչվող Վահագնի տաճարը «կործանէին և զպատկերն նորին փշթէին»¹, Երիզա ավանի մեհյանում փշրում են Անահիտի արձանը և այլն:

Հին հայ մատենագիրները նախամեսրոպյան հայ գրականության փաստի վրայով լուծվածք են անցնում, որովհետև նրանք, որպես քրիստոնյա մատենագիրներ, նպատակ ունեն հեթանոսական շրջանը ներկայացնել որպես բարբարոսական շրջան և հին հայկական ողջ մշակույթը կապել միայն քրիստոնեության հետ: Նրանց տեսակետով, Հայաստանում հեթանոսական

¹ Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, էջ 404:

շրջանում տիրում էր տգիտութիւնը և խավարը, և քրիստոնեութիւնն էր, որ եկավ լուսավորելու:

Այսպիսով, բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ Հայաստանում V դարից շատ առաջ գոյութիւն է ունեցել հայերեն գիր և գրականութիւն: Այդ գրականութիւնը գլխավորապէս մեհլաններում էր կենտրոնացված և նրանց ավերակների տակ էլ թաղվեց: Քրիստոնեութիւնն առաջին մեծ զոհերից մեկը հեթանոսական հայկական մատենագրութիւնը հանդիսացավ:

* * *

Հարց է առաջանում՝ եթե իրոք եղել են նախամեսոպոյան գրեր, ապա ի՞նչ տեսակ գրեր են եղել նրանք՝ հիերոգլիֆներ, սեպագրեր, ներկա գրերի այլ տեսակներ, թէ մեզ բոլորովին անծանոթ գրեր: Այս հարցին հայագիտութիւնն մեջ տարբեր պատասխաններ են տրվել:

Մկրտիչ Էմինը «Об армянском алфавите» աշխատութիւնն մեզ կարծիք է հայտնել, որ Մեսրոպ Մաշտոցից առաջ Հայաստանում գործ է ածվել հիերոգլիֆ գրութիւնը, որի նշանագրերի մի մասը մեզ է հասել քերականական բովանդակութեամբ ձեռագրերի «Ճշանագիր իմաստնոց» կոչված ցուցակների մեջ: Այդ նշանագրերից 84-ը նա հրատարակել է վերը հիշված աշխատութիւնն հավելվածում¹:

Հայկական ձեռագրերում, իրոք, հաճախ են պատահում հայավումների և գաղափարագրերի խառը ցուցակներ: Նրանք վերնագրված են լինում սովորաբար «Ճշանագիր իմաստնոց» ձևով և պարունակում են ավելի քան 500 նշանագրեր: Էմինի խոսքը սրանց է վերաբերում: Այս նշանագրերի վրա հետագայում մենք հանգամանորեն կանգ ենք առնելու, իսկ այժմ կասենք, որ այս տեսակի տը փորձել է հերքել պրոֆ. Աճառյանը: Նա աշխատել է ապացուցել, որ նշված գաղափարագրերը ոչ թե հին հայկական գրերն են եղել, այլ սղագրութիւնն հատուկ նշաններ, որոնք ստեղծվել են ուշ միջնադարում, երբ արդեն կալին մեսոպոյան գրերը²:

¹ Էմինի այս աշխատութիւնը հրատարակվել է 1858 թվականին՝ Խորենացու Հայոց պատմութիւնն ուսերեն թարգմանութիւնն հավելվածում: Նրա Փրանսերեն թարգմանութիւնը հրատարակվել է «Revue d'orient» թերթում 1865 թվականին, իսկ հայերեն թարգմանութիւնը «Հայկական աշխարհ»-ում՝ 1870 թվականին, էջ 42—46:

² Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 56—57:

Պրոֆ. Ք. Պատկանյանը գտնում է, որ Մեսրոպ Մաշտոցից առաջ գործ են ածվել դանիելյան կոչվող գրերը, որոնք, ինչպես հայտնի է, բերել տրվեցին Վասմշապուհի ցուցմունքով և Մաշտոցի դպրոցում երկու տարի պարապեցին նրանով: Պրոֆ. Պատկանյանն այս մասին Մովսես Կաղանկատպացու «Պատմության» իր կատարած թարգմանության ծանոթագրություններից մեկի մեջ հետևյալն է գրում. «Ճիշտ է այն կարծիքը, որի համեմատ Մաշտոցը ոչ թե գտավ հայկական այբուբենը, այլ արդեն եղածը, բայց ընդհանուրից չօգտագործված դանիելյան հայկական այբուբենը կատարելագործեց»¹: Նույն կարծիքն են հայտնել նաև ակադ. Բրոսսեն, պրոֆ. Հյուբշմանը և ուրիշներ:

Դանիելյան գրերը հին հայկական գրեր համարելը բացահայտ սխալ է: Ժամանակակից պատմիչների տեղեկություններից պարզ երևում է, որ դանիելյան գրերը ստեղծվել էին ոչ թե վաղուց, այլ իրեն՝ Դանիելի կողմից, որը Մեսրոպ Մաշտոցին ժամանակակից անձնավորություն էր: Ապա՝ դանիելյան այբ գրերը պակասավոր գրեր էին. Մաշտոցը երկու տարի շարունակ այդ տառերով փորձել է պարապել իր աշակերտների հետ, բայց՝ վերջում, տեսնելով, որ ոչինչ դուրս չի գալիս, թողել է այն և ձեռնարկել հայկական նոր տառերի ստեղծմանը:

Ակադ. Օրբելին ենթադրում է, որ հայկական ներկա գրերից առաջ չափաստանում գործ են ածվել արամեական նշանագրերը: Նրա կարծիքով, Սևանի լճի մոտ գտնված արամեական երկու արձանագրությունները գրված են արամեական գրերով, բայց հայերեն լեզվով: Գտնված այդ երկու արձանագրությունները, գրում է նա, որոնք «գրված են սեմիտական նշանագրերով, պիտի կարդացվեն հայերեն»²:

Նշված արձանագրությունների վերծանությունը, սակայն, ինչպես տեսանք նախորդ գլխում, չի հաստատում մեծանուն ականգամիկոսի ենթադրությունը:

Ենթադրություններ են եղել, որ նախամեսրոպյան գրություն լինի մի քանդակապատկերի տակեղած նշանագրերը, որ հրատարակել է պրոֆ. Գ. Լևոնյանը³: Քանդակապատկերի վրա հետևյալն է երևում. մեջտեղում դրված է մի պատվանդան, վրան եզան գլուխ, որը

¹ К. Патканов, История Каганкатвази, էջ 346:

² «Известия» («Թաթերթ»), Москва, 31 января, 1941:

³ Գ. Լևոնյան, Մի առեղծվածային քանդակապատկեր, «Սովետական արվեստ», 1941, էջ 69—71:

լիզում է իր կաշին. եզան գլխի աջ և ձախ կողմերում դրված են յուղակալներ: Պատվանդանի կողքերում պատկերված է մի թագավորի և մի թագուհու նկար, որոնք երկրպագում են եզ-աստծուն: Նրանք ձեռքերում ունեն կապուկներ, որոնք նվիրաբերում են աստծուն: Թագավորի և թագուհու կողքերին շարված են իրենց վեց երեխաները: Չորս փոքրիկ կճուճներ դրված են արկղաձև պատվանդանի վրա: Այս նկարի ներքին մասում բերված է երկու տող գրություն, որի տառերի մեծ մասը հայկական է. պարզ կարելի է տեսնել «Ա», «Մ», «Ս» տառերը: Գրությունը հաստատ հայերեն է թվում, բայց կան որոշ տառեր, որոնք մեզ անծանոթ նշանագրեր են:

Պրոֆ. Գ. Լևոնյանը, հրատարակելով այս տեքստը, հետևյալ եզրակացություն է հանգել.

1) Հավանական է, որ քանդակապատկերի տակ բերված գրերը նախամեսոպոյտեմ մեզ չհասած գրերն են, որովհետև նկարի վրա դրոշմված թագավորը և թագուհին, նրանց զգեստները, նրանց թագերը, բոլորն էլ հին են, հեթանոսական, իսկ հեթանոսական Հայաստանում հայտնի է, որ պաշտվել է եզը (Դիրաբլու և Ղուշչի գյուղերում գտնված են պաշտվող եզան գլուխներ): Սակայն Լևոնյանին մի բան է տարակուսանք պատճառել, թե ինչո՞ւ է գիրը ձախից աջ, եթե հեթանոսական է, պիտի լիներ աջից ձախ:

2) Կարող է պատահել, որ այս քանդակապատկերը պատրաստած լինեն հեթանոս հայերը, բայց այդ դեպքում ինչպես համատեղել այստեղ թագավորի ներկայությունը, որովհետև քրիստոնեությունը շրջանում հայ հեթանոս թագավորների չեն եղել:

3) Հավանական է նաև, որ կեղծիք է, այն դեպքում, հարց է տալիս Լևոնյանը, ապա ի՞նչ տառեր են սրանք:

Մեր կարծիքով քանդակապատկերի այդ գրությունը բացահայտ կեղծիք է: Այդ պարզ երևում է տառերի ձևերից՝ որոնք ուղղագրիծ են: Ուղղագրիծ նման տառեր գրում էին միայն XVI—XVII դարերում: Ըստ երևույթին, կեղծարարը ծանոթ չի եղել հայկական գրի պատմության հետ, և այդ էլ մատնում է իրեն:

Եվ, վերջապես, որոշ հայագետներ այն կարծիքն են հայտնել, որ Մեսրոպ Մաշտոցից առաջ հայերը գրել են հունարեն և ասորերեն գրերով: Մենք ևս պաշտպանում ենք այդ տեսակետը որոշ վերապահումով, ընդունելով միաժամանակ, որ մինչև III դարի վերջերը հայկական մեհյաններում գործ է ածվել ինքնուրույն նշանագրություն: Քրիստոնեությունը Հայաստանում մուտք գործելուց

հետո, երբ ոչնչացվեց հայ մեհենական մատենագրութիւնը, հայերը շարունակեցին գործածել հունական և ասորական գրերը:

Նախամեսրոպյան շրջանում Հայաստանում եղել է դպրոց և մատենագրութիւն: Այդ անվիճելի է: Փալստոսը վկայում է, որ Ներսես Մեծը (353—373 թթ.) դպրոցներ էր բաց անում Հայաստանում, ուր դասավանդում էին հունարեն և ասորերեն. «Վարգէր ի տեղիս տեղիս դպրոցս լունարէն և ասորերէն լամենայն գաւառս Հայոց»¹:

Խորենացու տեղեկութիւնից հայտնի է, որ Արշակի ձերբակալութիւնից հետո, երբ պարսից զորքը Մերուժան Արծրունու ուղեկցութեամբ մտավ Հայաստան, Մերուժանը հրամայեց վառել Հայաստանում եղած հունարեն ձեռագրերը, որոնք, նրա կարծիքով, հայերին կապում էին հույների հետ. «Եւ զորս միանգամ գիրս գտանէր՝ այրէր, և հրաման տայր մի՛ ուսանել զդպրութիւն լունարէն, այլ զպարսիկ, և մի՛ ոք իշխեսցէ լոյն խօսել կամ թարգմանել. այնպիսի ինչ պատճառաւ, զի ամենևին մի՛ լիցի Հայոց ընդ Յունաց ծանօթութիւն և հաղորդութիւն սիրոյ»²:

Խորենացին, քննադատելով այն մարդկանց, որոնք հին հայկական մատենագրութեան բացակայութիւնը բացատրում են հաճախ կրկնվող պատերազմներով և նշանագրերի բացակայութեամբ, գտնում է այդ անարդարացի, քանի որ «... գտանին և միջոցք լեալ պատերազմացն, և զիր Պարսից և Յունաց, որովք այժմ զիւղից և գաւառաց, ևս և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց, և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ զրուցած մատեանք, մանաւանդ որ սեպհական ազատութեան պայազատութիւն»³: Ըստ որում, այստեղ «գիր» բառը Խորենացին որոշակի գործ է ածել «նշանագիր» իմաստով, իսկ «գրութիւն»-ը՝ «դպրութիւն»:

Նախամեսրոպյան գրի և գրականութեան մասին հայ պատմիչներից միջանկյալ մի ակնարկ ունի նաև Ղազար Փարպեցին: Նա, խոսելով Մեսրոպ Մաշտոցի գրերից առաջ եկեղեցիներում ասորերեն լեզվով պաշտամունք կատարելու սովորութեան մասին, դատապարտում է հայ եկեղեցականներին՝ թե ինչո՞ւ նրանք գոյութիւն ունեցող հայերեն նշանագրերը չեն օգտագործում. «...մանաւանդ թէ գոն նշանագիրք հայերէն լեզույս, որով հնար է՝ ինքեան

¹ Փալստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 110:

² Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 301:

³ Նույն տեղը, էջ 11:

հունատառ հայերեն մի ժածկագիր, որի մեջ տարբեր նշանագրերով գրված են հայկական այն տառերը, որոնք չկան հունարեն այբուբենում:


Այս գրութիւնը, որի վրա մենք հանգամանորեն կանգ ենք առնելու «Ծածկագրութիւն» գլխում, առիթ է տալիս մեզ մտածելու, թե արդյոք այդ գրութիւնը հենց նախամեսրոպլան այն գրութիւնը չէ՞, որը պահպել է մինչև XIV դարը և անցյալի ավանդական սովորութեան հիման վրա կրկնվել ժածկագրութեան մեջ: Վերձուական խոսք այժմ ասել չենք կարող:

Ի դեպ, 1957 թվականին լույս ընծայված ակադ. Ն. Մանանդյանի «Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան» երկրորդ հատորում հեղինակը հավանական է համարում, որ Մեսրոպից առաջ գոյութիւն է ունեցել հայ գրականութիւն այլ տառանիշերով. «Եվ միանգամայն հավանական կարելի է համարել,— գրում է նա, որ քրիստոնեութեան սկզբից հենց, ինչպես այդ երևում է աղբյուրների որոշ ակնարկներից, կարող էին փորձ արած լինել ստեղծելու հայերեն դպրութիւն, գլխավորապես, սեմական լեզուների այբուբենների օգնութեամբ, Հարավային Հայաստանում: Ասորական միսիոներների կամ թերևս իր՝ Դանիելի, այս առաջին փորձը ոչ թե այն էր, որ նրանք այբուբեն էին հնարել հայերեն լեզվի հնչյունաբանութեանը համապատասխանող, այլ միայն այն, որ նրանք օտար լեզվի նշանագրերն աշխատել էին կիրառել հայերեն լեզվի համար»¹:

Ներկա գրերով V դարում ստեղծված հայկական հարուստ մատենագրութիւնը ամալի անդաստանում չի ստեղծվել, այլ հիմնըված է հին հայկական մշակված գրական լեզվի և անցյալի հարուստ կուլտուրական ժառանգութեան վրա:

Ամփոփելով մեր կարծիքը նախամեսրոպլան հայ գրի և գրականութեան մասին, մենք գալիս ենք վճռական այն եզրակացութեան, որ հեթանոսական Հայաստանում գոյութիւն է ունեցել հայկական մեհենական գիր և գրականութիւն, որը ոչնչացվել է ամբողջապես քրիստոնեութեան կողմից: Քրիստոնեութիւնը Հայաստանում ճանաչվելուց հետո մի քանի դար շարունակ գործ են ածել հունարեն և ասորերեն տառանիշերը:

¹ Ն. Մանանդյան, Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, Հատոր Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 258—259:



ԳՆՈՒՆ ԵՐՐՈՐԴ



ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

այլական գրերի ստեղծման մասին մենք ունենք երեք պատմական սկզբնաղբյուր՝ Կորյունի «Վարք Մաշտոցի», Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» և Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» աշխատութիւնները: Ուշ միջնադարյան հայ պատմիչների հաղորդած տեղեկութիւնները, հիմնականում, վերոհիշյալ հեղինակներից վերցրած կրկնութիւններն են:

Հայկական գրերի ստեղծման մասին վերև հիշված պատմիչներից ամենից սուղագիտուը Կորյունն է: Եվ դա հասկանալի է. նա եղել է Մաշտոցի աշակերտը, լավատեղյակ է իր ուսուցչի գործունեության հետ և գործուն մասնակցութիւն է ունեցել հայկական գրերի ստեղծմանը: Սակայն այդ հիմք չի տալիս թերագնահատելու հայկական մյուս պատմիչների տեղեկութիւնները, ինչպես վարվում են ոմանք: Անարդարացի են նաև այն հեղինակները, որոնք թերահավատութիւնը են վերաբերվում Կորյունի տեղեկութիւններին և առաջնութիւնը տալիս Ղազար Փարպեցուն: Նշված երեք պատմիչների տեղեկութիւնների քննական և բազմակողմանի ուսումնասիրության հիման վրա հնարավոր է լինում կազմել հայ գրերի ստեղծման բավականին մանրամասն պատմութիւնը:

Հայկական ներկա գրերի պատմութիւնը սերտորեն կապված

է Մաշտոցի¹ անվան հետ, ուստի և անհրաժեշտ ենք համարում մեր ընթերցողին համառոտակի ծանոթացնել Մաշտոցի կյանքի և գործունեությունից հետ:

Մաշտոցը ծագումով գյուղացի է. նա ծնվել է Տարոն գավառի Հացեկաց գյուղում: Հոր անունն է Վարդան: Այս մասին Կորյունը հետևյալն է գրում. «Առն, զոր ի նախակարգ բանիս նշանակեմք, վասն որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր Մաշթոց անուն, ի Տարօնական գաւառէն, ի Հացեկաց զեղջէ (ընդգծումը մերն է—Ա. Ա.), որդի առն երանելոցն Վարդան կոչեցելոյ»²:

Մ. էմինը և Հ. Գաթրըճյանը, հիմնվելով Մաշտոցի հոր Վարդան անվան, ինչպես և Մաշտոցի ծննդավայրը Տարոնը հանդիսանալու փաստերի վրա՝ ազնվական ծագում են վերագրել նրան՝ սերելով Մամիկոնյաններից³: Սակայն այս կարծիքը պատմական աղբյուրներով չի հաստատվում: Ճիշտ է, Շիրակացու մոտ կա մի անորոշ ակնարկ այն մասին, որ իբր Մաշտոցը «յազատ տանէ» էր⁴, սակայն այդ՝ ավատական պաշտոնական մատենագրության սովորական ձգտումն է ազնվականական ծագում վերագրել հալ մատենագրության ասպարեզում աշխատող աչքի ընկնող դեմքերին: Շիրակացու այդ ակնարկը զուրկ է պատմական հիմքից:

Անհիմն է նաև հայագիտության մեջ արտահայտված մյուս տեսակետը, որ իբր Մաշտոցը «կարճազատ»-ի՝ ճորտ գյուղացու որդի է եղել: Տվյալ եզրակացության համար հիմք է ծառայել Փավստոս Բյուզանդի մի վկայությունը՝ Հացեկաց գյուղը «կարճազատ» գյուղ անվանելու մասին⁵: Բայց Փավստոսի մոտ «կարճազատ» բառը ունի ո՛չ թե «ճորտական» գյուղ, այլ «սահմանափակ ազատություն ունեցող» գյուղ իմաստը, որից զուցե կարելի լինի ենթադրել, որ այն ֆեոդալական կախվածությունից մեջ ընկած գյուղ է եղել:

¹ Մաշտոց անունը ձեռագրերում մեզ հանդիպում է տարբեր ուղղագրություններով՝ «Մաժոց», «Մաշտոց», «Մաշթոց»: Որոշ հեղինակներ (Թորենացի, Շիրակացի և ուրիշներ) Մաշտոցին հիշում են Մեսրոպ անունով, որը, հավանական է, Մաշտոցի կրկնանունն է:

² Կորյուն, Վարդ Մաշտոցի, հրատարակություն պրոֆ. Մ. Արեղյանի, Երևան, 1941, էջ 36:

³ Н. О. Эмин, Исследования и статьи, Москва, 1896, էջ 206:

Հ. Գաթրըճյան, Տիեզերական պատմություն, Վիեննա, Հատ. Բ, 1852, էջ 253,

⁴ Ա. Արաբաձյան, Անանիա Շիրակացու Մատենագրությունը, Երևան, 1944, էջ 389:

⁵ Փավստոս Բյուզանդ, Վենետիկ, 1889, էջ 111, գլ. ԺԹ:

Բոլոր դեպքերում, վերև բերված երկու կարծիքներն էլ ծայրահեղություններ են, սզկբնաղբյուրների հիման վրա մենք կարող ենք միայն հաստատապես ասել, որ Մաշտոցը եղել է աշխատավոր գյուղացու որդի:

Կորյունի տեղեկությունից երևում է, որ Մաշտոցը մանուկ հասակում Բունական կրթություն է ստացել. «ի մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբ»¹: Եթե հավատալու լինենք «Պատմութիւն սրբոցն Ներսիսի» անվավերական մի գրության տեղեկության, Մաշտոցը սովորել է Ներսես Մեծի մոտ²: Սակայն, ինչպես իրավացի նկատել են պրոֆ. Գ. Սալաթյանը³ և ակադ. Հ. Մանանդյանը⁴, այդ տեղեկությունը ստույգ չէ, քանի որ աճհնար է, որ ալդ մասին լուր Մաշտոցի կենսագիրը: Ավելի հավանական է պրոֆ. Ն. Աղոնցի ենթադրությունը⁵, որ Մաշտոցը սովորել է Անտիոքի հունական նշանավոր դպրոցում, որի ուսուցչապետն էր հայտնի իմաստասեր և ճարտասան Լիբրանոսը: Վերջինիս դպրոցի սաներիցն են եղել վաղ քրիստոնեությունից աչքի ընկնող մի շարք տեսաբաններ՝ Հովհաննես Ոսկեբերանը, Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Նազիանզացին, Թեոդորոս Մոպսուեստացին, Ղևոնդիոս Հակիազնը (որը Անտիոքի համալսարանի ուսուցչապետն էր) և ուրիշներ: Մաշտոցի՝ Անտիոքի դպրոցում սովորելու օգտին է խոսում Թեոդորոս Մոպսուեստացու մոտիկությունը Մաշտոցին, որը հատուկ աշխատություն է գրել Մաշտոցի համար մոգակրոնություն մասին:

Բանասեր Հ. Գաթրըճյանը Մաշտոցի ծննդյան թվականն է համարում 361-ը. «Մեսրոպ... ծնեալ լամի 361»⁶: Նույն տեսակետն է պաշտպանում Հ. Ակինյանը⁷: Պրոֆ. Աճառյանը ենթադրում է, որ Մաշտոցը ծնված պիտի լինի 360 թվականին⁸:

¹ Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 36:

² «Սոփերք Հայկականք», է, Վենետիկ, 1853, էջ 28:

³ Н. О. Эмин, Исследования и статьи, էջ 206:

⁴ Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, էջ 250:

⁵ Ն. Աղոնց, Անծանոթ էջեր Մաշտոցի և նրա աշակերտների կյանքից՝ բառ օտար աղբյուրների («Հանդէս ամսօրեայ», 1953, էջ 195):

⁶ Հ. Գաթրըճյան, Տիեզերական պատմութիւն. հատ. Բ, էջ 523:

⁷ Ն. Ակինյան, Ս. Մաշտոց վարդապետ, Վիեննա, 1949, էջ 26:

⁸ Հ. Աճառյան, Մեսրոպ Մաշտոց («Էջմիածին», 1954, № 11, էջ 30):

Մաշտոցի ծննդյան տարեթվի մասին թեպետ հաստատուն տվյալներ չկան, սակայն տոմարական որոշ հաշիվներ հիմք են տալիս ենթադրելու, որ նշված գիտնականների հաշվումները մոտավորապես ճիշտ են—Մաշտոցը ծնված պետք է լինի 361—364 թվականներին (այս մասին խոսք կլինի առջևում):

Հացեկացի երիտասարդը, տեղում կրթություն ստանալուց հետո, գալիս է Վաղարշապատ և ծառայության մտնում Խոսրով Երրորդի (383/4—388,9 թթ.) արքունիքում իբրև զինվանադպիր¹ Առաջին հազարապետի ձեռքի տակ:

Մաշտոցն իր ժամանակի կրթված անձնավորություններից մեկն է եղել: Այն փաստը, որ նա կարողացել է դպրի պաշտոնով, առանց դժվարությունների, աշխատանքի ընդունվել արքունիքում², վկայում է նրա բարձր պատրաստականության մասին:

Սկզբնաղբյուրներում եղած ակնարկներից կարելի է ենթադրել, որ Մաշտոցը արքունիքում որոշ ժամանակ զինվանադպրի պաշտոնում ծառայելուց հետո անցնում է զինվորական ծառայության: Բայց այստեղ ևս երկար չի մնում: Շուտով նա թողնում է արքունիքի իր պաշտոնը և հոգևոր կոչում ընդունում՝ միաբանելով Գողթնի վանքերից մեկում: Պրոֆ. Մ. Աբեղյանը ենթադրում է, որ նա միաբանած պետք է լինի Երնշակ գավառի Մեսրոպավանք կամ Մսրավանք գյուղում³: Ըստ Կորյունի, Մաշտոցի՝ զինվորական ծառայությունը թողնելը և հոգևոր կոչում ընդունելը տեղի է ունեցել Վռամ Դ Կրմանի չորրորդ տարին, այսինքն՝ 391/2 թվականին (Վռամ Դ-ն գահակալել է 388 օգոստոս—389 հուլիս տարում):

Հոգևորական դառնալուց հետո Մաշտոցը արագ բարձրանում է եկեղեցական հիերարխիայի սանդուղքով և հասնում քրեպիսկոպոսության աստիճանի՝ զբաղվելով շրջիկ քարոզչությամբ: Պետք է նկատի ունենալ, որ այդ ժամանակ հեթանոսությունը բավականաչափ ամուր հիմքեր ուներ Հայաստանի լեռնային շրջաններում, և նման քարոզչության աշխատանքի կարիքը խիստ զգացվում էր:

Ենթադրվում է, որ Թեոդորոս Մոպսուեստացին 391/2 թվականին է գրել մոգակրոնության մասին իր աշխատությունը Մաշտոցի համար, որովհետև տվյալ աշխատության վերնագրում Մաշ-

¹ Մ. Աբեղյան, Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը («Մովսեսական գրականություն», 1941, № 1, էջ 48):

տոցն անվանված է «քրոնպիսկոպոս» (Χρονισκοπος), իսկ ինքը թեոդորոսը՝ «երեց» (πρεσβύτερος)։ Մեզ հայտնի է, որ Մաշտոցը քրոնպիսկոպոսի կոչում է ստացել 391/2 թվականներին, իսկ թեոդորոսը քահանայության աստիճանում մնացել է մինչև 383 թվականը, իսկ այնուհետև՝ Մոպսուեստի եպիսկոպոս, հետևապես, այդ տեղի պիտի ունեցած լինի 391/2 թվականներին²։

Մաշտոցի առաջին գործն է լինում քարոզչության մեկնել Գողթն գավառը։ Այստեղ է, որ նա, մոտիկից շփվելով ժողովրդի հետ, տեսնում է, թե ինչպես հունական և ասորական ազդեցությունները սպառնում են տեղական կուլտուրային։

Եվ Մաշտոցը, տեսնելով այս ամենը, խոր վիշտ է զգում. «... լարածամ արամէր երանելի այրն Մաշտոց՝ տեսանելով զմեծ ջանն և զառուելապէս ծախս մանկանցն Հայաստան աշխարհիս, որք բազում թոշակօք և հեռագնաց ճանապարհօք և բազմածամանակեալ ղեգերմամբք մաշէին զաւուրս իւրեանց ի դպրոցս ասորի գիտութեան»³։ Նա ըմբռնում էր այն պարզ ճշմարտությունը, որ հունարեն և ասորերեն լեզուների գերիշխող այդ վիճակը փնասակար կարող է լինել հալ ժողովրդի համար։ Եվ դրա զեմ կովելու լավագուլն միջոցը՝ սեփական գիր և գրականություն ստեղծելն էր։

Մաշտոցը Գողթնից վերադառնալուց հետո լինում է կաթողիկոս Սահակ Պարթևի մոտ և պատմում ժողովրդի ծանր վիճակի մասին ու հայտնում իր մտահոգությունը՝ հալերեն գրերի ստեղծման գործին ձեռնարկելու մասին։ Այնուհետև Սահակ կաթողիկոսը, Մաշտոցի հետ միասին, դիմում է Վռամշապուհ թագավորին։ Վերջինս հավանություն է տալիս նրանց մտադրությունը և հայտնում, թե ինքը տեղեկություն ունի, որ Աղձնիքի Արզն քաղաքի Դանիել եպիսկոպոսն արդեն ունի կազմած հալերեն գրեր։ Որոշվում է բերել տալ այդ գրերը։ Դանիելից գրեր բերելու համար ուղարկում են Վահրիճ անունով մեկին, որը զնում է Դանիելի բարեկամ Հաբել քահանայի մոտ և վերջինիս միջոցով բերել տալիս դանիելյան գրերը։ Այս տեղի է ունեցել, ըստ վարքագրի տեղեկություն, Վռամշապուհի գահակալության հինգերորդ տարին, այսինքն՝ 406—407 թվականներին⁴։

¹ Photii bibliotheca, 81 (Migne, Patrologia graeca, 103, 281)։—Հմտ. Ն. Ազոնց, Մաշտոց և նրա աշակերտները, էջ 7—8։

² Հ. Անառյան, Մեսրոպ Մաշտոց, «Եղմիածին», 1954, № 11, էջ 26։

³ Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, էջ 13։

⁴ Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 44։

Մաշտոցը դպրոց է բաց անում, աշակերտներ հավաքում և սկսում պարապել դանիելյան այս գրերով: Սակայն երկու տարի (ժամա երկուս. պրոֆ. Հ. Աճառյանի կարծիքով՝ երկու ամիս ժամիս երկուս) այդ տառերով պարապելուց հետո տեսնում են, որ նրանք մեծ թերություններ ունեն և չեն արտահայտում հայկական հարուստ լեզվի հնչյունական առանձնահատկություններ¹:

Այբուբենի այս պակասը լրացնելու նպատակով, Մաշտոցը Սահակի հանձնարարությունում, իր հետ վերցնելով մի խումբ աշակերտներ, մեկնում է Միջագետք՝ հայկական համապատասխան այբուբենն այնտեղ ստեղծելու նպատակով:

Միջագետքն այդ ժամանակ իրալում էր իր բարձրագույն դպրոցներով: Այնտեղ էին գտնվում ականավոր գիտնականներ². Եղևսիայում այդ ժամանակ գործում էր պարսկական նշանավոր դպրոցը՝ Իբասի գլխավորությունում, Ամիդի դպրոցը՝ Ակակիոսի գլխավորությունում, և այլն³:

Մաշտոցը լինում է Ամիդ և Եղևսիա քաղաքներում: Նա արտակարգ լավ ընդունելություն է գտնում այդ վայրերի հուլն և ասորի մտավորականների կողմից: Իր հետ տարած աշակերտներին նա բաժանում է երկու խմբի՝ մի մասին հանձնարարում է հունարեն սովորել, իսկ մյուսին՝ ասորերեն, իսկ ինքը, տեղացի գիտնականների աջակցությունում, զբաղվում է հայկական այբուբենի ձևավորումով:

Պրոֆ. Ն. Ադոնցը, Փոտ պատրիարքի «Դրադարան» աշխատության մեջ հայտարարած Թեոդորոս Մոպսուեստացու աշխատություններից մեկի վերը հիշված համառոտագրության մեջ, որը, ինչպես ասացինք, նվիրված է եղել Մաշտոցին, եկել է այն եզրակացություն, որ Մեսրոպը դպրոցական շրջանից, ժանոթության մեջ գտնվելով Թեոդորոս Մոպսուեստացու՝ քրիստոնեական աղանդապետ Նեստորի ուսուցչի հետ, և, հավանական է, նրա օգնությամբ էլ կազմել է հայկական այբուբենը⁴:

Մաշտոցը, հայկական այբուբենը ստեղծելուց հետո, հայկական գրերը ձևավորել է տալիս Սամուստ քաղաքում (Եփրատի վրա), Հուսփանոս Rufinus անունով մի գեղազրի միջոցով:

¹ Հ. Աճառյան, երկու ուզղում Կորյունի մեջ (Տեղեկագիր Արմֆանի, 1941, № 1 (6), էջ 170):

² Հ. Աճառյան, Մեսրոպ Մաշտոց, շեջմիածին, 1954, № 1, էջ 26:

³ Peeters, Revue des études arméniennes, № 9, էջ 209:

⁴ Ն. Ադոնց, Անժանոթ էջեր Մաշտոցի և նրա աշակերտների կյանքից՝ բոս ստար աղբյուրների (Վանազես ամսօրեայ, 1952, էջ 195):

Հայկական այբուբենն ստեղծելու աշխատանքն ավարտելուց հետո Մաշտոցն իր երկու աշակերտներին՝ Հովսեփի Պաղնացու և Հովհան Եկեղեցացու օգնությամբ, նորաստեղծ նշանագրերով հայերեն է թարգմանում Սողոմոնի առակները, որը մանր խրատական ասացվածքներ է պարունակում և հարմար էր նորակիրթ երեխաներին դաստիարակելու համար, ու մեծ հանդիսավորությամբ վերադառնում է Հայաստան:

Կորյունի տեղեկություններից երևում է, որ գրերի ստեղծմանը բացառիկ մեծ նշանակություն է տրվել Հայաստանում. Վաղարշապատ վերադառնալիս Մեսրոպին դիմավորելու են դուրս գալիս թագավորն ու կաթողիկոսը, ճառելով զամենայն նախարարազուեղ աւագանւոյն ամբոխս¹:

Հայկական նշանագրերը Միջագետքից բերելուց հետո Մաշտոցը և Սահակը բաց են անում դպրոցներ և զբաղվում զաստիարակությամբ:

Մաշտոցը նախ կարգավորում է մայրաքաղաքի՝ Արտաշատի, դպրոցական գործերը և ապա մեկնում Դոդթն, Ճառաչին դաստակերտին իւր: Այստեղ նա, տեղի իշխան Շաբիթի աջակցությամբ, հավաքում է երեխաներ և դպրոցներ հիմնում: Ապա մեկնում է Սյունիք, նույնը կատարում նաև այնտեղ՝ Վասակ Սյունեցու օգնությամբ: Այնուհետև նա պտտում է Արևելյան Հայաստանի մյուս շրջանները և ամենուրեք նոր դպրոցներ բաց անում:

Արևելյան Հայաստանում նորաստեղծ գիրը գործածության մեջ դնելուց հետո անհրաժեշտ էր այն գործածության մեջ դնել նաև Արևմտյան Հայաստանում՝ մյուս «... կէս ազգին Հայոց, որ էր ընդ իշխանութեամբ թագաւորին Հոռոմոց»²: Մաշտոցի այդ ուղղությամբ կատարած առաջին փորձն անհաջողությամբ է վերջանում. տեղական իշխանության ներկայացուցիչները թույլ չեն տալիս նրան դպրոցներ բաց անել: Մաշտոցը հարկադրված է լինում իր հետ տարած աշակերտներին թողնել Մելիտինեի Ակակիոս եպիսկոպոսի մոտ և մեկնել Բյուզանդիոն՝ Թեոդոս Բ կայսեր (408—450 թթ.) թուլլովությունը ստանալու:

Բյուզանդական կայսրության քաղաքական վիճակն այդ ժամանակ այնպիսին էր, որ նա հայերի նկատմամբ վերցրել էր սիրաշահելու քաղաքականություն, ուստի կայսրն ընդառաջում է Մաշտոցի ինչպիսիքին և անգամ հանձն է առնում դպրոցների

¹ Կորյուն, Վաբք Մաշտոցի, էջ 54:

² Նույն տեղը, էջ 54:

ծախսերը վերցնել արքունիքի վրա: Մաշտոցն իր աշակերտներով պտտում է Արևմտյան Հայաստանում և մի շարք վայրերում զբոսայրոցներ բաց անում:

Մաշտոցի՝ Արևմտյան Հայաստան գնալու և դպրոցներ բաց անելու այս փաստը տեղի պետք է ունեցած լինի ոչ շուտ, քան 419—420 թվականներին, որովհետև Ակակիտուր Մելիտինեի եպիսկոպոս է կարգվել այդ թվականներին և ոչ ուշ 425 թվականից, որովհետև Մաշտոցը Կոստանդնուպոլսում հանդիպում է ունեցել Ատտիկոս պատրիարքի հետ, իսկ վերջինս մահացել է 425 թվականի հոկտեմբերի 10-ին:

Սակայն Մաշտոցը միայն դպրոցներ բաց անելով չէ, որ զբաղվում է: Նա Սահակ Պարթևի և իր աշակերտների հետ միասին ձեռնարկում է թարգմանական խոշոր աշխատանքի. թարգմանում են ինչպես ասորերենից, այնպես էլ հունարենից: Թարգմանիչների շարքումն են գտնվել հայ երկու ականավոր մատենագիրներ՝ Նզնիկ Կողբացին և Կորյունը:

Ե՛րբ է տեղի ունեցել հայկական գրերի ստեղծումը: Այս հարցի մասին հայագիտության մեջ տարբեր կարծիքներ են հայտնվել:

Բանասեր Գալուստ Տեր-Մկրտչյանը, մանրակրկիտ ուսումնասիրելով սկզբնաղբյուրները, եկել է այն եզրակացության, որ զանիելյան, գրերի ստեղծումը տեղի է ունեցել 405 թվականին, իսկ Մաշտոցի կատարած լրացումը և կատարելագործումը՝ 412—416 թվականներին¹:

Տեր-Մկրտչյանի տեսակետը ժամանակին պաշտոնապես ընդունելություն է գտել հայագիտության մեջ, և 1912 թվականին (հոկտեմբերի 12—13-ին) էջմիածնում և Օշականում նշվել է հայկական գրերի ստեղծման 1500-ամյա հոբելյանը:

Պրոֆ. Ն. Աղոնցը, հիմնվելով այն փաստի վրա, որ Թեոդորոս Մոպսուեստացին աշխատություն է նվիրել Մաշտոցի գործունեությանը, ենթադրում է, որ Մաշտոցը հայկական այբուբենը կազմած պետք է լինի Թեոդորոս Մոպսուեստացու օգնությամբ Նդեսիայում, նրա քահանայության տարիներին՝ 383—392 թվականներին: Նրա կարծիքով հայերեն գրերի ձևավորողը Թեոդորոսի աշակերտ Հոուփանոսն է եղել²:

¹ Գ. Տեր-Մկրտչյան, Հայկական գրություն 1500-ամյակի առթիվ (Արտաբառ), 1912, էջ 499—511):

² Ն. Աղոնց, Անծանոթ էջեր Մաշտոցի և նրա աշակերտների կյանքից («Հանդէս ամսօրեայ», 1925, էջ 439):

Ակադ. Հ. Մանանդյանն անվերապահ ընդունում է պրոֆ. Ն. Ադոնցի այս կարծիքը փոքրիկ ուղղումով, կոնկրետ թվական ընդունելով *Քնոզորոս Մոպսուեստացու* կյանքի վերջին տարին՝ 392 թվականը¹:

Հ. Ն. Ակինյանը հայկական գրերի ստեղծման թվականը համարում է 406—407 թվականները և գտնում, որ հայերեն նոր գրերը Միջագետքից Հայաստան են բերվել 407—408 թվականներին²:

Մեր կարծիքով, ամենից հավանական տեսակետը վերջինն է, և այս էլ պետք է ընդունել հետևյալ նկատառումով.

1) Կորյունի աշխատության վերջաբանում ասված է, որ հայկական գրերը ստեղծվել են Մաշտոցի մահվանից 35 տարի առաջ՝ «ի դպրութենէն Հալոց մինչև ցվախճան Սրբոյն (այսինքն՝ Մաշտոցի—Ա. Ա.)՝ ամք երեսուն և հինգ»։ Տոմարական անվիճելի հաշիվներով պարզված է, որ Մաշտոցը մահացել է 440 թվականի փետրվարի 17-ին. եթե գրերը ստեղծվել են Մաշտոցի մահվանից 35 տարի առաջ, ապա հայկական գրերի ստեղծումը տեղի պետք է ունեցած լինի 406 թվականին:

2) Կորյունը, նույն վերջաբանում, գրերի ստեղծման թվականը հիշում է նաև Հազկերտ Առաջինի թագավորության ութերորդ տարին: Հազկերտը գահ է բարձրացել 399 թվականին. նրա ութերորդ տարին դարձյալ համապատասխանում է 406 թվականին:

3) Կորյունի աշխատությունից հայտնի է, որ Մաշտոցը Միջագետքում գտնված ժամանակ հանդիպում է Ակակիոս և Բաբելյաս եպիսկոպոսներին: Ակակիոսը Ամիդում եպիսկոպոսական աթոռի վրա է գտնվել 400—409 թվականներին, իսկ Բաբելյաս անունը ենթադրվում է, որ աղավաղված է և պետք է եղած լինի Պակիրոս³, ինչպես առաջարկել է Հ. Ն. Ակինյանը, իսկ Պակիրոսը՝ Եղեսիաի եպիսկոպոս է եղել 398—409 թվականներին⁴:

Ահա այս փաստերը մեզ հիմք են տալիս ենթադրելու, որ հայկական գրերի ստեղծման հավանական թվականը պետք է համարել 406—407 թվականները:

¹ Я. А. Манандян Месроп-Маштоц и борьба армянского народа за культурную самобытность, Ереван, 1941, էջ 26:

² Ն. Վ. Ակինյան, Ս. Մաշտոց վարդապետ, էջ 108:

³ Կորյուն, Վարք Մաշտոցի («Հանդէս ամսօրեայ», 1935, էջ 512):

⁴ Braun, Das Buch der Synhados, էջ 1587—1588:

Մաշտոցը մահացել է 440 թվականի մեհեկան ամսի 13-ին, շաբաթ օրը, որը ներկա ամսաթվով (հաշվելով շարժական օրերի քանակը) փետրվարի 17-ն է, և թաղվել է Օշական գյուղում: Մահվանից 3 տարի հետո Վահան Ամատունին նրա շիրիմի վրա կանգնեցրել է «խորան տաշածոլ վիմօք»¹:

Մաշտոցի կյանքի և գործունեության հայտնի թվականների հիման վրա կարելի է մոտավոր ճշտություններ պարզել նաև նրա ծննդյան տարին:

Մեզ հայտնի են Մաշտոցի կյանքի և գործունեության հետ կապված հետևյալ թվականները.

391|2 թ. — եկեղեցական կոչում է ընդունում:

392|3 թ. — Թեոդորոս Մոպսուեստացին աշխատություն է գրում նրա համար:

406|7 թ. — գրերն է ստեղծում Միջագետքում:

407|8 թ. — նորաստեղծ գրերը բերում է Հայաստան:

420—425 թթ. — դպրոցների բացումը Արևմտյան Հայաստանում:

440 թ. — մահը:

Ծննդյան ժամանակը որոշելու համար կարևոր են սկզբի և վերջի թվականները:

Մենք տեսնք, որ եպիսկոպոսության աստիճան է շնորհված Մաշտոցին 391 թվականին: Այդ ժամանակ Մաշտոցը պետք է որ բավականին հասուն, կազմակերպված անձնավորություն եղած լիներ: Եթե ընդունենք, որ նա այդ թվականին եղել է 30—34 տարեկան, ապա նա ծնված պետք է լինի 360—364 թվականներին:

Մաշտոցը մահացել է 440 թվականին, ծերության հասակում: Եթե ընդունենք, որ մահվան տարին նա 80—84 տարեկան ծերունի է եղել, ուրեմն նրա ծննդյան ժամանակը դարձյալ համընկնում է 360—364 թվականներին:

* * *

Հայկական գրության պատմության հետ կապված մյուս կարևոր հարցը՝ հայկական գրության սկզբնաղբյուրի խնդիրն է, այսինքն՝ այն այբուբենի հարցը, որի տառաձևերը և սխտեմը օգտագործվել են հայկական գրության ստեղծման ժամանակ:

¹ Կորյուն, Վարբ Մաշտոցի, էջ 94:

Այս հարցի մասին հայագիտության մեջ տարբեր կարծիքներ են հայտնվել: Գանգ առնենք նրանցից կարևորների վրա:

Չամչյանի կարծիքով Մաշտոցը ոչ մի գրությունից չի օգտվել և բոլոր տառանիշերն էլ ինքն է ստեղծել: Նա գտնում է, որ մի մարդու համար, որը կարող էր հարևան վրացիների և աղվանների համար ինքնուրույն գիր ստեղծել, դժվար չէր իր ժողովրդի համար տառանիշեր ստեղծել առանց ուրիշից օգտվելու¹:

Հազարոս Աղայանը գտնում է, որ հայկական այբուրենի 22 տառեր ասորա-բարելական ծագում ունեն, 7 տառ հետագայում Մեսրոպյն է ավելացրել: Մյուս լոթ տառերի վրայով նա լուծարում է անցնում²:

Հյուրժմանը ենթադրում է, որ Մաշտոցի՝ Դանիելից վերցրած գրերը, թվով 22, հունական են եղել, իսկ մնացած 14 նշանագրերը ինքն է ստեղծել³:

Ի. Հարությունյանի կարծիքով, հայկական այբուրենի 22 տառանիշեր փյունիկեցիներից է վերցված, 2 տառանիշ՝ հունարենից, իսկ մնացած 12 տառանիշերն ինքն է ստեղծել⁴:

Բ. Սարգիսյանը ենթադրում է, որ հայկական այբուրենը երեք տարբեր այբուրենների խառնուրդ է՝ ասորերենի, պարսկերենի և հունարենի՝ ասորերենից վերցրել է 2 տառանիշ, պարսկերենից՝ 12 տառանիշ և հունարենից՝ 22 տառանիշ⁵:

Եվրոպացի հայագետ Մյուլլերը, որը հայկական գրի ատաղձի մասին խոսել է իր երեք հոդվածներում, գտնում է, որ դանիելյան 22 տառերը, որոնք օգտագործել է Մաշտոցը, ասորական ծագում են ունեցել (վերցվել են պալմիրականից) և 7 ձայնավոր ու 7 բաղաձայն տառեր վերցվել են զենդական այբուրենից⁶:

Պրոֆ. Հ. Աճառյանը, որ ամենից հանգամանորեն քննել է հայ գրերի սկզբնավորության հարցը, եկել է այն եզրակացության, որ հայկական այբուրենի 20 տառերը հունարենից են վերցված,

¹ Մ. Չամչյան, Պատմություն Հայոց, հատ. Ա, էջ 700—701:

² Տե՛ս «Մուրճ» ամսագիր, 1890, էջ 1587—1588:

³ Hübschmann, Über Aussprache und Umschreibung der Altarmenischen (ZDMG, 1876, էջ 63):

⁴ Ի. Հարությունյան, Հայոց գիրը, էջ 300—314:

⁵ Տե՛ս «Բաղձափէպ», 1889, էջ 34—35:

⁶ Müller, Über den Ursprung der arm. Schrift, SWAW, 48, 438 և մյուս հոդվածները:

4—6-ը՝ հայկական են, իսկ մնացածը՝ իրանական կամ ասորական ծագում ունեն¹:

Ն. Ակինյանը ենթադրում է, որ հայկական 36 տառերից 33-ը հունարենից են վերցված, իսկ երեքը՝ ասորերենից: Ասորերենից, նրա կարծիքով, Մաշտոցը վերցրել է «Լ», «Ծ» և «Պ» տառաձևերը²:

Հայկական նշանագրերի սկզբնաղբյուրին անդրադարձել ենք նաև մենք մեր «Հայկական պալեոգրաֆիա»-ի մեջ³ և այն տեսակետը պաշտպանել, որ հայկական այբուբենը կազմված է երկու շերտից, որոնցից առաջինը, թվով 24 տառանիշ, դանիելյան գրերն են, իսկ երկրորդը, թվով 12, Մաշտոցի լրացրած տառերը: Անհրաժեշտ ենք համարում ստորև բերել հունական և հայկական այբուբենների համեմատությունը:

Դանիել Ասորին իր այբուբենը կազմել է հունականի վրա՝ սկզբունք ունենալով ձևափոխել հունական տառերը: Այս հիման վրա նա հունական որոշ տառեր շուռ է տվել այս կամ այն կողմը, որոշ տառերի ելուններ է ավելացրել, ձևափոխել է սլունագծերը և այլն: Բայց նա չի փոխել հունական տառերի հնչյունները, ինչպես և նրանց վրա չի ավելացրել ոչ մի նոր հնչյուն:

Նման այբուբենը, պարզ է՝ չէր կարող համապատասխանել հայկական լեզվի առանձնահատկություններին: Այդ շուտով զգում են Սահակը և Մեսրոպը՝ Դանիելի այբուբենը դպրոցում գործածության մեջ դնելուց հետո: Անհրաժեշտ էր ստեղծել հայկական լեզվին համապատասխան նոր տառանիշեր և տառահնչյուններ: Այդ կարևոր գործն իր վրա է վերցնում ինքը Մաշտոցը: Նա ուսումնասիրում է հայկական լեզուն և լրացուցիչ ստեղծում վերև հիշված 12՝ հայկական լեզվին հատուկ հնչյունները, որոնք չկային հունարենում:

Ուշադրություն արժանի է այն, որ Մաշտոցը Դանիելի այբուբենի վրա ավելացրած իր տառերը պատահական, մտացածին ձևով չի ստեղծել, այլ հիմք է ունեցել Դանիելի այս կամ այն տառը՝ իր ձևած տառանիշերը դնելով նախագաղափար տառի կողքին:

¹ Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 271:

² Հ. Աճառյան, Մաշտոց վարդապետ Հոցեկացի («Հանդէս ամսօրեայ», 1935, էջ 512):

³ Ա. Աբրահամյան, Հայկական պալեոգրաֆիա, էջ 34—35:

Հունական մայրեր V դարի	Հին հայ- կական տա- ռեր V դարի	
Α	Ա	— Կտրված է ալֆայի վերևից:
Β	Բ	— Կտրված է բետտայի աջ երկու դարձվածք- ները:
Γ	Գ	— Գամմայի առջևից կտր է ավելացված:
—	Դ	— Ծագել է հայկական «Գ»-ից:
Ε	Ե	— Կտրված է վերին կտուցը:
Ζ	Զ	— Զետտայի վերևում կտր է միացված:
Η	Է	— Կտրված է էտտայի աջ սլունագիծը և ձախից պոչ ավելացված:
—	Ը	— Ծագել է հայկական «Է»-ից:
Θ	Թ	— Թետտայի կտրը բաց է արված:
—	Ք	— Ծագել է հայկական «Թ» տառից. նրա աջ կտրված թևն է:
Ι	Ի	— Իտտայի սլունագծին թև է ավելացված:
Λ	Լ	— Շուռ է տրված լամբա տառը:
—	Ե	— Ծագել է հայկական «Ի»-ից:
—	Ժ	— Ծագել է հայկական «Ճ»-ից:
Κ	Կ	— Կտրված է կապպայի աջ թեքվածքի և սլու- նագծի կեսը:
—	Ն	— Ծագել է հայկական «Կ»-ից:
—	Ջ	— Ծագել է հայկական «Ջ»-ից:
—	Ղ	— Ծագել է հայկական «Լ»-ից:

Δ	Ճ	— Դեղտալի վերևից փոքրիկ պոչիկ է ավելացված:
Μ	Մ	— Շուռ է տրված մու տառը և ելուն ավելացված:
Ω	Յ	— Օմեգան նստեցված է:
Ν	Ն	— Նստեցված է նու տառը և վրան ելուն դրված:
Σ	Հ	— Կտրված է քսի տառի վերին բարդութունը:
Ο	Ո	— Կտրված է օմիկրոնի ներքևից:
—	Չ	— Ծագել է հայկական «Ոճ»-ից:
Π	Պ	— Պի վերին գիծը երկարացված է և կեռ ըստեղծված:
—	Ք	— Ձևված է հունական koppa-լի (90-ի թվանշանագրի հիման վրա):
—	Ռ	— Կազմված է երկու «բ»-երի միացումից:
ϸ	Ս	— Սիգման նստեցված է:
Υ	Ի	— Ձևված է պսիի հիման վրա:
Τ	Ժ	— Վերին ձախ թևը կտրվել է և ավելացվել վերևից:
Ρ	Բ	— Բհոլի վերին կտրը բաց է արված:
—	Յ	— Կազմված է հունական sampl (900-ի թվանշանագրից):
Υ	Վ	— Ձախ թևը սլունագիծ է դարձված, իսկ աջը վեր է ածված թևի:
Φ	Փ	— Կազմված է աննշան փոփոխութուններով:
X	Ք	— Ուղղահայաց ձև է տրված և վրան գլուխ դրված:

Հուլյն-հայերեն տառաձևերի վերև բերված համեմատությունը մեզ բերում է հետևյալ եզրակացություն.

1. Միանգամայն ճիշտ է Պորենացու տեղեկությունը, որ հայկական այբուբենի հիմքը Դանիել Ասորու տառերն են հանդիսացել, որոնք ստեղծված են եղել ըստ ձևով օրինակին հունականին» (էջ 326): Ճիշտ է նաև Կորյունի տեղեկությունը, որ Դանիելը «ի յալլոց զպրութեանց թաղեալ և յարուցեալ դիպեցաւ» (էջ 46), միայն այս նախադասության մեջ անհրաժեշտ է գրչական երկու ուղղում կատարել՝ «թաղեալ» բառն ուղղել «քաղեալ» ձևով, ինչպես ունեն Կորյունի հնագույն բնագրերը¹ և «յարուցեալ» բառն ուղղել «յանկուցեալ» ձևով², այսինքն՝ հարմարեցված, ինչպես հանդիպում ենք Կորյունի մոտ մի այլ կապակցությունում («լզնշանագիրսն» յօրինեալ և յանկուցեալ») (էջ 50):

Իրապես, անմոտություն կլինի մտածել, թե Դանիելը այլ զպրությունից վերցրած տառերը թաղել էր գետնի տակ և հետո «հարություն տվել» (1): Կորյունի մոտ պարզապես ասված է, որ Դանիելի տառերը «քաղված էին այլ զպրությունից և հարմարեցված», մի իրողություն, որ չի կարելի այժմ ժխտել տառաձևերի վերև բերված համեմատությունը տեսնելուց հետո:

2. Դանիել Ասորին հունական այբուբենից վերցրել է հետևյալ 24 տառերը. «ա, բ, գ, դ, ե, թ, ի, լ, կ, մ, լ, ն, շ, ո, պ, ը, ս, վ, տ, ռ, փ. ք»: Պարզվում է, որ տառաքանակի մասին հայ մատենագրության մեջ հաղորդվող տեղեկություններից հավաստին պահվել է Դավիթ Անհաղթին նվիրված այն հանելուկի մեջ՝ «Չափ հասակի իմոյ երկիցս երկոտասան, այժմ եմ երիցս երկոտասան»³, այսինքն՝ առաջ հայկական այբուբենը բաղկացած էր 24 տառից (12×2), իսկ այժմ՝ 36 տառից (12×3):

3. Դանիելը հայկական տառերը հունական կաղապարով ձևելու որոշակի սկզբունք է ունեցել՝ տառերը չվերցնել նույնությամբ, այլ փոփոխություն կատարել. տեղ-տեղ կտրել է, բաց է արել տառերի կլոր մասերը, տեղ-տեղ ելուններ է ավելացրել, մի քանի տառ շուռ է տվել և այլ փոփոխություններ կատարել: Բայց նա աշխատել է հարազատությամբ պահպանել հունական տառերի հընչյունական արժեքը:

¹ Կորյունի հնագույն այդ տեքստերն ընդօրինակված են XIII—XIV դարերի գրչություն ունեցող ՀՊՄ № 3787 և № 3797 ձեռագրերից:

² Այս ուղղումն առաջարկել է Հ. Ն. Ալեխյանը (տես Ս. Մեսրոպ Մաշտոց, էջ 241):

³ «Բազմավէպ», 1948, էջ 193:

4. Դանիել Ասորու այս այբուբենը չէր համապատասխանում հայկական լեզվի հնչյունական առանձնահատկություններին. պակասում էին այն տառերը, որոնք բնորոշ էին հայոց լեզվին և որոնք չկային հունարեն այբուբենում. դրանք հետևյալներն էին. շ, ժ, խ, ծ, հ, ձ, դ, ճ, չ, ջ, ու, ց»:

Նման այբուբենով աշակերտներ սովորեցնել և գիր ու գրականություն ստեղծել, իհարկե, դժվար էր: Շուտով զգում է այդ Մաշտոցը և ձեռնարկում լրացնելու պակասող տառերը: Խորենացու ակնարկը, որ Դանիելի «մուրացիկ և կարկատան» այբուբենը բավական չէր ճշդովի զհեզեռնալ բառից հայկականաց» (էջ 326), պետք է հասկանալ՝ չէր արտահայտում հայկական բառերի վանկերի հնչյունական հարազատությունը»: Նույն իմաստն ունի նաև Կորյունի տեղեկությունը, որ Դանիելից բերված նշանագրերը «չեն բաւական... որչ ածել զսիւղորայս, զկապս հայերէն լեզուոյն», այսինքն՝ չեն կարող ճշտութեամբ արտահայտել հայերեն լեզվի հնչյունական հարազատությունը:

5. Մաշտոցը, ինչպես երևում է, այբուբենը կազմելիս ինքնուրույն մոտեցում է ունեցել. նա վերցրել է Դանիելի ձևափոխած և հայացրած պատրաստի տառերը և նրանց հիման վրա ձևել և լրացրել հայկական այբուբենը՝ «Դ»-ից ձևել է «Դ»-ն, «Թ»-ից՝ «Ժ»-ն, «Կ»-ից՝ «Խ»-ն, «Ձ»-ից՝ «Ջ»-ն, «Ղ»-ն, «Ո»-ից՝ «Չ»-ն և այլն: Ըստ որում, նոր ստեղծած տառերը նա իր այբուբենում, մեծ մասամբ, դրել է կաղապարված տառի կողքին:

Հավանական է, Մաշտոցը իր այբուբենում փոփոխել և տեղաշարժել է «Ի» տառը, որը Դանիելի մոտ եղած պիտի լիներ հունական զելտա տառի նման՝ Δ: Նա այդ արել է, հավանական է, հունականի նմանությունից հեռանալու համար—այդ տառը տարել է ծ-ի տեղ, իսկ ինքը հայկական «Դ»-ն ձևել է հայկական «Դ» տառից:

Մաշտոցի ինքնուրույն կազմած այս 36 տառանիշ այբուբենը հանձնարարվում է Հուսիսանոս անունով մի գեղազորի՝ Մաշտոցի հսկողությունում վերջնական ձևավորման համար: Այս մասին պատմահայրը գրում է. «[Մեսրոպյն] ետտեղծ զնշանագիրս մեր, հանգերձ Հուսիսանոսիւ կերպածեհալ զգիրն...» (էջ 327):

Ավելի ուշ, կիլիկյան շրջանում, հայկական այբուբենի վրա, լատինական ազդեցություն տակ, ավելանում է երեք տառ ես՝ «ե», «օ», «ֆ», որի մասին խոսք կլինի իր տեղում:

* * *

Ո՞րն է հայկական ներկա գրի ստեղծման նշանակությունը հայ ժողովրդի պատմության մեջ:

Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական դրությունը IV դարի վերջերում և V դարի սկզբներում:

Մկսած մեր թվագրության IV դարից, ինչպես պարզված է, Հայաստանում իշխում էին ֆեոդալական սոցիալ-տնտեսական հարաբերությունները: Իշխող նոր դասակարգը, բնական է, չէր կարող սահմանափակվել հին, մեռնող դասակարգի զաղափարներով: Քրիստոնեական եկեղեցին, որը գործուն մասնակցություն ունեցավ հայ ավատական գաղափարախոսության ստեղծման և օրինականացման ուղղությամբ, չորրորդ դարում եռանդուն փորձեր էր կատարում նոր գաղափարախոսության տարածման և ամրացման ուղղությամբ: Փավստոսի տեղեկություններից, օրինակ, մենք գիտենք, որ Ներսես Մեծը բաց է անում դպրոցներ և զբաղվում դաստիարակությամբ: Եվ պատահական չէ, որ հայ գրի ստեղծման հարցով զբաղվում են քաղաքական և հոգևորական երկու խոշոր պետերը՝ Վռամշապուհ թագավորը և Սահակ Պարթև կաթողիկոսը:

Հայկական գրի ստեղծումն ավելի անմիջական հարց դարձավ IV դարի վերջերին և V դարի սկզբներին, երբ հայ ժողովուրդը կանգնեց էթնիկական ձուլման սպառնալիքի առաջ: Ակադ. Հ. Մանանդյանը շատ ճիշտ գտնում է, որ մեր թվականության IV դարի վերջը և V դարը հայ ժողովրդի պատմական կյանքի ամենածանր և բախտորոշող շրջաններից մեկն է հանդիսացել¹:

Հայաստանը 387 թվականին, ինչպես հայտնի է, բաժանվեց մրցակից Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության միջև: Այդ բաժանումից հետո նա ընկավ վասալական կախվածության մեջ: Նվաճող կողմերից ամեն մեկն աշխատում էր վերջ դնել Հայաստանի ներքին անկախությանը և ասիմիլացիայի ենթարկել ժողովրդին: Պարսկաստանի և Բյուզանդիայի քաղաքականությունը Հայաստանում պատահական բնութի չունեի, այլ բխում էր Հայաստանում նրանց ամրանալու դարավոր ձգտումից: Հայաստանը գտնվելով Արևելքի և Արևմուտքի մրցակցության հանգույ-

¹ Я. А. Манандян, Месроп-Маштоц..., էջ 5:

ցում, նրա ստրատեգիական կարևորությունը գիտակցում էին և՛ պարսկական շահերը, և՛ բյուզանդական կայսրները: Եվ գիտակցելով այդ, նրանցից ամեն մեկն աշխատում էր ամրանալ այնտեղ: Բացի այդ, մրցակից կողմերից ո՛չ մեկի համար ցանկալի չէր Հայաստանում ունենալ թշնամաբար տրամադրված մի հատված, որը նեղ օրում կարող էր վտանգ սպառնալ իրեն: Ահա թե ինչու, Հայաստանի բաժանումից հետո, Պարսկաստանը և Բյուզանդիան բացահայտ կամ գաղտնի, բռնություններ թե լատաղ ճանապարհով, բայց հաստատ հետևողականություններ, շարունակում էին իրենց ասիմիլատորական քաղաքականությունը:

Հայաստանի բաժանումից հետո, ճիշտ է, ժամանակավորապես դադարեցին Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև սկսած արվւնոտ պատերազմները, որից, առաջին հերթին, ոտնակոխ էր լինում, ավերվում Հայաստանը: Սակայն այժմ նախկին մրցակից երկրները Հայաստանի նկատմամբ կիրառեցին ավելի վտանգավոր քաղաքականություն՝ աշխատեցին ձուլել հալ ժողովրդին Պարսկաստանը մի կողմից, իսկ Բյուզանդիան մյուս կողմից, բոլոր միջոցներով սկսեցին եռանդուն ջանքեր գործադրել՝ վերջ դնելու հալ ժողովրդի կուլտուրական ինքնությունությանը: Պարսկաստանն իր այդ քաղաքականությունը Հայաստանում արդյունավորելու համար շեշտ էր դնում գրադաշտական կրոնի վրա:

Մի այլ վտանգ հալ ժողովրդին սպառնում էր հարավից և արևմուտքից: Քրիստոնեությունը պետական կրոն ճանաչվելուց հետո Հայաստանը ողողվել էր ասորի և հույն քարոզիչներով, որոնք իրենց հետ բերում էին ո՛չ միայն քրիստոնեության գաղափարները, այլև իրենց մայրենի լեզուն, իրենց կուլտուրան, իսկ այդ՝ պակաս վտանգ չէր ստեղծում տեղական կուլտուրայի համար: Թե որքան վտանգավոր էին օտարամուտ այդ լեզուները և կուլտուրաները հալ իրականության համար, կարելի է դատել այն փաստից, որ Հայաստանը ոյսդված էր ասորի և հույն քարոզիչներով, որոնք խոսում, գրում էին ասորերեն և հունարեն: Հայկական նորաստեղծ գրությունը մի վեց էր՝ կովելու պարսկական և բյուզանդական ասիմիլատորական քաղաքականության դեմ և ցեմենտող մի միջոց՝ քաղաքակրթության շլատված, թուլացած Հայաստանի երկու մասերի համար: Ահա թե ինչու հայրենասեր որոշ մտավորականներ, Մաշտոցի գլխավորությամբ, այնքան հետևողականորեն նախաձեռնում են հայկական ինքնուրույն գրի հորինման գործը և ստեղծում այն:


Հայկական գրի ստեղծման անհրաժեշտությունը հարցը, իհարկե, առանձին անձանց մտահղացման արդյունք չէր, ինչպես կարծում են որոշ հայագետներ, և ոչ էլ պայմանավորված էր միայն հայ ժողովրդի կուլտուրային, հետևապես և նրա անկախությանը սպառնացող վտանգի դեմ մաքառելու անհրաժեշտությունից: Առանձին անհատները, տվյալ դեպքում Մեսրոպ Մաշտոցը և նրան աջակցող և սատարող անձինք՝ Սահակ Պարթևը և Վռամշապուհը, անշուշտ, խոշոր դեր են ունեցել: Դրսից սպառնացող վտանգը իր հերթին խթանել, արագացրել է գրերի ստեղծումը: Սակայն հայկական գրերի ստեղծման հարցն առաջադրել է ինքը կյանքը, իսկ Մաշտոցը, նրա գործակիցները և աշակերտները գործնականորեն իրագործել են այն:

Այս է ահա Մաշտոցի հիմնական դերը հայ գրի և գրականության ստեղծման գործում:

Բացառիկ մեծ է Մաշտոցի և իր աշակերտների ջանքերով ստեղծված գրի նշանակությունը հայ ժողովրդի պատմության մեջ: Նոր հորինված ինքնուրույն գրերով և մայրենի լեզվով ստեղծվեց հսկայական մի մատենագրություն, որն իր պատվավոր տեղը գրավեց համամարդկային գրականության պատմության մեջ:

Սակայն ավելի խոշոր է հայ գրի ստեղծման քաղաքական նշանակությունը: Նա անչափ խոշոր դեր կատարեց հայ ժողովրդի ինքնագիտակցության բարձրացման գործում և պաշտպանող վահան դարձավ օտարերկրացիների ասիմիլյացիոն քաղաքականության առջև:

Գերմանացի գիտնական Հ. Մարկվարտը, խոսելով Մաշտոցի և նրա զինակիցների հայ մատենագրության ասպարեզում ունեցած դերի մասին, Մաշտոցին և իր աշակիցներին համեմատում է Պեպինոսի և Վինֆրիդի հետ և գտնում, որ եթե մենք նկատի ունենանք քաղաքական այն ծանր իրադրությունը, որի մեջ Մաշտոցը կարողացավ զարթեցնել ազգային գիտակցությունը, ապա շեպինոս և թե լուր զինակիրը Վինֆրիդ—խեղճ թզուկներ կերևան համեմատությանը մտքի այն հսկաներում¹:



¹ Հ. Մարկվարտ, Պատմություն հայերեն նշանագրերու և վարուց Ս. Մաշտոցի, Վիեննա, 1913, էջ 8:



ԳԼՈՒՆ ԶՈՐՐՈՐԳ



ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Բերը V դարից մինչև մեր օրերն անփոփոխ չեն մնացել: Տասնհինգ երկարածիզ դարերի ընթացքում նրանք ենթարկվել են զգալի փոփոխությունների: Չկա մի տառ, որ անփոփոխ հասած լինի մեզ V դարից: Տառեր կան, որոնք փոփոխության են ենթարկվել ոչ թե մեկ, այլ մի քանի անգամ: Ազգությաբազետները, տարբեր ժամանակներում կատարված այս փոփոխությունները հիմք ընդունելով, հայկական տառերը դասավորում են ըստ առանձին տառատեսակների և որոշում նրանց յուրաքանչյուրի գործածության մոտավոր ժամանակը: Համեմատական այս մեթոդը կարևոր է հնագրության համար, որովհետև եթե մեզ հայտնի են գրատեսակների բնորոշ առանձնահատկությունները ըստ ժամանակների, ապա այդ հիման վրա դժվար չէ որոշել նաև թվական շունեցող հին հայկական գրությունների ժամանակները:

Հայկական տառերի խմբավորման առաջին փորձը կատարել է Ն. Ղ. Ինճիրճյանն իր «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» աշխատության մեջ և կազմել առանձին գրատեսակների գործածության հետևյալ ժամանակագրությունը.

1. Երկաթագիր—Մաշտոցի ձևավորած գրերը, V—IX դդ.:
2. Միջակագիր—բուլորգրին անցնող երկաթագրի մանր տեսակը, X—XI դդ.:

3. Բոլորգիր—XI—XII դդ.:

4. Նոտրգիր—*Նոտարների սովորական գրերը՝ XIV—XV դդ.*¹:

Ինճիճյանը, առանց ժամանակագրական շրջանակները որոշելու, հիշում է նաև մասնակի գործածության մեջ դրված գրերի ստորև բերված տեսակները.

5. Դրամագիր—*Թուրինյանց գործածած դրամների վրա դրոշմված գրերը:*

6. Կոնդակագիր—*կոնդակների համար գործածվող գրերը:*

7. Փառագիր—*ծաղկագրերը, թռչնագրերը և մյուս զարդագրերը:*

8. Փակագիր—*կապագիրը, գլխավորապես վիճագրության մեջ:*

9. Վարագագիր—*մատանու և կնիքների վրա փորագրված գրերը:*

10. Նշանագիր—*գաղափարագրերը, Ագաթանգեղոսի ժամանակից*²:

Հայկական գրերի տեսակավորման հարցով զբաղվել է նաև Քարամյանը: Նա իր ցուցակի մեջ նշում է հայկական լրթ տեսակ գրեր և տալիս նրանց գրչության հետևյալ ժամանակը՝ դարերով.

1. Մեսրոպյան երկաթագիր—V—VII դդ.:

2. Միջակ գիր —VIII—X դդ.:

3. Փոքր երկաթագիր —IX—XII դդ.:

4. Բոլորգիր (Rundschrift)—XII—XIV դդ.: (*եկեղեցական ձեռագրերը մինչև XIII դ.*):

5. Նոտրգիր —XIII—XV III դդ.:

6. Շեղագիր —XVIII—XIX դդ.:

7. Նոր շեղագիր —XIX դարից մինչև մեր օրերը³:

Հայկական գրերի տեսակավորման նոր փորձ է արել Հ. Տաշյանն իր «Ակնարկ մը հայ հնագրության վրա» աշխատության մեջ, որը և անփոփոխ ընդունել է ակադ. Հ. Աճառյանն իր «Հայոց գրերը» աշխատությունում: Տաշյանը, բացի գրերի հիմնական տես-

¹. Ղ. Ինճիճեան, Հնախօտութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Գ հատ., էջ 77—78:

². Նույն տեղը, էջ 78—79:

³. N. Karamianz, Die Handschriften—Verzeichnisse der Königlischen Bibliothek zu Berlin, Berlin 1888, էջ 88:

սակներից, ընդունում է նաև անցման գրերը: Հայկական գրերը նա տեսակավորում է լոթ խմբի մեջ.

1. Գլխագիր երկաթագիր:
2. Միջին Մեսրոպյան երկաթագիր:
3. Փոքր երկաթագիր:
4. Անցման գիր:
5. Բոլորգիր:
6. Նոարգիր:
7. Շղագիր:

Նրա կարծիքով երկաթագիրը գործածվող գրի հիմնական տեսակ է հանդիսացել V դարից մինչև XI դարը, բոլորգիրն իշխող գրի տեսակ է դարձել XII դարից, իսկ նոարգիրը գործածվել է սկսել XIII—XIV դարերից¹:

Անհրաժեշտ է նշել, որ Հ. Տաշյանն առաջինն է, որ հակառակ նախորդ աղբյուրագետների թյուր կարծիքների, ապացուցել է, որ միջին Մեսրոպյան գրերն ավելի հնից են գալիս, քան ենթադրվում է: Նրա ենթադրությունները միջին Մեսրոպյան երկաթագրերը պատմա-գիտական գրականության մեջ օգտագործվել են նկատմամբ V դարից:

Գրերգին վարդապետ Հովսեփյանի կարծիքով. «Հայ գրի տեսակները չորսի կարելի է բաժանել. երկաթագիր, բոլորագիր նոտրագիր և շեղագիր՝ յուրաքանչյուրն իր ստորաբաժանումներով և անցման շրջաններով»²:

Գրերի գիտական տեսակավորման փորձ է արել նաև պրոֆ. Կ. Ղաֆադարյանն իր «Հայկական գրի սկզբնական տեսակները» աշխատության մեջ: Խմբավորման հիմքը համարելով զժագրական առանձնահատկությունները, նա գրերի հետևյալ հինգ տեսակներն է ընդունում.

1. Բոլորաձև երկաթագիր:
2. Ուղղագիծ երկաթագիր:
3. Բոլորգիր:
4. Շղագիր:
5. Նոարգիր:

Պրոֆ. Ղաֆադարյանը գրերի տեսակներից ոչ մեկը ժամա-

¹ Հ. Տաշյան, Ակնարկ մը հայ հնագրության վրա, էջ 34—40:

² Գրերգին վրդ. Հովսեփյան, Հայոց գրի գլխավոր տեսակները («Տարազ», 1912, № 10, էջ 168—172):

նակի մեջ չի սահմանագծում: Նա գտնում է, որ գրերի գրելիս բոլոր տեսակները (բացի շղագրից) ստեղծվել են Մեսրոպի ձեռքով և գործ են ածվել բոլոր ժամանակներում¹:

Ճիշտ համարելով պրոֆ. Կ. Ղաֆաղարյանի կատարած գրերի տեսակավորման սկզբունքը, որը գրերի խմբավորումը կատարել է ըստ գրերի գծագրական առանձնահատկությունների, ինչպես ընդունված է նաև այլ լեզուների պալեոգրաֆիաների մեջ, սակայն չի կարելի համաձայնել պրոֆ. Ղաֆաղարյանի հայտնած այն կարծիքի հետ, որ իբր թե հայկական գրերի բոլոր տեսակները V դարում են ստեղծվել: Այդ կարծիքը չի հաստատվում մեզ հասած գրությունների հնագույն նմուշներով: Գրերի որոշ տեսակներ կարող են ավելի հին լինել, քան ենթադրվում է, բայց որ հայկական բոլոր գրատեսակները, ինչպես մյուս բոլոր ժողովուրդների գրերն են, մեկն չեն ստեղծվել և ունեցել են իրենց զարգացումն ու փոփոխությունը, այդ ևս կասկածից դուրս է:

Պրոֆ. Կ. Ղաֆաղարյանի մոտ այս հարցի առաջադրման համար հիմք է ծառայել Կորյունի այն տեղեկությունը, որ Հոռոփանուսը «գնրբագոյնս, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն միանգամայն յօրինեալ և յանկուցեալ»: Պրոֆ. Ղաֆաղարյանի կարծիքով, «Կորյունի հիշյալ հինգ բառերը ցույց են տալիս ոչ թե միևնույն այբուբենի ներքին շարքերը (գրերի բարձրությունն աստիճանները), այլ այդ բառերից յուրաքանչյուրի գրությունն մի նոր տեսակի անունը»²: Ըստ որում, նրա կարծիքով, «կրկնաւոր»-ը՝ փակագիրն է, «նրբագոյն»-ը՝ նոտրգիրն է, «կարճ»-ը՝ ուղղագիր՝ երկաթագիրն է, «երկայն»-ը՝ բոլորածև երկաթագիրն է:

Մեր կարծիքով, Կորյունն այստեղ խոսում է տառերի ոչ թե ներքին շարքի կամ գրչության տեսակների, այլ տառերի հնչական առանձնահատկությունների մասին: Այդ պարզ կարելի է տեսնել Իրոնիսիոս Թրակացու «Քերականության» մեջ և նրա հաջ մեկնիչների մոտ, ուր այդ նույն բառերը բերված են իրենց բացատրություններով:

Թրակացին «երկայն» ասելով նկատի ունի երկար հնչվող երկու տառերը՝ «է»-ն և «ա»-ն (և ձայնաւորացն երկայնք են երկու՝ է, ա (վերջինս գրվել է «աւ» ձևով) «Тῶν δὲ φωνῶν τῶν μακρῶν μὲν ἐστὶ δῶο η̅ καὶ ῶ»):

¹ Կ. Ղաֆաղարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները, էջ 33 - 36:

² Նույն տեղը, էջ 35:

³ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, էջ 5:

«Կարն»-ը՝ կարճ հնչվող «ե», «ո», [ո] ձայնավորներն են (ե՛ն սողք»՝ Կարնօ, ըստ Ստեփանոս Սլունեցու քերականության) [են] երեք՝ ե, ո, ւ, «Βραχέα ὄνο εἰ καὶ ὅ»¹:

Երկնաւոր» այն բառերն են, որոնք երկու տառի հնչյուն ունեն (ե՛ն կրկնակ էն ի սոցանէ ութ. գ, լ, խ, շ, չ, ջ, ո, ց»²: «Առաւանձնը»՝ ոչ կրկնվող բաղաձայններն են՝ բ, գ, դ, ձ, ղ և այլն:

Եվ, վերջապես, «նուրբ»-ը հետևյալ տասը տառերն են՝ «ալ», «կ», «տ», «զ», «ն», «ծ», «շ», «մ» «ս», «ր»: «Եւ են սոքա նուրբք», — դրում է հեղինակը և թվարկում է վերև բերված տասը տառերը:

Հայկական գրերը, մեր կարծիքով, պետք է բաժանել հինգ հիմնական տեսակների. բուն մեսրոպյան երկաթագիր, միջին մեսրոպյան երկաթագիր, ուղղանկյուն երկաթագիր, բոլորգիր, նոտրգիր և շղագիր: Գոյություն ունեն նաև անցման շրջանի երեք տեսակ գրեր՝ երկաթագրից բոլորգրին անցնող, բոլորգրից նոտրգրին և նոտրգրից շղագրին անցնող գրեր:

Նախքան առանձին գրատեսակների մասին խոսելը, անհրաժեշտ ենք համարում նշել, որ կենտրոնացած պետականության քաջակալության պայմաններում համատարած գործածվող միասնական որևէ գրատեսակ Հայաստանում գոյություն չի ունեցել ոչ մի դարաշրջանում: Դրերի այս կամ այն տեսակի ընտրությունը կախված է եղել գլխավորապես գրչության առանձին դպրոցների նախասիրությունից: Ավելին. հաճախ տարբեր գրաձևերով են գլորված ոչ միայն իրար մոտիկ գտնված գրչության առանձին դպրոցների գրչագրերը, այլև նույն գրչության դպրոցում գրված ձեռագիր ժողովածուների առանձին մասերը:

Կանգ առնենք հայկական գրի տեսակների վրա առանձին-առանձին և փորձենք որոշել նրանց լուրաքանչյուրի գործածության մոտավոր ժամանակը:

ԲՈՒՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ ԲՈՂՈՐԳԻՄ, ՄԻՋԻՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՎ ՌԻՎՂԱՆԿՅՈՒՆ ԵՐԿԱԹԱԳՐԵՐԸ

Հայկական գրերից ամենից հինը, մեր կարծիքով, երկուսն են՝ բուն մեսրոպյան բոլորգիծ երկաթագիրը և միջին մեսրոպյան երկաթագիրը: Մինչև X դարը մեզ հասած բոլոր գրությունների մեջ մեզ հանդիպում են միայն այդ գրատեսակները:

¹ Н. Адонц, Дюнисий Фракийский и армянские толкователи, էջ 5:
² Նույն տեղը, էջ 8:

Ենթադրվում է, որ նրանք երկաթագիր են կոչվել այն պատճառով, որ գրվել են երկաթե ձողերով՝ սկզբում գուցե մոմի վրա, իսկ հետագայում՝ մագաղաթի: Կան նաև բանասերներ, որոնք երկաթագրի անունը կապում են ոչ թե երկաթե ձողերով գրելու, այլ երկաթի ժանգից (երկաթ-օքսիդից) լծանաք գործածելու հետ:

Երկաթագրով են գրված մեզ հասած հին հայկական գրեթե բոլոր ձեռագրերն ու վիմագիր արձանագրությունները. կանոնական-կրոնական բովանդակություն ունեցող գրականությունը հին ձեռագրերում գրված է մեսրոպյան բոլորգիծ երկաթագրով, իսկ պատմագիտական և մեկնողական գրականությունը՝ միջին մեսրոպյան երկաթագրով:

Մեսրոպյան երկաթագրերը, հայկական մյուս տեսակի գրերի համեմատությամբ, ունեն հետևյալ առանձնահատկությունները.

ա) Երկաթագիրը մի քանի անգամ խոշոր է, քան հայկական գրության մյուս տեսակները:

բ) Երկաթագրով գրված տեքստերի մեծ մասը բառանշատում չունի. երևք, չորս և երբեմն ավելի բառեր գրվում են միացած. բառանշատումը կատարվում է գլխավորապես կետերից հետո:

գ) Երկաթագիր տեքստերը էջունեն միացյալ «և», «օ» և «ֆ» տառերը. «և»-ը գրվում է «եւ» ձևով (սովորաբար միացված հաջորդող բառին, «օ» տառը գրվում է «աւ» ձևով, իսկ «ֆ» տառին փոխարինում է «փ»-ն, օրինակ՝ «փրանկա հգաւրս» փոխանակ «Ֆրանկա հգաւրս»-ի:

դ) Բոլորաձև երկաթագրով գրված տեքստը, նոր տողից սկսելիս, սկզբի առաջին տառը, իր մեծության կեսի չափով, տեքստի առաջին գծից դուրս է գրվում:

ե) Բոլորաձև երկաթագիրն ունի կլոր ձև, տառայունները միացնող գծերը կամարաձև են և ուղղագիծ երկաթագրերի նման քառակուսի ձևով չեն նստում տողի վրա:

զ) Բոլորաձև երկաթագիրը, բացի միջակետից, ուրիշ կետագրական նշան չունի: Ըստ որում, միջակետն երկարող քառակուսու ձևով է և գրվում է տողից վերև:

է) Բոլորաձև երկաթագիր տեքստերում հապավված են լինում միայն մի քանի անուններ, որոնց վրա կանգ կառնենք հապավումների գլխում:

ը) Բոլորաձև երկաթագրից ստորբերվում են հետևյալները.

«Թ»-ի աջ սյունագիծն իջնում է մինչև տողը.

«Ս»-ի ձախ սյունագիծն ավելի երկար է և թեք.

«Վ»-ի ձախ սլունագիծն հավասարվում է երկրորդին.

«Կ»-ի աջ սլունագիծը շատ կարճ է և թեք.

«Հ»-ն սկսվում է տառի վերջին երկարութլունից:

Շատ ավելի հին ձևագրերում, օրինակ՝ Հայկական ՍՍՌ Գե-տական Մատենադարանի հին գրչութլուն ունեցող պատաստիկում, տարբերվում են հետևյալ տառերը՝ Ա, Ե և Բ:

Մեսրոպյան բոլորգիծ և միջին մեսրոպյան գրերը չունեն մեծատառի և փոքրատառի տարբերութլունները:

Հայկական հնագույն գրչութլունից Հազարյան ավետարանում նկատվում են ուղղագրական հետևյալ տարբեր ձևերը, որոնց մեծ մասը բնորոշ է հին հայկական տեքստերին¹.

Ավելադրութլուն յ տառի—յայգեցան, դարձոյ, մատոյ, հատոյ, գործեայ, կոչեայ, նմայ, սմայ և այլն:

Հապավում ը տառի՝ չնթրիս, զնկեր, զնտրեալ, չնչից, չնծայսն և այլն:

Հապավում յ տառի. բառի մեջ՝ զգոշ, վկահց, հայհոութիւն. բառի վերջում՝ ողորմեցա, հաճեցա, բանա, երկեա, քաղցեա, ատեա, պիտո, գո, սատանա, միո, արտաքո, յորդւո, թզենո և այլն:

Գրվում է ն փոխանակ ե-ի—թե, եթե, թեպետ, ե, եին, եիր, ինդրեին, հարցանեին, ուտեին, որպես, տեսանեաք, այնպես, կիւց, ապաքեն, պատուեր, զքին, ի նազարեթե և այլն:

Գրվում է ե փոխանակ ե-ի—արէգակն, փէսա, ցէրեկ, էդաւ, էհան, էթող, էհար և այլն:

Գրվում է գ փոխանակ կ-ի—անգեան, մանգունք, յանգողին. անգեալ, ցանգացան և այլն:

Գրվում է ով փոխանակ աւ-ի—ամովթ, նոքովք, արտասւովք, համբովել, դենչակովն և այլն:

Գրվում է աւ փոխանակ ո, ով, ոյ և ու տառերի—աւսաւիս, պատանաւց, Յաւհաննէս, Նազաւրաւցի, անաւշ, նշաւդ, տանաւէր:

Գրվում է ո և ու փոխանակ աւ-ի—ոգուտ, յուժար, յուժարել, ծնողք:

Գրվում է ի, իւ փոխանակ ե-ի և հակառակը—շիդ, սփիոս, ուղիւզ, Գիւղատոս:

Գրվում է ու փոխանակ ե-ի—ոււմք, ուրումն (և որումն):

Հապավվում է նախավերջին և վերջին բ տառը—արդեամք,

¹ Այս մասին խոսել է պրոֆ. Գ. Խալաթյանը Հազարյան գրչագիր ավետարանի լուսատիպ հրատարակութլան առաջարանում (էջ Թ—Ժ), և մենք օգտվել ենք նրանից:

123456789

10111213141516171819

20212223242526272829

30313233343536373839

40414243444546474849

50515253545556575859

1074

1075

1076

1077

1078

1079

մատամն, քարամք, եղեգամ, տեսլեամ, իշխանութեամ, ճշմարտութեամ:

Փոխարինվում է որոշ բառերում լ տառը դ-ով—ալդ-ալլ, թոլդ-թոլլ, ալդակերպեալ-ալլակերպեալ:

Փոխարինվում են իւ տառերը եւ-ով—աղբեւր, եղջեւր, առեւծ և այլն:

Նշված տարբերակներից ոմանք կարող են լինել գրչական սխալներ, սակայն նրանց մեծ մասը նման ուղղագրական ձևով են գրվում հին ձևագրերում:

Հնագրության համար կարևոր է պարզել, թե V դարից մինչև X դարը ի՞նչ փոփոխությունների են ենթարկվել մեսրոպյան երկաթագիր տառերը, և ինչ օրինաչափություն կարելի է մատնացույց անել նրանց ձևերի միջև:

Այս հարցի լուսաբանությունը թեպետ երկար ժամանակ է, որ մենք զբաղվում ենք, բայց պետք է խոստովանենք, որ ձեռք բերված արդյունքները շատ մեծ չեն: Դժվարությունը կայանում է նրանում, որ հնագույն հայ հեղինակների աշխատությունների մեծ մասը, ալդ թվում նաև հալ հեղինակների աշխատությունները, մեզ չեն հասել իրենց ինքնագրերով: Նրանց աշխատություններն ընդօրինակվել են ուշ շրջանի արտագրողների կողմից և այդ ընդօրինակություններով են հայտնի մեզ: Այսպես, մեզ չեն հասել ոչ Սորենացու, ոչ Եղիշեի, ոչ Նիրակացու, ոչ Աեոնդի և ոչ էլ հին հայ մատենագիրներից որևէ մեկի աշխատության ինքնագիրը: Ինքնագիր ունեցող հայ մատենագիրներին մատենների վրա կարելի է հաշվել: Ըստ որում, այսպիսիները ուշ միջնադարյան հեղինակներ են՝ Նսայի Նչեցի, Ստեփանոս Օրբելյան, Ամիրդովլաթ, Գրիգոր Տաթևացի և մի քանի ուրիշներ:

Հին գրություններ ամենից շատ պարունակում են կրոնական-կանոնական բովանդակություն ունեցող տեքստերը և վիմագիր արձանագրությունները, բայց նրանք էլ ունեն այն հիմնական պակասությունը, որ չեն թվագրված: Մինչև ութերորդ դարը միաշարժվագրություն գործածելը սովորություն չի եղել Հայաստանում: Այս մասին խոսք կլինի մեր այս աշխատության ժամանակագրության բաժնում: Մեզ են հասել առանց թվականի բազմաթիվ հին ձևագիր պատուիկներ և պահպանակներ, որոնց գրերը հաճախ շատ ավելի հին են, քան մեզ ծանոթ հայկական հին և ունիկում գրություն ունեցող տեքստերը, բայց որովհետև նրանք թվական չունեն, ուստի որոշ վերապահություններ ենք մտածում նրանց:

Բացի այդ, հաստատուն ժամանակի հետ կապված հին հայկական գրությունները գլխավորապես վիմագրերն են և, բնական է, որ նրանք պիտի հենակներ ծառայեն հարյուրավոր անթվագիր գրությունների ժամանակը որոշելու համար, սակայն երբ ուշագիտ համեմատում ենք վիմագիր գրերը գրչագրերի հետ, ապա տարբերություններն անբախ են դառնում. ձեռագրեր գրելիս ընդօրինակողները շատ ազատ են շարժել իրենց գրիչները, քան այդ կարողացել են անել կարծր քարի վրա փորագրող քանդակագործները:

Մեզ հասած հնագույն հայերեն գրությունը V դարից է: Նա պահվել է Տեկոթի տաճարի արևմտյան դռան ճակատին՝ վիմագիր արձանագրության մեջ: Արձանագրությունն ունի հետևյալ բովանդակությունը.

«...ՊԻՍԿԱ(Պ)ՈՍԻ ԵՒ ՏԱՅՐՈՆԻ ՏԵԿՈՐՈՅ ՎԱՆԱՅ
ԵՐԻՑՈՒ ԵՒ ՄԱՆԱՆԱՅ ՀԱԶԱՐԱՊԵՏԻ ՌԻՐԱՆԱՅ ՀՈՌՈ-
ՄԻ. ՈՐ ԵՒ ՀԻՄՆԱՐԿԵՑԱԻ ՏԵՂԻՍ Ի ԶԵՌՆ ՅՈՀԱՆՈՒ
ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԵՒ ՅՈՀԱՆՈՒ ԱՐՇԱՐՈՒ-
ՆԵԱԽԸՍԻ ԵՒ ԲԱՐԵՔԱՒՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՈԼՈՐ ԱԶԳԻՆ
ԵՒ ԱՄՈՒՍՆԻ ԵՒ ՈՐԴԵԿԱՅ ԵՒ ՍԻՐԵԼԵԱՅ ԵՒ ՍԱՀԱԿ
ԿԱՄՍԱՐԱԿԱՆ ՇԻՆԵԱՅ ԶԽԱՅՍ ՎԿԱՑԱՐԱՆ ՍՐԲՈՑ
ՍԱՐԳՍԻՆՆԻ»:

Արձանագրության մեջ հիշված Հովհաննես կաթողիկոսը՝ Հովհանն Մանդակունին է, որը V դարի անձնավորություն է. նա կաթողիկոս է եղել 478—490 թվականներին: Արձանագրության մեջ հիշված տաճարի կառուցող Սահակ Կամսարականը նույնպես V դարի անձնավորություն է: Ըստ Ղազար Փարպեցու տեղեկության, Վահան Մամիկոնյանը Սահակ Կամսարականին պատգամավոր է ուղարկել Միհր-Վշնասպի հետ բանակցելու համար: Կասկածանքներ են եղել բուն տաճարի կառուցման ժամանակի նկատմամբ: Ենթադրվում է, որ Տեկոթի ներկա շենքը կարող էր կառուցված լինել VII դարում, իսկ դրանից առաջ, նույն տեղում, գտնվել է Տեկոթի նախկին տաճարը՝ V դարից, որի վիմագրերից է վերը հիշված արձանագրությունը²:

Պրոֆ. Հ. Աճառյանը հինգերորդ դարի գրություն է համարում նախկին Սանասարյան վարժարանի մատենադարանի № 1 մագաղաթի ձեռագրի առջևում փակցված 6 թերթ կրկնագիրը (պա-

¹ Գարեգին վրդ. Հովսեփյան, Գրչության արվեստը հին հայոց մեջ, էջ 5—6:

² Թ. Թորամանյան, Հայկական ճարտարապետություն, հատ. 1, էջ 218:

ԱՄՈՒՆՈՐԳՐՁԵՐ
 ՍՈՐՆԱԿԵՐԵՒՆԸ Ը
 ԿՈՐԱԿԵՆ. ԵՆՅԵՂԵՄ.
 ԹՍՊԱՄԵՆՅԵՆ Ի
 ՉԲԱԿ. ԵՆԵՊԵՂԻ Բ
 ԱՄԵՅԱԿ ԲՅԱՄ Ե
 ԿՅՈՒՆՅ ՈՒՄԵՆ Ո
 ԿՈՒՄԵՆՈՅ. Ե Ի
 ՍՏՁՍԻ ԻԳՐՈՅՉԵ
 ՈՒԷ. ՈՉՈՐԵՂԵ. ԵՄՍ
 ՍԵՐՈՒՄԵՄՈՐՁԵ
 ԲՈՒ. ՍՈՒՄԱԿԵՐՁ Ո
 Ի ԳՐՈՉԵՐ.
 ԱՂԵՂՈՒՄԵՆ
 ԱՂԵՂՈՒՄԵՆ

(լիմեսստը) և նույն ձևազրույց օգտագործված հին ձևազրույցի մի թերթ, որը գտնվում է 328 և 329 էջահամարի տակ: Մանասարյան վարժարանի այդ ձևազրույցն այժմ Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի սեփականությունն է և գրանցված է № 7735-ի տակ: Ձևազրույցի բուն տեքստը գրված է 986 թվականին՝ «Ի ՆԼԵ տումարիս Հայոց»: Վերը հիշված կրկնագիրն այդ ձևազրույց օգտագործված է որպես հին, քայքայված ձևազրույցի պատասխիկ: Նախկին ձևազրույցի թերթերը 986 թվականին, ներկա ձևազրույցը գրելիս, վերցրել և օգտագործել են. նրա վրա գրել են ավետարանի համարաբառը, նկարել են տերունական նկարներ, իսկ մի էջ անփոփոխ տեղավորել ձևազրույցի մեջ: 986 թվականին գրված կրկնագիր տառերի տակից պարզ երևում են հին տառերը: Պրոֆ. Ն. Աճառյանի կարծիքով, հին քայքայված ձևազրույցը եթե ունեցած լիներ թեկուզ 4 դարի հնություն, ապա նա գրված պետք է լիներ V դարում: Աճառյանն անվերապահ ընդունելով պատասխիկների գրությունը V դարից, մեր երիտասարդ քիմիկոսներին հրավիրում է քիմիական միջոցներով վերականգնել սրբված կրկնագրի նախկին տառերը, «մեր հինգերորդ դարի այդ ամենահին ձևազրույցը, որպեսզի տեսնենք, թե ինչ հնագրական արժեք է ներկայացնում»¹:

Պրոֆ. Կ. Առաքելյանը ևս, պրոֆ. Ն. Աճառյանի հանձնարարությունով, ուսումնասիրել է նշված կրկնագրերը և եկել հետևյալ եզրակացության. «Եթե իրոք IX դարում մագաղաթյա մի ձևազրույց մատյան արգեն ալմաստ էր հնացել, որ նրա թերթերը պոկոտում էին փոքրացնելու և այլ մատյանի մեջ իբրև պահպանակ օգտագործելու նպատակով, ապա այդ հին ձևազրույցը պատկանելու էր հայոց գրերի գրեթե սկզբնական շրջանին, հավանաբար V դարին»²:

Հայկական գրություն ամենահնագույն նմուշներից են, մեր կարծիքով, Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 1577 ձևազրույցի մագաղաթյա պահպանակները: Այն ձևազրույցը, որին կցված են նշված պահպանակները, գրվել և կազմվել է 1238 թվականին, իսկ պահպանակները, որպես քայքայված ձևազրույցի պատասխիկներ, վերցրել և օգտագործել են ձևազրույցի ներսում: Նշված պահպանակների գրության պալեոգրաֆիկ ուսումնասիրությունը

¹ Ն. Աճառյան, Հինգերորդ դարից հայերեն ձևազրույց (Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», 1952, № 11, էջ 70):

² Նույն տեղը, էջ 71: 1

մեզ բերել է այն համոզման, որ այս պարբեր, իրենց զծագրական ձևերով, ճիշտ նման են Տեկորի և Երուսաղեմի մոզաիկ հայկական հին արձանագրությունների գրերին, իսկ որոշ տառաձևերում նույնիսկ ավելի հին են: Պահպանակների գրություն մեջ մենք ստաջին անգամ հանդիպում ենք հայկական գրաձևերի հետաքրքիր նորությունների: Այսպես, «Բ»-ի վերին բոլորող դիծը հունարեն «γ»-ի նման այնքան է կորացած, որ գրեթե կաշում է սյունագծին: «Ք»-ի և «Փ»-ի սյունադները սովորական գրերից անհամեմատ երկար են և սեպի նման իջնում ու անցնում են անգամ հաջորդ սողից: «Ա»-ի աջ թեքվող ելունը ոչ թե ներքև է իջնում, ինչպես այդ Հազարյան ավետարանի գրություն մեջ է կամ IX—X դարերի հայկական մյուս գրությունների մեջ, այլ հունականի նման կեռվում է դեպի վերև: «Թ»-ի ներքև իջնող աջ թեք հունականի նման գրեթե մոտենում է ձախ սյունագծին և այլն: Ուշագրություն արժանի է նաև այն, որ պահպանակների տեքստը, որը բովանդակությամբ ավետարանից է, դեռ չունի համարորդառ: Պահպանակների գրության հնություն մասին է խոսում նաև տառերի խոշորությունը:

V—VI դարերից մեզ հասած հայերեն արձանագրություններից մեծ արժեք են ներկայացնում Երուսաղեմի մոզաիկ արձանագրությունները, որոնցից կարևորը Զիթենյաց լեռան վրա, ուսաց եկեղեցու հիմքում բացված մոզաիկն է՝ հայերեն արձանագրու-

Բ Ա Ր Է Կ Ա Ի Ս Ո Ւ Ն Ե Լ Ո Վ
 Ա Ռ Ա Ծ Ջ Ս Ո Ւ Բ Բ Է
 Ս Ա Յ Ի Է Ի Ջ Ե Ր Ա Ն Ե Լ Ի
 Տ Ի Ա Ր Ս Ս Ե Ս Վ Ա Ղ Ա Ն Ա
 Բ Ա Ր Ի Ա Ա Ս Ն Թ Ո Ղ Ո Ւ
 Թ Ե Ա Ն Մ Ե Ղ Ա Յ Ջ Յ Ի
 Ը Ա Մ Ա Կ Ա Ր Ա Ն Ա Ջ Ա Յ Ս

Երուսաղեմի մոզաիկ արձանագրություններից մեկը:

Քյամբ: Արձանագրության ժամանակը համարվում է VI դարը: Արձանագրությունը հիշատակ է ոմն Վաղանի և ունի հետևյալ բովանդակությունը.

«ԲԱՐԵՔԱԽՍ ՈՒՆԵԼՈՎ ԱՌ ԱՄ՝ ՉՍՈՒՐԲ ԷՍԱՅԻ ԵՒ
ՉԵՐԱՆԵԼԻ ՀԱՐՍՍ ԵՍ ՎԱՂԱՆ ԱՐԱՐԻ ՎԱՍՆ ԹՈՒ-
ՂՈՒԹԵԱՆ ՄԵՂԱՑ ՉՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՍ ՉԱՅՍ»¹:

Մոզաիկ այս արձանագրության հնությամբ Երուսաղեմում հայտաբերված է Երեք այլ արձանագրություն ևս, որոնցից մեկը նվիրված է այն հերոսների հիշատակին, որոնք ընկել են պատերազմում և անուններով հայտնի չեն: Ենթադրվում է, որ ակնարկված այդ անհիշատակ հերոսները՝ V դարի ազատագրական պատերազմում ընկած մարտիկներն են, որոնց հիշատակի հավերժացմանն է նվիրված այս արձանագրությունը:

VII դարի արձանագրություն է Հռիփսիմեի տաճարի արևմտյան պատի վրա փորագրված արձանագրությունը, որը պարունակում է հետևյալ տեքստը. «Ես Կոմիտաս եկեղեցապան սըրբոյ Հռիփսիմեի կոչեցայ յաթոռ Սրբոյն Գրիգորի. շինեցի զառնար սրբոց վկայիցս Քի»²: Արձանագրությունը չնայած թվական չունի, բայց Սեբեոսի մի տեղեկությունից երևում է, որ նա կառուցվել է 618 թվականին: (Սեբեոսը հայտնում է, որ Հռիփսիմեի տաճարը ցածրաշեն, մութ շենք էր, Կոմիտաս կաթողիկոսը պարսից Խոս-

Ե Ս Կ Ո Մ Տ Ա Ս Ե Կ Ե Ղ Ե Ց Ա Պ Ա Ն Ս Ր
Բ Ո Յ Հ Ռ Ի Փ Մ Ա Բ Ի Կ Ո Չ Ե Ց Ա Յ Յ Ա
Թ Ո Ռ Ս Ր Բ Ո Յ Ն Գ Ր Ի Գ Ո Ր Ի Ի Շ Ի Ն Ե Ց Ի
Չ Մ Ա Ճ Ա Ր Ս Ր Բ Ո Յ Ա Կ Ա Յ Ի Ց Ա Ք Ի

Հռիփսիմեի տաճարի արձանագրությունը:

րով Ապրվեզ Թագավորի 28-րդ տարին քանդեց և նրա տեղ քարակոփ ներկա շենքը կառուցեց: Հայտնի է, որ Խոսրով Ապրվեզը գահակալել է 589 թվականին, ուրեմն, նրա 28-րդ տարին կլինի

¹ Գաբեզին վրդ. Հովսեփյան, Գրչության արվեստը հին հայոց մեջ, էջ 8:

² Թ. Թորամանյան, Հայկական հարաբարադեալությունը, հատ. I, էջ

618 թվականը): Սերետուի այս տեղեկությունը հաստատում են այլ մատենագիրները ևս:

Յոթերորդ դարի լավագույն արձանագրություններից են Մաստարայի եկեղեցու հինգ արձանագրությունները՝ VII դարի կեսերից:

«ՅԱՄՍ ՏՆ ԹԵՈՂՈՐՈՍԻ ԳՆՈՒՆԵԱՅ ԵՊԻՍԿԱՊՈՍԻ
ՇԻՆԵՑԱԻ ԱԾԱՅԻՆ ՏՈՒՆՍ ՔԱԻԵԼ ԶԳՐԻԳՈՐԱՍ ԱՆ-
ԱՐԺԱՆ... ԱԾ ԳԹԱ Ի ԳՐԻԳՈՐԱՍ ՄԵՂԱԽՈՐ ԵՒ ԻՆՁ
ԿԵՓ...»¹:

Նրա մեջ հիշված է Թեոդորոս եպիսկոպոսը, որը VII դարի անձնավորություն է, 648 թվականին մասնակցել է Դվինում գումարված ժողովին: Արձանագրության բովանդակությունը հետևյալն է.

Վիմագիր գրություններից է հին Անիի միջնաբերդի կամուսարականների բազիլիկ եկեղեցու վրա եղած արձանագրությունը, որի վերջը թերի է: Ակադ. Ն. Մառի կարծիքով, նա գրված պիտի լինի 622 թվականին: Արձանագրությունը կարդացվում է.

«ԵՍ ԱԲՐԱՀԱՄ ՎԱՐԴԱՊԵՏՍ ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ
ՉԱՅՍ Ի ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱ...»²:

Նորագույն ուսումնասիրությունները պարզել են, սակայն, որ բերված արձանագրության վերջին տառերը՝ ՀԱ՝ թվական չէ, այլ ՀԱ(ՅՈՑ) բառի սկզբի երկու տառերը, ինչպես նկատել է պրոֆ. Կ. Ղաֆադարյանը: Արձանագրության ժամանակը, ըստ հնագրական տվյալների, VII դարի կարելի է համարել:

VII դարի հայ գրության ընտիր նմուշներից է Բագավանի տաճարի արձանագրությունը, որը փորագրված է 639 թվականին: Արձանագրությունը տեղավորված է տաճարի հարավային պատի արևելյան կողմում: Արձանագրությունից երևում է, որ տաճարի կառուցումը ձեռնարկվել է Հերակլ կայսեր 21-րդ տարում և ավարտվել 8 տարուց հետո՝ 639 թվականին: Արձանագրության գիտական վերծանությունը հրատարակել է ակադ. Հ. Օրբելին: Արձանագրության տեքստը հետևյալն է.

¹ Գարեգին վրդ. Հովսեփյան, Գրչության արվեստը հին հայոց մեջ, էջ 174:

² Н. Я. Марр, Новые археологические данные о постройках типа Ереву́йской базилики (мѣн. „ЗВО“, XIX, էջ 141):

«ՔՍԱՆ ԵՒ ՄԻ ԱՄԻՈՅՆ ԱԾԱՊԱՀ ԵՐԱԿՂԻ ԹԱԳԱ-
 ԻՈՐԻ, ՀՐՈՏԻՑ ԱՄՍՈՅՆ ՈՐ ԱԻՐ ԵՐԵՍՈՒՆ ԷՐ, ԵՍ
 ՏՐ ԵԶՐԱՍ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՍ ԵՒ ՍՈՒՐԲ ՎԱՆԻՑ
 ԵՐԷՑ ՀԱՃՈՑՈՒՔՆ ԱՅ ՀԻՄՆ ԱՐԿԻ ՍՐԲՈՑ ԵԿԵՂԵՑ-
 ԻՈՅՍ ԵՒ Ի ՔՍԱՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ԱՄԻ ՆՈՅՆ ԵՐԱԿՂԻ
 ԹԱԳԱԻՈՐԻ, ՅԱՄՍԵԱՆՆ ՆԱԽԱՍԱՐԴԻ, ՈՐ ԱԻՐ ՔՍԱՆ
 ԷՐ ՅԱԻՈՒՐՆ ՈՒՐԲԱԹ, ԵՂԵԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ՆՈՅՆ
 ԳՈՐԾՈՅՍ ՏԵՂԻՈՅՍ ՎԶԵՆԱԿԱԻ ԱՄԵՆԱՅՆ ԻՐԱԻՔ:
 ՎԱՐԿԱՊԵՏՈՒԹԵԱՄԲ ԻՍՐԱՅԵՂԻ ԳՈՒԱՂՃԵՑԻՈՅՍ»:

Որպես գրության հնագույն նմուշ արժեքավոր է Գրիգոր Մամիկոնյանի արձանագրութիւնը թալինում: Այն գրված է Կոստանդ կայսեր 29-րդ տարում, այսինքն՝ 639 թվականին: Արձանագրութիւնը վերծանվում է.


«Ի ԵՒԹ ԱՄԻ ԿՈՍՏԱՆՏՆԻ ՄԱՐԵՐԻ ԱՄՍՈՑ ՈՐ
 ԱԻՐԻԹ ԵՒ Ե ՀԻՄՆԱՐԿԵՑԱԻ ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԷՍ Ի
 ԶԵՌՆ ԳՐԻԳՈՐԻ ՄԱՄԻԿՈՆԵՆԻ ՀԱՅԻՈՑ ԻՇՊԱՆԻ ԵՒ
 ՀԵՂԻՆԷԻ ՆՈՐԻՆ ԶՈՒԳԱԿՐՑԻ Ի ԲԱՐԵՆԱԻՍՈՒԹԻՒՆ
 ՇԻՆԱԻՂԱՑ ԶՍԱ»:

Ի Ե Ի Ռ Ա Մ Ի Կ Ո Ս Տ Ա Ն Տ Ն Ի Մ Ա Ր Է
 Ր Ի Ա Մ Ս Ո Յ Ո Ր Ա Ի Թ Ե Ի Է Հ Ի Մ Ն
 Ա Ր Կ Ե Յ Ա Ի Ս Ո Ի Բ Կ Ա Ջ Ո Ղ Ի Կ Է Ս
 Ի Չ Ե Ռ Ն Գ Ր Ի Գ Ո Ր Ի Մ Ա Մ Ի Կ Ո Ն Ե Ն Ի
 Վ Ա Յ Ի Ո Ց Ի Շ Ի Ա Ն Ի Ե Ի Հ Ե Ղ Ի Ն Է
 Ի Ն Ո Ր Ի Ն Չ Ո Ւ Գ Ա Կ Ը Յ Ի
 Ի Բ Ա Ր Ե Ի Ա Ի Ս Ո Ի Ռ Ի Ի Ն Շ Ի Ն Ա Ի
 Ղ Ա Ց Չ Ս Ա

Գրիգոր Մամիկոնյանի արձանագրությունը:

Հալիական թվականով մեզ հասած ամենահին՝ գրութիւնը՝ Ուխտատուր վանականի արձանագրութիւնն է թալինի՝ մայր եկեղեցու ձախակողմյան սյան արևմտյան երեսին՝ 783 թվականից:

1 И. А. Орбели, Багаванская надпись 639 года (տե՛ս, «Христианский Восток», հատ. II, մաս I, էջ 105--122);
 2 Գարեգին վրդ. Հովսեփյան, Գրչության արվեստը հին հայոց մեջ, էջ 175:



Խորենացու պատմության ճեպանց պատակիկը X դ.:

(Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը սխալմամբ հայկական թվականով հնագույն գրութիւնը Անիի միջնաբերդի արձանագրութիւնընքն է համարում):

Ուխտատուրի արձանագրութիւնը հետևյալ բովանդակութիւնն ունի.

«ՄԼԲ ԹՈՒԱԿ[Ա]ՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՅ ԵՄ ՈՒԽՏԱՅՏՈՒՐ ՎԱՆԱԿ[Ա]ՆՍ ԵՒ ՏՈՒՏԻ ԵՂԲԱՅԻ ԻՄ ԲԵՐԱՔ [Ձ]ԱՂԲԻՒՐԱՆԻՍ Ի ՔԱՐԱԿԱՊԵՆՈՒ ԱՏԵՆ Ի ԹԱԼԻՆ. ԹԷ ՅԻՇԽ[Ա]ՆԱՅ ՈՔ ԽԼԵ ԻՄ ՄԵՂԱՅՍ [ՊԱՐ]Ր[Տ]ԱԿԱՆ ԵՂ[Ի]ՑԻ»:

VII դարի արժեքավոր արձանագրութիւններից է Թալինի մատուռի արևմտյան պատի բոլորածև երկաթագիր գրված գեղեցիկ արձանագրութիւնը, որը թողել է Ներսես Կամսարականը VII դարի առաջին կեսում: Առանձնագրութիւն մեջ ապաված է.

«ԵՍ ՆԵՐՍԵՀ ԱՊՈՀԻԻՊԱՏ ՊԱՏՐԻԿ ՇԻՐԱԿԱՅ ԵՒ ԱՐՇԱՐՈՒՆԵԱՅ ՏԷՐ. ՇԻՆԵՑԻ ՋԵԿԵՂԵՑԻՍ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ Ի ԲԱՐԵԽԱՍՈՒԹԻՒՆ ԻՆՁ ԵՒ ՇՈՒՇԱՆԱՅ ԱՄՈՒՍՆՈՅ ԻՄՈՅ ԵՒ ՀՐԱՀԱՏԱՅ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՅ»:

Հին տապանաքարերի վրա մնացած գրութիւններից առանձնապես ուշադրութիւն արժանի է Արտավազդ Կամսարականի տապանաքարի արձանագրութիւնը, որը գտնվում է Հին Նախիջևանում: Արտավազդ Կամսարականը, ինչպես պարզել է Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը, Ներսես Կամսարականի թոռն է և մահացել է VIII դարի առաջին քառորդում: Տապանի վերին մասը բոլորովին օրորոցած է, որը հատուկ է եղել արաբական շրջանի գերեզմաններին: Արձանագրութիւնը հետևյալն է.

«ԱԾԱՀՐԱՄԱՆԱԻՔ ԵՒ ՔՍԱԿՈՉ ՀՐԱԺԱՐՄԱՄԲ Ի ՄՄԱ Է ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԸՆԴ ՀԱՐՍ ԻՒՐ ԵՐԱՆԵԼԻ ՏՐ ԱՐՏԱԻԱՋԴ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ ԱՊԱՀԻԻՊԱՏ ՊԱՏՐԻԿ ԵՒ

¹ Գարեգին վրդ. Հովսեփյան, Գրչութիւն արվեստը հին հայոց մեջ, էջ 178:

² Այս արձանագրութիւն մասին տես ակադ. Յ. Օրբելու հոդվածը՝ «Надпись о построении талинской церкви» վերնագրով, տեղագրված «Христианский Восток»-ում, հատ. III, մաս III, էջ 300—306:

**ԻՇԽԱՆ ՀԱՅՈՑ ՈՐԴԻ ԽՂԱՀԱՏԱ ՊԱՏՐԿԻ ՇԻՐԱԿԱՑ
ԵՒ ԱՇԱՐՈՒՆԵԱՑ ՏՆՆ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ՇՈՒՇԱՆԱՑ ՄԱ-
ՄԻԿՈՆԵՆԵՆՔ՝**

Հայերեն լեզվով մեզ հասած ամենահին ձեռագիրն աշխարհում, որը թվական ունի, այդ Հազարյան կոչվող նշանավոր ավետարանն է, որը գրված է 887 թվականին Աշոտ իշխանաց իշխանի ժամանակ: Ձեռագիրը Հազարյան է կոչվում այն պատճառով, որ նա երբեմնի Մոսկվայի Հազարյանների սեփականությունն է եղել: Ձեռագրի լուսատիպ նմանահանությունը հրատարակել է պրոֆ. Գ. Սալաթյանը Մոսկվայում 1889 թվականին: Ձեռագիրն ունի թվական պարունակող գրչի հետևյալ հիշատակարանը.

«ԳՐԵՅԱԻ ՍՈՒՐԲ ԵՒ ԿԵՆՍԱԲԵՐ ԱԻԵՏԱՐԱՆՍ ԱՅՍ
ՅԼԶ (886) ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒ-
ԹԵԱՆՆ ԳԵՈՐԳՍՅ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ՅԻՇԽԱ-
ՆՈՒԹԵԱՆՆ ԱՇՈՏԻ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻ ԵՒ Ի ՏԵՐՈՒ-
ԹԵԱՆՆ ՄՄԲԱՏԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՈՅ. ԵՍ ՍԱՀԱԿ ՎԱ-
ՆԱՆԴԱՅԻ ՈՐԴԻ ՎԱՐԴԱ ՎԱՆԱՆԴԱՅԻՈՅ ՈՐՈՒՄ ԿՐԿԻՆ
ՄԼԵՀ ԿՈՁԷԻ[Ն]» (թ. 229ա):

Գրչական կարևոր ունիկում է Հայկական ՍՍԻ Պետական Մատենադարանի սեփականությունը հանդիսացող 989 թվականի «Փղողոսկրյա» կոչվող ավետարանը: Ձեռագրի գրություն մասին հիշատակարանում կարդում ենք.

«ԵՒ ԳՐԵՅԱԻ ՅԱՄԻ ԹՈՒՈՅ ՀԱՅԱԶԱՆՅ ՆԼԸ ԵՒ
ԸՍՏ ԹՈՒՈՅ ՀՈՒՈՄՈՅ ՉԽԲ ՅԻՍՄԱՅԵՂԱԿԱՆ ԲՈՆԱ-
ԿԱԼՈՒԹԵԱՆ ՅՀԹ»:

«Փղողոսկրյա» ավետարանը մեզ համար կարևոր ունիկում է ոչ միայն որպես հայ գրչության հնագույն նմուշ, այլ իր փղողոսկրյա կազմով և պարունակած գեղեցիկ մանրանկարչությամբ: Ձեռագիրը գրված է Վալոց Ձորի Նորավանքի գրչության դպրոցում Հովհաննես գրչի կողմից:

Հայ գրչության և մանրանկարչության համար ունիկում ձեռագիր է Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի մի ձեռագիր, որը պատվիրատուի անունով հայտնի է Մլքեի ձեռագիր անունով: Մլքեն Գագիկ Աթրուների թագավորի կինն էր, որը գրել

¹ Գարեգին վրգ. Հովսեփյան, Գրչության արվեստը հին հայոց մեջ, էջ 175 - 176:

է տվել ձեռագիրը 902 թվականին և նվիրել Վարագա վանքին: Ձեռագրի մանրանկարները 1902 թվականին, նրա Գրչության հազարամյակի լրացման կապակցությամբ, գոնատիպ նմանահանությամբ հրատարակել են Վենետիկի Մխիթարյանները:

Հայ գրչության պատմության համար բացառիկ արժեք ունի Հայկ. ՍՍՌ Պետ. Մատենադարանի № 2673 ձեռագիրը, որն անցյալում հայտնի էր 102 համարով: Այս ձեռագիրը թղթի վրա գրված հայկական հնագույն ձեռագիրն է աշխարհում: Այն ընդօրինակել է Ղուկաս գրիչն իր հոր Դավիթ քահանայի պատվերով 971 թվականին: Ձեռագիրը գրվելուց սասը տարի հետ նորոգվել է, և նորոգողը թողել է հետևյալ հիշատակագրությունը. «Եւ նորոգումն սորա նլ թուականութեամս հայոց» (թ. 52ա): Այս ձեռագիրը հայ գրչության մեջ կարևոր ունիկում է նաև իր բովանդակությամբ. նա պատմագիտական բովանդակությամբ մեզ հասած հնագույն ժողովածուներից մեկն է:

Բոլորածե երկաթագիրը մեկ-մեկ պատահում է նաև XI դարում: Նման բացառությունների թվին է պատկանում Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 3793 ձեռագիր պիտարանը, որը գրել է Հովհաննես երեցը 1053 թվականին: (Ձեռագրի բնագիրը գրված է բոլորածե երկաթագրով, իսկ տողատակ համաբարբառը՝ ուղղագրի մանր երկաթագրով):

Մեսրոպյան բոլորգիծ երկաթագրի բերված նմուշներից երևում է, որ հայկական գրությունը V—X դարերի ընթացքում քիչ է փոփոխվել: Սակայն հաշվի առնելով մի շարք հանգամանքներ՝ տառերի գծագրական ձևերը, գրանյութի հնությունը, ուղղագրությունը, կետադրությունը և այլն, կարելի է մոտավոր ճշտությամբ որոշել հին գրությունների ժամանակը դարերով:

Պրոֆ. Ն. Աճառյանը մեսրոպյան բոլորգիծ գրերից հնագույնն է համարում այն գրերը, որոնք չեն ենթարկված վայրահակության օրենքին, այսինքն՝ տառերի պոչերը, թևերը և գլուխները չեն թեքվում ներքև, այլ ուղիղ ձև ունեն:

Իրոք, եթե մենք նայելու լինենք V—VII դարերի արձանագրությունների գրերին, ապա նրանք գրվում են առանց վայրահակության: Սակայն այդ անխախտ օրենք չէ, մեկ-մեկ պատահում են հին տեքստեր, որոնք ենթարկվել են վայրահակության: Այսպես է օրինակ՝ պրոֆ. Ն. Աճառյանի մատնացույց արած Սանասարյան վարժարանի V դարի համարվող ձեռագրի գրությունը, որտեղ տառեր վայր են հակված: Նման տառեր կան նաև Հռիփսիմեի արձանագրության մեջ և հին այլ բնագրերում:

Վիմագիր արձանագրությունների V—VII դարերի գրությունները հավասար շարքով են գրվում. չկան շարքից վերև բարձրացող կամ ներքև իջնող տառերը: Գրչագրությունը փոքր-ինչ տարբերվում է վիմագրերից. այստեղ նույնպես տառերը հավասար բարձրությամբ են գրվում, բացառությամբ Ձ, Ք, Ղ, Լ, Փ տառերի:

Ձեռագրի հնության խնդրում կարևոր է տառերի խոշորությունը. որքան տառերը մեծ են, այնքան ավելի հին են նրանք: Մենք նկատի ունենք կանոնական բովանդակություն ունեցող ձեռագրերի գրությունները: Սակայն պատահում է, որ ուշ շրջանում ձեռագիրը գրում են արխաիկ ձևով՝ պահպանելով նաև նախկին ընագրի տառերի խոշորությունը:

Հայագետներից ոմանք ձեռագրի գրության հնությունը որոշելու խնդրում կարևոր ցուցանիշ են համարում մագաղաթի խունացած լինելը, եթե մագաղաթը դեղնած է, հնության կնիք ունի, հետևապես վաղ շրջանում է գրված, իսկ եթե մագաղաթը սպիտակ է՝ գրությունը նոր է: Որոշ չափով այս ճիշտ է, բայց այս ևս որոշիչ ցուցանիշ համարել չի կարելի, որովհետև գրանյութի խունացումը կապված է գլխավորապես պահպանությունից, եթե ձեռագիրը չի ընկել ջրի մեջ կամ կաթիլքի տակ, պահվել է չոր տեղում, խունացած չի լինում: Պատահում է նաև հակառակը, շատ ավելի նոր ձեռագիր, եթե պահպանությունը լավ չի եղել, արագ խունացել է: Մենք գիտենք այնպիսի պահպանակներ, որոնց մի երեսը խունացել է՝ տառերն անճանաչելի աստիճանի, իսկ մյուս երեսը՝ թղթի սպիտակությամբ մաքուր է:

Գրության հնությունը որոշելու հիմնական միջոցը՝ տառերի գծագրական առանձնահատկություններն են: Անհրաժեշտ ենք համարում կանգ առնել մեսրոպյան երկաթագիր տառերի վրա առանձին-առանձին:

Ա.—Երկու սյունագծերը միանում են ներքին կամարակոր գծիկով: Աջ կողմից տառի ներսից սկսում է բարակ մի գիծ, որը մահիկի ձևով իջնում է մինչև սյան ծայրը, ճեղքում, դուրս է գալիս և հունական ալֆաբի նման վեր բարձրանում: Հետագա դարերում այդ գծիկը, վայրահակության օրենքով, սկսում է թեքվել ներքև: Ուղղագիծ երկաթագրում երկրորդ սյունագիծը բաժանվում է երկու մասի և միանում մագազծով:

Բ.—Դիլիկը բոլոր ձև ունի: Տառանիշը որքան հին է, այնքան թևը, վերին գլխիկի համեմատությամբ, փոքր է, իսկ հետագայում երկարում է և կախ ընկնում ներքև: Ուղղագիծ երկաթագրում կլոր գլուխը անկյունավոր ձև է ստանում:

Տեկոք 490 թ. № 1	Պահպ. V-VI դ. № 2	Հոհիփ. 610 թ. № 3	Արուճ 668 թ. № 4	Պատ. VIII դ. № 5	Լազ. 887 թ. № 6	Վիեն. VIII-IX դ. № 7	Ազաթ. IX-X դ. № 8
Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
Բ	Բ	Բ	Բ	Բ	Բ	Բ	Բ
Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ
Դ	Դ	Դ		Դ	Դ	Դ	Դ
Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե
Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ
	Է	Է	Է	Է	Է	Է	Է
	Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ
Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի
Լ				Լ	Լ	Լ	Լ

Տեկոր 490 թ. № 1	Պահպ. V-VI դ. № 2	Հոհիփ. 610 թ. № 3	Արուճ. 668 թ. № 4	Պատ. VIII դ. № 5	Լազ. 887 թ. № 6	Վիեն. VIII-IX դ. № 7	Ազաթ. IX-X դ. № 8
Պ	Պ	Պ		Պ	Պ	Պ	Պ
	Պ			Պ	Պ	Պ	Պ
Ռ	Ռ	Ռ	Ռ	Ռ	Ռ	Ռ	Ռ
Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
Ա	Ա	Ա		Ա	Ա	Ա	Ա
Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե
Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր	Ր
Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ	Յ
Ի	Ի		Ի	Ի	Ի	Ի	Ի
	Փ	Փ		Փ	Փ	Փ	Փ
	Ք	Ք		Ք	Ք	Ք	Ք

ՈՉԲԱՍԲԵՍՅՈՒ

ՆԻՄԻՆՉՆՍԻՍԻ

ԲԻՆՉԻՌԵԼԵ

ՅԱՆԳԻՄԱԿԻՍ

ԲԻՆ ՆԱԲՅԻՍ

ԱՌԱՆՉԻՆՆԻ

ԲՈՍԵՅԱՍԻՍ

Գ—Գլխիկը փոքր է և կլոր. մեծութիւնը հավասար է տառի մեկ երրորդին: Աջ թևը սկսում է ներքևի աղեղի ուղղութիւննից քիչ վերև: Յոթերորդ դարից թևը սկսում է ներքև կախվել: Ուղղագիծ երկաթագրի ժամանակ կլոր գլխիկը քառանկյունու ձև է ստանում:

Դ—Ճիշտ «Դ»-ի նմանութիւն ունի, միայն գլխիկը բացված է: Տառի հետագա զարգացումը ընթանում է նախորդ տառի ձևով:

Ե—Սլունագիծն ուղիղ իջնում է մինչև տողը և, կեւվելով, կազմում գլխիկը: Հին տառանիշերում դեպի աջ երկարող թևը, համեմատաբար, կարճ է և ուղիղ, իսկ հետագայում երկարում է և ներքև կախվում: Պատահում են հին տառանիշեր, երբ թևն սկսում է ոչ թե սլունագծի կեսից, այլ վերին ծայրից: Ուղղագիծ երկաթագրում կլոր գլխիկն անկյունների է փոխվում:

Զ—Հին տեքստերում ձվաձև մեծ կլոր է, իսկ ներքևից միանում է հորիզոնական մի գիծ. կլոր օղակը նստում է անմիջապէս գծի վրա՝ առանց վզիկի: Հետագա դարերում կլոր օղն սկսում է փոքրանալ, և առաջանում է վզիկը, որը գնալով երկարում և հորիզոնական գծի երկու ծայրերում ելուններ է ստեղծում: Ուշ դարերում աջ ելունը ջնջվում է, և թև է գոյանում:

Է—Հնագույն տառանիշը պարզ ձև ունի. սլունագծին միանում են երկու թևեր՝ մեկը սլունագծի ներքևից, իսկ մյուսը՝ միջին մասից, որոնք սկզբում քիչ թեքութիւն ունեն, իսկ հետագայում զարգանում և կախվում են ներքև: Ուղղագիծ երկաթագրում գլխիկը և թևը սլունագծին միանալու տեղերում անկյուններ են ստեղծում:

Ը—Հնագույն ձևը պարզ է. վերին գլխիկը հավասար կիսակլոր է, իսկ ներքևի հորիզոնական գիծը՝ ուղիղ: Հետագա դարերում հորիզոնական այդ գիծը վահանաձև թեքվում է ներքև, և ներքևից վալը իջնող փոքրիկ գծիկ ավելացվում:

Թ—Բավականին տարբերվում է ներկա տառաձևից. աջ կողմի ոլորքը հավասար է սլունագծին, նույնիսկ փոքր-ինչ կարճ է: Հին տառաձևերում ոլորքից դուրս եկող գծիկը հորիզոնական ձև ունի, իսկ հետագա դարերում նա, վայրահակութեան օրենքով, ներքև է կախվում: Մոտավորապէս Մ դարից ոլորքը ուղղագիծ երկաթագրում սկսում է բարձրանալ, իսկ հետագա դարերում վերին կլորը բացվում և անկյուններ է կազմում:

Ճ—Հին ձևը փաստորեն «Ժ» հնագույն տառի ոլորքն է՝ գրեթե առանց փոփոխութեան: Հին տառաձևի հորիզոնական դուրս ելնող գծիկը ուղիղ է, իսկ հետագա դարերում սկսում է ներքև

կախվել: Սյունազօի վերին ծայրում հին տառաձևերը պահել են «թ»-ի ոլորքը սյունազօի հետ միացնող վերին կոր գիծը: Ուղղագիծ երկաթագրում տառի բոլորակը քառանկյունի ձև է ստանում:

Խ—Հին տառաձևերում սյունազօին միացող աջ թևը վահանաձև կորույթուն ունի, իսկ հետագա դարերում նա սկսում է ներքև կախվել և անկյուն տալ:

Լ—Հին տառաձևերում տողաշարքի բարձրությունն ունի, իսկ ներքևի թևը՝ ուղիղ, հորիզոնական: Հետագա դարերում նա սկսում է տողաշարքից ներքև իջնել վահանաձև կորույթյամբ, իսկ X դարից սկսած, ուղղաձիգ բոլորգիր տեքստերում այդ կորույթունը փոխարինվում է անկյունի:

Խ—Նման է «ի» տառի հնագույն ձևին, միայն նրա աջ թևի վրա դեպի վերև թեքված մի ելուն է ավելանում: Հին տառաձևերում թևերը տարբեր բարձրությամբ են միանում սյունազօին, ոմանք՝ միջից, իսկ ոմանք՝ փոքր-ինչ վերևից կամ ներքևից: Հետագա դարերում ուղղագիծ երկաթագրում ծովող թևը անկյուններ է տալիս:

Պ—Հին ձևը պարզ է, կլոր գծիկը բոլորվում է և միանում մյուս ծայրի հետ և, խաչաձևվելով, մի ծայրը թեք գնում է աջ, իսկ մյուս ծայրը՝ ձախ: Հետագա դարերում ձախ ծայրը թեքվում է դեպի ներքև, իսկ աջը՝ վերև: Ըստ որում, փոքրանում է նաև կլորը:

Պ—Հին տառաձևերում առաջին սյունագիծը երկարում է մինչև տողը, իսկ մյուս սյունագիծը ստորակետի նմանություն ունի: Երկու սյունագծերը միանում են իրար բոլոր գծիկով: Հետագա դարերում ձախ սյունագիծն սկսում է վերև բարձրանալ, իսկ աջը՝ ներքև կախվել: Ուղղագիծ բոլորգրերում սյունագծերը միացնող գծիկն անկյուններ է տալիս:

Ղ—Տառի ամենից հնագույն ձևը մեր ներկա տպագրության մեջ օգտագործված «ձ» տառի նման է, բայց առանց վերևի պոչիկի. ձախից աջ թեքվող գծիկը պարզ վերջավորություն ունի: Յոթերորդ դարից սկսած այդ թեք գծիկի վրա փոքրիկ ելուն է ավելանում, որը հետագա դարերում զարգանալով բավականին թեքվածք է ստեղծում, իսկ տառի եռանկյունին ավելի է սրվում:

Ջ—Հին տառաձևերում ձախ թեքված սղեղը մեծ է, և վերին գծիկը շատ քիչ է թեքված դեպի ներքև, իսկ յոթերորդ դարից սկսած այդ գծիկը հետզհետե սկսում է կեռվել, մինչև որ բոլորովին մոտենում է ներքին. գծին: Ուղղագիծ երկաթագրում Ձ թվանշանի ձև ունի:

Ղ—Հին տառածակը շատ նման է ներկայումս գործածվող փոքրատառ ՇՁ-ին և գրվում է տառաշարքի հավասար բարձրութեամբ, իսկ լոթերորդ դարից սկսած սլունագիծը տողաշարքից ներքև է կախվում: Ուղղագիծ երկաթագրի մեջ վերին գլխիկի բոլոր գիծը անկյունների է վերածվում:

Ճ—Հին ձևը հունական «Δ»-ին է նման, միայն աջ և ձախ գծերն իրար հետ միանալուց հետո թեք ուղղութիւններով շարունակում են բարձրանալ: Տառի հորիզոնական գիծը դեռ ուղիղ է: Ուշ դարերի բոլորածակ երկաթագրերում խաչաձև երկարող գծիկներից առաջինն սկսում է ներքև ճկվել, իսկ երկրորդը ելուն է ընդունում, որ առաջներում գոլութիւն չուներ: Ուղղագիծ տառածակերում ներքին հորիզոնական ուղիղ գիծը մեջտեղից վահանաձև կորոթեցմամբ վերև է բարձրանում:

Մ—Երկու սլունագծերը իջնում են մինչև տողը և միանում կլոր բոլորով: Վերևում, աջ սլունագծի վերին ծայրում միանում է փոքրիկ ելուն, որը սկզբում ուղիղ է, իսկ հետագայում սկսում է կեռվել: Ուղղագիծ երկաթագրում տառի ներքին բոլորը ուղղագիծ ձև է ընդունում:

Լ Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ
 Կ Յ Զ Ղ Ծ Մ Յ Ն Ո Չ Պ Ղ Ռ Ս Վ
 Մ Ր Յ Փ Ք

Մ Բ Գ Դ Ե Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ Կ Յ Զ Ղ
 Ծ Մ Յ Ն Ը Ո Չ Պ Ղ Ռ Ս Վ Մ Ր Գ Ի Փ Ք

Միջին և փոքր երկաթագրերի նմուշներ:

Յ—Տառի հին ձևը շատ է նմանվում ներկայումս գործածվող Յ թվանշանին. երկու կիսաբոլորակներ դեպի ձախ ուղղված բացվածքներով նստած են իրար վրա: Որոշ բոլորածակ երկաթագրերում միջին ձախ թեքված գիծը երկարում է, քառանկյունի կետ է ընդունում իր վրա և, մոտենալով վերին և ներքևի գծերին, աքցանի ձև է ստանում:

Վ—Տառի հին ձևի մեջ վերին կեռ կտուցը թույլ է, իսկ հետագայում, գնալով, զարգանում է: Շատ նմանվում է շուռ տված «շ» տառին: Ուղղագիծ երկաթագրում տողի վրա նստած աղեղը անկյունների է վերածվում, իսկ վերին կտուցը տողաշարքից դուրս է գալիս դեպի վերև:

Ծ—Հին ձևը կիսաբոլոր աջ բացվածքով տառ է՝ վերին վերջավորության վրա բուժ ընդունած ձևով: Տառի բացված գիծը վերջանում է պարզ ձևով, առանց որևէ բարդություն: Հետագա դարերում տառի պոչը երկարում է դեպի աջ, և վայրահակության օրենքով ներքև թևքվող ելուն ավելանում: Ժամանակի ընթացքում ալդ ձևափոխվում է այնքան, որ դրանից առաջանում է բուլրգիր «շ»-ն:

Ո—Հին տառաձևը բոլոր է և սլունագծերը փոքր-ինչ թեքություն ունեն. առաջին սլունագիծը քիչ կարճ է երկրորդից: Ուղղագիծ երկաթագրում վերին բոլորակը անկյունների է վերածվում:

Չ—Հին ձևը խոշոր կիսաբոլոր է, թեքված է դեպի ձախ և ներքևից բթածև ելուն է ընդունում իր վրա: Կլորի վերին ծայրը պարզ է, առանց բարդացումների: VII—VIII դարերում ներքին բուժ գիծը երկարում և վերին կորի վրա կտուց է ընդունում:

Պ—Ներքև իջնող երեք գծիկներից առաջինը բավականին կարճ է և քիչ բացված, երկրորդը տառաշարքի միջին երկարությունն ունի, իսկ երրորդը իջնում է մինչև տողը: Վերին միացող գիծը վահանաձև կիսաբոլոր է: VII—VIII դարերում կոտրվում է երկու մասի և դառնում երկու փոքրիկ աղեղ, որոնցից առաջինն ավելի է ներքև հակվում: Ուղղագիծ երկաթագրում վերին բոլոր գծերը անկյունների են վերածվում:

Ջ—Հին տառաձևի գլուխը փոքր է, նեղ, թեք և երկար: Նրա գլխիկից երկարող բարակ ծայրը հասվում է քառակուսի մի կետով, որից սկիզբ է առնում ներքև իջնող մի գիծ, որը հետագա դարերում ալիքաձև կորուժյուն է ընդունում:

Ռ—Տառի հիմնական կմախքը բոլորաձև երկաթագիր «Ո» տառից է կազմվում, որի աջ սլունագծին միանում է մի փոքրիկ ելուն: Որոշ տառերում ալդ ելունը հորիզոնական գիրքով փոքրիկ գիծ է, իսկ երբեմն վեր է ածվում ներքև թեքվող թևի: Ուղղագիծ երկաթագրում տառի վերին բոլորը անկյունների է վերածվում:

Ս—Ներքևի սլունագծերը միացնող գիծը բոլոր է, աղեղնաձև, իսկ ուղղագիծ երկաթագրում ուղիղ ձև է ընդունում և անկյունների տալիս: Հին տառաձևերում երկրորդ սլունագիծը քիչ կարճ է:

Չ—Տառի նախնական ձևը մեծատառ բոլորգիր «Ա»-ին է նմանվում, միայն աջ ելունը ներքևից ուղիղ երկարում է դեպի աջ: Տառը հազիվ նկատելի վզիկ ունի: Տառի հետևյալ զարգացումը տեղի է ունենում հետևյալ կերպ. նախ պոչիկը հորիզոնական դիրքից ներքև է կախվում, հետագայում տառի վրա փոքրիկ կորուսված վզիկ է սկսում ավելանալ և ներքին պոչը տողաշարքից ցած իջնում: Հետագայում տառի առաջին սյունը սկսում է կարճանալ:

Տ--Նման է ներկայիս «մ» տառին: Հանդիպում է երկու ձևով. մի դեպքում վերին գլխիկը ներքև կախված, իսկ մյուս դեպքում՝ հորիզոնական ուղիղ գծիկի ձև առած: Տառի հին ձևերում երկու կորուսվածներն էլ բոլոր են, իսկ ուղղագիծ երկաթագրերում անկյունների են վերածվում:

Բ--Տառի սկզբնական ձևը շատ նման է հունական «բ» ոհո տառին: Գլխիկը կտր է և փոքրիկ շերտով է միայն բաժանվում սյունագծիկից: Հետագա դարերում, գնալով, վերին գիծը սկսում է թեքվել դեպի ներքև, վերևում ստեղծելով անկյուն:


Ց—Հին ձևը իրար վրա ձախ դարձվածքով նստած կիսաբոլորներ են, որոնցից վերինը փոքր է, իսկ ներքևինը՝ մեծ: Ուշ բոլորածև երկաթագրերում և ուղղագիծ երկաթագրերում վերին բոլորակի բացված գծերը մոտենում են իրար և միանում, իսկ երկրորդը՝ մնում է անփոփոխ:

Խ—Սկզբում տառն ունի շատ պարզ ձև. տառաշարքի բարձրությամբ մի սյունագիծ է, որից միանում է աջ թեքվող թևը: Տառի հին ձևերում այդ թևը հորիզոնական դիրքով կարճ գծիկ է, իսկ հետագայում վեր է ածվում ներքև թեքվող թևի:

Պ—Հին տառածևը պարզ է. մի սյունագիծը իջնում է վերից վար և ներքևում սյան ձև ընդունում: Սյունագիծը բավականին տարածությամբ անցնում է սովորական տառաշարքից դեպի ներքև և պարող մարդու կանթված թևերի նման թևեր ընդունում իր վրա:

Պ--Իր ձևով շատ նման է նախորդ տառին և կազմված է նրա սկզբունքով. վերից վար իջնում է մի սյունագիծ, կտրում, անցնում է տառաշարքի սահմանը և սուր ծայրով ներքև կախվում: Վերևում, սյունագծի աջ կողմում, միանում է մի փոքրիկ գլուխ, իսկ սյունագծի միջին մասից թեք խաչաձևումով անցնում է հորիզոնական ուղղությամբ ունեցող մի այլ գիծ, որը, լոթերորդ դարից սկսած, ելուններ է ընդունում իր վրա:

Մեսրոպյան բոլորգիծ երկաթագիրը կրոնական-կանոնական գրականության մեջ հարկական գրի հիմնական տեսակն է հանդի-



Կաղանկատվացու Պատմության 1289 ր. ձեռագրի մեկ էջը:

սացել V դարից մինչև X դարը, իսկ միջին մեսրոպյան գրերը՝ պատմագիտական ձեռագրերում և ավետարանների համաբարբառներում՝ V դարից մինչև XII դարը:

Ուղղանկյուն երկաթագիր գրությունները մեզ հանդիպում են IX դարից, բայց գործածական գրի տեսակ են դառնում X—XI դարերում: Նրանք իրենց գծագրական առանձնահատկություններով շատ նման են մեսրոպյան բոլորգիծ երկաթագրին, միայն թե տառաձևերի նախկին կորությունը փոխվում է ուղղագիծ անկյունների և տառերի մեծությունը քիչ փոքր է:

Ուղղանկյուն երկաթագրերից կարելի է մատնացույց անել Մովսես Խորենացու Պատմության գլխացանկ տառերը, Տիմոթեոս էլուրոսի «Հակաճառութիւն»-ը (ՀՊՄ ձեռ. № 1958) 10-րդ դարից, Էջմիածնի Ճաշոցը (ՀՊՄ ձեռ. № 832) 1154 թվականից, Հայրապետ գրչի ձեռագիրը (ՀՊՄ ձեռ. № 987) 1211 թվականից, Իգնատիոս գրչի ձեռագիրը (ՀՊՄ ձեռ. № 1519) 1231 թվականից և ուրիշներ:


Ուղղանկյուն երկաթագրի հին տեքստերում բառանշատում չի կատարվում, բայց XI դարից տեքստերն սկսում են բառանշատել: Սկսում են երևալ բոլորովին նոր տառաձևեր: Հայկական ՍՍԻ Պետական Մատենադարանի № 283 ձեռագրի հիշատակարանում, որը գրված է 1033 թվականին, մեզ հանդիպում են միացյալ «և», եռատամ «ա», կեպող գծասյունով «յ» և փակված գլխով «ց» տառերը (նովսեփյան, Հիշատակարանք, էջ 218):

Անգաման շրջանի հետաքրքիր գրություն ունի ակադ. Ն. Թառի ուսումնասիրած Պիշպեքի գերեզմանատան մի տապանաքարի հայկական արձանագրությունը¹: Այստեղ գլխագիր «Ա» տառը սկսել է փոխվել երեք ճյուղ ունեցող «ա»-ի, բայց դեռ ամբողջապես չի ձևակերպվել և չի կորցրել երկաթագրի որոշ ձևերը:

ԲՈՒՈՐԳԻՐ

Տառաձևերի փոփոխությունն առանձնապես նկատելի է դառնում XII դարում. մեզ հասած ձեռագրերի մեջ բավականին թիվ են կազմում ուղղագիծ երկաթագրից բոլորգիծ գրի անցնող տեսակները: Ըստ որում, ձեռագրերը որքան հին են, այնքան նյւանց տառաձևերը խոշոր են: Մեզ հանդիպում են բոլորգրի այնպիսի տեսակներ, որոնք կրկնակի անգամ մեծ են սովորական բոլորգրից:

¹ Н. Я. Марр, Надгробный камень из Семиречий (տե՛ս «Записки Восточн. имп. арх. об—ва» VIII, էջ 344—349):



Մի կը Եղիշի Պատմության 1172 ր. ձևագրից:

Հայ գրի և գրչության պատմություն—7

XII դարում առաջանում է բոլորգրի երկու տեսակ—Կիլիկյան բոլորգրի և Արևելյան բոլորգրի: Բոլորգրի այս երկու տեսակների զանազանությունը նկատել է Գարեգին կաթողիկոս Հովսեփյանն իր «Գրչության արվեստը» աշխատության մեջ և «Կոնստանդին կաթողիկոսը որպես հայ մանրանկարչության մեծ հովանավոր» վերնագրով հոդվածում: Վերջին ուսումնասիրության մեջ նա գրում է. «Կիլիկյան շրջանի հնագույն ձեռագիրներն էլ երկաթագիր են. հետո միայն մշակվում և տիրապետող է դառնում Կիլիկյան բոլորգիրը, որը տարբեր է Արևելյան բոլորգրից, որին ուրիշներն անցման երկաթագիր են կոչել»¹:


Կիլիկյան բոլորգիրն ունի ճիշտ «կորպուս» կոչվող գրի ձևը, ինչ որ ներկայումս գործ է ածվում մեր տպագրության մեջ, իսկ Արևելյան բոլորգիրը նրանից քիչ տարբերվում է տառերի խոշորությունից և մի քանի տառաձևերով՝ «չ», «շ», «ձ», «ջ», «ք» և այլն:

Արևելյան բոլորգրի լավագույն նմուշներից են՝ Կոստանդնուպոլսի Ազգային մատենադարանի № 68 ավետարանի գրությունը՝ 1253 թվականից, Մարտիրոս գրչի ընդօրինակած՝ Նարեկը՝ 1283 թվականից (ՀՊՄ ձեռ. № 6764), Խոսրով Անձևացու ժամագրոց մեկնությունը՝ 1278 թվականից (ՀՊՄ ձեռ. № 1328), Թոմա գրչի ընդօրինակած ավետարանը՝ 1315 թվականից (ՀՊՄ ձեռ. № 2930), և ուրիշներ:

XI—XII դարերում հայ գրի պատմության մեջ նկատելի է մի նոր երևույթ. հանդես է գալիս շղագրությունը, որը տեղ խնայող և արագագիր գրության տեսակ է: Շղագրով են գրված ՀՊՄ-ի № 2877 և № 2684 ձեռագրերի հիշատակարանները, որոնցից առաջինը գրված է XI դարում Գրիգոր գրչի կողմից, իսկ երկրորդը՝ կազմարար Հովնանի կողմից, 1159 թվականին: Այս հիշատակարաններից առաջինի մասին խոսել է Գարեգին կաթողիկոս Հովսեփյանն իր կազմած «Հիշատակարանք ձեռագրաց»-ի մեջ և ձեռագրի գրչության առթիվ տվել հետևյալ ժանոթագրությունը. «Այս փոքրիկ հիշատակարանը գրված է շղագրով, որով և շատ հետաքրքրական է հնագրության համար»²: Սակայն շղագրությունը, ինչպես և XI—XII դարերի մշակույթի առաջադիմական մի շարք երևույթներ, դժբախտաբար, իրենց զարգացումը չունեցան, որովհետև հայ ժողովրդի գլխին պայթեց աննախընթաց

¹ Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, Նյու-Յորք, 1943 (Ընդլուծեր և ուսումնասիրություններ), պրակ Բ, էջ 16):

² Գարեգին կաթողիկոս Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, Ան-թիպաս, 1951, էջ 378:



Անբրդոլյարի «Ուսումն բժշկութեան» ինքնագիր ձեռագրի մեկ էջը:

մի նոր փոթորիկ, երկիրը տակնուվրա եղավ, և հալ մշակույթը ենթարկվեց լճացման. այնուհետև հարկավոր եղավ ևս սպասել մոտ վեց դար, որպեսզի նորից հանդես գա շղագրութլունը և իշխող գրի տեսակ դառնա:

Բոլորգիրը հալ մատենագրութլան մեջ իշխող գրի տեսակ դարձավ սկսած XIII դարից: Մեր խոսքն, իհարկե, մասսայական գործածութլան մասին է, ալլապես այս գրի հին տեսակները մենք ունենք դեռ X դարից: Նրա հին օրինակը Պողոսի թղթերի մեկնութլունն է՝ 999 թվականից (նմանահանութլունը հրատարակած է Ալիշանի «Այրարատ»-ում, էջ 498): Այնուհետև, այս գրի հին օրինակներից է Հայկական ՍՍԻ Պետական Մատենադարանի № 229 ձեռագիր պատարանը, 1033 թվականից, և այլ ձեռագրեր:


Մեզ հայանի չէ, թե ինչից է առաջացել գրի «բոլորգիր» անունը. ինչո՞ւ է «բոլորագիր» կոչվում: Նայելով նրա անվանը, թվում է, թե գրի այս տեսակն իրոք կլոր պիտի լիներ, բայց, իրապես, նա բոլորովին էլ կլոր չէ, այլ անկլունավոր է և հավասար նստում է տողի վրա: Գուցե նա այդ անունը ժառանգել է նախկին բոլորաձև երկաթագրից, որից նա առաջացել է: Համենայն դեպս, այժմ նրա անվան մասին որոշակի ոչինչ ասել չենք կարող:

Բոլորգիրը մի քանի անգամ ավելի փոքր է, քան բոլորաձև երկաթագիրը, և, ի տարբերութլուն նրա, նախկինի նման ոչ թե նկարվում է, այլ գրվում: Գրչի մեկ-երկու գծումով ավարտվում է ովլայ տառը: Արագութլան հետևանքով գրերը փոքր-ինչ թեք ձև են ընդունում: Հեշտ գրելու հետևանքով որոշ գրեր պարզեցվում են և փոխվում նախկինի համեմատութլամբ (տես այս մասին բերված գրերի նմանահանութլունները): Գրեթե բոլորովին փոխվում են՝ ա, գ, թ, հ, ձ, մ, յ, շ, ջ, ո, տ, ց, լ, փ, ք տառերը:

Այս գրութլան մեջ հայկական այբուբենի վրա ավելանում են «բ», «օ» և «ֆ» տառերը, որոնք առաջ չկային: Սակայն միշտ չէ, որ գործ են ածվում նրանք: Հատկապես հին տեքստերում, որոնք ընդօրինակվում են, գրիչները հետևում են հին սովորութլանը— «և»-ը գրում են անշատ «ել» ձևով, «օ»-ն գրում են «առ» ձևով, իսկ «ֆ»-ի փոխարեն գործ են ածում «փ»:

Բոլորգիրը գեղարվեստական կատարելութլան է հասնում առանձնապես Կիլիկյան և Ղրիմի գրչութլան դպրոցներում (Հոռմվըլա, Ակներ, Կաֆա, Սուրխաթ և այլն): Երբեմն բոլորգրով զբրված այնքան գեղեցիկ համաչափ տեքստեր են պատահում, որ

ամենին չի կարելի տարբերել տպագրից: Կիլիկիայի գրչութիւն
 դպրոցից հալանի ևն առանձին գեղազիր գրիչներ, որոնց մասին



Մի կօ Նիրսիացու Վեշխարհացոյցի XII դ. ձեւագրից:

մեծ գովեստով ևն խոսում նրանց աշակերտները կամ լծակից ըն-
 կերները:

Բուրբոյր տնցատերու՞մ գրիթն միշտ կատարվում է բառ-

անշատում: Գատահում է, որ ՎԱՆ-ը շարունակում են միացնել նախորդ բառի հետ: Բոլորգրի տեքստերում սկսում են գործածել բազմաթիվ կենտղրական նշաններ, նշում կարճ և երկար վանկի նշանները, տողադարձի նշաններ են դնում և այլն:

Ա յս բաճիք քերտողակա
 քի ասաց եալ մեծ ի
 ԳՈՒԵՄԻԿՈՍԻՆ ՍԱՐԿԱԻ Ա
 ԳԻՆ ՈՐԻՄԻԵՉ ԵՐԱ ՎՊԶԱԿՈՒՄ
 ՄԻՆ ՎԱՂԲԱՄ. ԳՄԻԵՍՆՈՒ
 ԱՍՄ ՈՄՆԻՄՆԱԿՈՒՄԱԵԿԵՂ Ե
 ԳԻՅ: ԼԵՐԴՄԻՈՐ յԱՆԴԳՆԵԱԼ
 ԻՂԻԵԱԿԵ յԱԻԵԼ ՊԻԿԱՄՊԱ
 ԿԱՍԵՅ ՈՒԿԱՆԵԼ. ԻԲԱՆԻԿ ԿԱ
 ՄԻՄԱՆԿ ԵՆՅԱՐՈՒԵՍՄ ԻԿ՝
 ՋԻԵՄԵՐ ՈՉ ԻՂԻԵԱՅՄԵՅ յԱԻ Ե
 ՄԻԿ ԵՐԳԱԿԱՍԵՅ ՈՒԿԱՆ ԵԼ
 ՉՈՐԻՊՐՆԻՆ ԻԻՐՈՎ ՉԵՄԱՄԲՆ
 ԳՐԵԱԼ ԵՐ. ԵՂՍՄԱՍՅՈՒՄ ԱԻ Բ
 ԻՆԱԿԻ ԵՐԿՄԱԿՆ յՈՐՈՒՄ ԵՐԱԿ՝
 ԱԿԻՉԲՆՆ ԵՐԿՄՄԱՐԱԾՆԵՂԾԵԱԼ.

Մի էջ Հովհաննես Իմաստասերի
 1211 թ. հիշատակարանից:

Բոլորգրի տեքստում սկսում է առաջանալ մեծատառի՞ և փոքրատառի տարբերությունը: Մեծատառով կամ զլխատառով սկսում են գրել տեքստի սկզբի տառերը, առանձին հատվածների սկզբնատառերը և այլն: Ուշադրություն արժանի է այն, որ այդ

ժամանակ ևս հատուկ անունները որոշ տեքստերում շարունակում են գրվել փոքրատառերով: Վերնագրերը ընդգծելու համար գրում են կարմիր թանաքով կամ զարդանկարում:

Այս կապակցություններ անհրաժեշտ է նշել, որ Գրիգոր Տաթևացին Գևորգ Սկևռացու գրչության արվեստի իր մեկնության մեջ երեք տեսակ գլխագիր է նշում՝ «ծաղկի», «երկաթի» և «հասարակ»։ «Երեք են գլխագիր: Նախ՝ ծաղկի, երկրորդ՝ երկաթի, երրորդ՝ հասարակ գլխի» (ՀՊՄ ձեռ. № 3587, էջ 238):

Արագ գրելու և սեղի խնայողության պահանջը հարկադրում է մարդկանց տառերը գրելու նոր և պարզ ձև մշակել: Սակայն այժմ ևս հատուկ ուշադրություն է դարձվում գեղագրության վրա: Մեզ է հասել Կիլիկյան շրջանից մի հետաքրքիր տեղեկություն, որը ցույց է տալիս այն ժամանակվա գեղագրության բարձր պահանջը: Այդ տեղեկությունը բերում է Ալիշանն իր «Սիսուան»-ի մեջ: Տարսոնցի մի հայ օրիորդ, Ալիժ անունով, որը հմուտ է եղել հայկական գրչության մեջ, գեղեցիկ ձևով գրում է հայերեն մի այբուբեն և հայտարարում, որ ով կարողանա իր նման գեղեցիկ գրել, նա իրավունք կունենա իր ձեռքը խնդրել: Երկու երիտասարդներ փորձում են իրենց բախտը, գրում բերում են, բայց օրիորդը չի հավանում, հայտարարելով, որ նրանց գիրը «Զի նրմանիր գիրն Ալիժին»: Ալիժը նորից հայտարարում է, որ ով կարողանա բերել այնպիսի գիր, որ նման լինի իր գրին՝ «նա կու լինի փեսայ Ալիժին»:

Շնորհալի մի երիտասարդ շատ գեղեցիկ գրում է հայկական տառերը և բերում Ալիժին: Օրիորդը նայում է երիտասարդի գրին և հավանում՝ հայտարարելով. «...կու նրմանի գիրն Ալիժին»¹:

Բոլորգիրն իշխող գրի տեսակ է մնում մինչև XVI դարը ներառյալ, որից հետո աստիճանաբար ասպարեզը զիջում է նոտըրգիրն, չնայած XVI—XVII դարերում ևս պատահում են բոլորգիր ձևագրեր:

ՆՈՏՐԳԻՐ ԵՎ ՇՂԱԳԻՐ

Նոտար բառը ծագում է հունական νοτάριος կամ լատինական notarius բառերից, որ ունեն գրագիր, դպիր իմաստը, իսկ նոտր գիր՝ գրագիրներին, դպիրներին գիր: Նա համարվում է արագագիր գրու-

¹ Հ. Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 520:

թյուն և ըստ բառի իմաստի համապատասխան է ռուսական „СКОРОПИСЬ“-ին: Գրի այս տեսակը նպատակ էր դնում, որքան կարելի է, արագ գրել և քիչ տարածութեան վրա շատ տառեր տեղավորել:

Նշանագրերի կրիկյան խմբի հնագույն ձեռագրերը XIII դարի վերջից են (Հովհաննես գրչի օրինակը), իսկ XIV դարից մինքս ունենք արդեն մի քանի ձեռագրեր՝ Կարապետ երեցի ձեռագիրը՝ 1304—1305 թվականներից, Ատոմ գրչի ձեռագիրը 1366 թվականից (Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում), Ստեփանոս Սուրխաթեցու օրինակը 1357 թվականից, Սիմեոն գրչի օրինակը 1365 թվականից, Սարգիս Կրիկեցու, Հովհաննես եպիսկոպոսի, Եսայի գրչի ձեռագրերը դարձյալ XIV դարից և այլն: Անհրաժեշտ է նշել, որ վերը հիշված ձեռագրերում հայկական նշանագրերի ցուցակները մեզ հասել են ոչ թե հատվածներով, այլ ամբողջական վիճակում:

Անշուշտ, վերանայման կարիք ունի պրոֆ. Ն. Աճառյանի այն կարծիքը, որ իբր թե հայկական նշանագրերը փոքր քանակությամբ ստեղծվել են XIV դարում, իսկ հետագայում, աստիճանաբար, լրացվել: «...կրնանք հետեցնել,—գրում է նա,— թե նշանագրերու առաջին գործածությունը ժԴ դարեն մտած ըլլա, առաջին անգամ սակավ քանակությամբ, որմե հետո քիչ-քիչ շատցած և ընդհանրացած է՝»:

Վերևում մենք ցույց ենք տվել, որ XIII դարի վերջերից և XIV դարից մեզ են հասել հայկական նշանագրեր պարունակող մի շարք ձեռագրեր, ուստի և հայկական նշանագրերը XIV դարում, այն էլ հատվածաբար ստեղծելու մասին խոսք լինել չի կարող: Անվիճելի է, որ հայկական նշանագրեր կազմելու վերջին սահմանը՝ XIII դարի վերջն է, դրանից ուշ կազմված լինել չի կարող, որովհետև դարի վերջից արդեն ունենք ձեռագիր:

Սակայն ձրն է նշանագրերի ստեղծման ժամանակի առաջին սահմանը:

Այս հարցում մեզ օգնություն կարող է հասնել հայկական նշանագրություն հնագրությունը և կազմող հեղինակի անձնավորության պարզաբանումը:

Հայկական հնագրությունից մեզ հայտնի է, որ մինչև XII դարը գրված ձեռագրերում հապավված են լինում միայն տերունական բառերը: XII դարից առաջ գրված ոչ մի ձեռագրում նշված հապավումներից զատ այլ հապավումներ մենք չգիտենք: Պատվագրությունը, ներկա իմաստով, սկսում է առաջանալ միայն XII դարից հետո: Եվ քանի որ կրիկյան խմբի ցուցակի նշանագրերի զգալի մասը, ինչպես կտեսնենք, XII դարից հետո ստեղծ-

¹ Ն. Աճառյան, Հայոց գրերը, էջ 57:

ված համառոտագրութիւններ են, ուստի և հայկական նշանագրերի ցուցակը XII դարից առաջ կազմված լինելու մասին խոսք լինել չի կարող:

Մի փաստ ևս: Գիլիկյան ցուցակի հայկական նշանագրերի որոշ մասը կազմված է հայկական տառաձևերի ձևափոխութիւններից, իսկ ձևափոխված տառաձևերի հիմքը, դժվար չէ նկատել, որ ոչ թե բոլորաձև կամ ուղղագիծ երկաթագրերն են, այլ կիլիկյան շրջանի սովորական բոլորգիրը: Մեզ հայտնի է, որ բոլորգիրը հայկական ձեռագրերում սկսում է գործածվել XII դարից, ուստի և հայկական նշանագրերը XII դարից ավելի վաղ կազմված լինել չէին կարող:

Այսպիսով, նշանագրերի ընդօրինակութիւնների և նրանց հնագրութիւն ուսումնասիրութիւն հիման վրա մենք գալիս ենք այն եզրակացութիւն, որ հայկական նշանագրերի ցուցակները, XII դարից շուտ և XIII դարից ուշ կազմված լինել չեն կարող:

Ժամանակի ճշտման խնդրում մեզ կարող է օգնել նաև նշանագրեր կազմող հեղինակի անձնավորութիւն պարզաբանումը: Եթե մեզ համար պարզվի, թե ով է եղել նշանագրեր կազմող հեղինակը, դժվար չէ, մոտավոր ճշտութեամբ, որոշել նաև նշանագրերի ստեղծման ժամանակը:

Դժբախտաբար, նշանագրերից ոչ մեկի խորագրում չի հիշվում կազմող հեղինակը: Բացառութիւն է կազմում Հայկական ՍՍԻ Պետական Մատենադարանի № 3318 ձեռագրի պարունակած ցուցակը, որը վերնագրված է. «Բառ նշանագրաց Եփեսոսոսի»¹:

Եփեսոսոսը, ավելի ճիշտը՝ Հեփեսոսոսը, Աղեքսանդրյան դրպորոցի նշանավոր քերականներից է, ապրել է մեր էրալի IV դարի կեսերին: Նրա աշխատութիւններից հայտնի է «Ἐγχεῖδιον περὶ μέτρων»², որը չափական աշխատութիւն է և ոչ մի առնչութիւն չունի հայկական նշանագրութիւն հետ:

Գիլիկյան խմբի նշանագրերի արտաքին ձևը պարզ ցույց է տալիս, որ նրանք, հիմնականում, ձևված են հայկական ներկա տառաձևերի հիման վրա, տեղական ծագում ունեն և ոչ մի կապ՝ հունականի հետ:

Այդ դեպքում ի՞նչպես բացատրել հայկական նշանագրերի ընդօրինակութիւն՝ վերնագրում Հեփեսոսոսի հիշատակութիւնը:

¹ Հայկական ՍՍԻ Պետական Մատենադարան, ձեռագիր № 3318, Թ. 72ա,

² W. Christ, Geschichte der Griechischen Litteratur, München, 1905,

Մեզ թվում է, որ այդ թյուրիմացութունն առաջացել է այն պատճառով, որ հայկական կիրիկյան նշանագրերի խումբը, հիմնականում, որպես սղագրութուն, ձևով որոշ նմանութուն ունի հունական սղագրությանը: Այդ դժվար չէ տեսնել համեմատութունից: Բերենք մի քանի օրինակ՝ վերցնելով հունական սղագրության ընդարձակ մի ցուցակից, որը հրատարակել է գերմանացի գիտնական Գարտհաուզենը և համեմատենք նրանք հայկական համապատասխան բառի նշանագրի հետ ըստ իմաստի¹:

Δι	= δόξα	= Ϝ	— փառք
ΔΔΔ	= Δαυΐδ	= ԴՅ	— Դաւիթ
ΕϜ	= ἔσρος	= Դ	— առաջ- նորդ
ΑϞΡ ^δ	= Ἀνὀρέον	= Դ ^ο	— Անդ- րէաս
Ϝ	= ἤλιος	= Ϝ	— արեգակ
Ω ^c	= οὐρανός	= Ϝ	— երկինք
ΔΠΠ	= ἀποστόλων	= ԿՔ	— առաքեալ
ΠΗΡ	= πατήρ	= Կ ^ο	— հայր
Ι	= τέλαντον	= ԿԿ	— հանճար
Λ	= ἄνθρωπος	= Ծ	— մարդ
Ϟ	= σελήνη	= Ϟ	— լուսին
Ϛ	= γή	= Ծ	— երկիր և արև:

¹ V. Gardthausen. Grichische Paleographie, II B., Leipzig, 1913, էջ 342—352:

Կարելի է նման այլ օրինակներ ևս բերել, սակայն բերածները բավական են՝ տեսնելու հայկական նշանագրութեան և հունական հապավագրութեան ընդհանուր նմանութիւնը: Այսպիսի նմանութիւնը, պարզ է, պատահաբար առաջանալ չէր կարող: Մենք գիտենք, որ Վարդան Արեւելցին Հեթումի համար իր գրած քերականութիւնը ո՛չ թե կազմել է ինքնուրուին ձևով, այլ մեկնութեամբ— նա մեկնել է Դիոնիսիոս Թրակացու քերականութեան հայկական թարգմանութիւնը: Եվ քանի որ հունական քերականութիւնների հավելվածում տեղավորում էին սղագրութեան ամբողջական ցուցակներ, իսկ Դիոնիսիոս Թրակացու քերականութիւնը թարգմանված է հունարենից, ուստի և զարմանալի չէ, որ հունական նույն ավանդութիւնով մեզ մոտ ևս կազմեին նման ցուցակներ՝ հիմք ունենալով, իհարկե, հայկական սեփական նշանագրութիւնը: Բացարձակ թուրիմացութեան արդունք պիտի համարել Հեփեստոսի անվան հիշատակութիւնը հայկական նշանագրերի ցուցակի վերնագրում. ընդօրինակող հալ գրիչը, մեկնելով հունական և հայկական հապավագրութեան մատնացուլց արած նմանութիւնը և ծանոթ լինելով Հեփեստոսի հետ, նրա անունն է դրել հայկական նշանագրերի ցուցակի վերնագրում՝ որպէս քերականութեան ասպարեզի հեղինակութիւն:

XII—XIII դարերում հայկական քերականութեամբ և գրչական արվեստով գրադպրոց հեղինակներից մեզ հայտնի են երեք հոգի՝ Արիստակես գրիչ, Գեորգ Սկևոացի և Վարդան Արեւելցի: Առաջինը գրչութեան արվեստի մասին գրել է ընդարձակ ուսումնասիրութիւն¹, երկրորդը լրացրել և ընդարձակել է Արիստակես գրչի աշխատութիւնը², իսկ Վարդան Արեւելցին գրել է ծավալուն քերականութիւն Հեթում թագավորի համար³:

¹ Արիստակես գրչի այդ աշխատութիւնը վերնագրված է «Վերլուծութիւնք բացառապէս բազմազան բայից և բառից, յոգնախումբ շարադրութեանք արարեալ զսա Արիստակիսի գրչի ի խնդրոյ բազմաց յարհեստ գրչութեանք» (տես Հայկական ՍՍԻ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 2371, Թ. 78ա):

² Գեորգ Սկևոացու «աշխատութիւնը վերնագրված է «Գեորգեայ վարդապետի արարեալ ի խնդրոյ Ստեփանոսի Գոյնբրիցեանց Հայթառնացւոյ» (տես Հայկական ՍՍԻ Պետական Մատենադարանի ձեռագիր № 2382, Թ. 219):

³ Վարդան Արեւելցու քերականութիւնը վերնագրված է «Յսղագս մեկնութեան քերականին, գոր արարեալ է մեծ վարդապետին Վարդանայ ի խնդրոյ թագաւորին Հայոց Հեթմոյ» (Հայկական ՍՍԻ Պետական Մատենադարանի ձեռագիր № 2283, Թ. 1ա):

Մեր կարծիքով, կրիլիկյան խմբի հայկական նշանագիր ցուցակի հեղինակը հանդիսացել է Վարդան Արևելցին. Հեթում թագավորի համար գրելով իր քերականությունը, նա միաժամանակ կազմել է հայկական նշանագրերի մեզ ծանոթ ցուցակը՝ որպես պատրաստի ուղեցույց հայկական համառոտագրության համար:

Մեր այս եզրակացությունը ճշտությունը հաստատող հիմնական փաստն այն է, որ կրիլիկյան խմբի հայկական նշանագրերի ցուցակների հնագույն ձևագրերի մեծ մասում նրանք ընդօրինակված են Վարդան Արևելցու քերականության և կամ այլ աշխատության հավելվածի մեջ: Այսպես, Սուրբաթում Ստեփանոս գրչի 1387 թվականի ձևագրում (№ 2371) ընդօրինակված է Վարդանի քերականության հավելվածում, 1365 թվականի Սիմեոն գրչի ձևագրում (№ 341) ընդօրինակված է «Ժղլանք Վարդանայ Արևելցու ի խնդրոյ Հեթմոյ» աշխատությունից հետո, Վենետիկյան Մխիթարյանների մատենադարանի սեփականությունը կազմող № 423 ձևագրում նշանագրերն ընդօրինակված են Վարդանի «Յիշատակ բանի» և այլ աշխատություններից հետո. XIV դարի Սարգիս գրիչ Կրիլիկեցու ձևագրում (№ 750) ընդօրինակված են Վարդան Արևելցու «Ժղլանք»-ից և քերականությունից հետո, XIV դարի մի այլ ձևագրում (№ 2544) նշանագրերի ցուցակն ընդօրինակված է Վարդան վարդապետի հարցումն և պատասխանի»-ից հետո և այլն: Պարզ է, որ այսպիսի պատահականություններ նշանագրերը չէին կարող ընդօրինակվել Վարդանի ժողովածուների մեջ և նրա քերականության շարունակության հավելվածում:

Նշանագրերի՝ Վարդան Արևելցու հեղինակությունը վերագրելու և նրա քերականության հավելված համարելու պարագայում լուծվում է մի կարևոր հարց ևս՝ թե ինչ՞. հայկական նշանագրերը վերնագրում չունեն կազմող հեղինակի անունը. Վարդանը քերականության վերնագրում հիշվում է որպես հեղինակ, իսկ քանի որ նշանագրերը շարադրված էին որպես քերականության հավելված, հասկանալի է, որ հարկ չկար հեղինակի անունը կրկնել հավելվածի վերնագրում ևս:

Հայկական նշանագրությունը Վարդան Արևելցու հեղինակությունը վերագրելու և նրա կազմման ժամանակը 13-րդ դարի կեսերը որոշելու դեպքում, միանգամայն անհիմն են դառնում գոյություն ունեցող տեսակետները կրիլիկյան խմբի նշանագրերը 13-րդ դարից առաջ ու ետ կազմելու մասին, որոնց վրա, առանձին-առանձին, ավելորդ ենք համարում կանգ առնել:

Այս կապակցութեամբ անհրաժեշտ է պարզել մի հարց ևս— ի՞նչ նպատակով է կազմվել հայկական նշանագրութիւնը: Այդ հարցը հեշտ է լուսաբանել, եթե մենք պարզենք հայ նշանագրութիւնն ատաղձը:

Կիլիկիան նշանագրութիւնն համար որպէս ատաղձ, հիմնականում, հանդիսացել են հայկական տառաձևերը. նշանագրեր կազմող հեղինակը վերցրել է հայկական տառերը և նրանց այս կամ այն ձևափոխումով, հապավելով կամ կապեր կազմելով, ձևել տվյալ նշանագրերը: Համենայն դեպս, կիլիկիան խմբի նշանագրերի ստեղծման նպատակը համառոտագրութիւնն է հանդիսացել: Այդ, ի դեպ, կազմող հեղինակի կողմից բարեխղճորեն նշված է խմբի նշանագրերի ցուցակի վերնագրում. «Նշանագիրք անուանց. կարճաբանութիւն»: «Կարճաբանութիւն» բառն այստեղ գործ է ածվել համառոտագրութիւն իմաստով: Այդ բանը դժվար չէ նաև նկատել նշանագրերի ստեղծման սկզբունքի հետ ծանոթանալու դեպքում:

Կիլիկիան խմբի նշանագրերը ստեղծված են հետևյալ սկզբունքով.

ա) Վերցվում է տվյալ բառի սկզբնատառը և վրան կամ կողքը աջից ավելացվում օ նշանը.

Բ — Բարթողիմէոս

Պ — Պետրոս

Դ — Դէորգ

Յ — Յովհաննէս

Զ — Զաքարիա

Տ — Տրդատ

Թ — Թէոդորա

Դ — Դահեկան

և այլն:

բ) Որոշ դեպքերում վերցվում է բառի ոչ թե առաջին տառը, այլ միջին բնորոշող տառերից մեկն ու մեկը կամ՝ վերջինը. և աջից ավելացվում օ նշանը.

Հ — Աբրահամ

ա — թագաւոր

Ր — Աղեքսանդր

գ — քարոզ

Ո — Անտոն

ք — զարմանք

Ջ — Երզանիկ

դ — հերձուածող

և այլն:

դ) Պատվագրութլամբ հապավվում են բառի առաջին և վերջին տառերը.

բթ — բարեգութ

Գտ — Գալուստ

գն — գարուն

Զլ — Զօրաբարել

փգ — փափագ

քծ — քարկոծ

Ղո — Ղովտ

պտ — պատրաստ
և այլն:

դ) Հապավման ժամանակ բառի առաջին և վերջին տառերին միանում է միջին տառերից.

բւր — բունւոր

գլն — գերագոյն

դւր — դատաւոր

զւր — զինւոր

հպզ — հանապազ

մհտ — մահապարտ

մդր — մարդասեր

լմն — լանդիման
և այլն:

ե) Հապավման ժամանակ որպէս նշանագրի նախատառ է վերցվում ոչ թե բառի առաջին տառը, այլ միջին տառերից.

րն — Ահարոն

ղղ — աղաղակ

ւծ — առիւծ

ւշ — ապաշխարող

ղի — աղանի

ղթ — աղօթք

մթ — ամօթ

նթ — անօթի
և այլն:

զ) Հապավվում է կապգրով.

ԷԸ — բարեպաշտ

ԳԹ — գալթակղել

ԳՂ — զինւոր

ԹԷ — կաթողիկոս

ԿԲ — հանճար

ԿՐ — հմուտ

ԿԿ — հպարտ

ՆԱԿ — նահատակ
և այլն:

է) Կապգրված հապավվում են և այնպիսի բառեր, որոնք շատ հեռավոր նմանութիւն ունեն.

𐌺 (նն) — նաթան

𐌵 (դդ) — անդունդ

𐌾 (քք) — քաղք

𐌹 (ծծ) — ծառայ

𐌽 (ււ) — մշտնջենաւոր

𐌿 (վն) — վասն ախորիկ

𐍀 (մն) — Յովնան

𐍁 (չր) — շուր
և այլն:

ը) Կիլիկյան խմբի հայկական նշանագրերի մեջ, մեր կարծիքով, գաղափարագրեր կարելի է համարել հետևյալ 15 նշանագրերը.

𐌸 — աղանդ

𐌶 — ճանապարհ

𐌷 — Անտիոք

𐌷 — մարդ

𐌸 — արեգակն

𐌸 — յանդուգն

𐌸 — աւետարան

𐌸 — յափշտակել

𐌸 — եկեղեցի

𐌸 — պայծառ

𐌸 — հրեշտակ

𐌸 — սատանայ

𐌸 — դամբար

𐌸 — փարաւոն

𐌸 — քաղաք

(Պրոֆ. Հ. Աճառյանը նշված գաղափարագրերից մի քանիսը ևս հայկական տառաձևերից առաջացած նշաններ է համարում):

Այսպիսով, եթե մենք հաշվի չառնենք վերջին 15 նշանագրերը, ապա կիլիկյան խմբի մյուս նշանագրերի մասին հաստատապես կարող ենք ասել, որ նրանց մեծ մասը ձևված է հայկական տառանշանների հիման վրա:

Չի կարող պատահել, որ Վարդան Արևելցուց առաջ գոյություն ունեցած լինելու հայկական նշանագրերի մի այլ ցուցակ, թարգմանված շատ հնում և կցված Դիոնիսիոս Թրակացու քերականության մեկնություններից որևէ մեկի հավելվածում: Անհավանական ոչինչ չկա, բայց այն դեպքում մենք պիտի ընդունենք, որ հին ցուցակի նշանագրերը հիմնավորապես ձևափոխվել են XIII դարում գործածական բոլորգիր տառերի հիման վրա, որը քիչ հավանական է:

Հարց է առաջանում, եթե կիլիկյան նշանագրերի խումբը կազմված է հայկական տառաձևերից և նրա նպատակը եղել է սղագրությունը, ապա կան փաստեր, որ այդ նշանագրերը երբևէ ձևագրերում գործածված լինեն որպես սղագրություն: Այո, կան: Դրա անհերքելի ապացույցը մեզ տալիս է Հայկական ՍՍԻ Պետական Մատենադարանի № 644 ձեռագիրը, ուր ընդօրինակված տեքստերը գրված են նշանագրերի այնպիսի հապավումներով, որ ամենափորձված աղբյուրագետն անգամ, առանց ձեռքի տակ ունենալու հայկական նշանագրերի ցուցակը, չի կարող վերծանել: Չենք խոսում մենք հայկական բազմաթիվ նշանագրերի մասին, որոնք ընդհանուր գործածության մեջ են դրվել հայկական գրեթե բոլոր միջնադարյան ձեռագրերում:

Այսպիսով, կիլիկյան խմբի հայկական նշանագրություն ուսումնասիրությունից պարզվում է, որ այս խմբի նշանագրությունն առաջացել է 13-րդ դարում, և նրա հավանական հեղինակն է հանդիսացել Վարդան Արևելցին: Նշանագրերի այս խմբի զգալի մեծամասնությունը կազմված է հայկական տառաձևերի ձևափոխությունից: Նշանագրերի ստեղծման նպատակն է եղել սղագրությունը:

Վերև բերված մեր եզրակացությունը, սակայն, վերաբերում է հայկական նշանագրերի կիլիկյան խմբին: Մեզանից առաջ այս նույն կարծիքը հայագիտության մեջ հայտնվել է: Միանգամայն այլ բովանդակություն ունի նշանագրերի Երզնկայի խումբը: Այս խումբը, դժբախտաբար, մինչև այսօր դուրս է մնացել բանասիրության ուշադրությունից, եթե հաշվելու չլինենք, որ այդ խմբի մի ընդօրինակությունը, առանց մեկնաբանության, հրատարակել է Ֆրեդերիկ Մուրատը «Հանդէս ամսօրեայ»-ում¹:

Երզնկայի նշանագրերի ձեռագրերը շատ քիչ են—ընդամենը՝ երեքը—Հայկական ՍՍԻ Պետական Մատենադարանի № 5118,

¹ «Հանդէս ամսօրեայ», 1903, էջ 5—8:

№ 3177 և Բեռլինի Կայսերական մատենադարանի № 805 ձեռագիրը: Ձեռագրերից հնագույնը № 5118-ն է, որն ընդօրինակված է 1412 թվականին:

Երզնկայի նշանագրերի ցուցակը, կրիկյան խմբի համեմատությամբ, ունի հետևյալ բնորոշ առանձնահատկությունները. ա) նշանագրերը շարադրված են ոչ թե ըստ հայերեն վերծանված բառերի այբբենական կարգի, այլ խառը, բ) նշանագրերի ցուցակները չունեն վերնագիր և գ) նշանագրերի մեծ մասը գաղափարագրեր են:

Ե՞րբ և ո՞ւմ կողմից է կազմվել Երզնկայի խումբը:













Հեղինակի մասին դժվարանում ենք որևէ բան ասել, որովհետև փաստական բացարձակ ոչ մի տվյալ չունենք ձեռքի տակ, իսկ ստեղծման ժամանակը, մեր կարծիքով, պիտի լինի XIII—XIV դարերը: Այդ դժվար չէ որոշել այդ խմբի այն նշանագրերի հիման վրա, որոնք հայկական տառանիշերի ձևափոխություններ են: Այսպես օրինակ՝

Աժ	— Աստուած	Բ՛	— քերովբէ
Ֆ	— միտք	ԱՂ	— պաշտոն
Դ	— մարմին	ԴԲ	— Դաւիթ
ԼՂ	— շաւիղ	աՅ	— տրտում
Գ՛Ո	— գաւառ	ԴԿ	— հակառակ և այլն:











Հիմք ընդունելով հայկական հնագրությունը, հաստատադեպ կարող ենք ասել, որ վերև բերված հայկական ա, մ, ւ, ղ, գ, ո, դ, պ, շ, թ, հ, կ, ք տառերը, ըստ ձևի, XIII—XIV դարերից այվելի վաղ լինել չեն կարող, և քանի որ այս խմբի նշանագրերի հնագույն ձեռագիրը 1412 թվականից է, ուրեմն, նշանագրերի այս ցուցակի ստեղծման ժամանակը կարող ենք սահմանել XIII—XIV դարերը, հավանական է՝ 14-րդ դարը:

Երզնկայի նշանագրերի խմբում գիտություն համար բացառիկ արժեք են ներկայացնում գործածված այվելի քան 180 գաղափարագրերը, որոնք մի քանի տեսակների են բաժանվում:




Այս գաղափարագրերի մի մասը առարկայի պարզ պատկերն է: Այսպես օրինակ՝

	—լուսին		—մատանի
	—խորան		—դաւազան
	—տապանակ		—վիշապ
	—լոնք		—նկատ
	—լեզու		—պտուղ
	—խաչ		—աստիճան և ալլն:

Գաղափարագրերի մի ալ մասը արտահայտում է տվյալ բառի բնորոշ իմաստը: Այսպես օրինակ՝

	—աղբիւր—կտր մի կետ, որից սկիզբ է առնում և հոսում ջուրը.
	—փառասէր—իրար վրա բարձրացող օղակներ.
	—արծաթասէր—բերանը բաց արած մեծ քսակ.
	—մեղաւոր—կարճ ճանկերով գլուխ.
	—կեղծաւոր—լեզու, որ երկու մասի է բաժանված.
	—քաղաք—պարիսպով շրջափակված տարածու- թյուն.
	—գարուն —գարնան խորհրդանշան հանդիսացող թռչուններ.
	—առաւօտ—արեգակի և լուսնի միջին տարա- ծությունը.
	—անսպառ—կտր գիծ, որպես անվերջության խորհրդանշան
	—հեքեքեք—տաճար, ուր կանգնած մարդը նա- յում է դեպի արեւմուտք և ալլն:

Սի, վերջապես, կան գաղափարագրեր, որոնց դժվար է իմաստավորել:

	— պատճառ		— հաւասար
	— ահաւասիկ		— խոնարհ
	— կռապաշտ		— թարգման
	— արեւելք ¹		— գթած

և այլն:

Աղբյուրագիտական խիստ կարեւոր հարց է պարզել, թե ի՞նչ աղբյուրից են ծագում Երզնկայի խմբի մեջ մտնող ավելի քան 180 գաղափարագրերը: Միջին դարերում, հայկական նշանագրերի ստեղծման ժամանակ, ոչ Հայաստանում և ոչ էլ հարևան որևէ երկրում գաղափարագրով գրութիւն գոյութիւն չի ունեցել, որ վերցնեին ուրիշից: Կարելի է մտածել, որ գրչութիւն արվեստով զբաղվող մի հեղինակ երեւակայութիւնով ձևել է այս կամ այն նշանագիրը, եթե, իհարկե, այդ նշանագրերից մի մասը, իր ձևով և նմանութիւնով, չառնչվեր Արեւելքում գործածվող գաղափարագրերին:

Հայկական նշանագրերով զբաղվող գիտնականներից էմիլն է եղել առաջինը, որ կարծիք է հայտնել, թե հայկական նշանագրութիւն որոշ մասը Հայաստանի հեթանոսական շրջանի գիրն է: Սակայն քանի որ նրան ծանոթ և հրատարակված հայկական նշանագրերը եղել են ոչ թե Երզնկայի, այլ կիլիկյան խմբից, որոնք, ինչպես տեսանք վերևում, մեծամասնութիւնով հայկական տառանշանների ձևափոխութիւններ են, քնական է, չէին կարող չհանդիպել հետագա ուսումնասիրողների լուրջ առարկութիւնը: Այդ նույնը չի կարելի ասել Երզնկայի խմբի նշանագրերի մասին:

Երզնկայի խմբի նշանագրերի ծագումը պարզելու համար անհրաժեշտ համարեցինք նրանք համեմատել գաղափարագիր սիստեմով առաջնորդվող գրութիւն հետ:

Առաջին համեմատութիւնը մենք կատարեցինք հեթիթականի հետ: Ժամանակին համեմատման այդպիսի փորձ կատարել է պրոֆ. Ն. Աճառյանը: Նա նմանութիւն է տեսել հետևյալ նշանագրերի մեջ¹.

¹ Ն. Աճառյան, Հայոց գրերը, էջ 64—65:

Հեթիթերեն նշանագրեր













⊙	Աստուած
𐎶	Syennesis <i>աստուած</i>
𐎠	<i>թագաւոր</i>
𐎡	<i>թագաւոր dsario</i>
𐎢	dsarayi (<i>ծառայ</i>)
𐎣	<i>որդի, ժառանգ</i>
𐎤	hati
𐎥	<i>գարկեմիշ (ճշմարիտ)</i>
𐎦	ka, ak, k
𐎧	n, ni
𐎨	t'—
⊖	m
𐎩	mi
𐎪	<i>բառասկիզբն</i>











Հայկական նշանագրեր

⊖	<i>աւետարան կամ սեղան</i>
𐎶	<i>դրութիւն</i>
𐎠	<i>թագաւոր</i>
𐎡	<i>լոնք</i>
𐎢	<i>լեռն</i>
𐎣	<i>Սահակ</i>
𐎤	<i>փարթամ</i>
𐎥	<i>ճշմարիտ</i>
𐎦	<i>մարգարէ</i>
𐎧	<i>տես</i>
𐎨	<i>եղբայր</i>
⊖	<i>աւետարան</i>
𐎩	<i>սկիզբն</i>
𐎪	<i>Եսայի</i>

Որոշ նմանութիւններ, ինչպէս տեսնում ենք, կան այստեղ Մենք փորձեցինք հայկական նշանագրերը համեմատել եգիպտական հիերոգլիֆների հետ: Պարզվեց, որ հայկական նշանագրերի մեջ կան որոշ նշանագրեր, որոնք նմանվում են եգիպտականին. նրանց մի մասը նմանվում է և՛ ձևով, և՛ նշանակութիւյամբ, իսկ մյուս մասը՝ միայն ձևով: Անհրաժեշտ ենք համարում զուգահեռաբար բերել հայկական և եգիպտական նմանվող նշանագրերը՝ առաջին աղյուսակում տալով եգիպտականը և նրան զուգահեռ հայկական նշանագրերը¹.

¹ Եգիպտական հիերոգլիֆները տես Brugsch H., «Hieroglyphisch-Demotisches Wörterbuch, the fullest and best Ancient Egyptian lexicon», իսկ հայկական նշանագրերը վերցված են մեր կազմած ցանկից:

Եզրիպատեղան նիհերգլիֆներ		Հայեղակեղան նշանագրեր	
	päh վանկ		բաղաք
	ma »		տաղանակ
	mer »		երաժիշտ
	meh »		կախարդ
	nefer »		մարտիրոս
	nem »		փառասեր
	nas »		ճանապարհ
	su »		Մանասէ
	star (աստղ)		այստեղ
	xër վանկ		բաղաք
	bunch of flowers (ծաղկեփունջ)		բարաստան
	hëtep վանկ		կշիռն
	hëm »		լուսին
	crossing (խաչաձևել)		լիշատակ
	to raise (բարձրանալ)		ճանապարհ
	sun (արև)		արեգակն
	maritime (ծովային)		երկիր
	hilly country (լեռնաշխարհ)		լեռն
	country divided (բաժանված աշխարհ)		բաղաք
	man (մարդ)		աղբատ
	head (գլուխ)		գլուխ
	water (ջուր)		ջրհոս
	dikes, (պատվար)		կերպարան

Եզրագրային նիշերգրիֆներ	Հայկական նշանագրեր
 grains (հացահատիկ)	 պտուղ
 tooth (ատամ)	 Սամուէլ
 serpent (օձ)	 Կիշապ
 circle (շրջան)	 անսպառ
 trees of all kinds (ծառ)	 անթառամ

Ավելի ապշեցուցիչ եղան Երզնկայի հայկական նշանագրերի համեմատության արդյունքները Հնդկաստանի Մոխենջո-Դարոյի պեղումներից հայտարարված նշանագրերի հետ¹. պարզվեց, որ այս սիստեմի նշանագրերի մեծ մասը հեռավոր կամ մոտավոր նմանություն ունի մեր նշանագրերի հետ:

Մանոթության կարգով ասենք, որ արևելագետներից ոմանք փորձեր արել են կարգալու Մոխենջո-Դարոյում և Խարապայում (իսկ հետագայում պեղված նաև Չանխու-Դարոյում և Ջոխուկարում) հայտարարված հին հնդկական գրերը: Այսպես, Landon-ը և Hunter-ը այս գրչությունը փորձել են կարգալ բրահմական գրության հիման վրա, Gadd-ը փորձել է կարգալ սանսկրիտերենով, Լոուկոտիան՝ Պասխա կղզու գրությանը և այլն: Սակայն այդ փորձերը, ինչպես իրավացի նշել է նշանավոր չին արևելագետ Հրոգ-նին, ոչ մի դրական արդյունքի չեն հասցրել, և «մինչև այժմ հայտնի չէ այդ նշանագրերից ոչ մեկի ընթերցանությունը»²:

¹ Հնդկաստանի հյուսիս-արևելքում, Հինդոս գետի հովտում, Մոխենջո-Դարո կոչվող վայրում, 1922—1927 թվականներին կատարած պեղումների ժամանակ, գետնի տակ բացվեց գիտության մեջ անհայտ հնագույն մի կուլտուրա, որի ժամանակը սահմանվում է երրորդ հազարամյակի սկիզբը մեր էրայից առաջ, այսինքն՝ մոտ մեկ հազարամյակ ավելի առաջ, քան հնդիկների ենթադրվող գաղթը դեպի Հնդկաստան: Գետնի տակ բացվեց զարգացած մի ժողովրդի մշակութային ուղիղ փողոցներ, խոշոր առևտրական շենքեր, պահեստներ, քաղաքային բաղնիքներ, իր ժամանակի համար զարգացած ջրբաժանիչ և այլն: Տները կառուցված էին թրձաղյուղով: Ավերակ շենքերում գտնվեցին մոտ 2500 կնիքներ, որոնց վրա կային գրեր: Հայտարարված այս կուլտուրական արժեքների մասին քննարկած ուսումնասիրություն են գրել հնագիտական պեղումները գլխավորող հնագետներ Մարշալը և Մակկլեյը:

² В. Грозный, Протоиндийские письменна и их расшифровка (առաջ. «Вестник древней истории» № 2, 1940, էջ 23):

Նախահնդկական այդ գրություն վերծանությունը զբաղվել է նաև պրոֆ. Հրոզնին: Նա գտել է, որ հին հնդկական այդ գրությունը հանդիսանում է վանկային, նրանց մեջ գտել է հեթիթական նշանագրերին նմանվող գրեր և փորձել վերծանել հեթիթական գրությունը: Հրոզնու հին հնդկական այդ գրության վերծանությունը ընդունված է արևելագիտության մեջ: Այսպես, Լոուկոտկայի վերջերս լույս տեսած «Գրի զարգացումը» աշխատության մեջ հեղինակը գտնում է, որ Հրոզնու վերծանությունը անվիճելի է¹:

Մենք ծանոթ ենք Հրոզնու «Նախահնդկական գրությունը և նրա վերծանությունը» խորագրով աշխատության հետ, որը լույս է տեսել 1940 թվականին «Вестник древней истории»-ի № 2-ում, և գտնում ենք, որ Հրոզնու մատնացույց արած հեթիթերենի համեմատությամբ² հայկական նշանագրերի նմանությունն ավելի մեծ է:

Իբրևս ստորև մեր կատարած համեմատությունը՝ առաջին շարքի վրա տալով հնդկական գրությունը, իսկ հետո՝ մեր նշանագրերը:





















	—		եղբայր		—		ամբարիշտ
	—		թագաւոր լեռոն (նախորդը՝ լեռնաշղթա)		—		աղքատ
	—		լեռնաշղթա		—		նշխար
	—		ղեկավար		—		եղբայր
	—		դուռն		—		զոհ
	—		անսպառ		—		արքայութիւն
	—		ճառագալթ		—		տաճար
	—		ամենակուլ		—		Յակոբ
	—		աղանդ		—		կառք
	—		ի սկզբան պատերազմ		—		քաղաք դատաստան ³

¹ Չ. Լոուկոտկա, Գրի զարգացումը, Երևան, 1955, էջ 80:

² Հեթիթերենին ի և Ո, Մ և Ս, Մ և Ա, Ք և Ն

նմանվող նշանագրերից են համարվում և այլն:

³ Նախահնդկական բոլոր նշանագրերը վերջրել ենք Հրոզնու վերև նշված աշխատության մեջ բերված օրինակներից:

	հանդերձ		պղերգ
	խորան		աղեղնաւոր
	ծառայ		հափշտակել
	դաւաճան		հանճար
	շուր		աստղ
	կենդանի		հրեշտակ
	անեղծ		խոնարհ
	անդաստան		անմահ
	ճմարիտ		այսուհետ
	աշուն		ողորմած

Գրութիւնն այս կամ այն սիստեմի համեմատութիւնը մի ուրիշի հետ միշտ էլ կարող է նմանութիւններ տալ, մանավանդ որ մեր ձեռքի տակ եղած ցանկի հայկական նշանագրերը 180-ից անցնում են, իսկ այդքան մեծ թիվով նշանագրերի մեջ միշտ էլ կարելի է նմանվող նշանագրեր գտնել: Սակայն այստեղ խոսքը իրար նմանվող առանձին նշանագրերի մասին չէ, այլ ողջ սիստեմի: Մոխենչո-Պարոյի գրեթե բոլոր նշանագրերն, աննշան բացառութեամբ, գրեթե իրենց երկվորյակներն ունեն Նրզնկայի հայկական նշանագրերի ցանկում: Ինչո՞վ բացատրել այդ:

Մենք հեռու ենք այս նմանութիւնների հիման վրա հապճեպ հզրակացութիւնների անելուց՝ գրութիւնն մի սիստեմը բխեցնելու միտքից, սակայն չենք կարող և աչք փակել այս նմանութիւնների վրա: Մեր կարծիքով, ի՞նչ հայկական նշանագրերը ստեղծված լինեին մի առանձին անհատի կողմից և նրա մտացածին քմահաճույքով, պարզ է, որ այսպիսի նմանութիւններ երբեք չէին լինի:

Մենք գիտենք, որ հեթանոսական Հայաստանում եղել են

մեհյաններ, որոնք ոչ միայն կրոնական կենտրոններ են հանդիսացել, այլև կուլտուրայի և մատենագրութեան օջախներ: Քրիստոնեական հին հայկական մատենագիրները, որոնք քանք չէին խնայում սևացնելու հեթանոսությունը, չեն ժխտում մեհենական գրականութեան առկայությունը Հայաստանում: Առջևում մենք մատնացույց ենք արել պատմահայր Մովսես Խորենացու մի տեղեկությունը, որ վերաբերում է Դարանաղյաց Անիի մեհենական մատենագրությունը:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հալ ժողովուրդը ոչ թե չինական ինչ-որ պարսպով անջատված է եղել արևելյան մլուս ժողովուրդներից, այլ նրանց հետ ապրել է սերտ փոխազդեցության մթնոլորտում: Վերջին տարիներս Կարմիր բլուրում, Դվինում, Ջանգեզուրում և Գառնիում կատարված պեղումների ժամանակ հայտաբերված հնագիտական նյութերը եկան անվիճելիորեն փաստելու հալ ժողովրդի՝ իր հարևանների հետ ունեցած տնտեսական և կուլտուրական գործու փոխհարաբերությունների առկայությունը. պեղումների ժամանակ տեղական արդյունագործության արտադրանքի կողքին գտնվեցին չինական, հնդկական, պարսկական, եգիպտական և հարևան այլ երկրների զարդարանքներ, ամաններ, դրամներ և այլն: Այս բոլորից հետո չի կարելի արդյոք մտածել, որ Երզնկայի հայկական գաղափարագրերի մի շարք նշանագրեր, որոնք նմանվում են եգիպտական, հեթիթական և Մոսենջո-Դարոյի նշանագրերին, պատահական չեն: Եթե մենք ընդունում ենք, որ Երզնկայի խմբի նշանագրերից 180-ը գաղափարագրեր են, իսկ այդ անվիճելի է, եթե մենք գտնում ենք, որ Երզնկայի այդ գաղափարագրերը առանձին անհատի մտացածին ստեղծագործություն չեն, քանի որ նրանց զգալի մասը նմանվում է մեր հարևան ժողովուրդների գործածած հիերոգլիֆներին, ապա մնում է մեզ եզրակացնել, որ Երզնկայի խմբի նշանագրերի մեծ մասը, միջնորդաբար կամ անմիջականորեն, գաղափարագրությունից են: Անհավանական չէ նաև, որ նրանք հալ հեթանոսական մեհենական գրերն են, որոնք ոչնչացվեցին հայկական մեհյանների հետ և թաղվեցին նրանց փլաստակների տակ:

Հարց է ստաշանում՝ ի՞նչ կապ կարող է լինել հայկական «Նշանագիր իմաստնոց»-ի և հնդկական գաղափարագրերի միջև: Դրա պատասխանը մենք գտնում ենք Ջենոբ Գլակի «Պատմություն

Տարօնոյ՝¹ մեջ: Այստեղ մանրամասն նկարագրվում է այն լարված պայքարը, որ տեղի է ունենում հեթանոսութւյան և քրիստոնեութւյան միջև: Ձեռքը Գլակի հաղորդած տեղեկութւյունից երևում է, որ հալ հեթանոսների ղեկավարներից երկու քրմապետներ հրնդիկներ են եղել, մեկի անունը Դիմետրև, իսկ մյուսինը՝ Գեսանես, որոնք կազմակերպել են հեթանոսական բանակը և ճակատ առ ճակատ կռվել Տրդատի և Լուսավորչի գլխավորած պետական բանակի դեմ: Ըստ որում՝ Վդարից Հայաստանում հիմնվել էր հնդկական գաղթավայր² և, հավանական է, այս գաղութից էին ժառանգաբար ընտրվում Հայաստանի քրմապետները:

Եթե հետագա ուսումնասիրութւյուններն ու հայտնագործութւյունները գան փաստելու մեր եզրակացութւյան ճշտութւյունը, այն ժամանակ վերջնականապես լուծվում է հայագիտութւյան մեջ հարյուրամյակներ տևող վեճը՝ նախամեսրոպյան հալ մատենագրութւյան գոյութւյան մասին:

Մենք նորից ուզում ենք նշել, որ վերապահությամբ ենք զնում այս հարցը, քանի որ դեռ ճշտման կարիք ունեն Երզնկայի նշանագրերի աղբյուրը, ժամանակը և այլն, որոնցով մենք այժմ գրադվում ենք:

Կանգ առնենք այժմ մի հարցի վրա ևս և վերջացնենք: Գիտական ինչ արժեք ունի հայկական նշանագրութւյունը մեզ համար:

Հայկական նշանագրերի հետ ծանոթանալը, ամենից առաջ, կարևոր է հայկական ձեռագիր աղբյուրների վերծանութւյան համար: Տոմարական տեքստերում գրեթե բոլոր համաստեղութւյունները, աստղերը, երկինքը, երկիրը, աշխարհը և տիեզերական մյուս մարմինները ոչ թե գրվում են, այլ նշանագրվում: Ալքիմիական տեքստերում գրեթե բոլոր մետաղների և ալքիմիայի մեջ գործածվող մյուս կարևոր նյութերի անունները, ընթերցողների լախ շրջանին անհասկանալի դարձնելու համար, գաղտնագրվում են նշանագրերով: Եվ, վերջապես, պատահում են ձեռագրական տեքստեր, ուր հայկական ներկա գրութւյան հետ խառը գործ է անվում նաև նշանագրութւյունը: Ձեռք խոսում այն նշանագրերի մասին,

¹ Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 67—155:

² P. A. Абрамян «Из истории армяно—индийских связей» (տե՛ս «Պատմա-բանասիրական հանգեռ» 1958 թ. № 2):

որոնք մտել են միջնադարյան գրեթե բոլոր ձեռագրերում և լայն քաղաքացիությունն ստացել: Պարզ է, որ հայկական նշանագրերը չճանաչող մասնագետը չի կարող ճիշտ վերծանել ձեռագիր տեքստերում հանդիպող նշանագրերը:

Հայկական նշանագրերն արժեքավոր են նաև հալ ժողովրդի և նրա հարևան ժողովուրդների կուլտուրական փոխհարաբերությունների պատմության համար: Մենք նկատի ունենք հայկական նշանագրերի որոշ մասի նմանությունը արևելյան գաղափարագիր սիստեմ ունեցող նշանագրերին:

Եթե հետագա ուսումնասիրություններով վերջնականապես ապացուցվի հայկական նշանագրերի հին ծագումը, ապա՝ լուծվում է մեհենական հալ գրությունն առեղծվածը, ծանրակշիռ նոր փաստ ենք ունենում հայ-հնդկական կուլտուրական վաղեմի կապերի մասին, և հարց է առաջանում վերանայելու Հրոզնու տեսակետը՝ հնդկական նշանագրերը հեթիթերենով վերծանելու հարցում, և փորձեր անել հնդկական նշանագրերը կարգալու հայկական գաղափարագրերով, որոնց իմաստը, բարեբախտաբար, պահել են հայկական ձեռագրերը:

Մենք ստորև տալիս ենք հայկական նշանագրերի լրիվ ցանկը՝ որը կազմելու համար օգտագործել ենք հին ձեռագրերի ինչպես Կիլիկյան, այնպես և Երզնկայի ձեռագիր «Նշանագիր իմաստնոց»-ների բնագրերը:

Մենք այստեղ երկու տարբեր խմբի պատկանող հայկական նշանագրերը բերել ենք խառը ձևով, որովհետև մեր նպատակը չի եղել այստեղ զբաղվել նշանագրերի ծագման կամ նրանց այլ նշանագրերի հարաբերակցության հարցով, այլ, կազմելով հալ նշանագրերի ամբողջական ցուցակը, ցանկացել ենք օգտակար լինել հայկական աղբյուրների վերծանությունամբ զբաղվող մասնագետին:

Բոլոր դեպքերում, հայկական նշանագրերը անցյալի հալ մատենագրության արժեքավոր փշրանքներից են և անհերքելի ցուցանիշը հալ լուսամիտ մատենագրերի որոնող, ստեղծագործող մտքի:

ՆՇԱՆԱԳՐԵՐ՝ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԳՐԵՐ

	Աբրահամ		Անդունդ
	Ազգ		Անեղծ
	Աթոռ		Անզգամ
	Ականջ		Անթառամ
	Ահարոն		Անթառամ
	Ահաւասիկ		Անիրաւ
	Աղ		Անճառ
	Աղանդ		Անմահ
	Աղբիւր		Անպարծ
	Աղեղնաւոր		Անսկիզբն
	Աղքատ		Անսպառ
	Ամառն		Անվախճան
	Ամբակում		Անտիոք
	Ամբարիշտ		Անցաւոր
	Ամենակալ		Աշակերտ
	Ամենայն		Աշխարհ
	Այծեղջիւր		Աշուն
	Այսուհետե		Աշտարակ
	Այսպէս		Ապստամբ
	Անապական		Առազաստ
	Անարգ		Առաջնորդ
	Անդամ		Առաւաւտ
	Անդաստան		Առաքեալ

ՆԿ	Առիւծ	𐎎𐎏	Բուրաստան
𐎎𐎏	Առողջ	𐎎𐎏	Բուրգն
𐎎	Առու		
𐎎𐎏𐎐𐎑	Ասպարէզ	𐎎𐎏	Գարուն
𐎎𐎏𐎐𐎑	Աստիճան	𐎎	Գաւազան
✳ ✳ ✳	Աստղ	𐎎	Գերեզման
𐎎𐎏	Արդար	𐎎𐎏	Գիթած
𐎎𐎏𐎐𐎑	Արեղակն	𐎎	Գինի
𐎎𐎏	Արեւելք	𐎎	Գլուխ
𐎎	Արեւմուտք	𐎎𐎏	Դաստիարակ
𐎎𐎏	Արծաթասէր	𐎎	Դատաստան
𐎎	Արճիճ	𐎎	Դժոխք
𐎎𐎏𐎐	Արուեստ	𐎎	Դուռն
Կ	Արուսեակ	𐎎𐎏𐎐𐎑	Դրախտ
𐎎	Արքայութիւն	𐎎𐎏𐎐𐎑	Եկեղեցի
𐎎𐎏𐎐𐎑	Աւզնական	𐎎𐎏	Եղբայր
𐎎𐎏𐎐	Աւետարան	𐎎𐎏	Եղջիւր
𐎎𐎏	Բազում	𐎎𐎏	Եպիփան
𐎎	Բանական	𐎎	Երաժիշտ
𐎎𐎏	Բանասրկու	𐎎𐎏	Երեակ
𐎎	Բարեպաշտ	𐎎	Երիկամն
𐎎𐎏	Բերան	𐎎	Երկաւոր
𐎎	Բիւզանդիոն	𐎎𐎏𐎐	Երկինք

ԳԾ	Երկիր	Օ	Խոնարհ
Կ Յ	Երկիւղած	Ծ	Խոստովան
Ե Պ	Երկմիտ	Վ	Խոր
Զ	Երկպառակ	Զ Ո Ղ Յ	Խորան
Ը	Երկերեակ	Թ Օ Տ	Խորհուրդ
Թ	Թագաւոր	Ծ Օ	Մանաւթ
Պ	Թարգման	Լ Ն	Մառախ
Ռ Օ Վ	Թէպէտ	Ս	Մերակոյտ
Ծ	Թլպատ	Տ	Կախարդ
Ն	Թռչուն	Փ	Կառք
Է	Ժառանգ	Չ	Կատարած
Յ	Իշխան	Ն Օ Պ	Կարիճ
Թ Փ	Ի սկզբանէ	Ի	Կեղծաւոր
Ժ	Իւրաքանչիւր	Ի	Կենդանի
Ճ	Լեռան	Ի	Կերպարան
Չ	Լեզու	Ի	Կիպրիանոս
Զ Ք	Լուսաբեր	Թ	Կշիռ
Ը	Լուսի	Ի = Ի	Կշիռ
Է	Լուսնթագ	Ի	Կոյս
Օ	Լրումն	Ի	Կռակաշտ
+	Խաչ	Ի	Հաղորդ
69 Յ	Խեցգետին	Ի	Համապիտու
Կ	Խոյն	Ի	Համեմատ

	Հայրապետ		Մատանի
	Հանգիստ		Մարդարէ
	Հանդարտ		Մարդ
	Հանդերձ		Մարդասէր
	Հանճար		Մարտիրոս
	Հաստատ		Մեղքխեղեկ
	Հարուստ		Մեղաւոր
	Հաւատ		Մեղր
	Հեթանոս		Մեռեալ
	Հեշտասէր		Միջնորդ
	Հեռաւոր		Յակոբ
	Հերմոն		Յանդուգն
	Հոգի		Յաջող
	Հրատ		Յառաջագոյն
	Հրեշտակ		Յարմար
	Զիթենի		Յաւիտեան
	Զմեռ		Յափշտակեւ
	Զուկն		Յիշատակ
	Ղամբար		Յոնք
	Ճակատ		Յունան
	Ճանապարհ		Նահատակ
	Ճշմարիտ		Նշանագիր իմաստնոց
	Մանասէ		Նշխար

	Նոյնպէս		Սանդուղք
	Շուշան		Սատանալ
	Ոխ		Սարկաւազ
	Ոխակալ		Սեղան
	Ողորմա		Սերովբէ
	Ոսկի		Սէր
	Որոգայթ		Սիրտ
	Որպէս		Սկիզբն
	Պալտառ		Սնդիկ
	Պանդուխտ		Սողոմոն
	Պատգամ		Սոյնպէս
	Պատմութեան		Սպասաւոր
	Պատուական		Վախճան
	Պատրաստ		Վարագոլր
	Պարկեշտ		Վարդապետ
	Պարունակ		Վերակացու
	Պղերգ		Վերին Երուսաղէմ
	Պոռնիկ		Վիշապ
	Պտուղ		Տաճար
	Ջրհոս		Տապանակ
	Սահակ		Տես
	Սահման		Տեսնիկ
	Սամուէլ		Տրտունջ

ՅՅՅ	Յանկ	ՕՊՐ	Փարթամ
ԿՔ	Յնծալ	Ջ	Փիլիսոփալ
Կ	Յուլն	ԿԳՕ	Փոխանակ
ԿԳ	Փալլաժու	ԿՆ	Քահանայ
Ճ	Փալլահն	ԿԿՁԸՃԿԿ	Քաղաք
Ճ	Փառասէր	Կ	Քարոզ
ԿՔԿԿ	Փարաւոն	Յ	Քերովտ



ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԻՒ



ԿԵՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈԳԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Կետադրութիւնը, տառաձևերի նման, ժամանակի ընթացքում շատ է փոփոխվել: Նա այնքան փոփոխական է եղել, որ կարելի է ասել, թե յուրաքանչյուր դարաշրջան ունեցել է իր կետադրութիւնը՝ իր ուրույն կարգով և գործածութեան կանոններով: Համեմայն դեպս, հին հայկական կետադրութիւնը նմանութեան ավելի քիչ եզրեր ունի ներկայիս գործածական կետադրութեան հետ, քան թե հին հայկական տառերը՝ ներկայիս տառերին:

Կետադրութեան գործածութեան սկզբունքը և նրա տեսակները հաշվի առնելով, կարելի է այն լամբավորել ժամանակագրական երեք շրջանների մեջ՝ 1) հնագույն շրջան (մինչև X դար), 2) XI դարից մինչև XVIII դար և 3) XVIII դարից հետո:

Հայկական հին շրջանի կետադրութեան մասին մեր ունեցած տեղեկութիւնները շատ է կցկտուր, որովհետև վիճաբար արձանագրութիւնների փոքրիկ տեքստերում, քարի վրա, հնարավոր չի եղել կետադրութեան և առողանութեան նշաններ փորագրել, իսկ մեզ հասած գրչագրերը, գլխավորապես, կանոնական տեքստեր են և դուրս չեն գալիս սահմանված պաշտոնական շրջանակից:

Հին հայկական կետադրութեան մասին ուշագրավ տեղեկութիւններ մենք գտնում ենք միայն հին հայ քերականների մոտ՝ Դավիթ Անհաղթի, Ստեփանոս Սլունեցու, Համամ Արեւելցու և մյուսների: Մեզ ծանոթ կետերից հայ քերականները հիշել են երեքը՝ ստորա-

կետը, միջակետը և վերջակետը, իսկ առոգանության նշաններից տասը՝ շեշտը, բուժը, պարուկը, երկարը, սուղը, թավը, սոսկը, ապաթարցը, ենթամնան և ստորատը:

Հայ քերականներն ընդհանրապես մեծ նշանակություն են տալիս կետադրությանը՝ համարելով այն գրավոր խոսքի իմաստավորման գլխավոր որոշիչը, խոսքի զարդը: Դավիթ Անհաղթն իր «Քերականության մեկնության» մեջ գրում է. «Պարբերության տրուհումը, այսինքն՝ անշատումը և զատումը—իմաստ է տալիս խոսքին, իսկ սխալ տրուհողը նման է անշնորհք այն խոհարարին, որը չգիտե միսը ճիշտ կտրատել մասերի, մի միտք չի բաժանում մյուսից, մի խոսք չի զատում մյուսից, ուստի և պարբերության իմաստն անորոշ է մնում, լսողի համար հասկանալի չի դառնում, և ինքը դրսևորում է իր անվարժությունը»¹:

Հակառակ հայ քերականների կետադրության մասին ունեցած այս պարզ ցուցումին և տարբեր կետերի մասին եղած հիշատակություններին, մինչև X դարը մեզ հասած վիմագիր արձանագրությունների և ձեռագրերի մեջ գործ է ածվել միայն մի նշան—միջակետը. հնագույն տեքստերում այլ կետեր մեզ չեն հանդիպում: Ինչո՞վ բացատրել այդ: Հավանական է, որ հայ քերականների մատնացույց արած կետադրական և առոգանության բոլոր նշանները գործ են ածվել, բայց գործ են ածվել ավելի պատմագիտական գրականության մեջ: Համենայն դեպս, 971 թվականի նշանավոր թղթի ձեռագիրն ունի բոլոր կետադրական նշանները:

Միջակետն ունեցել է երկարող քառանկյունի ձև և դրվել է ոչ թե տողի վրա, այլ քիչ վերև, ներկայիս վերջակետի վերին կետի տեղը: Որոշ տեքստերում նա ունի երկարող բարակ պոչիկ: Բոլոր հին տեքստերում միջակետը փոխարինել է նաև ստորակետին և վերջակետին: Բերենք հնում գործածվող մի նախադասություն.

՝ Ովիծովսերմանէ՞ զձկուևնկերալրէ՞

վերծանվում է. «Ով ի ծով սերմանէ, զձկունս կերակրէ»:

Տվյալ նախադասության մեջ առաջին միջակետը գրվում է ստորակետի տեղ, իսկ երկրորդը՝ վերջակետի:

¹ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи СПб, 1915, էջ 88:

X դարից սկսում են երևալ հայկական մյուս կետերը և՛ վերջակետը, ստորակետը, իսկ XI—XII դարերում նրանք լայն գործածության մեջ են դրվում:

Նշաններից հին հայկական գրությունների մեջ գործ է ածվել մեջբերումների նշանը, որ ունենում է հունական սիգմայի ձև՝ ζ և դրվում է մեջբերված տեքստի բոլոր տողերի առջևում—քանի տող որ մեջ է բերվում, այնքան էլ նշաններ են լինում նրանց առջևում: Բերենք մեկ օրինակ.

Եւ կրկնեալ անդրէն ասեն պատգամաւորք
 չ թշնամւոյն թէ՛ Արա զարլ և ապրեսցես դու
 չ և տուն քո և ամենայն մնացորդք երկրի քո.
 չ ապա թէ ոչ՝ հրամայեցաւ լինէն ունել ածել
 չ գըեզ առ իս ականալ կամաւք (Կաղանկատվացի):

Հնագույն տեքստերում գործ է ածվում նաև պատվի նշանը որը փոքր-ինչ տարբերվում է ներկայումս գործածվող պատվի նշանից: Նա, ինչպես ասել ենք հապավման գլխում, դրվում է միայն տերունական լոթ բառերի վրա՝ $\overline{ՏՐ}$, $\overline{ՄԲ}$, $\overline{ԻԼՂ}$, $\overline{ԵՂՄ}$, $\overline{ՅՍ}$, $\overline{ՔՍ}$, $\overline{ԱԾ}$: Դրությունը հիմնովին փոխվում է XI դարից, երբ տեքստերում սկսում են գործածել մեզ ծանոթ բոլոր կետերը և առողանության նշանները: Այժմ խնդիր է առաջանում ոչ միայն ճիշտ սահմանագծել խոսքի առանձին մասերը, այլև հանգով առողանել նրանք: Սահմանվում է կետերի և առողանության նշանների հաստատուն մի կարգ, որը շատ շուտ քաղաքացիություն է ստանում:

Ուշադրության արժանի է այն, որ XII—XIV դարերի հալ գրիչները ոչ միայն իրենց ընթացիկ աշխատությունների մեջ առաջնորդվում են կետադրության այս նոր սկզբունքով, այլև սկսում են ուղղել իրենց ընդօրինակած հին ձեռագրիչի կետադրությունը:

Մեկ-մեկ պատահում է, որ հին ձեռագրերի կետադրությունն ուղղող գրիչները, քննասեր ընթերցողի հանդիմանությանը չարժանանալու համար, անհրաժեշտ են համարում կատարած փոփոխությունների մասին հիշել իրենց հիշատակարաններում և ընթերցողի ներողամտությունը խնդրել «անմեղադիր լերուք» բառերով:

Հակոբ գրիչը 1311 թվականին, ընդօրինակելով Հովհան Մանդակունուն վերագրվող ճառերը պարունակող մի հին ձեռագիր, իր հիշատակարանում գանգատվում է, որ նախագաղափար ձեռագրի տեքստը «խառնափնդոր շփոթեալ էր», որովհետև չունեի «աւար-

տակէտ կամ ստորակէտ կամ միջակէտ», չէին գործածված առոգանության նշանները, ուստի և «անհրաժեշտ և անխարմար էր»: Եվ անհա նա շտկում է նախագաղափար օրինակի ընդօրինակութունը և վերացնում «թերութիւններ»-ը¹:

Հակոբ Կրակցի գրիչը խնդրում է հիշել իրեն, որովհետև ինքը մեծ ջանք է թափել ուղղելու Փիլոն Եբրայեցու աշխատության հայերեն բնագրի կետերը, ստորակետերը, շեշտերը, բութերը և առոգանության նշանները²:

Այսպիսով, գրիչները կետադրության հին կարգը փոխում են իրենց ժամանակ քաղաքացիութունն ունեցող նոր կարգով, «արդիականացնում» են այն:

Մեզ ծանոթ երեք կետերը՝ ստորակետը, միջակետը և վերջակետը գործ են ածվում ճիշտ այն նշանակութամբ, ինչ գործ ենք ածում ներկայումս³:

Կետերի նշանակության և նրանց գործածման եղանակի վրա կանգ են առել XII—XVII դարերի բոլոր հայ քերականները: Դավիթ Զելթունցին իր «Մեկնութիւն քերականութեան» աշխատության մեջ, խոսելով երեք կետերի մասին, հետևյալ պատկերավոր օրինակն է բերում. «Օրինակ վերցնենք լեռը, ուր բարձրանալ է կամեհնում մեկը. երբ ճանապարհորդը հասնում է լեռան ստորոտը, մի անգամ փոքր-ինչ հոնգատանում է: Շարունակելով իր ճանապարհը դեպի վեր, նա լեռան կիսում կրկին անգամ հանգստանում է: Այնուհետև շարունակում և բարձրանում է լեռան գագաթը»: Դավիթ Զելթունցին առաջին հանգիստը համեմատում է նախադասության մեջ գործածվող ստորակետի հետ, զառիվեր լեռը բարձրանալիս, ճանապարհի կիսում կանգ առնելը՝ միջակետի, և լեռան գագաթը հասնելը, որը նրա ճանապարհորդության նպատակակետն է՝ վերջակետի, կամ, ինչպես ինքն է ասում՝ «կէտ աւարտեալ»-ի⁴:

Հալ քերականները, հիմնականում, ուղեցույց են ընդունում կետերի մասին Դիոնիսիոս Թրակացու տված հետևյալ ցուցումը. «Կէտ է (խոսքը վերջակետի մասին է—Ա. Ա.) տրամախոհութեան

¹ ՀԳՄ ձեռ. № 5077, ք. 288ա:

² ՀԳՄ ձեռ. № 2057, ք. 180բ:

³ Հայկական կետադրության մասին ուշագրավ աշխատություն է Ա. Մ. Միխայրյանի «Пунктуация армянского языка и обучение ей в средней школе», ավտորեֆերատը և նույն հեղինակի «Առոգանություն» վերնագրով հոդվածը, որը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրի 1958 թ. №9-ի մեջ (էջ 54—61):

⁴ ՀԳՄ ձեռ. № 2330, ք. 110բ:

լանդեցելոյ նշան», այսինքն՝ մտքի ավարտման նշան, «և միջակ՝ նշան լողի սակս ընդունելոյ», այսինքն՝ նշան հանգստի՝ որպես սօթանդակ կետ և «ստորակէտ է տրամախոհութեան չև ևս լանդեցելոյ. այլ ևս կարաւտացելոյ նշան»¹, այսինքն՝ մի նշան, որի գործածութեամբ միտքը դեռ չի ավարտվում և կարիք ունի ավարտվելու:

Այդ նույն միտքը Գեորգ Սկեռացին իր գրչութեան խրատի մեջ ձևակերպել է ավելի հակիրճ՝ «Արդ՝ ստորակէտ, որ է ըստ կարգի առաջին, որպէս նախերգան է, և միջակն՝ պատճառ և աւարտեալն՝ վճիռ»²:

XV դարի գրիչներինց մեկը, խոսելով ընդօրինակած ձեռագրի մեջ իր կատարած կետադրական փոփոխութիւնների մասին, որը կատարել է նա «սխալաշատ բնագրի» համեմատութեամբ, հիշում է վերև բերված երեք կետերը փոքր-ինչ այլ անուններով՝ ստորակետը — «կիսակէտ», միջակետը — «միջնակէտ» և վերջակետը — «յետին կէտ»³:

Ուշ դարերում, պարբերութիւնների վերջում վերջակետի համար սովորական երկու կետից բացի, գործ են ածվում հետևյալ ձևի նշաններ ես.

:- := :: :λ :λλ :λλ

XI դարից սկսած միջակետը կորցնում է նախկին իր քառակուսի ձևը, վերից իջնում, նստում է տողի վրա: Ստորակետը աննշան փոփոխութեամբ պահել է իր նախկին ձևը մինչև այսօր:

Այս երեք կետերի գործածութեան սկզբունքը պարզ է, և ավելորդ ենք համարում օրինակներ բերել:

Հայկական ձեռագրերի մեջ միջին դարերում հայկական տեքստերը, հունականի նման, շեշտադրվել են երկար, կարճ կամ բութ նշաններով՝ ընթերցանութիւնը ճիշտ հանգով կատարելու համար: Հնում սովորութիւն է եղել ոչ միայն խոսքը կետադրութեան բաժանման ընդհատումներով կարդալ, այլև հանգերով, երաժշտական յուրահատուկ արտասանութեամբ կարդալ: XV—XVI դարե-

¹ Н. Адонц, Дионисий Фракийский и арм. толкователи, էջ 3:

² ՀԳՄ ձեռ. № 2371, Թ. 140ա:

³ ՀԳՄ ձեռ. № 6484, Թ. 530ա:

րում այդ սովորութիւնն սկսում է կամաց-կամաց մոռացվել, և բառերը կորցնում են առոգանութիւնն նշանները:

Կանգ առնենք առոգանութիւնն այդ նշաններից մի քանիսի վրա:

Շեշտը (´)—համապատասխանում է հունական *acutus*-ին և դրվում է բառակերպի երեք վանկերից մեկն ու մեկի վրա՝ ավելի սուր և բարակ հնչելու համար: «Ձի թէ ուժով վերացուցանել կամիս զձայնն, նա զշեշտն ի դէպ է դնել»,—գրում է Վարդան Արևելցիին՝ Հեթում թագավորի համար գրած իր քերականութիւնն մեջ¹: Շեշտը, սովորաբար, դրվում է՝ ա, ե, ի, ո ձայնավոր տառերի վրա: Ըստ որում, շեշտը, ըստ դրված վանկի հաշորդականութիւնն, ունի հետևյալ երեք անունները՝ «շեշտոլոր» (*oxytonon*) (երբ դրվում է վերջին վանկի վրա), «յարաշեշտ» (*paroxytonon*) (երբ դրվում է նախավերջին վանկի վրա) և «նախաշեշտոլոր» (*proparoxytonon*) (երբ դրվում է երրորդ վանկի վրա վերջից):

Բուժը (^)—համապատասխանում է հունական *gravis*-ին և դրվում է բառի վրա այն դեպքում, երբ բառը բուժ է հնչում: «Բուժն է վարիս, որ է ծանր, որպէս ոք որ ծանր բեռն լուսն ունի, կորացեալ գնայ»,—կարդում ենք Թրակացու քերականութիւնն մեջ: Հովհաննես Երզնկացիին բուժի գործածութիւնն մասին գրում է. «Որպէս շեշտն վեր հանելով սրէ [զձայնն], նոյնպէս և բուժն ի խոնարհ իջուցանելով՝ հարթէ»:

Գևորդ Սկևռացիին, ավելի մանրամասնելով բուժի գործածութիւնն դեպքերը, գրում է. «...բուժք... այսինքն կարճ կամ ծանր, զի վասն նեղելով շրթանցն ի փողեւն, ձայնք սոցա նեղք և տկարք լինին, վասն որով և բուժք ասին, այսինքն գուլ, ընդդէմ շեշտիցն, որ և սուր»:

Բուժը դրվում է ք-ի, ո-ի և լ-ի վրա:

Պարույկը (°)—համապատասխանում է հունական *circumflexus*-ին և դրվում է վանկը երկարացնելու համար: Նա կոչվում է նաև շուրջստ:

Պարույկը համարվում է շեշտի և բուժի խառնուրդը: «...և լերկոցունց ծայրիցն՝ ի շեշտէ և բժէ բաղկանայ պարուկն,—գրում է Վարդան Արևելցիին,—որպէս ի սեւոյ և ի սպիտակէ՝ գոշն»²:

¹ ՀՊՄ ձեռ. № 2371, ք. 11բ:

² ՀՊՄ ձեռ. № 2328, ք. 28բ:

³ ՀՊՄ ձեռ. № 2371, ք. 144բ:

⁴ Նույն տեղը:

Պարույրը գրվում է հ-ի, ով-ի և երկարբառուների՝ աւ-ի, և-ի, ռւ-ի, այ-ի և ոյ-ի վրա:

Պարույրի այս նշանը ուշ միջնադարում գործ էածվում հարյականի համար, սակայն հնում նա բոլորովին այլ նպատակով է գործածվել և ոչ մի կապ չի ունեցել հարցականի հետ:

Պարույրը գրվում է բառի վերջին երկու վանկի վրա միայն. վերջին վանկի վրա գրվելիս նա կոչվում է «պարոյկ», իսկ նախա-վերջին վանկի վրա գրվելիս՝ «յարապարոյկ»:

Թավը (Վ)—ուշ շրջանում ունենում է նաև \leq և \wedge ձևերը: Թավը տարբեր ժամանակներում տարբեր նշանակություններ է գործածվել: Հնագույն շրջանում նա գրվել է ձայնավորի վրա՝ նրա հնչեղությունն ավելի թանձրացնելու, հաստացնելու նպատակով. «Թաւն [դրուի] ի վերայ ձայնաւոր գրոց թաւացելոյ»,—գրում է Թրակացին իր քերականության մեջ (Адонц, Днон. Фрак. էջ 41):

XII—XIII դարերում «թաւ»-ի դերը փոխվում է. նա այժմ գրվում է ոչ թե ձայնավորի, այլ բաղաձայն տառերի վրա՝ նրանց հնչեղությունը դարձյալ հաստացնելու, թավացնելու նպատակով: Թ-ի՝ վրա նա գրվում է տ չկարդալու համար, փ-ի վրա՝ պ չկարդալու համար, ք-ի վրա՝ կ չկարդալու համար և այլն (օրինակները տես սուսկ-ի բաժնում):

Ավելի ուշ դարերում թավը գրվում է աւ-ի վրա իր իսկական նշանակությամբ՝ աւ և ոչ թե օ կարդալու համար. «Անիրանն իբրև արժանի արդարացան, և իրանն իբրև ախոյեան ստեցան» (Կլիմ.). «Ախտ ամբարտաճանութեան միշտ զանձն արդար համարի» (Լամբրոնացի). «Առանելս ինչ յանելուլ և վաստակել» (Փարպեցի). «Ոմն մարդ՝ մի և նոյն ելով, է՛ զի սպիտակ և է՛ զի սեճան լինի» (Արիստոտել). «Հան ձայնանոր» (Վանական). «Իբրև դարձուի լերամ կաքանուց խոյանայր» (Խորենացի) և այլն:

Թավը գրվում է իւ-ի վրա՝ իվ և ոչ յու կարդալու համար. «Իւն իւիք սուուել՝ քան զայն» (Եզնիկ). «Որք ոչ զպատիւնն լինքեանս ձգէին, սլլ պատիւն զհետ նոցա ընթացաւ» (Խորենացի). «Թիւ համարոյ ևս առնէր» (Եղիշե). «Ի իշատակաց դիւանագիր մատենիչն լունաց». «Թանիւ և գործով» (Ազաթանգեղոս) և այլն:

Սուղը (°)—կոչվում է նաև կարի: Գործ է ածվել XII դարից, թևակետե հիշված է Թրակացու քերականության մեջ: Դրվում է մեծ մասամբ կարճ ձայնավորով վանկերի վրա՝ ե, ո, ւ և ա-ի վրա, երբ կարճ են: Սուղի նպասակը վանկը կարճացնելն է: Օրինակ՝ ան որ ասեմք, որպէս որ ասես, թե՛կետ ելանէ, որպէս յոնք, ուրանաւր, անպա թէ ոչ, յորժամ զայդ¹ և այլն:

Ուշ դարերում սուղը գրվում է ու-ի վրա՝ այն վ հնչելու նկատառումով: Զասան թիւն պատճենին թնուական արձեւսաւորքք (Տօնական). «Աշխարհս ի յաւդունածոց և ի պէսպէս բնութեանց և ի խառնուածոց հաստատեալ է» (Վեցօրեակ). «Համարիմ զպատնուալս կոտցն՝ թնուաւագոյնս քան զպատնուալսն» (Փիլոն). «Ոչ ըստ թուոյ յառաջ քան ածէ զնուագն» (Նյուսացի) և այլն:

XVII—XVIII դարերում պատահում են ով-ով վերջացող բառեր, որոնք գրվում են ու և վերջինիս վրա սուղ են դնում ով կարդալու համար. օրինակ՝ մերոն (պիտի վերծանել մերով), ձերոն (ձերով), լալոն (լալով) և այլն:

Սուղը գրվում է նաև տողադարձի ժամանակ, երբ վանկաբաժանման ժամանակ հնչվող բայց չգրվող ը-ն անհրաժեշտ է չինում գրել: Օրինակ՝ բը-նու-թիւն, գը-րու-թիւն, նը-մա-նու-թիւն, քօ-թա-փե-լըն, են-թա-մը-նայ և այլն:

Ենթամնա (◡)—Ենթամնան հայկական մատենագրության մեջ գործածվել է սկսում XII դարից և շարունակվում է հետագա երկու-երեք դարերում և ապա մոտացության տրվում: Նա գրվում է բարդ բառերի տակից, երկու բառերը միացնելու տեղում, այդ պատճառով կոչվում է նաև ներսադրական: Եէ և ենթամնայդ նշան ներքոյ եզեալ գրոյն,—կարդում ենք քերականություններից մեկի մեջ,— և պիտոյ է յայն տեղիսն, ուր յերկու սուարտեցելոց բառից կապի մի բառ¹:

Օրինակներ շատ կարելի է բերել. օրենուսոյց, տիրապան, պատմագիր, կատակերգակ, երկանուն, ձեռնարկել, ենթամնայ, աւրագիւտ, կառավարել, երաչափք, քահանայապետ, մակդիր, համանուն, տարբերութիւն, ներկուռ և այլն:

¹ ՀԳՄ ձեռ. № 2271, Թ. 146ա-բ:

Ավելի ուշ դարերում ենթամնան սկսում են գործածել նաև տողադարձի համար և գրվում է տողադարձի բառի վերջացող վանկի տակից՝ ժա-մա-նակ, գա-ւա-ռա-պետ, գա-ղա-փալ և այլն: Ըստ որում, տողադարձի ենթամնայի նշանը ավելի փոքր է գրվում քան մյուս ենթամնան:

Սուսը կոչվում է նաև ողորկ կամ լեաշկ: Հիշված է Թրակացու քերականության և նրա հայ մեկնիչների մոտ: Սկսում է գործածվել XII դարից: Դրվում է սառի վրա նուրբ, բարակ հնչելու համար, հակառակ թավի: Հնում առ նշանը գրվել է ձայնավորների վրա, իսկ ԺԲ--ԺԳ դարերում գրվել է բաղաձայնի վրա: Գևորգ Սկևռացին, սուսը հակադրելով թավին, գրում է. «Եւ հագաքն առոգանութիւն սեռ գոլով, բաժանի 'ի թաւ և 'ի սոսկ: Եւ պիտոյ են սոքա ոչ ի ձայնաւորսն, այլ յանձայնսն: Եւ զի 'ի բաղաձայնս որ են անձայնք, են որ խոշորք և թանք են, ճրպէս՝ թ՛, փ՛, ք՛, և են, որ լեանրկ են, ճրպէս՝ ա՛, կ՛, տ՛»: Եվ նա զգուշացնում է գրչության արվեստի մարդկանց, որ չլինի թե միկը շփոթի և տարասցէ զքարն կար»:

Ապաթարքը (՝) կոչվել է նաև Ենրահատ: Ըստ Թրակացու քերականության, հայ մեկնիչների՝ այդ նշանը հնում գործ է անվել այն դեպքում, երբ բառի բարդման ժամանակ երկու միահնչուն տառեր կողք-կողքի են գալիս և բառի բարեհնչման համար միահնչուն տառերից մեկը սղվում է, և նրա տեղը գրվում ապաթարք: Օրինակ՝ Էրկ՝երիւք (կրճատված է հ-ն), վերա՛նստել (կրճատված է յ), վեր՛բերող (կրճատնած է ա-ն) և այլն:

Ավելի ուշ շրջանում ապաթարքը գործ է անվում բառանշարման նպատակով: Այսպես, ի շաղկապից առաջ ապաթարք է գրվում նախորդ բառից անջատելու համար՝ 'ի նոսա, 'ի նմա, 'ի մէնջ և այլն: Օժանդակ Է-ից առաջ ապաթարք է գրվում նախորդ բառից դարձյալ բաժանելու համար՝ երկար՝ Է (երկար Է, և ոչ թե երկարե իմաստով), պատնաո՛ Է (պատնաո Է, և ոչ թե պատնաոե իմաստով, և՛ Է (և ոչ եեէ) և այլն:

Հնում, ինչպես ասել ենք, օ-ի փոխարեն գրվել է ա: Սակայն կան բառեր, որոնց մեջ աւ-ն ունի հենց իր բուն նշանակությունը՝ ավ: Այս երկուսը իրարից տարբերելու համար եթե առաջինի վրա սկսվել է թավ գրվել, ապա երկրորդի համար գործ է անվում պառկեցրած ութի նման մի նշան՝ ∞, որն իր ձևը

վերցրել է, անկասկած, հունական օմեգայից՝ ω: Օրինակ՝ անլր, աղանա, անգուտ, անդ, համառանա, Պանդոս, մանա, խանաղ, զհանն, առաանա, անրինակ և այլն: Սակայն այս նշանը երկար կյանք չի՝ ունենում հայ մատենագրութեան մեջ, նրա փոխարեն մտնում է կրոր օ-ն և սրան դուրս մղում ասպարեզից:

Երևում է, որ միջին դարերում կրոր օ-ի համար աւ-ի վրա փոխած նշանը շփոթվել է սուղի նշանի հետ, և այդ առթիվ Գեորգ Սկևուացին զգուշացնում է. «Արդ՝ սիւալ են որք ղնշանս զայս ի լօի նշանակութեան տեղի ղնեն ի վերայ, ուր այք և շիւն լինի աւ, որպէս յաւրհանելը կամ ի զգաւնդ»¹:

Բացի վերև բերված նշաններից, սկսած XII դարից, Արիստակես գրիչը հայ գրչութեան մեջ մտցնում է երեք նշան ևս: Այդ նշանների և նրանց գործածութեան մասին նա իր «Վերծանութիւն» աշխատութեան մեջ գրում է հետևյալը. «Գիտասցէ՛ և զայս եղբայրութիւնդ քո, զի երի՛ս նշանախեցիւ զսա ամրապնդեալ եմ: Մի՛ նշանն որպէս ծակուկ է, սրածայր, լայն տեղիսն դրոշմած է. որ ցուցանէ թէ չի՛ք ալլ գիր լայս տեղիս պիտոյ: Թե՛ վասն լիոյ ինչ կարծիք ընկնի քեզ և կամ լայլ տեղի՛ անլ ինչ գոյ: Եւ միւս նշանն որպէս տգրկիկ է լայն տեղիսն դրոշմած է, որ ցուցանէ թէ լայս տեղիս անլ է ստուգիւ գիրն, թէ լի՛ հանդիպի, և թէ անլ գիր: Եւ միւս նշանն որպէս փշիկ է՝ և է՛ ի վերայ արնց գրից՝ որոյ զլուխն որպէս դատի՛ է, և չէ՛ դաս, և ոչ լիւն, որ ի համարողականսն զերեսներորդ թիւն ունի, այդ զի՛ւն է սա, որ ի զատի-նացի անունս, և լէ՛ղի է՛ղիս, և ի զամա, և լայնէ՛ղուի այս, և ի նաթա-լէ՛ղս, և լի՛է՛ղս, և որ անլ ի սոցին նմանս ուղղակի և նուրբ բերէ, զի որք որպէս զդատ զնա խաւսեցնեն, այն աւեր է և շողփաղփո: Եւ որք որպէս զլիւն խաւսեցնեն, այն թիւնձր է և անլարմար: Իսկ այս զիւն՝ է սրուկ և նուրբ, քան զլիւնն, որպէս զաւրինակը ցուցի, և ոչ դատին պէս, որ բնաւին անկերպ՝ է և անհեթեթ»²:

Արիստակես գրչի վերջին փշիկ նշանը հայ մատենագրութեան մեջ կոչվել է վանկ (V): Դ-ի վրա գրվող այդ նշանը, որի նպատակը հնչյունական նրբութիւն տալն է, մի քանի դար շարունակ

¹ ՀԳՄ ձեռ. № 2371, Թ. 140ա:

² ՀԳՄ ձեռ. № 2371, Թ. 88բ—89ա:

քաղաքացիութիւնն է ունեցել հալ գրչութիւնն արվեստի միջ: Նման բառերից կարելի է մատնացույց անել՝ այլ, փիղիստօյայ, ծու-
ղանալ:

Փշիկ կամ վանկ նշանը XII—XIII դարերում գործ էածվել նաև շեշտագրութիւնն նպատակով: Օրինակ՝ «Նճ ոք ել լերկինս», «լայն տեղիսն դրոշմուած է», «պարտ է երթալ» և այլն:

Իծանշաններն անհամեմատ շատ են ստղարաններում, քան-
ձարաններում և շարակնոցներում, մանավանդ՝ խաղաղքերում: Այդ առջատերում տասնյակ նոր գծանշանների կարելի է հանդի-
պել: Այդ նշաններից չուրաքանչյուրն ունեցել է իր անունը: Ժա-
մանակին առանձին հեղինակներ կազմել են այդ գծանշանների
ցանկերը, որոնցից մի նմուշ բերում ենք ստորև:

~	Յարաշեշտ	Վ	Հարուկ
չ	Քաշ	Տ	Ձայնդարձ
՝	Ստորագիր	Ճ	Հանգոյց
✓	Վանկ	Թ	Խոնջ
✓	Կառ	Ն	Քմազարդ
չիք	Ջրեհիկ	Ձ	Առանձնատրոպ
Վ	Խաղ	Ծ	Քմատրոպ
ժ	Դող	Ձ	Ծանրատրոպ
ն	Խածբեկ	Ձ	Թագաւորատ
Ջ	Խածլէ	Անգամներ 23 խաղ է, բայց նրանցից կա- րևորներն են համարվում հետևյալ յոթը՝	
խ	Կորճա	իսկ մյուս- ները սրանց խառնուրդն	
ռ	Բեր	ա՝ է՝ է՝ ը՝ ի՝ ո՝ օ՝	
ո	Բազմեղանակ	են համարում՝ նմանեցնելով անուշահոտ համեմունքների հետ՝ դրված համադամ կերակուրների վրա:	
ո	Ողոմոմանակ		

Մյուս նշաններից անհրաժեշտ է նշել երկու նշան ևս—տողադարձի և սխալագրության:

Տողադարձի նշանը սկսել է գործածվել XI դարից: Նա, ինչպես երևում է մի հիշատակարանից, կոչվել է «դարձագիր»:

Ինչ վերաբերում է սխալագրին, ապա նրան կարելի է հանդիպել XI դարից հետո գրված բոլոր ձեռագրերում:


Ձեռագիր գրողները սովորություն չունեին երբեք սխալ գրված բառի վրա գիծ քաշել, ջնջել, կեղտոտել, այլ սխալ գրված բառի մոտ դնում էին պայմանական մի նշան և լուսանցքում, այդ պայմանական նշանը կրկնելով, գրում էին ճիշտը: Սխալագրության այդ նշանները շատ են, նրանցից որպես նմուշ մատնացույց կանենք միայն չորսը.



XI—XVIII դարերի գրչագրերում բավականին փոխվում է նաև չակերտի ձևը. նախկին լատինական ՝ տառի փոխարեն այժմ դնում են «չ» տառի վերին գլխիկը ՝ ձևով:

Մենք չենք ուզում խոսել ավելի նոր շրջանի կետագրության մասին, որովհետև գրչագրերում և հնատիպ գրականութան մեջ հեղինակներից ամեն մեկն առաջնորդվում է իր նախասիրած կետագրությամբ: Իրավացի է հանգուցյալ ակադ. Ս. Մալխասյանցի հետևյալ նկատողությունը հայկական նոր շրջանի կետագրության մասին. «Նին ձեռագրերում կետադրությունը շատ անկանոն է: Նոցանից եղած տպագրությունների մեջ հրատարակողները կետագրությունն արել են ամեն մեկն չուր հասկացողությամբ, հետևելով որևէ եվրոպական լեզվի»¹:

¹ Ս. Մալխասյանց, Գրարարի համաձայնությունը, Թիֆլիս, 1892, շ 157:



ԳՆՈՒՆ ԻՆՆԵՐՈՐԿ



ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ածկագրութիւնը հին պատմութիւն ունի: Ինչպես բոլոր ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի մատենագրութեան մեջ հաճախ են պատահում ծածկագրեր, որոնք գործ են ածվել քաղաքական, ռազմական, բժշկական, արքիմիական և այլ գաղտնի տեղեկութիւններ ծածկագրելու նպատակով: Այդ ծածկագրերի շարքում պատկանելի թիվ են կազմում գրչախաղ-ծածկագրերը, որոնք կազմված են անմեղ նպատակով: Ձեռագրի վրա տարիներ շարունակ տքնող մեղվաջան գրիչը երբեմն ընդմիջում է իր հոգնատանջ աշխատանքը և գրչախաղեր անում—ծածկագրում է ձեռագրի գրչութեան թվականը, գրչութեան վայրը, իր անունը, պատվիրատուի անունը և այլն:

Գրիչներն իրենց անունները ծածկագրելիս նպատակ ունեն թույլ չապ, որ տգետ գրիչները շնչեն իրենց ծածկագրված անունները հիշատակարանից. նրանք ցանկանում են, որ իրենց անունները հայտնի լինեն միայն գիտուն մարդկանց, որոնց կատարելագոյն վատահում են և հավատացած են, որ վերջիններս չեն ջնջի գրչի մշակների անունները և չեն լուրացնի նրանց «ողորմիս»-ը:

Ծածկագրի տեքստերը պատմա-աղբյուրագիտական տեսակետից, խոշոր արժեք ունեն: Երբեմն ծածկագրված են լինում այնպիսի

քննագրեր, որոնք մեզ համար շատ ավելի արժեք ունեն, քան սովորական պարզունակ գրութիւնները: Այդ նկատառումով է, անշուշտ, որ հնագրութիւն բոլոր լավագույն դասընթացներում հատուկ գլուխ է հատկացվում ծածկագրութիւնը, որը միջազգային տերմինով կոչվում է կրիպտոգրաֆիա: (Կրիպտոգրաֆիա բառը հունարեն է—կազմված է *κρυπτός*՝ գաղտնի, և *γραφή*՝ գրութիւն բառերից):

Ծածկագրութիւնը հին հալ մատենագրութիւն մեջ կոչվել է տարբեր անուններով՝ «փակագրութիւն», «գրափակութիւն», «գրչափակութիւն», «ծածկագրութիւն» և այլն:

Ուշադրութիւն արժանի է այն, որ ծածկագրող անձինք, իրենց ծածկագրութիւն սկզբում կամ վերջում, թողել են ընթերցողի ուշադրութիւնը գրավող հետաքրքրաշարժ էպիգրամներ. «Այս է փակագիր, իմաստուճն իմանայ և անիմաստն զարմանայ»¹, «Ո՛վ եղբայր, զայս փակագիրս դու կարդա, թէ ոչ՝ քիտաւոր (այսինքն՝ փութադ փչիր:—Ա. Ա.) և հազայ»², «Թէ գպիրես՝ ընթերցիր, թէ ագետ՝ յիմարացիր»³, «Ով որ գիտնա(յ)՝ [նա] կկարդա(յ), ով չգիտնա(յ), նա լակորա(յ) (այսինքն՝ նա կլակվի, կպապանձվի:—Ա. Ա.)»⁴ և այլն: Զեռագրերի վրա աշխատող աղբյուրագետ մասնագետը, հասկանալի է, չի ցանկանում համբալի դերում գտնվել և փորձում է քանդել հանդիպած ծածկագրի խորհրդավոր հանգույցները:

Հայկական ծածկագրութիւն ուսումնասիրութեամբ, եթե չհաշվենք առանձին հայագետների պատահական և միջանկյալ անդրադարձումները, լուրջ գրադվել են երկու անձինք՝ ակադ. Բրոսսեն և Հ. Աճառյանը: Առաջինը հալ ծածկագրութիւն մասին ֆրանսերեն լեզվով գրել է հատուկ ուսումնասիրութիւն «Variétés arméniennes» վերնագրով և սեղավորել Պետերբուրգում լույս տեսնող Ռուսական Կայսերական գիտութիւնների ակադեմիայի «Mélanges Asiatiques» անունով տեղեկագրում 1864 թվականին (հատոր V, էջ 65—77): Իսկ Հ. Աճառյանը ձեռագրերից և տպագրի գրականութիւնից հավաքել

¹ ՀՊՄ (Հայկական ՍՍԻ Պետական Մատենադարան), ձեռ. № 7709, էջ 395:

² Հ. Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Միխայիլայանցի վիեննա, 1914—1924, հատոր II, էջ 823:

³ Երուսաղեմի Ս. Հակոբյանց Մատենադարանի ձեռ. № 1279, էջ 455:

⁴ Ե. Լալայան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, Թիֆլիս, 1913, էջ 250:

է հայկական ցրված ծածկագրերը և աշխատել մի ընդհանուր սիստեմի բերել նրանք: Իր ուսումնասիրությունն արդյունքները նա հրատարակել է «Հայոց գրերը» խորագրով արժեքավոր աշխատության մեջ՝ «Հայերեն ծածկագրերը» գլխի տակ (էջ 460—482):

Ինչ վերաբերում է ծածկագիր տեքստերին, ապա նրանց մի զգալի մասը հրատարակված է ձեռագրաց ցուցակներում՝ հիշատակարանների հետ միասին: Ծածկագրություններ կան Հ. Տաշյանի, Բ. Սարգիսյանի, Ե. Լալայանի, Հ. Աճառյանի, Ա. եպիսկ. Սյուրմելյանի և ուրիշների կազմած ձեռագրաց ցուցակներում: Ծածկագրության առանձին բանալիներ հրատարակել են Գ. Տեր-Մկրտչյանն «Արարատ» ամսագրում¹, Գ. քահ. Աղանյանն իր հայոց պատմության «Դիւան»-ի մեջ², Ժիրար Հիսուսյան քահանան իր մի ուսումնասիրության մեջ, Կ. Ղաֆաղարյանը «Ալքիմիան պատմական Հայաստանում»³ աշխատության մեջ և այլն: 1958 թվականին «Պատմա-բանասիրական» հանդեսում մենք հրատարակել ենք «Հայկական մի քանի ծածկագրությունների վերծանությունը վերնագրով մի հոդված (էջ 173—189), որից օգտվել ենք այս գրքում:

Չնայած հայ ծածկագրության ուղղությունը կատարված այս գնահատելի աշխատանքներին, այնուամենայնիվ, հայկական բազմաթիվ ծածկագրեր դեռևս մնում են չուսումնասիրված, չվերծանված և չհրատարակված վիճակում: Մեր նպատակն է այժմ ի մի հավաքել հայանի և անհայտ ծածկագրերը, խմբավորել նրանք և, հետագայում ծածկագրության վերծանության գործը ղյուրացնելու նպատակով, հրատարակել հայկական կարևոր ծածկագրերի բանալիները:

Անհրաժեշտ ենք համարում նաև նշել, որ հայկական ծածկագրությունը մենք քննության ենք առել ոչ թե նեղ, հայկական մատենագրության առանձնացած շրջանակի մեջ, այլ մեր հարևան երկրներում գործածվող ծածկագիր սիստեմների հետ առնչված: Ըստ որում, մենք նկատել ենք որոշ նմանություններ հայկական և հարևան ժողովուրդների ծածկագիր սիստեմների միջև:

Հայկական ծածկագրությունը, ըստ ձևի և բովանդակության, բաժանվում է մի քանի խմբերի, որոնք, իրենց հերթին, բաժան-

¹ Միաբան (Գալուստ Տեր-Մկրտչյան), Ներսիսյան ծածկագիր (տես «Արարատ» ամսագիր, 1888, հունվար, էջ 35—49:

² Հմմտ. Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 474—495:

³ Կ. Ղաֆաղարյան, Ալքիմիան պատմական Հայաստանում, Երևան, 1940:

վում են ենթախմբերի: Ծանոթանանք նրանց հետ առանձին-
առանձին:

Սկսենք «սյունագիր» ծածկագրից:

1. ՍՅՈՒՆԱԳԻՐ ԾԱԾԿԱԳԻՐ

Այս ծածկագիրը «սյունագիր» է կոչվում այն պատճառով, որ ծածկագրության հիմնական կմախքը սյունագծերից է կազմված: Նա հայ մատենագրության մեջ կոչվել է նաև «կետագիր» ծածկագիր¹, որը նույնպես ճիշտ է, եթե նկատի ունենանք, որ ծածկագրության մեջ կարևոր դեր են կատարում կետերը: Գուցե ավելի ճիշտ արտահայտելու համար այս ծածկագրությունը կարելի լիներ անվանել «սյունակետագիր» ծածկագիր, սակայն քանի որ «սյունագիր» անունն արդեն քաղաքացիություն ունի հայագիտական գրականության մեջ, ուստի և այդ անունը մենք թողնում ենք անփոփոխ:

Սյունագիր ծածկագիրը հայ մատենագրության մեջ ամենագործածական ծածկագիրն է. նրանով են գաղտնագրված հայկական ծածկագիր տեքստերի մեծ մասը:

Ծածկագրություն կազմելու սկզբունքը շատ պարզ է—վերցնում են ուղղահայաց սյունագծեր և նրանց մոտ դրված կետերով որոշում համապատասխան տառանիշը—«ա»-ից մինչև «թ»-ն գրում են մեկ գծիկով, «ժ»-ից մինչև «զ»-ն՝ երկու գծիկով, «ճ»-ից մինչև «ը»-ն՝ երեք գծիկով և «ռ»-ից մինչև «ք»-ն՝ չորս գծիկով: Այս գծիկների մոտ, ըստ հայկական այբուբենի համարաշարքի, դրվում են կետերը: Ըստ որում, կետերը դրվում են գծիկի վրա կամ նրա կողքին՝ աջից: Երբ դրվող կետերի թիվը շատ է լինում և գծիկների բարձրությունը չի բավարարում, կետերի ուղղահայաց շարքը թեքում են դեպի աջ, կամ դարձնում երկու շարք:

Եվրոպացի հայագետ Մյուլլերը որոշ նմանություն է տեսնում հայկական սյունագիր ծածկագրության և կելտական ogham կոչվող գրության միջև, որը կազմված է հինգ գծիկների զանազան ձևափոխություններից, և կարծում է, որ սյունագիրը վերցված է նրանից²:

¹ ՀԳՄ, № 2370, Բ. 1ա:

² Müller, Nicht-Mesropische Schriftzeichen bei den Armeniern, WVKM, 10, էջ 129—132:

Սյունագիր ծածկագրի մի քանի բանալիներ են հասել մեզ, որոնցից բերում ենք Անդրեաս Եվդոկացու (XVI դար) այբբենաբանի հավելվածում ընդօրինակված բանալին¹։

.	..	.	:	:	:	:	:	:	:
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	
.	:	:	:	:	:	:	:	:	:
ժ	ի	լ	կ	ծ	կ	հ	ձ	ղ	
.	:	:	:	:	:	:	:	:	:
ճ	մ	յ	ն	շ	ո	չ	պ	զ	
.	:	:	:	:	:	:	:	:	:
ռ	ս	վ	տ	ր	ց	լ	փ	ք	

Եվդոկեցու սյունագիր ծածկագրի բանալին:

Սյունագիր ծածկագրի հնագույն տեքստը, որքան մեզ հայտնի է, 1408 թվականից է։ Նա գրված է Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարանի № 763 ձեռագրի մանրուսմունքի հիշատակարանում. ծածկագրված է գրչի անունը — «Ռեհտակէսս»։ Ծածկագրով թյունը վերծանել և հրատարակել է պատմական գիտությունների թեկնածու Լ. Խաչիկյանը²։ Բերում ենք ծածկագրի տեքստը և նրա վերծանությունը։

.
Ռ	Ե	ս	տ	ա	կ	է	ո	ս

Ուշ շրջանի սյունագիր։ ծածկագրեր շատ կան։ Անհրաժեշտ ենք համարում բերել նրանցից մի քանի նմուշների վերծանությունը։

Հայկ. ՍՍՌ Պետ. Մատենադարանի № 2 ձեռագրում ծածկագրված են «Ոսկան գրիչ» բառերը (էջ 23)։

Ղալաթիայի մատենադարանի № 30 ձեռագրում ծածկագրված

¹ ՀԳՄ. ձեռ. № 1869, ք. 391ա։

² Լ. Խաչիկյան, Ժծ գաբէ հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 89։

սյունագիր ծածկագիրը վերծանվում է. «Գրեցաւ ձեռամբ Ակոբ գրչի»¹:

Հայկական ՄՍՌ Պետ. Մատենադարանի № 2000 ձեռագրում գաղտնագրված սյունագիր ծածկագիրը վերծանվում է. «ՌՄԲ: (1753) Ձեռամբ Գրիգոր արքեպիսկոպիտոս Գաղտնագրութիւն (11)-ին (ՎՊՄ ձեռ. № 2000, թ. 151ա—բ):

Ակադ. Ն. Յա. Մառն իր կազմած Պետերբուրգի Արքեպիսկոպիտոսի հայերեն ձեռագրաց ցուցակում բերել է սյունագիր մի ծածկագրութիւն², որը վերծանվում է. «Յիշատակ եք արող գիրքս Սրապիոն վարդապետին»:

Հայկ. ՄՍՌ Պետ. Մատենադարանի № 6273 ձեռագրի հիշատակագիրը թողել է սյունագիր հետևյալ ծածկագրութիւնը (բերում ենք միայն վերծանութիւնը). «Ե վայելու մն Կուսեանցի Պետրոս արքեպիսկոպոսի հազար ութ հարիւր տասներեք մայիսի եոթին» (թ. 409):

Սյունագիր ծածկագրի այս խմբին է պատկանում նաև Յրեդերիկ Մուրդի «Հանդէս ամսօրեայ»-ում հրատարակած ծածկագիրը, որը վերծանվում է. «Փիրում»: (Սխալ է «Փիրում» ձևը, ինչպես առաջարկել է հրատարակիչը)³:

Ազգագրագետ Ե. Լալայանը իր Վասպուրականի ձեռագրաց ցուցակում բերել է Շատախի Թաղ գյուղում երբեմնի գտնված մի ձեռագրի պարունակած հետևյալ ծածկագրութիւնը.

Վ Մ Է Թ Բ Ի . Ռ Է Բ Դ Ռ Ս Ռ Խ .

|| ::| |· |· ||| |· ||| |· | : | :· ||| | : : |· · |· || |·

Լալայանին չի հաջողվել վերծանել ծածկագրութիւնը:

Պատմական գիտութիւնների թեկնածու Լ. Պաշկյանը XIV դարի հիշատակարանների ժողովածուի մեջ հրատարակել է Ե. Լալայանի վերև բերված ծածկագիրը և փոխարինագիր ծածկագրով վերծանել

¹ Օգտվել ենք Բ. Վ. Կյուլենբերյանի կազմած ձեռագրաց ցուցակից (էջ 127), որը Կիլիկիայի Կաթողիկոսութեան սեփականութիւնն է և չի հրատարակված:

² Ն. Յա. Մառ, Հայկական ձեռագրեր ձեմարանի Արքեպիսկոպիտոսի Պետերբուրգ (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1892, էջ 52):

³ Յոս «Հանդէս ամսօրեայ», 1903, էջ 334:

միայն առաջին տողը, իսկ շարունակությունը համարել «անհասկանալի»¹:

Նշված ծածկագրության տեքստում թույլ տված մի քանի կետերի սխալներն ուղղելուց հետո վերծանվում է: Բերում ենք ուղղված տեքստը և մեր վերծանությունը.

Վ Մ է Թ Բ Ի Ռ է Դ Գ Ռ Ե Խ Ե.

Գ ի ր ք ա Է ա ւ Ե տ ա ր ա ն

: .:	.	.	[:]	.:	:.	[::]	:.	[:]
ձ	ա	ա	յ	ի	Պ	ր	գ	ա

Ձեռագրերում պատահում են սյունագրի այնպիսի տեքստեր, ուր սյունագծի վրա կամ նրա կողքին դրված կետերը, նախորդ սյունագրի համեմատությամբ, մի տառանշանով պակաս արժեք ունի. այսպես, «ա»-ն գրվում է առանց կետի, «բ»-ն գրվում է մեկ գիծ, մեկ կետով, «գ»-ն՝ մեկ գիծ, երկու կետով և այդ հետևողականությունը՝ մյուս բոլոր հաջևական այբուբենի տառերը:

Հայկական ՍՍԻ Պետ. Մատեն.-ի № 2939 ձեռագրում, (թ. 583բ): 1796 թվականի գրչությունը, այս ծածկագրով գաղտնագրված է գրչի անունը և գրչության թվականը (բերում ենք տեքստը և մեր վերծանությունը).

:	::	:	:		:	:	:	:	::	.	::
ա	Է	ր	Մ	ա	ր	ա	ի	ր	ո	ա	Է
գրվեցաւ թվին հայոց					.	:	:	մայիս	.	:	
					.	:	:	ի	Ե		

Եվ, վերջապես, պատահում են մեզ սյունագիր ծածկագրի այնպիսի տեքստեր, որոնք վերծանելու համար, բացի սյունագիր ծածկագրի բանալուց, պիտի գործածել նաև եղբայրագիր կամ փոխարինագիր ծածկագրի բանալիներ: Այս մասին խոսք կլինի առջևում:

2. ԿԵՏԱԳԻՐ ԾԱԾԿԱԳԻՐ

Ծածկագրության այս տեսակը իր սիստեմով շատ նման է սյունագրին. տարբերությունը միայն նրանում է, որ այստեղ սյուններին փոխարինում են հայկական համապատասխան տառերը:

¹ Լ. Խաչիկյան, ԺՂ գաբի հայերեն ձեռագիր հիշատակարաններ, Երևան, 1960, էջ 322:

վրա կետեր դրված, որ անուն և մականուն կձևացնեն, բայց ինձ համար ննացին անլուծելի»¹:

Հայկական ՍՍՌ Պետ. Մատեն.-ի № 5198 ձեռագրի ծածկագրության մեջ ևս ծածկագրված է գրչի անունը: Նախարդ էջում բերել ենք ծածկագրութուն պարունակող ամբողջ հատվածը:

Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 5198 ձեռագրի այս խմբի ծածկագրութունը նույնպես չի վերծանված: Մատենադարանում ձեռագրի քարտը լրացնող մասնագետը թողել է հետևյալ նշումը. «Անունը ծածուկ է մնում»:

Ծածկագիրը կազմելու սկզբունքը հետևյալն է. կետերը ցույց են տալիս, թե հայկական այբուբենի չորս իննյակ տառերից որն է, իսկ տառերը՝ տվյալ իննյակի համարաշարքը: Այս ծածկագիրը, իր սկզբունքով, շատ նման է գծակետագիր ծածկագրին, միայն այստեղ գծերի դերը կատարում են կետերը, իսկ կետերի դերը հայկական այբուբենի ինը միավոր թվանշան ունեցող տառերը:

	օ	փ	փ	դ	ե	զ	է	ը	թ
	<u>օ</u>	<u>փ</u>	<u>փ</u>	<u>դ</u>	<u>ե</u>	<u>զ</u>	<u>է</u>	<u>ը</u>	<u>թ</u>
	օ̇	փ̇	փ̇	դ̇	ե̇	զ̇	է̇	ը̇	թ̇
	<u>օ</u>	<u>փ</u>	<u>լ</u>	<u>լ</u>	<u>ծ</u>	<u>կ</u>	<u>չ</u>	<u>ծ</u>	<u>շ</u>
	օ̇	փ̇	փ̇	դ̇	ե̇	զ̇	է̇	ը̇	թ̇
	<u>օ</u>	<u>փ</u>	<u>լ</u>	<u>ն</u>	<u>շ</u>	<u>ո</u>	<u>չ</u>	<u>զ</u>	<u>ը</u>
	օ̇	փ̇	փ̇	դ̇	ե̇	զ̇	է̇	ը̇	թ̇
	<u>օ</u>	<u>ս</u>	<u>զ</u>	<u>տ</u>	<u>ր</u>	<u>թ</u>	<u>ւ</u>	<u>փ</u>	<u>թ</u>

Գրակետագիր ծածկագրության բանալին:

¹ Հ. Բ. Սարգիսյանի ցուցակ, հատոր Բ, էջ 536:

Ծածկագրության սիստեմը մեզ հայտնի դառնալուց հետո, այնուհետև դժվար չէր վերծանել վերև բերված ծածկագրերի տեքստերը: Բանասեր Հ. Բ. Սարգիսյանի հրատարակած ծածկագրի առաջին մասը, կետադրական անհրաժեշտ շտկումներ կատարելուց հետո, վերծանվում է.

$\ddot{\text{Բ}}$ $\ddot{\text{Բ}}$ $\ddot{\text{Բ}}$ $\dot{\text{Ե}}$ $\ddot{\text{Զ}}$ $\ddot{\text{Ռ}}$ $\ddot{\text{Բ}}$
 Ս Ի Վ Ե Ն Ն Ի

Ծածկագրության երկրորդ մասը սովորական գումարգիր ծածկագիր է և վերծանվում է նույն անունը.

ՌՌ. ԺԺ. ՃՃ. ԲԳ. 33. ՄՄ.
 Ս Ի մ Ե Ն Գ

Այսպիսով, Վենետիկի Մխիթարյանների № 234 ձեռագրի գրիչը՝ Սիմեոնն է.

Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 5198 ձեռագրի տեքստը վերծանվում է.

Դ.: Ղ.: Ե.: Դ.: Ղ.: է.: Դ.: Ղ.:
 Ն Ն ր տ Ն Լ Գ Կ

Ուրեմն, նշված ձեռագրի գրիչն է հանդիսացել Նորտունյ գրիչը: Հավանական է սա լինի Կիրակոսի որդի Նորտունյը, որը 1463 թվականին Արծկեում վաճառքի միջնորդ է հանդիսացել Հովհաննես գրչի և տանուտեր Էդիլշահի միջև¹: Եթե մերձալս ենթադրությունը ճիշտ է, այն դեպքում ձեռագրի գրչության ժամանակը պիտի համարենք ո՛չ թե 16-րդ դարը, ինչպես նշված է ձեռագրի քարտի վրա, այլ 15-րդ դարը:

Պետական Մատենադարանի վերև բերված ծածկագիրը պարունակող պարբերության մեջ կա գումարգիր մի խառը ծածկագիր, որը, բաց թողած տառերի լրացումները կատարելուց հետո, վերծանվում է.

Բաց թողած տառեր
 Վերցրել է գումարը
 Վերցրել է գումարի հաջորդը
 Վերցրել է գումարի երրորդը

աա [cc]	սս	շշ	[բգ]	խխ	եե	ճճ
բ	—	—	—	—	—	—
—	ա	—	—	ե	—	—
—	—	բ	ս	—	դ	է
—	—	—	—	—	—	ն

բ ա ր ս ե դ է ն

¹ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Դ, էջ 85:

Այսպիսով, նշված պարբերութիւնը ամբողջովին վերծանված ձևով կկարդացվի:

«Արդ գրեցաւ սուրբ տառս, որ ասի Մաշթոց, ձեռամբ բազմամեղ և անիմաստ սուտանուն Նորսունկ ջահընկալիս, անուամբ ջահընկալ և գործովս մեղսամած և մեղսասէր: Արդ՝ երես անկեալ աղաչեմ ձեզ արտասալթոր աչաւք, որք հանդիպիք այս աստուածախաւս տառիս ո՛վ սուրբ մանկունք եկեղեցւոյ կարդալով կամ աւրինակելով, լիշեցէք մաքրափալ լաղաւթս ձեր զանարժան գծող սորա և զուսուցիչն իմ Բարսեղ, զոր Տէր Աստուած...» (այստեղ ընդհատվում է տեքստը):

4. ՕՂԱԿԵՏԱԳԻՐ ԾԱԾԿԱԳԻՐ

Սլունագիր ծածկագրի խմբին է պատկանում նաև օղակետագիր ծածկագիրը: Նրա մեջ ևս չի օգտագործվում հայկական ոչ մի տառանիշ. հայկական այբուբենը վերցվում է չորս խմբով՝ միավոր տառերի հիմքը դարձվում է մեկ օղ, տասնավորներինը՝ երկու, հարյուրավորներինը՝ երեք և հազարավորներինը՝ չորս ու նրանց վրա, ըստ տառանիշի թվական արժեքի, կետեր են դրվում: Ծածկագրութիւնն այդ տեսակը շատ գործածական է եղել սլավոնական մատենագրութիւնն մեջ:

Հայկական օղակետագիր ծածկագրին մասամբ նմանվում է սլավոնական „значковый разряд“ կոչվող ծածկագիրը¹: Ծածկագրութիւնն այդ տեսակը շատ գործածական է եղել սլավոնական մատենագրութիւնն մեջ:

Հայկական ՍՍԻ Պետ. Մասին.-ի № 8716 ձեռագրի գրիչը այս ծածկագրի վերծանութիւնն մասին տվել է հետևյալ ուշագրավ տեղեկութիւնը. «Գիր համարոյ Դ տարեբաց է: Այս է արհեստ սորա այսպէս. նախ գիտելի է, զի առաջին գիրն և թիւն, այս է՝ ա ժ ճ ու: Նոյնպէս և սայ 0000, և թէ՛ 0 Ա 0: Բ 0: Դ և ալլն այսպէս: Եւ եթէ՛ 00.Ժ, 00: .ի; 00Լ:., 00Խ:.: և ալլն այնպէս: Եւ թէ՛ 000.Ճ, 000:Մ, 000: .Յ, 000: .ն, Եւ թէ՛ 0000.Թ, 0000:Ս, 0000: .Վ, 0000: .Տ: Եւ ալլն այս մտօքս է, իմացիր, զի Դ տարեբաց է սայ: Եւ սայ կոչի գիր տարեբաց, զի նողտանին բանայ զմիտ մարդոյն որ կարէ իմանալ ըզբանն, զի բոլորն համա-

¹ Карский, Славянская кирилловская палеография, էջ 256:

Ակադ. Ն. Յա. Մառի հրատարակած ցուցակում նախկին Գետերբուրգի հայերեն ձեռագրերից բերված¹ է մի ծածկագրութուն, որը վերծանվում է. «Ն ա չ ա տ ու ը»:

Էջմիածնի ժողովածուի № 47 ձեռագրում², որտեղ գավազանագրով գաղտնագրված է մի ծածկագիր, վերծանվում է. «Ջ ա ք ա ր ա յ ծ ա ո ա յ»:

Ակադ. Բրոսսեի օգտագործած ձեռագրում ծածկագրված է «Ջաքարիա» անունը, բայց այս ծածկագրութւան մեջ կետերի գործածութունը տարբերվում է նախորդներից. այստեղ թվերը գրվում են առանց կետի, տասնավորները՝ մեկ կետով, հարյուրավորները՝ երկու և հազարավորները՝ երեք³:

7. ԱՐԱՐԱԹԻՎ ԾԱԾԿԱԳԻՐ

Համեմատաբար նոր շրջանի ծածկագիր է այս: Սկզբունքը հետևյալն է. վերցնում են ծածկագրվող տեքստի հայկական տառերը և ըստ իրենց թվական համարժեքի արաբական թվանշաններ նշանակում: Այսպես, «ա»-ն հավասար է 1-ի, «բ»-ն՝ 2-ի, «գ»-ն՝ 3-ի և այլն:

1	2	3	4	5	6	7	8	9
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ
10	20	30	40	50	60	70	80	90
ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ
100	200	300	400	500	600	700	800	900
ճ	մ	լ	ն	շ	ո	չ	պ	ը
1000	2000	3000	4000	5000	6000	7000	8000	9000
ռ	ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք

Արաբարիվ ծածկագրի բանալին:

Այս ծածկագրութունը գործ է ածվել նաև հունական մատեն-

¹ Ն. Մառ. Գետերբուրգի ձեռագրաց ցուցակը (տես «Հանդէս ամսօրեայ», 1892, էջ 82):

² «Էջմիածին», 1951, IV—VI, էջ 82:

³ Brosset (տես «Mélanges Asiatiques», հատ. V, էջ 68):

նագրութիւն մեջ: Նա Գարդհաուզենի մոտ կոչվում է «Arabische Zahlenkryptographie», (արաբական թվագիր ծածկագիր)¹:

Արաբագիր ծածկագրով է գաղտնագրված Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 3464 ձեռագրի հետևյալ տեքստը մեր վերծանությամբ.

	9000	5000	20	2000	4000	600	2000	20				
	Ք	Ր	Ի	Ս	Մ	Ն	Ս	Ի				
50	1	1000	1	300	1	30	7	9000	2000	1	400	
Ժ	Ս	Մ	Ս	Ե	Ս	Լ	Կ	Ք	Ս	Մ	Ն	
3000	1	5000	4	1	800	5	4000		300	20		
Վ	Ս	Ր	Գ	Ս	ՍԿ	Ե	Ս		Ե	Ի		
500	5	30	20	4000	7	5000	1	90	1	700	5	200
Զ	Ե	Լ	Ի	Տ	Կ	Ր	Ս	Ղ	Ս	Հ	Ե	Մ

8. ԹՎԱՆՇԱՆԱԳԻՐ ԾԱԾԿԱԳԻՐ

Ծածկագրի այս անունը մենք ենք դնում, ելնելով այն փաստից, որ ծածկագրի նշանագրերի հիմքում արաբական թվանշաններն են ընկած: Ծածկագրի բանալին բերում ենք Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 2373 վերև հիշված ձեռագրից.

Ի	Ձ	Պ	Գ	Տ	Յ	Դ	Ց	Ի	Ձ	Պ	Գ	Տ	Յ	Դ	Ց
Ս	Ք	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ժ	Ի	Լ	Խ	Ծ	Կ	Ն
Ի	Ձ	Պ	Գ	Տ	Յ	Դ	Ց	Ի	Ձ	Պ	Գ	Տ	Յ	Դ	Ց
Յ	Ե	Լ	Ի	Տ	Ն	Է	Կ	Ր	Ս	Վ	Ս	Ր	Գ	Լ	Կ

Թվանշանագիր ծածկագրի բանալին:

¹ V. Gardthausen, Griechische Palaeographie, էջ 316—317:

² ՀՊՄ ձեռ. № 2370, Բ. 1ա:

Այս ծածկագրով գաղտնագրված են էջմիածնի մատենադարանի ձեռագրի մեջ հետևյալ բառերը. «ՍԹ Գրիգոր»:

Ակադ. Բրոսսեի ծածկագրության մեջ գաղտնագրված է. «Զ ա ք ա ռ ի ա գ ծ ո ղ ա»:

Հայկական ՍՍԻ Գետ. Մատենադարանի №7104 ձեռագրում այս ծածկագրով դաղտնագրված է. «Գ ա լ ու ս տ: Գ Ր Ե Ր Ը Ա Բ Ր Ը հ ա մ ի ն, Մ ու ս է ս ի ն, Ս ա ն ա ս ա ռ ի ն, Գ Ր ի գ ո Ր ի ն, Մ խ ի թ ա Ր ի ն է» (թ. 1բ—2ա):

9. ՃԻՐԱՆԱՎՈՐ ԾԱԾԿԱԳԻՐ

Դժակետալին այս սկզբունքով է կազմված ճիրանապոս ծածկագիրը: Այստեղ վերցվում է մի օղ, և նրա կողքերից չորս ուղղությամբ ձգվում են մեկից չորս ճիրաններ. միավորի համար դրվում է մեկ ճիրան, տասնավորի համար՝ երկու, հարյուրավորի համար՝ երեք և հազարավորի համար՝ չորս: Անուհետև, ըստ տառանիշի թվական արժեքի, դրվում են կետեր: Կետագրության սխեմանը նման է գծակետալին ծածկագրի վերջին տեսակին, այսինքն՝ մի թվանշանով պակաս, քան սովորաբար ծածկագրվում է: Բերում ենք այս ծածկագրի բանալին.

Օ	Օ	Օ	Օ	Օ	Օ	Օ	Օ	Օ
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ
Օ	Օ	Օ	Օ	Օ	Օ	Օ	Օ	Օ
ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ
Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ
ճ	մ	յ	ն	շ	ո	չ	պ	ը
Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ	Չ
ռ	ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք

ձիրանավոր ծածկագրի բանալին:

Ակադ. Բրոսսեի հրատարակած տեքստերի մեջ այս ծածկագրով գաղտնագրված է «Գալուստն» անունը¹: Բերենք ծածկագրությանը և նրա վերծանությունը.

Օ	Օ	Օ	Շ	Շ	Շ	Շ	Շ
Գ	ա	լ	ո	ւ	ս	տ	ն

¹ Brosset «տես «Melanges Asiatiques», V հատ. 76—77 էջերի միջև տեղափոխված ծածկագիր տախտակը»:

10. ՓՈԽԱՐԻՆԱԳԻՐ ՄԱՄԿԱԳԻՐ

Հայ մատենագրության մեջ սլոնագրից հետո հաճախ գործածականը փոխարինագիրն է: Նա փոխարինագիր է կոչվում այն պատճառով, որ ծածկագրության մեջ հայկական այբուբենի մի տառը փոխարինում է մյուսին: Հայկական այբուբենի 36 տառերը բաժանվում են չորս շարքի՝ միավորների, տասնավորների, հարյուրավորների և հազարավորների՝ յուրաքանչյուրն իննական տառից, և տառաշարքերից ամեն մեկը, ըստ թվական հերթականության, փոխարինում է մյուսին: Այս սիստեմի ծածկագիր ունեցել են նաև սլավոնները, որը կոչվել է «тарабарская грамота» կամ «длиторья»¹: Հայկական և սլավոնական այս սիստեմի ծածկագրության մեջ տարբերվում է միայն դասավորությունը—հայկական այբուբենը կազմված լինելով 36 տառից հնարավորություն է տալիս չորս շարքով փոխարինել իրար, իսկ սլավոնական այբուբենն ավելի քիչ տառեր ունի, ուստի և որոշ ձայնավորներ և բաղաձայններ թողնելով են նույնությամբ:

Փոխարինագիր ծածկագիրն ունի երեք տարբերակ. կանգ առնենք նրանց վրա առանձին-առանձին:

Առաջին տարբերակի ժամանակ միավոր թվական ունեցող տառերը փոփարինում են հազարավորներին, իսկ տասնավորները՝ հարյուրավորներին:

ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ
ռ	ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք
ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ
ճ	մ	ն	շ	ռ	ո	չ	պ	շ

Փոխարինագրի առաջին տարբերակի բանալին

Փոխարինագրի առաջին տարբերակի ամենահին ծածկագիրը—այդ Ավանում գտնված Եզր կաթողիկոսի (630—641 թթ.) երկլեզվյան (հունարեն-հայերեն) արձանագրությունն է, որը հնագույնը պիտի համարել հայկական ծածկագրության մեջ ընդհանրապես: Այս ծածկագրությունը հայտարարել և վերծանել է

¹ E. Ф. Карпов, Славянская кирилловская палеография, էջ, 253—254:

Կ. Ղաֆադարյանը: Անհրաժեշտ ենք համարում բերել ստորև եզր կաթողիկոսի այդ արձանագրությունը.

ՄԻԵԶԻՉՈՒԿԶԿԱԹՈՂԻԿՈՍՃՀԱՄԱ ՐԻՒ ՃԱՆՕՇՏՎԹԵՎԱՍԱՍԿԵՂՇՈՒԱ ՈՒԼՔ[Ի]

Արձանագրությունը վերծանվում է «Տ[է]ր եզր չնկիզ կաթո-
ղիկոս ճշմարիտ ծափոս թա Սամէղ շառալք»: Այստեղ փոխարինա-
գիր ծածկագրերով են արտահայտված ընդգծված բառերը՝ չնկիզ, որ
վերծանվում է «նայոց» և «շառալք», որ վերծանվում է «ծառառ»:
Հունարեն բառը նշանակում է «ծառայ Աստուծոյ», իսկ Սամէղ
բառի վերջին տառը «Ք»՝ պատկազրված է «Ք[րիստոսի] բառը
Այսպիսով, տեքստը կարդացվում է. «Տէր եզր Հայոց կաթողիկոս
ճշմարիտ ծառայ Աստուծոյ. Սամէղ ծառայ Ք[րիստոսի]»¹:

Փոխարինագրի այս տարբերակի ծածկագրերից մի շարք
տեքստեր են հասել, որոնցից ուշադրության արժանի են հետև-
յալները.

Վիեննայի Մխիթարյանների №7 ձեռագրում, որն ընդօրի-
նակված է 1439 թվականին, ունի գրչի հետևյալ ծածկագրությունը.
Երկին աղաչմ լիշեսչիք ի մաքրափալլ յաղաւթս ձեր Յ. Բ. Մ. Ի.
Խ. Կ. Խ. Ո. Ե. Ռ. Է. Խ. Ռ. Է. Կ. Ե. Բ., որ շատ աշխատեցա...»²:
Ծածկագրությունը վերծանվում է. «զՄիմեոն կրաւնաւորս»:

Հարկական ՍՍԻ Պետ. Մատեն.-ի №1548 ձեռագրում ծած-
կագրված է հետևյալ տեքստը (բերում ենք տեքստը և մեր վեր-
ծանութիւնը).

«ՃՄ. յյ. ոս. ոռ. եբ. տտ. լ. կ. գ. ր. ւպ=Յ ո վ ս է փ:
||: |||: ||||: ||||: |:: ||||::=Յ ո վ ս է փ:
Աբ. վս. ժժ. աբ. յյ. տո:
Գ ր ի գ ո ր (թ. 384բ):

Առաջին տողի առաջին «Յո վ ս է փ»-ը և երկրորդ տողի «Գրի-
որ»-ը գաղտնագրված են գումարգիր ծածկագրով (այս մասին
խոսք կլինի հետո), առաջին տողի երկրորդ «Յո վ ս է փ»-ը՝ փոխա-

¹ Կ. Ղաֆադարյան, Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրու-
թյունը, Երևան, 1945, էջ 7:
² Տաշյանի ձեռագրաց ցուցակ, էջ 50:

նակագրի առաջին տարբերակով, իսկ երկրորդ տողի վերջին «Յով-
սէփ»-ը՝ սյունագիր ծածկագրով:

Փոխարինագրի երկրորդ տարբերակի ծածկագրության ժա-
մանակ միավոր թվական ունեցող տառանիշերին փոխարինում են
հարյուրավորները, իսկ տասնավորներին՝ հազարավորները:

ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ
ճ	մ	յ	ն	շ	ո	չ	պ	ղ
ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ
ռ	ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք

Փոխանակագրի երկրորդ տարբերակի բանալին:

Այս ծածկագրության համար որպես նմուշ կարելի է բերել
Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 6644 ձեռագրի
(1532 թվականից) պարունակած 'հետևյալ ծածկագիրը (բերում
ենք տեքստը և մեր վերծանությունը)։

«Յիշատակ է գիրս այս

ՇՔ. Սե. ՃԳ: ՃՄ. ՇՔ. ՍԴ» (թ. 78ա):

Եղ իշ այ ար եղ ին (եղիշայ արեղին):

Փոխարինագրի երրորդ տարբերակի ժամանակ միավոր թվա-
նիշ ունեցող տառերին փոխարինում են տասնավորները, իսկ
հարյուրավորներին՝ հազարավորները:

ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ
ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ
ճ	մ	յ	ն	շ	ո	չ	պ	ղ
ռ	ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք

Փոխարինագրի երրորդ տարբերակի բանալին:

Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 817 ձեռա-
գրում (1414 թվականից) ծածկագրված է երկու բառ, որից առաջինը
ծածկագրված է փոխարինագրի երրորդ տարբերակով, իսկ երկրոր-
դը՝ եղբայրագրով (բերում ենք տեքստը և մեր վերծանությունը)¹։

«Լ • շ • բ • Լ • ց • շ: դ • տ • Լ • պ» (թ. 441բ):

Գ ր ի գ ո ր գ ր ի չ:

Անկյուրիայի ձեռագրաց ցուցակում հրատարակված է № 164
ձեռագրի կազմողի հետևյալ ծածկագիր հիշատակագրութունը.

¹ ՀԳՄ Լ. Պաշիկյան, ԺԵ դ. հիշատ., էջ 163:

«Վերլստին նորոգեցաւ տարեգիրգս, որ կոչի Ճաշուց ձեռամբ և անիմաստ խչ, եճ, ոք, խչ, ժա, զջ, լք, ծն, ոք, զփ»: Ձեռամբ իմով կազմեցի զայս: Յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զուսուցիչն իմ Տէր Մկրտիչն, որ բազում աշխատութեամբ ուսուց կազմութեամբ ա[ր]հեստս զայս ձեր: Աձ ողորմի ասէք: Թվին ՌՃԻ՛ լունվար ամսոյի Ի»¹:

Կազմողի կամ հրատարակչութիւն կողմից ծածկագրութիւնը չի վերծանված—հրատարակված է այն առանց ծանոթագրութիւն և մեկնաբանման:

Մեզ հաջողվեց այս ծածկագրութիւնը վերծանել մեծ դժվարութեամբ, որովհետև ծածկագրութիւն տեքստում, հավանական է, արտագրութիւն ժամանակ կատարվել են սխալներ:

Վերև բերված ծածկագիր տեքստը, անհրաժեշտ ուղղումներ կատարելուց հետո, փոխարինագիր ծածկագրի երեք տարբերակով վերծանվում է.

խչ . եճ . ոք . խչ . ժա . ծջ . զք . ծն . ոք . չի
Տէ րՊ աղ տէ սա րք հԹ չոխ աթ ցի

Այսպիսով, տեքստը վերծանվում է «Տէր Պաղտէսար քհ (=քահանայ) Թոխաթցի»:

Մեր այս վերծանութիւնը կարիք կունենա վերանայման, և թե բնագրից արտագրված օրինակի հիման վրա հնարավոր լինի սրբագրական մի քանի ուղղում առաջարկել ծածկագրութիւն տեքստում, որոնց հիման վրա մեր ուղղումներից մեկ-երկուսը ճշտվեն, ծածկագրութիւն վերծանութիւնը կհամարենք վերջնական:

Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 4107 ձեռագրում (1420 թվականից) «ամէն» բառը ծածկագրված է երկու ձևով՝ փոխարինագրի երրորդ տարբերակով և եղբայրագրով: Բերում ենք տեքստը և վերծանութիւնը.

«ԺՍՍ(Հ)Դ, ՃԲԲՉՏ»²;
Ամմ է ն ամմէն

¹ Ճուշակ հայերէն ձեռագրաց կարմիր վանուցն Անկիւրբոյ, Անթիլիաս, 1936, էջ 824:

² ՀԳՄ ձեռ. № 4107, ք. 803ա:

11. ԵՂՐԱՅՐԱԳԻՐ ԾԱԾԿԱԳԻՐ

Եղբայրագիր կոչվում է ծածկագրի այն տեսակը, ուր հայկական այբուբենի տառերը, ըստ հաջորդականության, փոխարինում են իրար: Այսպես, «ա»-ն փոխարինում է «բ»-ին, «բ»-ն՝ «ա»-ին, «գ»-ն փոխարինում է «դ»-ին, «դ»-ն՝ «գ»-ին և այլն:

Պետք է նկատի ունենալ, որ եղբայրագիր ծածկագրության տեքստում գաղտնագրված տառը կարող է վերցված լինել ինչպես առջևից, այնպես և վերջից:

ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ
բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ	ճ
ճ	մ	յ	ն	շ	ո	չ	պ	ջ	ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք	
մ	յ	ն	շ	ո	չ	պ	ջ	ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք	ա	

Եղբայրագիր ծածկագրի բանալին:

Այս խմբի ամենահին ծածկագիրը 1313 թվականից է և պահվել է Փիրղալեմյանի անտիպ «Յիշատակարաններ»-ի ժողովածուում (Փիրղալեմյանն այդ ծածկագիրն արտագրել է Վանում եղած մի ձեռագրից): Ծածկագրված է. «ն . ծ . լ . ժ . բ . տ . բ . ն»: Փիրղալեմյանն այս ծածկագիրը չի կարողացել վերծանել և թողել է հետևյալ ծանոթագրությունը. «Պատուազրեալ անունս մնալ լինէն անբացատրելի»¹: Ծածկագրությունը եղբայրագիր ծածկագրով շատ ճիշտ վերծանել է պատմ. գիտ. թեկնածու Լ. Պաշիկյանը՝ «Միտիթար»²:

Ղալաթիայի Մատենադարանի № 265 ձեռագրում ծածկագրված է (բերում ենք տեքստը և մեր վերծանությունը).

«գ . ց . զ . լ . բ . փ: ղ . գ . ս . յ . գ . բ . գ . ց . բ . ձ . բ . յ . լ . շ»³:
Գ Ր Ե ց ա լ ձ Ե ո ա մ բ Ա բ ր ա հ ա մ ի ն:

Եղբայրագիր ծածկագրով գաղտնագրված մի բառ իր ձևագրաց ցուցակում բերել է Սարգիսյանը, բայց ծանոթ չլինելով նրա բանալուն, թողել է առանց վերծանության: Սարգիսյանի ցուցակից բերում ենք ծածկագիր այդ բառը պարունակող նախադասությունը. «Արտակալեցաւ բանքս այս ձեռամբ Ս. Բ. Տ. Գ. [Բ] Յ

¹ Փիրղալեմյանի Հիշատակարանների ժողովածուն ՀՊՄ-ում, № 6273-ի տակ (տես էջ 123):
² Լ. Պաշիկյանի ԺԳ դարի հիշատակարանների ժողովածու, էջ 93:
³ Օգտվել ենք Բ. Վրդ. Կյուլեուկերյանի ցուցակից:

(վերծանվում է «Վարդան») Պոստազիզէ ի թվաբերութեան Հայկազեան սեռի հազար հարիւր տասն և երկու»¹:

Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 6644 ձեռագրի գրիչը՝ Եղիշե արեղան, 1527 թվականին ընդօրինակած իր ձեռագրի մեջ թողել է եղբայրագիր հետևյալ ծածկագրութիւնը: Բերում ենք տեքստը և մեր վերծանութիւնը.

րց. բկ. չն. չց. յգ. բն. և եկ. բս. բն. լվ:
տր Ած ող որ մե այ և զծ առ այ իս
վչ. փր. բշ. չփշ. հց. բփշ. բփ. չց. լ. զն.
սու տ ան ուն կր աւն աւոր ի Եղ-
լո. բն. բգ. զն. բն. լ. լ. զց. հց. բշ. բցւ.
իշ այ ար եղ այ ի ի եր կր էն Արց.
բծ. չփ. չց. հչ. պ. լ.
ախ ս, որ կո չ ի
ծբպ. բշ.
Պաշ է ն»²:

Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 8587 ձեռագրում, որն ընդօրինակված է 1373 թվականին Գեորգ գրչի կողմից, գրված է հետևյալ ծածկագիրը, որը հիշատակարանի հետ միասին նախ հրատարակել է պրոֆ. Հ. Աճառյանը Սանասարյան վարժարանի ձեռագրաց ցուցակում³, ապա՝ պատմ. գիտ. թեկնածու Լ. Պաշիկյանն իր XIV-րդ դարի «Հիշատակարաններ»-ի մեջ⁴:

«բ. լ. ց. ֆ. վ. բ. ն. բ. հ. շ. գ. լ. շ. դ. ց. գ. բ. խ. դ.
գ. դ. լ. շ., որք կարդալք, լիշեցէք ց. վ. ե. կ. ջ. բ. կ.
ե. մ. խ. և դուք լիշեալ լիշիք ի Քրիստոս»:

Պրոֆ. Հ. Աճառյանը ծածկագրութիւնը թողել է առանց վերծանութիւն, իսկ Լ. Պաշիկյանը տվել է տողատակ հետեւյալ ծանոթութիւնը. «Ծածկագրի վերջին մասը (ա. . . լիշեցէք»-ից հետո) փոխարինագիր պարզ ծածկագրով կարդացվում է «զգրող սորին», իսկ առաջին մասը մեզ չհաջողվեց վերծանել»⁵:

¹ Բ. Մարգիսյանի ձեռագրաց ցուցակ, Բ հատ., էջ 537:

² ՀԳՄ ձեռ. № 6644, թ. 154բ:

³ Հ. Աճառյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Սանասարյան վարժարանի ի հարին, Վիեննա, 1900, էջ 10:

⁴ Լ. Պաշիկյան, ԺԳ դարի հայերեն ձեռ. հիշատակարաններ, էջ 512:

⁵ Նույն տեղը:

Պարզվեց, որ Լ. Խաչիկյանի չվերժանած այս ծածկագրութլունը գաղտնագրված է փոխարինագրի առաջին տարբերակով, որը, գրչական որոշ սխալներ ուղղելուց և բացթողումները լրացնելուց հետո, վերժանվում է հետևյալ ձևով: Բերում ենք տեքստը և մեր վերժանութլունը.

Բ . 1 . Գ . Ֆ . Վ . Ը . Ե . Բ . Կ . Ն . Զ . Գ . 1 . 2 : Դ . Գ . Վ . Բ . Խ . Գ . Վ . Դ . Ա . Գ . 1 . 2
 Գ ի ր ք ս է Յ ա կ ո բ ի ն : Գ ի Ե ա լ Գ է ո ը գ ի ն

12. ԳՈՒՄԱՐԳԻՐ ԾԱԾԿԱԳԻՐ

Այս ծածկագիրը «գումարգիր» է կոչվում այն պատճառով, որ ծածկագրված ամեն մի բառ, իր թվական արժեքով, հավասար է նշանակված երկու կամ երեք տառերի գումարին կամ բազմապատկին. այսպես, աա հավասար է բ-ի, ծծ հավասար է ի-ի, ճճ հավասար է մ-ի և այլն: Անդրեաս Եվդոկիեցին իր ալբաբենարանի հավելվածում բերել է այս ծածկագրի հետևյալ բանալին.

ա . . բ գ դ ե
 ա . . աա . աբ բբ բգ .
 գ . է . ը . թ .
 գգ . գգա . դգ . դգա .
 ժ . ի . լ . խ .
 եե . ժժ . ժժժ . իի .
 ծ . կ . հ . ձ .
 իիժ . լլ . լլժ . խխ .
 դ . ճ . մ . լ .
 խխժ . ծծ . ճճ . ճճճ .
 ն . շ . ո . չ .
 մմ . մմճ . լլ . լլճ .
 պ . շ . ո . ս .
 լլմ . ննճ . շշ . ոո .
 վ . տ . ը . ց .
 սո . սս . սսո . վվ .
 լ . փ . ք . ֆ .
 վվո . տտ . տտո . ըր . 1

Գումարգիր ծածկագրի առաջին բանալին:

1 ՀԳՄ ձեռ. № 1869, Թ. 391բ:

Գումարգիր ծածկագրի մի այլ բանալի ընդօրինակված է Հայկական ՍՍՌ Գետական Մատենադարանի № 8717 ձեռագրում, որը փոքր-ինչ տարբերվում է վերև բերված բանալուց, ուստի և այն ևս անհրաժեշտ ենք համարում հրատարակել: Ծածկագրի բանալին պարունակող աղյուսակն ունի այսպիսի վերնագիր. «Գրատախտակ է իմաստասիրաց...»:

	աա	աօա	բբ	դա	զզ	զա	դդ	ըա
հհ	ժժ	ժեժե	իի	իեիե	լլ	լելե	խխ	խեխե
ծծ	ճճ	զճ	մմ	եե	ղղ	էէ	նն	նօն
22	բռ	զո	բռբռ	բոօ	զոզո	էո	զոզո	զոո

Գումարգիր ծածկագրի երկրորդ բանալից:

«Յիմաստունն իմանայ և տխմարն զարմանայ,
Բայց դու ջանայ և ուսիր զսայ,
Զի շատ պիտողիք, պիտոլանայ.
Լաւ իմացիր գիրատ սորայ» (թ. 53բ):

Ծածկագրութիան այս տեսակը լայն չսփռվ օգտագործված է սլավոնական և հունական մատենագրութիան մեջ: Օրինակ, նախկին М. Спн. Библ. № 70 ձեռագրում аминъ բառը ծածկագրված է. „а кк дд. лкч“¹ կամ հունարեն Par. Suppl. Gr. 482 ձեռագրում 1105 թվականից, նույն 'Αμγ' բառը ծածկագրված է (բերում ենք բնագիրը և վերծանութունը). „cc · xx · δδ · χεχε“² Գարդհաուզենը

α μ η ν

ծածկագրի այս տեսակն անվանում է. „Doppelstelligen Zahlen-Kryptographie“, իսկ Կարսկին՝ „мудрая литорея“:

Սաչատուր Կաֆայիցու ժամանակագրութիան մեջ ծածկագրված է. «գ. իի. ա. էճ. ա. սս. լլ. վզվզ. սշսշ: է. սշսշ. է. վվ. սս. է. հո. թո. ժժ. ժեժե. ժժ. նն. լլ. ոո. կթղկս. լլ. ժժ. հո. ա. լլ. լլ. ոո. ոշոշ · ա. հո. բբ. ա. մմ. մմ. ժժ. լլ. լլ. խեխե. լլ. ոո. ոո. ժժ. ճճ. է. լլ. մմ»: (Տեքստում կատարվել է գրչական որոշ ուղղում): Վերծանվում է. «ՋՍաչատուր էրէց, Տէր Փիլիպոս, Կիրակոս, Վարդան, Նիկոլոս, Սիմէոն»³:

¹ Е. Ф. Карский, Славянская кирилловская палеография, էջ 255:

² Gardthausen, Griechische Paleographie, էջ 314—315:

³ ՀԳՄ ձեռ. № 7700, էջ 305:

Ընդարձակ մի ծածկագիր բերել է Արտավազդ արքայիսկոպոս Սյուրմեյանը իր Հալեպի ձեռագրաց ցուցակի Բ հատորում.

«բգ զգ գդ զզ ժժ բն յյ եռ լելե
 օօ եռ զն օօ մմ բգ բն բգ խեխե ժժ օօ զգ
 օօ եռ, գն օօ եռ բբ օօ նն բգ դն բգ նն
 բբ բգ աա օօ բն դն օօ զն ժժ, բգ եռ,
 օօ 22 օօ թն մմ յյ եռ բբ, բն յյ եռ եռ աա,
 լելե եռ բգ են դն օօ լլ օօ, նն բգ դն օօ
 զն, դն օօ ծծ օօ եռ ժժ դն, բգ, եռ, բգ նն,
 զն յյ զն եե նն բգ խեխե օօ նն օօ եռ
 դն, բգ եռ, օօ մմ օօ 22, օօ լլ, զն ժժ են
 բգ զն զգ թռ ժժ թռ եռ ժժ բն դն յյ
 բն, նն ժժ մմ, լելե յյ աբ յյ զն, օօ բն
 բգ ժի յյ զն, բգ եռ, բբ յյ եռ, թռ, զն
 ժժ են բգ օօ ժի, ժի ժժ թն ժժ թռ, օօ
 22 օօ թն ժժ, օօ լելե բգ խեխե օօ դն
 բգ մմ ժժ մմ, թռ եռ ժժ բն զն յյ բն
 ժժ, օօ նն զդ մմ»¹:

Վերծանվում է. «Եթե զիս հարցանես, Եղիազար վարդապետ եմ Սեբաստացի և առաջնորդ Սուրբ Հրեշտակապետաց տաճարին և եմ յոյժ մեղապարս և անառակ, Յիշեցէք ի Քրիստոս մին հոգոց ասելով և դուք յիշեալ յիջիք առաջի անեղ ատենին Քրիստոսի, ամեն»: *Վերծանութիւնը կատարված է ցուցակի հրատարակչի կողմից:*

Երկու փոքրիկ ծածկագիր այս խմբից բերել է Բ. Սարգիսյանն իր ցուցակում. «Ես Մարտիրոս նուսատ քճ եկի ի Հէլիօպալիս թվին 22. ճ. ի. (ՌՃ՛ թ.) նն, օօ վս սս ժժ վս յյ առ: Ռ՛վ եղբայր. զայս փակագիրս դու կարդաս, թէ ոչ՝ փքիդ տուր և հազաս»: *Ծածկագիրը վերծանվում է. «Մարտիրոս»:*

«Կազմեցաւ ձեռամբ յոգնամեղ գրչի նն. ժժ. մմ. օօ. ոռ. ժժ. դպրի ի քաղաքս Կամենեց թվին 229 (1544)»: *Ծածկագիրը վերծանվում է. «Մինասի»:*

Կոնիբերը, Բրիտանական թանգարանի հայկական ձեռագրերի իր ցուցակում, բերել է մի պատաստիկի գումարգիր ծածկագիրը,

¹ Արտավազդ եպիսկ. Սյուրմեյան, Հալեպի ձեռագրաց ցուցակ, Բ հատոր, էջ 43—44:

² Բ. Սարգիսյանի ձեռագրաց ցուցակ, Ա հատոր, էջ 823:

բայց չի կարողացել վերծանել: Ծածկագիրը, գրչական փոքրիկ ուղղումներից հետո, վերծանվում է (բերում ենք ուղղված տեքստը և մեր վերծանությունը).

«Յակովբոսն և ընտանիք իւր լիշեսչիք ի Քս Յս.

նն ա [սվ սս] ժժ սվ յյ ոռ ժժ րս ոռ

Մ ա ր տ ի ր ո ս ի քս

ոռ սս եզ սս [ա] մմ յյ ոռ ժժ րս ոռ

Ս տ է փ ա ն ո ս ի քս

ՃժՃժ ե[ձ] և Կարապետ գրիչս չիշեսչի[ք] ի Քս Յս ամէն»¹:

Ծածկագրի մեջ ուղղված է. բնագրի առաջին շարքի չորրորդ տո երկտառը սս ձևով, երկրորդ շարքի երրորդ երկտառի՝ եզ—դ—ն դուրս է նետված որպես ավելորդ տառ, երրորդ տողի առաջին տառախմբի ՃժՃժ-ից հետո ե տառը փոխարինված է ս-ով:

Տաշլանի ձեռագրաց ցուցակում (էջ 997) բերված է այս նույն

խմբի ծածկագրով գաղտնագրված հետևյալը. «Յիշեա և Աժ Պէեզ չիշէ. զ . զա . ոռս . եեծ . ժեծե . մմննրն . զնյ . լիիժժ . սս . ա . մնն . ժեե . մմ . զնմն . սսս . բբ . ժժ . դն . ննն . ժժ . մնմ . զբ . ա . եեծ ոսս . վս . դա . լ . ա . լի . զգ . խժժի . բբա . [դն . ժեե . մնմ . զա .] զն . ժեե . լ . սսս . ա . տո . ա . մն . զն . ոսվո . դե նն» (էջ 997): Վերծանվում է. Ձետիլ Պողտանին որդին յիշեա ի Տ[է]ր և Ա[ստուա]ժ զձեռ [յիշէ] յիւր արքայութեանն»:

Ուշադրության արժանի է, որ ծածկագրության այս տեսակը գործ է ածվել և ախթարական գրականության մեջ: Հայկական ՄՍՌ Պետական Մատենադարանի № 193 ձեռագրի հիշատակագրությունների մեջ ծածկագրված է. «լլ . ժժ . եռ . ա . ժժ . զն . ոռ . յ»²: Վերծանվում է՝ «Կիրառու»:

Գումարգիր ծածկագրով է գրված 1727 թվականին Ղարաբաղի Աբրահամ լուզբաշու Բաքվի ուսսական հրամանատարությանը Պողոս լուզբաշու անունով ուղղված նամակի վերնագիրը և ստորագրությունը: Նամակն ունի խիստ գաղտնի բովանդակություն: Աբրահամ լուզբաշին ուսսական հրամանատարությանը խնդրում է, որ Ղարաբաղին շտապ զինական օգնություն ցույց տան, ուստի և նա չի ցանկացել, որ նամակը թշնամու ձեռքն անցնելիս իմացվի, թե ով է ուղարկողը և ում է հասցեագրված նամակը: Վերնագիրը ծածկա-

¹ F. C. Conybeare, Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, London, 1913, էջ 240:

² ՀԳՄ ձեռ. № 193, թ. 175բ:

գրված է. «Զձ . էՆ . ԳԳ . ՆՆ . 00 . Եձ . էԻ . Ըձ . ԽԵԽԵ . Զձ . ԲՆ . ԻՆ»:

Ստորագրութիւնը ծածկագրված է. «00 . ԱԱ . ԵՆ . 00 . ԼԵԼԵ . 00 . ՃՃ . Զձ . էՆ . ԳԳ . Եձ . ԺԺ . ԲԱ . Զձ . էՆ . ԺԵԺԵ . ԲՆ . ԴՆ . 00 . Դձ . ԴԳ . ԶՆ . ԺԺ»¹:

Ծածկագիրը հեշտ վերծանելու համար նամակագիրը խորհուրդ է տվել թվահամարով վերծանել՝ «Համարով վաղ վաղ գտանես»:

Առաջին տողը գումարգիր ծածկագրով վերծանվում է. «Ուզպաշիէ Պ[օ]ղոսից», իսկ վերջին տողերը՝ «Արրահամ ուզպաշի Գուլուստանցի»:

13. ԵՐԿՔԱՆԱԼԻ ԾԱԾԿԱԳԻՐ

Հայկական ծածկագրերը, ընդհանրապես, վերծանվում են միայն մեկ բանալիով: Սակայն մեկ-մեկ պատահում են և երկբանալի ծածկագրեր: Իրանցից մեկի մասին մենք խոսել ենք արդևում՝ սլունագիր ծածկագրության հատվածում:

Երկբանալի ծածկագրության մի ընտիր նմուշ պահել է մեզ Հայկական ՍՍՏ Պետական Մատենադարանի № 1424 ձեռագրի ծածկագրութիւնը՝ 1620 թվականից: Ծածկագրված է գումարգիր և փոխարինագիր բանալիներով: Երբ ծածկագրութիւնը գումարգրից վեր ենք ածում սովորական տեքստի, ոչինչ չի ստացվում: Վերջնականապես բացվում է, երբ ստացված տեքստում գործ ենք ածում նաև երկրորդ փոխարինագիր բանալին: Լ'ստ որում, փոխարինագրի մեջ գործ է ածված երեք տարրերակների բարդացումներն էլ: Բացի այդ, առաջին շարքի 11-րդ երկտառի մեջ կատարված է մի տառասխալ—այն պիտի լինի ոչ թե «Զձ», այլ «ԶԶ»: Ծածկագրության տեքստը բերում հնք վերջին տառասխալն ուղղած ձևով.

լլ. աա. լմ. րտ. 22. նն. 22. լմ. բբ. օօ. 22. օօ. 22.
 ո. բ. 2. ք. ո. պ. ո. 2. դ. լ. ո. ա. ո.
 ճճ. բա. ճճ. դա. լմ. սո. 22. րտ. 22. ցո. դա. ոո.:
 մ. գ. մ. հ. 2. վ. ո. ք. ո. ւ. ր. ս.²:
 Ստացված տեքստը վերծանվում է փոխարինագրով.


¹ Ա. Կ. Արրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-
 ուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1933, էջ 223:

² ՀՊՐ ձեռ. № 1424, Բ. 145ա

Փոխարինագիրը՝ ո. ք. շ. ք. ո. պ. ո. շ. դ. ր. ո. ւ. ու
 Վերջնական վերծանումը՝ զ մ հ ղ ա պ ա ռ ս տ ծ ա ո ս
 Որ բանալիով՝ 2 2 2 2 3 1 3 1 3 2 2 3 3

Փոխարինագիրը՝ մ. գ. մ. հ. շ. վ. ո. ք. ո. լ. ր. ս
 Վերջնական վերծանումը՝ ս՛՛ 1 ի 2 հ լ՛՛ ա ղ ա չ հ մ
 Որ բանալիով՝ 1 2 3 2 2 2 3 2 3 1 3 1

Կրկնագիր ծածկագրի վերին աստիճանի հետաքրքիր օրինակ պահված է Անթիլիասում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսարանի մի խորհրդատուրում, որի լուսանկարը մենք բերում ենք ստորև.



Անթիլիասի կեռագիր ծածկագիրը:

Սյունագիր այս ծածկագրութիւնը դժվարութեամբ մեզ հաջող-վեց վերծանել: Վերև բերված երկու բանալիներից և ոչ մեկով մեզ չհաջողվեց բաց անել այս ծածկագիրը: Փորձեցինք բաց անել եղբայրագիր և փոխարինագիր ծածկագրերով: Դարձյալ ոչինչ չստացվեց: Հետո միայն պարզվեց, որ երկրորդ բանալին եղբայրագիրն է երեք բարդացումով—մի դեպքում տառը թողնվում է նույնութեամբ, երկրորդ դեպքում վերցվում է ծածկագրված տառի նախորդ տառը հայկական այբուբենում և երրորդ դեպքում վերց-վում է նախորդի առաջինը:

Ներկա ծածկագրութիւնն արժեքավոր է մեզ համար այն տեսակետից, որ այն վերջին շրջանից մեզ հասած միակ ծածկագրութիւնն է, որ կազմված է իրապես ծածկագրութեան նպատակով և գրչախաղ չէ: Ծածկագրութեան հեղինակն է բանասեր Տրդատ Կախկոպոս Պալլանը, որը ծածկագիր հայտնում է այն մասին, որ իրենք մի վանքի բալում քարե սնդուկի մեջ գտնւն են թաքցրել (այդ վանքը գտնվում է Արևմտյան Հայաստանում, և նրա անունը, որոշ նկատառումով, չենք ուզում ասլ): Բերում ենք սյունագիրը, մեր այբուբենի վերածված տեքստը և նրա վերծանութիւնը.

ցփդդտ զպվ պբխեան
 Տրդատ եպս Պալեան
 Վգշբու կց ուշ
 վանքին կից շին-
 դհ վգցւգրգու լգկ
 ած վարժարանի մեծ
 վրթձլ շեցքիշ հ-
 սրահի շեցքին հ-
 լւվլվդււշ եսշէշ
 իւսիսայից դոնեհ
 գոփցվ փոքրիկ
 դուրս, փոքրիկ
 քգկւշ լրջ զգգկ
 փակից մեջ եղած
 լգնեոփկշգցոքո
 սանդուխեքրուց
 վգցլ կողջ լգրգն
 վերի կողմ լերան

Քլցլլ ըբխով երգ
 փորել տալով ետա-
 փ քբբը վշջշփդ
 ք փալլլտէ սնտուկ,
 ոցոփշ լըշ կշշ
 որուց մեջ կան
 զբշգգշ լրեր թրեր
 զանազան իրեր, թե[պ]ետ
 ցպ գլոպփ բցիւ
 ոչ այնչափ արժե-
 քգփոց եշ ծշեց
 քաւոր են: Խնդր-
 զլ լուգցըք լուց
 եմ յիշեցեք միշտ
 զաշգրիգշի
 զանարժանի[ս]:

Այս ծածկագրութիւնը, մեզանից անկախ, վերծանել է Մես-

րոպ վարդ. Գրիգորյանը: Նա իր անձնական նամակներից մեկում առաջարկել էր մի քանի բառերի այլ վերծանում, որը և մենք շնորհակալությամբ հաշվի ենք առել այս վերծանության ժամանակ:

Բոլոր տեսակի սլոնագիր ծածկագրերը վերծանելիս պիտի նկատի ունենալ, որ ծածկագրող հեղինակները հաճախ շփոթում են սլոնագծերը և կետերը՝ ավելի կամ պակաս են նշանակում, ուստի և վերծանելիս, երբ ծածկագրությունը չի բացվում, պիտի փորձել գործածության մեջ դնել նախորդ կամ հաջորդ տառերը, ինչպես և՛ հայկական այբուբենի նախորդ կամ հաջորդ համարաշարքը:

14. ԵՌԱԳԻՐ ԾԱԾԿԱԳԻՐ

Եռագիր ծածկագրերը հայկական ամենաբարդ և միաժամանակ ամենահետաքրքիր ծածկագրերից է: Մեզ հայտնի է այս ծածկագրի միայն երկու տեքստը—մեկը Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանում՝ Հովհաննես գրչի 1299 թվականին ընդօրինակած ձեռագրում, իսկ մյուսը՝ Բողլյան գրադարանի սեփականությունը կազմող հայկական մի ձեռագրում (Ձ 2): Այդ նույն խմբին պատկանող ծածկագրությունից մի տող, առանց աղբյուրը ցույց տալու, բերել է Ն. Աճառյանը իր «Հայոց գրերը» աշխատության մեջ¹:

Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի եռագիր ծածկագրի տեքստը հետևյալն է.

«դ ջճ՛. հ՛չ՛ւ. ջ՛ո՛ց. ժ՛ճ՛ո՛. ե՛ծ՛ջ՛. խ՛ծ՛տ՛. ժ՛ճ՛ո՛. բ՛ի՛մ՛. բ՛մ՛ս՛.
բ՛ի՛ս՛. ժ՛ճ՛ո՛. բ՛ի՛մ՛. դ՛խ՛ն՛, գ՛կ՛ց՛. է՛հ՛չ՛. դ՛խ՛տ՛. գ՛կ՛ց՛. բ՛ի՛ս՛.
դ՛խ՛տ՛. ծ՛ջ՛ր՛. բ՛ի՛մ՛» (թ. 174բ):

Բողլյան գրադարանի հայկական բաժնի Ձ 2 ձեռագիրը, որը բովանդակությամբ գանձարան է, ընդօրինակված 1610 թվականին, պարունակում է բացակա անդամ ծածկագրության հետևյալ տեքստը.

«Արդ գրեցաւ սբ գանձարանս ձեռամբ մեղսաներկ և անհմուտ, անծան և անժող գրչի բիմ. բմս. բիս, հձե. զկց. դիսմ. լոկ անուն երիցուխս, որդի Լուցքացի պրն Նիկողայովին»²: Ո՛չ Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի և ո՛չ էլ

¹ Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 467—468:

² Տես Տիրայր արքեպ.-ի կազմած General Catalogue of the Armenian Manuscripts in the Bodlian Library at Oxford (Հայկական ՍՍՌ Պետ. Մատեն.-ի արխիվ. բաժ., Տիրան արքեպ.-ի կազմած ձեռագրաց ցուցակ, 7-րդ տետրակ, էջ 24):

Բողլյան գրադարանի ձեռագրերի վերև բերված ծածկագրերը մինչև այժմ ոչ ոքի կողմից դեռ չեն վերծանված:

Ծածկագրության երկու տեքստերն էլ, ինչպես տեսնում ենք, կազմված են հայկական երեք տառանիշերից: Առաջին հայացքից դժվար չէ նկատել, որ երեք տառերի այս խումբը կազմված է որոշ սխտեմով. զուգակցված են այստեղ համարական նույն կարգի տառերը՝ վերջնելով միավորների, տասնավորների, հարյուրավորների և հազարավորների շարքից: Այսպես, առաջին երեք տառերի թվականների արժեքն է՝ 90, 900, 9000, երկրորդինը՝ 70, 700, 7000, երրորդինը՝ 6, 600, 6000 և այլն:

Եռագիր ծածկագրի բանալին, բարեբախտաբար, մեզ անհայտ աղբյուրի հիման վրա, բերվել է պրոֆ. Հ. Աճառյանի «Հայոց գրերը» աշխատության մեջ: Ստորև բերում ենք այդ բանալին.

ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ
ժճ	իմ	լլվ	խնտ	ծշր	կոց	հչւ	ձպփ	ղջք
ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	ղ
աճ	բմ	գլվ	դնտ	եշր	զոց	էչւ	ըպփ	թջք
ճ	մ	լ	ն	շ	"	չ	պ	ջ
աժ	բի	գլվ	դխտ	եծր	զկց	էհւ	ըձփ	թղք
ա	ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք
աժ	բի	գլց	դխն	եծշ	զկո	էհչ	ըձպ	թղշ

Եռագիր ծածկագրի բանալին:

Պրոֆ. Հ. Աճառյանը իր այդ աշխատության մեջ բերել է ստորև բերված մեկ տող ծածկագրի տեքստը և նրա վերծանութունը.

րիմ զկց եհչ եծշ իմս դիտ բիս ծշր իիմ եծշ զկց ըձփ
 Ս ու լ ր ու ն Մ և ու ր ու պ

Սկզբում ծանոթ չլինելով պրոֆ. Հ. Աճառյանի հրատարակած բանալու հետ, փորձեցինք մենք այս ծածկագիրը բաց անել մեզ ծանոթ հայկական ծածկագրի բոլոր բանալիներով, բայց ոչինչ չստացվեց: Մեծ աշխատանքից հետո միայն պարզվեց, որ ծածկագրված տեքստի տառանիշերը պիտի փնտրել ոչ թե ծածկագրի մեջ, այլ նրանից դուրս: Այսպես, առաջին երեք տառերի մեջ կան 90-ը, 900-ը, 9000-ը, բացակա է 9-ը, այսինքն՝ թ-ն և այս է, որ ծածկագրված տառն է հանդիսանում: Երկրորդի մեջ կա՝ 70, 700, 7000, բացակայում է 7-ը, այսինքն՝ ե-ն: Երրորդի մեջ կա՝ 6, 600, 6000, բացակայում է 60-ը, այսինքն՝ կ-ն և այլն: Սկզբունքը

մեզ հայտնի դառնալուց հետո, առանց դժվարութիւնների, վերծանեցինք վերև բերված ծածկագրերը:

Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 193 ձեռագրի տեքստը վերծանվում է.

դ՛ջ՛ք՛. հ՛չ՛ւ՛. գ՛ո՛ց՛. ժ՛ճ՛ո՛. ե՛ծ՛շ՛. խ՛ն՛տ՛. ժ՛ճ՛ո՛. բ՛ի՛մ՛. բ՛մ՛ս՛.
 Թ է կ ա ռ դ ա ս ի-
 բ՛ի՛ս՛. ժ՛ճ՛ո՛. բ՛ի՛մ՛. դ՛խ՛ն՛. գ՛կ՛ց՛. է՛հ՛չ՛. դ՛խ՛տ՛. գ՛կ՛ց՛. բ՛ի՛ս՛.
 մ ա ս տ ու լ ն ո մ-
 դ՛խ՛տ՛. ժ՛շ՛ր՛. բ՛ի՛մ՛:
 ն ե ս

Այսպիսով, վերծանվում է. «Թե կարդաս՝ իմաստուն ոմն ես».
 այս նախը վերծանված, գրված է ծածկագրի կողքում:

Բողլյան գրադարանի վերև բերված ծածկագիրը վերծանվում է.

ԲԻՄ. ԲՄՍ. ԲԻՍ. ՀԶԻ. ՉԿԶ. ԴԽՄ:
 Ս Ի մ է ո ն

Բողլյան գրադարանի հիշատակարանի այդ հողվածը վերծանված ծածկագրով կկարդացվի. «Արդ գրեցաւ սր գանձարանս ձեռամբ մեղսաններկ և անհմուտ անծան և անծող գրչի Սիմեոն լոկ անուն երիցուիս, որդի Լուցքացի պարոն Նիկոլայովին»:

15. ԱՂՎԱՆԱԳԻՐ ԾԱՄԿԱԳԻՐ

Այս ծածկագիրը դարձյալ հայկական տառանիշերի վրա է ձևված, սակայն կատարված փոփոխութիւնն այնքան մեծ է, որ առաջին հայացքից դժվար է նկատել այդ: Եվ եղել են ղլուրահավատ հայագեաններ, որոնք, հիմնովիլով այս ծածկագրութեան տեքստերի սովորական վերնագրերի վրա (որոնք ունենում են «Աղուանից գիրն է» վերնագիրը), կարծել են, թե, իրոք, այդ մեր հարեան աղվանից այլուբենն է: Սակայն պրոֆ. Հ. Աճառյանը համոզեցուցիչ ձևով ապացուցել է, որ այլ ոչ թե աղվանից գիրն է, այլ հայկական ծածկագիրը: Շփոթութիւնը, ինչպես ասացինք, առաջացել է վերնագրից, իսկ վերնագիրը, ըստ պրոֆ. Աճառյանի, նախնական օրինակում եղել է ոչ թե «Աղուանից գիր», այլ «աղունագիր», իսկ աղունագիրը ունեցել է ծածկագրի նշանակութիւն, ինչպես որ ծածուկ խոսելու լեզուն կոչվում է «ծառի լե-

տեքստի կողքին եղած «Գրի աղւանից» հիշատակութիւնը, որն իրապես ունի ոչ թե աղվանից գիրն է, այլ՝ ծածկագիր է իմաստը:

Այս նույն ծածկագրին 1902 թվականին անդրադարձել է Ֆ. Մուրատը «Հանդէս ամսօրեայ»-ում տեղափորած իր «Նշանագիրք իմաստնոց» հոդվածում և, հակառակ Քարամյանցի, ապացուցել, որ այն ոչ թե աղվանական գիր է, այլ սովորական ծածկագրութիւն:¹

Բժշկական ծածկագրութիւն մասին հանգամանորեն խոսել է պրոֆ. Ն. Աճառյանն իր «Հայոց գրեր»-ի մեջ: Նա է ծածկագրութիւն այս տեսակին «բժշկական» անվանել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ արտասահմանից իրեն ուղարկված խմբի այդ ծածկագրութիւն մի տեքստը ընդօրինակված է եղել Սեբաստիայում գտնված մի ձեռագրում, որը բովանդակութիւյամբ բժշկարան է եղել:

Պրոֆ. Ն. Աճառյանը Քարամյանցի վերև բերված ծածկագիր տեքստի և Սեբաստիայից ստացած ծածկագիր բառերի հիման վրա կազմել է ծածկագիր 26 նշանագրերի ցանկը, իսկ հայկական այբուբենի մյուս 12 տառանիշերի նշանագրերը մնացել են անհայտ:²

Ի դեպ, պրոֆ. Ն. Աճառյանի արտասահմանից ստացած մի տեղեկութիւնից երևում է, որ բժշկական ծածկագրութիւն բանալին հայտնի է եղել հայ ոսկերիչների նեղ շրջանակում, որոնք իրենց արհեստի գաղտնիքները գաղտնագրելիս են եղել այս ծածկագրով, սակայն խուսափել են հայտնել ծածկագրութիւն բանալին, որովհետև «անոնք, — ինչպես գրում են պրոֆ. Ն. Աճառյանին, — իրենց վարպետին երդում տված են եղել, ուստի ծածկագրին գաղտնիքը երևան չեն հաներ»:³

Հայկական ՍՍԻ Պետական Մատենադարանում, բարեբախտաբար, գտնվեցին այս խմբի ծածկագրերի մի քանի տեքստեր, որոնց հիման վրա հնարավոր է դառնում լրացնել պրոֆ. Ն. Աճառյանի կազմած այս ծածկագրի այբուբենի պակաս ցանկը և վերծանել չվերծանված ծածկագրերը:

Անհրաժեշտ ենք համարում նախ բերել բժշկական ծածկա-

¹ «Հանդէս ամսօրեայ», 1903, էջ 334:

² Ն. Աճառյան, Հայոց գրերը, էջ 472—473:

³ Նույն տեղը, էջ 473:

գրութիւն մեր կազմած ամբողջական բանալին, ապա տալ ծածկագիր տեքստերը և նրանց վերծանութիւնը.

Ն	ա	օ	ժ	Ճ	ճ	Ն	ռ
Փ	բ	Փ	ի	Ս	ս	Վ	ւ
Զ	գ	Ն	լ	Յ	յ	Շ	վ
Հ	դ	Խ	խ	Յ	չ	Կ	տ
Յ	ե	Կ	ծ	Շ	շ	Մ	ր
Ձ	զ	Ն	կ	Ճ	ճ	Կ	ց
Ն	է	Կ	հ	Ն	ն	Օ	ւ
Ղ	ը	Ղ	ձ	Կ	ւյ	Չ	փ
Ռ	թ	Ր	ղ	Շ	շ	Չ	ք

Բժշկական ծածկագրության բանալին:

Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 6644 ձեռագրի՝ գրիչ: Եղիշե կրոնավորը 1527 թվականին իր ընդօրինակած ձեռագրի մնչ թողել է բժշկական հետևյալ երեք ծածկագիր տեքստերը. Առաջին ծածկագրութիւնն ունի հետևյալ տեքստը.

«Թէ կարդաս ևս քեզ ծառայ եմ»:


ՁՆԹԵՆԿՎ: ՂԵՇՓԶՆ: ՆԹՆՕԵՆՕ-ՆԵԴԹ:

ՆԵՃՆԵՄԹՄ. ՆՆԵՓՂ ՎԵՆԿՆԵԵ:¹

Վերծանվում է. «Ձարեկլցիս զԵղիշայ կրանաւոր և զհայրն իմ Մալիք սուլտանն»: Կողքին գրված է ծածկագրութիւն վերծանութիւնը միայն «զԵղիշայ» վերծանելու փոխարեն սխալմամբ վերծանվել է «Եղիեայ»:

¹ ՀՊՄ ձեռ. № 6644, Թ. 144բ:

Ստորև բերում ենք այդ ծածկագրության լուսանկարը:



Հայկական ՍՍԻ Պետական Խոստենալարանի № 144 ձեռ., ք. 165բ.:

Ծածկագրության վերջում գրիչը թողել է հետևյալ ուշագրավ հիշատակագրությունը. «Ոխտ հեշտ է՝ թէ շատ որոնես»: Նույն էջի ներքին լուսանցքում հետագայի անվարժ գրչության մի վաղից և՛ է. «Ես կիրեղս ուսյառանց վարպետի. գաւազանայգիր է»:

Հայկական ՍՍԻ Պետ. Մատեն.-ի № 6731 ձեռագիրը, որն ընդօրինակված է Վանեցի Ասատուրի որդի Տեր Հովասափի կողմից 1652 թվականին, ունի հետևյալ ծածկագիր հիշատակարանը.

Ե Յ Ծ Թ Ժ Ի Կ Լ
 Ճ Դ Ը Զ Է Ը Թ Կ Լ Դ
 Ս Ռ Ս Ք Յ Ն Տ Մ Լ Ն
 :Ֆ Ժ Գ Ժ Կ Ը Դ Ն Խ

Շրջագիր ծածկագրի բանալին:¹

Շրջագիր ծածկագրության նմուշներ մեզ պատահում են նաև վիմագիր արձանագրությունների մեջ: Մածկագրության այս խմբին է պատկանում բանասեր Գ. Տեր-Մկրտչյանի Սևանի կղզում հայտաբերած վիմագիր մի արձանագրությունը (1448 թ.), որի տեքստը և վերծանությունը նա տպագրել է «Շողակաթ»-ի մեջ:

Շուռ տված կողմով կարդացվում է. «Սա է Փրկիչ աշխարհի և լոյս հաւատացեոց, որք երկրպագէք զԿ[արա|պ[և]ա]ր ք[ա|հ[անա]յ հղաւթս լիշեցէք Ձ[ա]ք[ա|ր կազմող ՊՂԲ»²:

Հայկական ՍՍՍԻ Ճարտարապետական հնությունների պահպանության կոմիտեի արշավախումբը 1944 թվականին Հաղբատի մեծ ժամատան տապանաքարերի մեջ հայտաբերել է շրջագիր-ծածկագիր մի տեքստ ևս 15-րդ դարից³:

18. ՎԱՆԿԱԳԻՐ ԾԱԾԿԱԳԻՐ

Այս խմբի ծածկագրերը կազմվում են երկու կամ երեք տառից բաղկացած վանկերից, որոնց մեջ միայն առաջին տառը ունի նշանակություն, իսկ մյուսները կցորդներ են և զրված ծածկագրու-

¹ Հայկական ՍՍՍԻ Գետական Մատենադարան, ձեռ. № 1869, թ. 344ա:

² Գ. Տեր-Մկրտչյան, Աջեց ձախ հայ գրություն («Շողակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 139): Հմմտ. Հ. Ղ. Ալիշան, Մխտեան, էջ 79:

³ Տես Կ. Ղաֆազարյան, Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, էջ 13—14:

թլան բարդացման համար: Կցման սկզբունքը հետևյալն է. ժածկագրվող բաղաձայն տառին կցվում է առ, իսկ ձայնավորին միախառնվում: Առանց ժածկագրելու գրվում է ու երկհնչյունը:

Այս ժածկագրով գաղտնագրված են Մխիթար Անեցու թվաբանական խնդիրները: Բերենք նրանցից երկու օրինակ.

Ութերորդ խնդիրը. «Մարդ մի տղային երես 1 (100) սպիտակ՝ թէ 100 հաւ գնէ: Նա գնեաց զղազն սպիտակ, զտանուհաւն մեկ սպիտակ, զճնճղուկն՝ քսան մէկ սպիտակ: Տես թէ քանի՞ եղև զղազն, և զհաւն և զճնճղուկն»¹:

Հարցումին ժածկագիր պատասխանված է. «Ղատատղատնատ ժԹ, հատատուատնատ՝ Ա, նատնատնատղատուկատնատա Ձ», որ վերծանվում է. «Ղազն՝ ժԹ (19), հաւն՝ Ա (1), ճնճղուկն՝ Ձ (80)»:

Տասներորդ խնդիրը. «Երամ մի հաւ կու գնային: Հաւ մի ի դէմ ելաւ և սասաց. Բարի եկիք հարիւր հաւ: Ասացին. Մեք չեմք հարիւր. մեք, և հանչանք մի քան զմեզ, ու մեր կէսս, ու կիսու կէսնու դուք՝ հարիւր եմք: Տես թէ քանի՞ են եղել»:

Հարցումին ժածկագիր պատասխանված է. «Ետրատաստուհատուկատետտատ»: Ծածկագիրը վերծանվում է. «Ետուտն ու վեց»:

19. ԱՂՅՈՒՍԱԿԱՎՈՐ ԳՐՉԱԼԱՎՂ ԾԱԾԿԱԳԻՐ

Հայկական ձեռագրերում պատահում են և աղյուսակավոր զբրջախաղ-ժածկագրեր, որոնցից որպես նմուշ ստորև բերում ենք Ներսես գրչի թողած աղյուսակը²: Ծածկագրի վերծանութլունը պետք է սկսել կենտրոնի շղատառ «Ձ»-ից և ընթանալ չորս ուղղութլամբ՝ վերև, ներքև, աջ և ձախ: Ձեռագրում մեզ հաճախ են պատահում նման աղյուսակ-ժածկագրեր, որոնք վերծանելու համար անհրաժեշտ է փորձեր կատարել զանազան ուղղութլուններով՝ նայած թե ինչ սկզբունքով են կազմված:

¹ ՀՊՄ ձեռ. № 2961, Թ. 124բ:

² ՀՊՄ ձեռ. № 1242, Թ. 133բ:

	ա	բ	շ	ի	լ	չ	ր	ր	ի	չ	լ	ի	շ	բ	ա		
ա	բ	շ	ի	լ	չ	ր	դ	ր	ի	չ		ի	շ	բ	ա		
բ	շ	ի	լ	չ	ր	դ	ս	դ	ր	ի	չ	լ	ի	շ	բ		
շ	ի	լ	չ	ր	դ	ս	է	ս	դ	ր	ի	չ	լ	ի	շ		
ի	լ	չ	ր	դ	ս	է	ս	է	ս	դ	ր	ի	չ	լ			
լ	չ	ր	դ	ս	է	ս	ր	ս	է	ս	դ	ր	ի	չ	լ		
չ	ր	դ	ս	է	ս	ր	բ	ր	ս	է	ս	դ	ր	ի	չ		
ր	դ	ս	է	ս	ր	բ	ն	բ	ր	ս	է	ս	դ	ր	ի		
(ր	դ	ս	է	ս	ր	բ	ն	զ	ն	բ	ր	ս	է	ս	դ	ր)
ի	ր	դ	ս	է	ս	ր	բ	ն	բ	ր	ս	է	ս	դ	ր	ի	
չ	ի	ր	դ	ս	է	ս	ր	բ	ր	ս	է	ս	դ	ր	ի	չ	
լ	չ	ր	դ	ս	է	ս	ր	ս	է	ս	դ	ր	ի	չ	լ		
ի	լ	չ	ր	դ	ս	է	ս	է	ս	դ	ր	ի	չ	լ	ի		
շ	ի	լ	չ	ր	դ	ս	է	ս	դ	ր	ի	չ	լ	ի	շ		
բ	շ	ի	լ	չ	ր	դ	ս	դ	ր	ի	չ	լ	ի	շ	բ		
ա	բ	շ	ի	լ	չ	ր	դ	ր	ի	չ	լ	ի	շ	բ	ա		
ա	բ	շ	ի	լ	չ	ր	ր	ի	չ	լ	ի	շ	բ	ա			

Ամեն կողմից կարդացվում է. «Ներսես գրիչ յիշեալ»:

20. ՀՈՒՆԱՏԱՌԻ ԾԱԾԿԱԳՐԻՐ

Հունատառ հայերեն ժածկագրերի մեջ հայերեն բառերը գրվում են հունարեն տառերով, իսկ հունարեն այբուբենում չեղած տառերի համար գործ են ածվում հայերեն տառանշաններ կամ նոր նշանագրեր:

Այս խմբի ժածկագիրը պահել է Երուսաղեմի Ազգային մատենադարանի № 1297 ձեռագիրը, որն ընդօրինակված է 1163 թվականին Հովսեփ գրչի կողմից Հովհաննես Որոտնեցու պատվերով և ունի իմաստասիրական բովանդակություն: (Ծածկագրութունը բերված է ներկա աշխատության երկրորդ գլխում):

Ծածկագրված է հետևյալ սկզբունքով.

ա) Բնագիրը, հիմնականում, ժածկագրված է հունարեն տառերով: Հունարեն այբուբենից օգտագործված է՝ ա, ε, է, ծ, λ, χ, γ, ι, ν, ο, ς, τ, σ, φ, δ տառերը:

բ) Հայկական այբուբենի այն տառերը, որոնք չկան հունական այբուբենի մեջ, լրացվել են հայերեն այբուբենից՝ բ, հ, խ, ծ, ձ, ջ, ղ, ւ, ք տառերով:

գ) Ծածկագրութունը բարդացնելու նպատակով դ, պ, վ, ց տառերի համար ստեղծվել են նոր նշանագրեր:

Ծածկագրված է հետևյալ տեքստը.

«Վասն զի անձամբ անձին լաղթելն քան զամենայն լաղթութիւն առաջի և քաջ է: Որփեւս»¹:

«Մի տեսանեն և մի ինչ ասեն, և այդն ամենայն խուլ և համբ է. Եւրիպիդէս»:

«Հարեցից արօրս իրաւացիկ և զգրունս անհղից ի պղծոց»:

«Աշխարհացուցիցն ցկարագրեալ այսպիսի. Որ զքարինս գգուի, ատակք լինի: Որ ի ծով սերմանէ, գձկունս կերակրէ: Արեգակն կուրաց ոչ ծագէ և ոչ մտանէ»:

Զմամուռի Մատենադարանի № 2 ձեռագիրը պարունակում է հունատառ հայերեն հետևյալ ժածկագրերը, որոնց մեծ մասի կողքին տրված է նրանց վերծանութունը: Բերում ենք այս ժածկագրից մի նմուշ իր վերծանության հետ միասին:

Շ	Ո	Ր	Յ	Է	Լ	Ս	Ե	Ղ	Ս	Կ
Ս	Ե	Ս	Ե	Լ	Ս	Ե	Ղ	Ս	Կ	Ս
Ս	Ե	Ս	Ե	Լ	Ս	Ե	Ղ	Ս	Կ	Ս

¹ Ընդգծված բառերը գրված են սովորական հայերենով:

Այս ձեռագիրն արժեքավոր է մեզ համար ոչ միայն որպես ժածկագրի տեսակ, այլ որ նրա հեղինակն է հալ մատենագրության աչքի ընկնող դեմքերից մեկը՝ Սամվել Անեցին: Ձեռագիրը հանդիսանում է նրա ինքնագիրը: Գրված է 1178 թվականին:

21. ՆԵՐՍԻՍՅԱՆ ԾԱԾԿԱԳԻՐ

Ներսիսյան է կոչվում այն պատճառով, որ նա ստեղծվել է գաղտնի նամակագրության մեջ դորժ է ածվել Ներսես Աշտարակեցու կողմից: Այս ժածկագրով Աշտարակեցուց մի քանի նամակներ են հասել մեզ¹: Այդ նամակները վերծանեց և ժածկագրության բանալին կազմեց անվանի հայագետ Կ. Տեր-Մկրտչյանը: Բերում ենք ժածկագրի բանալին.

Բ	ա	Ղ	ե	Յ	ւ	Ր	օ
Ս	բ	Ց	զ	Շ	փ	Լ	ր
Կ	գ	Ջ	է	Ծ	շ	Ն	ց
Շ	դ	Ծ	ծ	Լ	ն	Վ	ւ
Բ	օ	Լ	ե	Վ	չ	Գ	փ
Կ	զ	Ի	հ	Ց	դ	Ժ	ք
	է	Դ	ա	Շ	ը	Փ	ւ
Ց	զ	Վ	ւ	Գ	ն	Օ	օ
Կ	դ	Ց	զ	Շ	փ	Լ	ր
Ս	բ	Ճ	է	Ծ	շ	Ն	ց

Ներսիսյան ժածկագրի բանալին

¹ Այս մասին տես «Արարատ» ամսագիր, 1888, էջ 44:

22. ԹԱԼԻՍՄԱՆԱԳԻՐ ԾԱԾԿԱԳԻՐ

Թալիսմանագիր ծածկագրերը մեզ մոտ գործածական գաղտնագրերից են: Նրանք ընդօրինակված են լինում գլխավորապես արևմտարևելյան բնույթի ձեռագրերում: Մեր նպատակից դուրս է արդ հարցով զբաղվելը, սակայն հետագա ուսումնասիրողների գործը հեշտացնելու համար անհրաժեշտ ենք համարում հրատարակել Թալիսմանագրի երեք բանալի:

Հայկական ՄՍՌ Գետական Մատենադարանի առաջին բանալին¹.

Այս նշանագիր է որ գրեն ի տլսմն.
զայս վս այն գրեմ, որ ի տեսանել
ինչ գիր նա համեմատելով լուծել
զնոսայ:

⊙ ۱ ۲ ۳ ۴ ۵ ۶ ۷ ۸
۹ ۱۰ ۱۱ ۱۲ ۱۳ ۱۴ ۱۵
۱۶ ۱۷ ۱۸ ۱۹ ۲۰ ۲۱ ۲۲
[۲۳ ۲۴ ۲۵ ۲۶ ۲۷ ۲۸ ۲۹

Թալիսմանագրի առաջին բանալին:

Հայկական ՄՍՌ Գետական Մատենադարանի ձեռագրի երկրորդ բանալին .

Ջ Բ Գ Դ Ե Զ Ը Թ Կ
ա բ գ դ ե զ է լ թ
ժ ի կ խ ծ Կ հ ձ Ծ
Ժ ի Լ խ ծ Կ հ ձ Ծ

¹ ՀԳՄ ձեռ. № 8716, Թ. 57ա:
² ՀԳՄ ձեռ. № 2716, Թ. 52ա:

Ճ	Ջ	Դ	Ը	Չ	Տ	Մ	Ն
ժ	ձ	յ	ն	շ	տ	ւ	ը
Ռ	Վ	ՎՅ	ՎԿ	Ր	Կ	Լ	Ք
ռ	վ	վյ	վկ	ր	կ	լ	ք

Քալիսմանագրի երկրորդ բանալին:

Հայկական ՍՍՌ Գեոսական Մատենադարանի ձեռագրիչերրորդ բանալին¹.

Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ
ա	բ	գ	դ	ե	զ	է	թ
Ը	Ճ	Գ	Կ	Ձ	Հ	Ն	Շ
ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ղ
Ճ	Ջ	Դ	Ը	Չ	Տ	Մ	Ն
ժ	ձ	յ	ն	շ	տ	ւ	ը
Ռ	Վ	ՎԿ	ՎԿ	Ր	Կ	Լ	Ք
ռ	վ	վյ	վկ	ր	կ	լ	ք

Քալիսմանագրի երրորդ բանալին:

23. ՔՎԱԿԱՆՆԵՐԻ ԾԱԾԿԱԳԻՐ ԱՌԵՂԾՎԱԾՆԵՐ

Ձեռագրերում հաճախ են պատահում թվականների առեղծվածներ, որոնց մեծ մասը սովորական թվագումար ծածկագրեր են: Վերծանելու համար անհրաժեշտ է տրված բառի տառերը գումարել ըստ նրանց թվական արժեքի:

¹ ՀԳՄ ձեռ. № 8716, ք. 52ա:

Սարգիս Եվդոկիացին իր ընդօրինակած ձեռագրի թվականը հայտնում է իր հիշատակարանի հետևյալ քառյակում.

«Ի թվականիս Հայոց մեծի,
Շող բառս նըշան քեզ յայտնեացի,
Կենըն պատուով ի բաց դիցի,
Այբըն ընդ նըմին բարձեալ լիցի»¹:

Այստեղ թվականը ծածկագրված է Շող բառի տակ, որից, սակայն, պիտի հանել «կենըն պատուով», այսինքն՝ «կ» ասորը իր թվական նշանակութամբ՝ 60 (պատվի նշան կրող տառերը թվական են, այդ նկատառումով է ասում «կենըն պատուով»): Ծածկագրութունը վերծանվում է. $\text{Շ}(500) + \text{Ո}(600) + \text{Ղ}(90) + 551$ (հայկական թվականի տարբերութունը) $= 1741$, հանած 60, կլինի 1681: Այսպիսով, Սարգիս Եվդոկեցու ձեռագիրը գրվել է 1681 թվականին: Երեմիա Քյոմյուրճյանը իր «Ստամպուլյալ պատմութեան» գրության ժամանակը հայտնում է իր հիշատակարանի հետևյալ քառյակում.

«Բաւ է գիտնոց իմաստնոց՝
Զվերոյգրեալս որ թէ իմանան.
Հայ թուականօք դա զինչ է
Երեմիաս յանգեալ գիւր ընծախն»²:

Ծածկագրութունն այս քառյակում գտնվում է երրորդ տողում, որը մեծ վարպետությամբ շարադրված է երկիմաստ. մեկ՝ կարելի է հասկանալ, թե «Հայկական թվականը ինչ թվական է», իսկ մյուսը, թե՝ «Հայկական թվականը—դա (թվագումար) «զինչ է»: Քյոմյուրճյանը, իհարկե, երկրորդ իմաստով է գրել: Զինչ է թվականը վերծանվում է. $\text{Զ}(6) + \text{Ի}(20) + \text{Ն}(400) + \text{Չ}(700) + \text{է}(7) + 551$ (հայկական թվականի տարբերութունը) $= 1684$: Հետևապես, այդ թվականին է Քյոմյուրճյանը գրել իր պատմութունը:

Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի № 321 ձեռագրում Իգնատիոս գրիչը գրության ժամանակը հայտնում է հետևյալ ծածկագրությամբ.

«Ետ ինձ հիքոյս մասն ինչ շիթի,
Աւարտ ածել զճառս խորհրդի,
Սուրբ և յանմահ պատարագի,

¹ ՀԳՄ ձեռ. № 3567, ք. 18ա:

² Երեմիա Քյոմյուրճյանի Ստամպուլյալ Գատմութիւն, Վիեննա, 1913, էջ 120:

Ի ձմերայլին ամանակի,
 Եւ դըժընդակ օգոյ ցըբտի,
 Ձոր թիւս եկեալ էր ն'այսմ լամի,
 Քառեակ, կանառ լանջատեղի,
 Գարնանայլին լամսոց նախկի,
 Կալուածըն կալը հընգից երբի...»¹:

Գրության տարին «Քառեակ, կանառ»-ն է, որ վերծանվում է քառեակ = $4 +$ կանառ $4(60) + Ա(1) + ձ(100) + Ա(1) + Ռ(1.000) + 551$ (հայկական թվականի տարբերությունը) = 1717 թ.: Ուրեմն, Իգնատիոս գրիչն իր ձեռագիրը գրել է 1717 թվականին:

Հազար գրիչը իր ընդօրինակած ձեռագրի թվականը հայտնում է հետևյալ քառյակում.

«Ներելովն Աստուծոյ աւարտեցի,
 Տխեղծ մատամբ շարադրեցի,
 Ի թվականի Հայոց քանակի,
 Քառից կրկին հարիւր չափի,
 Քառիւ մի պարզ երկ յիսնեկի
 Եւ ընդ նմին երկ հարիւրի»²:

Ծածկագիր այս թվականը վերծանվում է. «քառից կրկին հարիւր չափի» ($4 \times 2 \times 100 = 800$), «քառիւ մի պարզ երկ յիսնեկի» ($4 + (2 \times 50) = 104$) «և ընդ նմին երկ հարիւրի» ($+ 200$), որեմն՝ $800 + 104 + 200 + 551 = 1655$ թ.: Միայն է անշուշտ Արտավազդ արքեպիսկոպոսի վերծանած 1607 թվականը (էջ 56):

Բժշկապետ Ամիրդովլաթն իր ծննդյան թվականը հայտնել է իր «Անգիտաց անպէտ»-ի հիշատակարանի չափածո քառյակում.

«Ձորս տարի տիւ և գիշեր աշխատեցայ,
 Ի բազում օրինակաց արարի զսա...
 Ես բժիշկ Ամիրդովլաթ, հայրս՝ Եղիայ,
 Որ ծնեալ եմ ի քաղաքն Ամասիայ,
 Հայոց թվականըն լմնայ...»³:

Ամիրդովլաթի ծածկագիր լմնայ թվականը վերծանվում է. $Լ(30) + Մ(200) + Ն(400) + Ա(1) + Յ(300) + 551$ (հայկական թվականի

¹ Հ. Տաշյան, Յուզակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Միթ-թարյանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 765:

² Ա. արքեպիսկ. Մյուրմեյան, Մայր ցուրակ հայերեն ձեռագրաց Հալեպի և Անթիլիասի ու մասնավորաց, Հալեպ, 1936, էջ 57:

³ Ամիրդովլաթ, Անգիտաց անպէտ (հիշատակարանի վերջում):

տարբերությունը) = 1482 թ. — այդ թվականին է ծնվել Ամիրդով-լաթը:

Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 1864 ձեռագրի հիշատակագիրը իր ընդօրինակած ձեռագրի թվականն է համարում «նալ է զի եկալ», այսինքն՝ Ն(400) + Ա(1) + Յ(300) + Է(7) + զ(6) + Ի(20) + Ե(5) + Կ(60) + Ա(1) + Յ(300) + 551 (հայկական թվականի տարբերությունը) = 1651 թ.: Ձեռագրի գրչության ժամանակն է ուրեմն 1656 թվականը¹:

Ալեքսան երեցը իր ձեռագրի թվականը հիշում է հետևյալ ծածկագրով. «Ի թվականիս մեր Հարկազնեայ, որ պատահեցաւ անուն Աճնայ...»: Թվականը ծածկագրված է «Աննայ» բառի տակ որը վերծանվում է. Ա(1) + Ն(400) + Ն(400) + Ա(1) + Յ(300) + 551 = 1653 թ.: Այսպիսով, Ալեքսան երեցի ձեռագրի գրչության թվականն է 1653²:

Եղիա գրիչը իր չափածո հիշատակարանում գրչության թվականի մասին գրում է.

«Տրամարանութիւնս աւարտեցի,
Վատ ձեռամբս, Եղիալ գպրի,
Ի թիպն ՆՈՃԼԵ, ամսոյն արէի,
Սխալանազրացս իմ ամօթալի,
Ձեր ոտից հող և փոշի»³:

ՆՈՃԼԵ թվականը հավասար է՝ Ն(400) + Ո(600) + Ժ(100) + Լ(30) + Ե(5) + 551 = 1686 թ.: Ձեռագիրը, ուրեմն, գրված է 1686 թվականին:

Ղալաթիալի Մատենադարանի № 262 ձեռագրի գրիչը իր ձեռագրի գրչության ժամանակը լայտնում է հետևյալ չափածո հիշատակարանում.

«Գրեցաւ այս ըռամգիրքըս
Ձեռամբ մեղօք մրափեալ տղմիս,
Պաղվանդ (?) անուամբ ոչընչիս:
Արա ի թիւ ՂՆՈՃԷ բառիս,
Ինն տասին աւարտ լինիս
Ազգ Արամեան թուականիս»⁴:

¹ ՀԳՄ ձեռ. № 1864, թ. 425ա:

² Սարգիսյան, Ձեռ. ցուցակ, Ա հատ., էջ 302:

³ ՀԳՄ ձեռ. № 2311, թ. 175բ:

⁴ Բ. վրդ. Կյուլիսեբյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց հայոց ի Ղալաթիա (անտիպ), էջ 1426:

Այստեղ թվականը ծածկագրված է ՉՆՈՃԷ՝ բառի տակ, որը պիտի վերծանեն՝ $2(8) + 3(400) + 0(600) + 3(100) + 7(7) + 6(19) = 1683$: Ձեռագիրը, ուրեմն, գրված է 1683 թվականին:

Եվրոպայի մասնավոր անձանց սեփականությունը կազմող մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք.

«Ո՛վ ընթերցողք քաղցրաբարբառ,
Եւ նըւագողք մըտօք պայծառ,
Թիւն Հայոց է յոյժ պատկառ,
Որ ի ստորե գըրի երկբառ:
Հաւ համարեա և ի միտ ան,
Չներքոյգրեալ լետին գիր քառ,
Մուտ ի յայգիս ով գերափառ,
Կըթեա սիրով դու ձ. ծառ»¹:

Հիշատակագրության թվականն է ձ. ծառ, որ վերծանվում է $3(100) + 5(50) + 1(1) + 0(1000) + 551$ (հայկական թվականի տարբերությունը) = 1702 թ.:

Հետաքրքիր թվական ծածկագիր է պահել Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 545 ձեռագրի գրիչն իր չափածօ հիշատակարանում, որը բերում ենք ստորև առանձին հատվածներով և տալիս նրա վերծանությունը.

«Զթուական այսպէս արայ.
Անուն նախնուն կրկնապատկեա.
Ըստ նոյն չափուն առ նա դասեա,
Քառ յորեւեան ընդ մու, հարիւրեայ.
Վերաբերեալ ի նոյն յարեա.
Ի ծայրալիր գլխոյ նորա,
Ութն կրկին ի բաց ձգեա.
Զբոլորն առեալ քեզ հոտոտեա,
Իսկ նա իսկոյն թիւ բաղկանայ» (թ. 174ա):

Գրիչը «նախնուն անուն» ասելով նկատի ունի Հայկ Նահապետի անունը՝ $2(70) + 1(1) + 3(300) + 4(60) = 431$ -ի: «Ըստ նոյն չափու առ նա դասեա», այսինքն՝ նույն թիվը կրկինի՝ $431 + 431 = 862$, «Քառ յորեւեան ընդ մու հարիւրեայ», այսինքն՝ ավելացրու 4 հո-

¹ Արտավազդ արքեպիսկ. Սյուրմեյան. Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Եվրոպայի մասնավոր հավաքումներու, հատոր Ա, Փարիզ, 1950, էջ 72:

բելլան (հորբելլանը 50 տարի է) և մեկ հարյուր՝ $862 + (4 \times 50) + 101 = 1163$, «Ուլթն կրկին ի բաց ձգեա՛» $1163 - 16 = 1147$: Ուրեմն՝ ձեռագիրը գրված է 1147 թվականին:

«Մի բարկանար իմ սիրելի.

Ըզըժվարալուր բան թուականիս.

Պատրաստ սեղան քեզ սիրելոյդ ի ֆոխոյ» (թ. 174ա):

Ուզում է ասել, որ պատրաստ գումարգիր թվականը «ի ճառիգա»-ն է՝ $Ի(20) + Ծ(100) + Ռ(1000) + Ի(20) + Զ(6) + Ա(1) = 1147$ թվականի:

«Ի լայս հանդէս դու յառաջեա,

Իմաստութեամբ քով ոգորեա.

Մարտիկ ընտիր զքեզ կազմեա,

Խրախուսամբ զձիդ մտրակեա

Երանանեակն ուղիդ պնդեա.

Իբրև զքաջ զմահ ըն[ճ]եա,

Սաստիկ գանիւ զնահ ծեծեա.

Զանունն առեալ շարադասեա,

Բաբունորէն զա[յ]ն կրկնեա,

Վեցհարիւրիւ վերջնալանգեա

Երկու կըրկին և ընդ մուիւ,

Ընդ նոյն յարեալ միաւորեա» (թ. 174ա):

Այս բանաստեղծութիւն մեջ թվականը ծածկագրված է «մահ» բառի տակ՝ $Մ(200) + Ա(1) + Լ(70) = 271$: Բաբունորէն զայն կրկնեա՝ $271 + 271 = 542$: «Վեցհարիւրիւ վերջնալանգեա», այսինքն՝ $542 + 600 = 1142$: «Երկու կրկին և ընդ մուիւ... միաւորեա»՝ $1142 + 2 + 1 = 1147$:

«Պահակ թվոյ մեծին Հայկալ.

Նա անպակաս իսկ բաղկանայ,

է հաւաստի ի ֆառիզ իմա.

Քեզ իմաստնոյդ վարդ հոտոտեա» (թ. 174ա):

Թվականը ծածկագրված է «ի ճառիգա»-ի տակ՝ $Ի(20) + Ծ(100) + Ա(1) + Ռ(1000) + Ի(20) + Զ(6) = 1147$:

«Ի քննութիւն սորա դու մուտ.

Ո՛վ ճոխաբան ներկուռ հմուտ.

Մատնեա ի ձեռս ծասկող լեզւոյդ.

Եթէ իցես ճարտար բրուտ.

Եզն այս անուն միայն յատուկ.

Կրկնապատկեա զքանիքն ստոյգն.
Միրեա եղբայր այս արուեստուկ.
Զի է գրօսան մտավարժողդ.
Բամեա զբոլորըն խրատողդ.
Յաւել ի դա եռ հարիւրուկ.
Ուստի գտցես Հայկեան թվուկ.
Ունլով պակաս քսան և հինգն»:

Այստեղ ծածկագրված է «եզն»՝ $5(5) + 2(6) + 5(400) = 411$
Այնուհետև առաջարկում է կրկնապատկել՝ $411 \cdot 2 = 822$ և ավելացնել «եռ հարիւրուկ»՝ $822 + 300 = 1122$: Դրան գումարած «պակաս քսան և հինգն», հավասար կլինի՝ $1122 + 25 = 1147$:

«Պատրաստ սեղան քեզ սիրելւոյդ.
Ի ճառիզ ասի համայն լատուկ.
Էացուցչի սոյն այս տաղուկ.
Պատմի անուն գլուխ գրոյսդ»:

Թվականը ծածկագրված է «ի ճառիզ»-ի տակ՝ $1(20) + 2(100) + 1(1) + 1(1000) + 1(20) + 2(6) = 1147$:

Այսպիսով, գրիչը 7 տարբերակներով ծածկագրել է 1147 թվականը:

Նման մի ծածկագիր թվական սլարոնակող հիշատակարան պահել է Ղալաթիայի ձևագրերից մեկը, որը բերված է Բ. վրդ-հյուլեսերյանի ցուցակում (բերում ենք կրճատումով).

«Չափ չափելեաց միջին վալրից ստորին կենի.
Որպէս ի հայս բաղչան եղեղեալ մեք եզ պահի.

.....

Ի հայկազեան Պ. եակ, վեց յոթելեան ընդ երիւք վեցեակ.

Եթէ առցես համաքատակ հայկանս թվոյ լինի քանակ:

Ըստ քանակի աւուրց հաշուոյ հայոց թվական.

Մու հազարեակ Բ յոթելիւք, երիւք վեցեան:

Չայսքան հաշուեա իմաստնական Ի յոթելեան, տասնիւք տասան.

Ընդիքտոնն համարական, երիւք լինի մեծ թվական...»¹:

Ծածկագրված առաջին թվականը «մէթ էդ պահի»-ն է $1(200) + 2(7) + 3(9) + 2(7) + 1(4) + 1(800) + 1(1) + 1(70) + 1(20) = 1118$: Ծածկագրված երկրորդ թվականն է՝ «Պ. եակ»՝ 800: Դրան

¹ Բ. վ. հյուլեսերյան, Ղալաթիայի ձեռ. ցուց. № 18, Թ. 268բ:

գումարած վեց հոբելյան՝ $800 + 6 \times 50 = 1100$: Վրան ավելացրած երեք վեցեակ՝ $1100 + 3 \times 6 = 1118$: Երրորդ ծածկագրված թվականն է՝ «մու հազարեակ»՝ 1000, վրան ավելացրած «Բ լոբելիան»՝ $1000 + 2 \times 50 = 1100$ և «երիւք վեցեան»՝ $1100 + 3 \times 6 = 1118$, Չորրորդ ծածկագրված թվականն է՝ «Ե լոբելիան»՝ $20 \times 50 = 1000$. գումարած «տասնիւք տասան»՝ $1000 + 100 = 1100$, ավելացրած մի ընդիքտոն և երեք՝ $1100 + 15 + 3 = 1118$:

Չորս տեսակ տարբեր ծածկագրով գաղտնագրված է 1118 թվականը:

Կան նման կարգի բազմաթիվ ծածկագրեր, որոնք ավելորդ ենք համարում մեջբերել:

Ձեռագրերում երբեմն պատահում են ավելի պարզ թվագումար ծածկագրեր: Այսպես, Հայկական ՍՍՌ Գետական Մատենադարանի № 8636 ձեռագրի հիշատակարանում (թ. 108բ) ասված է, «Ե թուխ Ն.Ն.Ճ.Ճ.Մ.Մ.Ժ.Ժ.Ե.Ե.Գ.Գ. գրեցաւ ձեռամբ լոգնամեղ Գրիգորի Երևանցւոյ»¹: Վերծանվում է. $\bar{ն}(400) + \bar{ն}(400) + \bar{ճ}(100) + \bar{ճ}(100) + \bar{Մ}(50) + \bar{Մ}(50) + \bar{Ժ}(10) + \bar{Ժ}(10) + \bar{Ե}(5) + \bar{Ե}(5) + \bar{Գ}(3) + \bar{Գ}(3) + 551 = 1687$ թ.: Ձեռագիրը գրվել է 1687 թվականին:

24. ԱՆՌԻՆՆԵՐԻ ԾԱԾԿԱԳԻՐ ԱՌԵՂԾՎԱԾՆԵՐ

Ամենապարզ ծածկագրերից է այս. տրվում է ծածկագրված անվան տառերի թիվը, նրանց թվական գումարը և երբեմն նաև՝ առաջին ու վերջին տառերը:

Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 371 ձեռագիր ստացողն իր անունը ծածկագրել է ստորև բերված չափածո տաղում.

«Ըզլետնեալ ստացող սորին,
Որ եօթն տառիւ բաղադրին,
Գիմն նախկին, նաև լիւնն վերջին,
Շարագուգեալ անուն կոչին,
Հինգ հազար թուով լորջողին,
Բաղադրեալ ընդ վաթսուն երեքին»:²

Ծածկագրված է «Գարրիէլ» անունը, որը բաղկացած է իրաք լոթ տառից, սկզբնատառը «Գ»-ն է, վերջինը՝ «լ»-ն, և տառերի թվական գումարը հավասար է 5063-ի:

¹ ՀԳՄ № 8636, ք. 108բ:

² Գոգարյանի ձեռ. ցուցակ, Գ, էջ 30:

Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 4163 ձեռագրի (1435 թ.) գրիչն իր անունը հայտնում է հետևյալ ոտանավոր հիշատակարանով.

«Ես անպիտան գժող սորին,
Որ վեց տառիւ անունս կոչին՝
Գիճն առաջին ու ըէն վերջին,
Որ համարով վերաբերին՝
Տասըն հազար բոլորովին,
Եւ վեց հարիւր քսան ու վեցին:
Որք միտս ունին նա հաւանին,
Եւ որք չունին՝ նա շիւարին»¹:

Գրչի անունը Գրիգոր է. «Գ»-ն՝ բառի առջևում և «ը»-ն՝ վերջում, բառը բաղկացած է 6 տառից, իսկ անվան տառերի թվական գումարը հավասար է տասը հազար վեց հարիւր քսան և վեցի— $Գ(3) + Բ(5.000) + Ի(20) + Գ(3) + Ո(600) + 5.000 = 10.626$ »:

Աստվածատուր գրիչը նույն ձեռագրում Գրիգոր անունը ծածկագրել է հետևյալ կերպ.

«Ծաղիկ մի տեսի նա վարդագոյն էր,
Բայց տերեւն վեց՝ որ գոյնըզգոյն էր.
Տեսիեամբ գեղեցիկ որպէս նունուֆէր,
Հոտով քաղցր և սուրբ, բոգիրդ նման էր:
Արդ՝ հաշիւն ասեմ որ և քաջ գիտես,
Խնդրողաց ըզսա ըստուգիւ լալտնես,
Վասն այն որոնեցի՝ ժ.ն հազար ես,
Առեալ «ոն», լինին, «զա» լին ինձ ասես»²:

«Ծաղիկ մի տեսի» ասելով գրիչը նկատի ունի ծածկագրվող մարդու երիտասարդ լինելը, «բայց տերեւն վեց», այսինքն՝ անվան տառերը վեց են, «որ գոյնըզգոյն էր»՝ այսինքն՝ անվան տառերը իրար նման չեն, «բոգիրդ նման էր»՝ առաջին բառը Գրիգոր անվան շրջված ձևն է որպես ծածկագրութուն: Ինչ վերաբերում է երկրորդ քառյակին, ապա այդտեղ հայտնված է ծածկագրված անվան թվական գումարը՝ «տասը հազար»՝ վրան ավելացրած «ոն», լինին, զայլին», այսինքն՝ $10.000 + 600 + 20 + 6 = 10.626$ որը և համապատասխանում է Գրիգոր անվան թվագումարին՝ $Գ(3)Բ(5.000) + Ի(20) + Գ(3) + Ո(600) + Բ(5.000) = 10.626$:

¹ ՀԳՄ ձեռ. № 4163, թ. 183ա:

² ՀԳՄ ձեռ. № 2190, թ. 13ա:

Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 2190 ձեռագրի ընդօրինակող Աստվածատուր գրիչն իր ուսուցչի անունը հայտնում է առեղծված՝ ծածկագրութլամբ.

«Այլ և ստացող այս սուղ զըրի,
 Որ վեց տառիք անուն կոչի,
 Նուն առաջին և սէն է վերջին,
 Որ համարով վերաբերին՝
 Յինն հազար թվով իլի,
 Այլ և նու ժէ բեն աւելի,
 Այսքան թիւս որ շարաբարթի՝
 Լինի անունն վարդապետի»¹:

Ծածկագրված անունը ներսէս է. բաղկացած է 6 տառից, «ն»-ն առջևում է «ս»-ն՝ վերջում, իսկ անվան տառերի թվական գումարը հավասար է ինը հազար և ճու ժէ բէն»-ի, այսինքն՝ ինը հազար + ն(400) + ժ(10) + 2 = 9412, իսկ այդ հավասար է. ն(400) + ե(5) + Ր(5.000) + Ս(2.000) + է(7) + Ս(2.000) = 9.412:

25. ԱԿՐՈՍՏԻՔՈՍՆԵՐ (ԾԱՅՐԱՆՈՒՆՆԵՐ)

Անչափ շատ են ակրոստիքոսով ծածկագրվող անունները: Տաղերի և գանձերի զգալի մասի հեղինակների անունները ծածկագրված են ակրոստիքոսով: Ըստ որում, պատահում են երեք տեսակի ակրոստիքոսներ՝ ա) ծածկագրվում է տողի առաջին բառի առաջին տառով, բ) տողի միջին բառի վերջին տառով և գ) տողի վերջին բառի վերջին տառով: Որպես նմուշ այստեղ մենք բերում ենք Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 2370 ձեռագրի չափածո հիշատակարանը, ուր միաժամանակ գործ է ածվել չորս տեսակի ակրոստիքոս.

«Ֆանկամ գոյով նիազ
 Աներբ և յարակա
 Մահանք ոլզոյս բաղձայ
 Ապենիազդ գալցես
 Եքթեալ լարոսագերբ
 Ըսփոփեալ պալարեա

Վասամբքս մանրախիտ
 որակիդ բնաւի
 Երքողեալ ըղձիւ
 ունայնիս խնդիւ
 զմիգացեալիս հոգի
 որ բնաւից ես գոլալ

¹ ՀԳՄ ձեռ. № 2190, Բ. 13ա:

Սալարեալս բալիստրէն	ճըշդեհեալս ի կենաց
Ռոնեալ տածեսցես	տըրոհեալս յերամո
Ղաբանոսք ներհունի	մատուակք ոգո
Ի իծելոյս՝ տուք երազ	առիթ կենաց ձիւ
Սւթոց ոգոց ծրած	բախարար տառիդ
Պենտեգօիւ ի ծարի	թըւարերն առածի» ¹ :

Ակրոստիքոսը վերծանելու համար անհրաժեշտ է սկսել տողի առաջին բառերի սկզբնատառերից՝ բարձրանալով ներքևից վերև, շարունակել միջին բառերի վերջացող տառերից՝ իջնելով վերևից ներքև, ապա անցնել հաջորդ միջին բառի սկզբնատառերին՝ վերևից ներքև և վերջացնել վերջին բառերի վերջնատառերով՝ վերևից ներքև: Ակրոստիքոսը վերծանվում է. «Պաւղոսըն ասաց զայս բանս ի գծի մոնոզոն (այսինքն՝ արեղա) տմարթ Տիւրիկցո որդի»:


Բերված տեքստի վերջին բառը՝ «առածի» — գումարգիր ծածկագիր է, որ վերծանվում է $Ա(1) + Ռ(1.000) + Ա(1) + Մ(50) + Ի(20) + 551 = 1623$ թ.:

Ճիշտ այս խմբին է պատկանում Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 3082 ձեռագրի ազրոստիկոսը, ուր Գևորգ պատանու Գրիգոր վարդապետին նվիրած բանաստեղծության տողերի առաջին և վերջին տառերից կազմված ակրոստիքոսում հետևյալն է ծածկագրված. «Գեորգ պատանին Է գրեաց Գրիգորի վարդապետին»²:

Չենք ուզում շարունակել օրինակները, որոնք որքան ուզես, կարելի է գտնել միջնադարյան չափածո գրականության մեջ:

¹ ՀԳՄ ձեռ. № 2370, Թ. 308բ:

² ՀԳՄ ձեռ. № 3082, Թ. 474բ—475ա:



ԳՆՈՒՆ ՏԱՄՆԵՐՈՐԴ



ՏԱՐԵԹՎԵՐԻ, ԱՄՍԱԹՎԵՐԻ ԵՎ ՕՐԵՐԻ
ՀԱՇՎՈՒՄՆԵՐԸ

ոմարական գիտությունը սերտորեն կապված է եղել հայ գրչության հետ: Միջնադարյան հայ մատենագրության մեջ և վիճակյան արձանագրություններում հաճախ են պատահում օրերի, ամսաթվերի, թվականների և ժամանակի այլ չափումներ, որոնք ներկա անուններով և հաշվումներով չեն, ուստի անհրաժեշտ է ծանոթ լինել նրանց վերծանության հիմնական սկզբունքների հետ:

Հայ մատենագրության մեջ «տոմար» է կոչվել այն գիտությունը, որը խնդիր է ունեցել զբաղվել ժամանակի չափումներով: Նա սերտորեն կապված է աստղաբաշխության հետ, որովհետև ժամանակի հասկացողությունն ինքնին կապված է արեգակի և լուսնի շարժումների հետ:

Ժամանակի չափումների նախնական հասկացողությունը մարդկանց մոտ առաջացել է այն ժամանակ, երբ նախամարդն առաջին անգամ ոտք է դրել համեմատաբար իր զարգացման գիտակցական շրջանը, հիմք է դրել իր տնտեսությանը և զբաղվել անասնապահությամբ ու հողագործությամբ: Հայտնի է, որ նախնական թափառողիկ և կիսավարկների մարդը դեռ ոչ մի պատկերացում չի ունեցել ոչ ժամանակի և ոչ էլ նրա չափումների մասին:

Իր պատմության արշալույսը ոտք դրած նախամարդու առաջին ժամանակի չափանիշը—ցերեկն ու գիշերն են հանդիսացել:

իրար հաջորդող աշխատանքային ցերեկը և հանգստի գիշերը, փաստորեն, նախամարդու առաջին օրացույցն է եղել:

Ջարգացման փոքր-ինչ բարձր շրջանում մարդիկ սկսել են ժամանակը չափել ըստ լուսնի փուլերի. տեսնելով լուսնի նորելու և կլորելու հաջորդական ֆազերը, լուսինն են վերցրել հիմք և նրանով չափել ժամանակը: Ենթադրություններ են եղել այն մասին, որ լուսնական ամիսները որոշ ժամանակաշրջանում գործ են ածվել տարեթվի նշանակությունում¹: Որպես փաստ մատնացույց են արվում Աստվածաշնչում հիշված հրեական նահապետների տարեթվերը: Այսպես օրինակ, ըստ Աստվածաշնչի, Սեթն ապրել է 912 տարի, Ենոքը՝ 905 տարի, Մադադիելը՝ 895 տարի և այլն²: Եթե ընդունենք, որ այս տարեթվերը հիմնված են լուսնական ամիսների վրա, ապա Սեթն ապրած կլինի ոչ թե 912 տարի, այլ՝ 76, Ենոքը՝ ոչ թե 905 տարի, այլ՝ 75, Մադադիելը՝ ոչ թե 895 տարի, այլ՝ 74 և այլն:

Ընդհանրապես սխալ է գոյություն ունեցող այն կարծիքը, որ իբր հնում մարդիկ ավելի երկարակյաց են եղել: Այդ սխալն, անշուշտ, առաջացել է տոմարական սխալ հաշվումների հետևանքով:

Ժամանակի ընթացքում լուսնական այս տարիները մարդիկ սկսել են կապել տարվա եղանակների հետ՝ տարեմուտ ընդունելով դարնանամուտը և թվարկելով լուսիններն ըստ հաջորդականությունից ամիսների անունները տալու: Այս մասին շատ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում V|I դարի հայ ականավոր մաթեմատիկոս և տոմարագետ Անանիա Շիրակացին: «Ամիսների անունները,—գրում է նա,—սկզբում չկային. գարնանամտից սկսվող լուսինն անվանում էին առաջին լուսին, նրանից հետո եկողները՝ երկրորդ, երրորդ, չորրորդ և այսպես հաջորդաբար շարունակում մինչև 12-րդ լուսին և ամբողջ տարին այսպես ընթանում է մինչև գարնանամուտ»³:

Լուսնական տասներկու ամիսների վրա ստեղծված տարին, արեգակնային աստղաբաշխական ճիշտ տարուց պակաս է մոտ 11 օր. ճշգրիտ հաշվումներով լուսնական տարին ունի 354 օր, 8 ժամ, 48 րոպե, 34 վայրկյան, իսկ արեգակնային տարին՝ 365 օր, 5 ժամ, 4րոպե և 46 վայրկյան տևողություն:

¹ Գրոֆ. Լ. Սեմյոնով, Ամանոր («Էջմիածին», 1963, № 1, էջ 26):

² «Մնունք», գլ. Ծ, 6—17:

³ Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, Երևան, 1940, էջ 76:

Արեգակնային և լուսնական տարիների այս տարբերությունն առաջին անգամ նկատել են Եգիպտոսի աստղաբաշխները, որոնք խնդիր ունեին պարզելու Նեղոսի վարարման ճիշտ ժամանակը, որը տեղի էր ունենում Սիրուս փայլուն աստղի առավոտյան լուսաբացին երկնակամարում երևալու հետ: Այդ լինում էր ամառնամուտին՝ հունիսի 21-ի երեկոյան: Այդ գիշերը կոչվում էր «Արցունքի գիշեր», որովհետև ըստ եգիպտական ավանդության, Իզիդա աստվածուհին այդ գիշեր արտասվում էր, արցունքն ընկնում էր Նեղոս գետի մեջ և առաջ բերում մակընթացություն. Նեղոսը վարարում էր և Եգիպտոս բերում բարեբեր տիղմը:

Եգիպտական տոմարագետներին հաջողվեց առաջին անգամ կազմել իրենց ժամանակի արեգակնային ճշտված տոմարը¹:

Արեգակնային և լուսնական տարիների գաղափարն առաջանալուց հետո, բնական է, պիտի առաջանար և առաջանում է նրա սիստեմատիկ հաշվումների անհրաժեշտությունը — ժամանակագրությունը: Հասկանալի է, որ առանց թվերի և թվականների չէր կարելի ոչ ժամանակը չափել և ոչ էլ անցյալի ժամանակագրությունը վերհիշել: Արդարացի է պատմահայր Պորենացու այն դիտողությունը, թե՛ «Ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան»²:

Անհրաժեշտ է, սակայն, նկատել, որ հնում թվականների հաշվումները սկսվել են ոչ թե միալար թվականի ձևով, ինչպես այժմ է, այլ գահակալող թագավորների, փարավոնների և այլ քաղաքական աչքի ընկնող անձնավորությունների գահակալության տարիներով: Այդ սկզբունքով են առաջնորդվել հին հայկական բոլոր պատմիչները: Օրինակ, ըստ Պորենացու՝ հայոց ինսուրով թագավորը գահ է բարձրացել պարսկական Որմիզդ թագավորի երկրորդ տարին և Կոստանդին կայսեր ութերորդ տարին: Ըստ Կորյունի, Սահակ Պարթևը մահացել է Հազկերտ թագավորի հինգերորդ տարին: Համաձայն Մովսես Կաղանկատվացու տեղեկության, Աղվանից Վաչագան թագավորը պարսկական բռնապետության դեմ ապստամբել է ինսուրով թագավորի քսանչորսերորդ և Հուստինիանոս կայսեր տասնչորսերորդ տարին և այլն: Այսպես են հաշվել թվականները հին հայկական բոլոր աղբյուրներում:

Հայկական տոմարի հետ կապված կարևոր հարցերից մեկը՝

¹ Н. Идельсон, История календаря, Л., 1925, էջ 49:

² Մովսես Կոստանդինացու Պատմութիւն Հայոց, էջ 224:

ամանորի, այսինքն՝ նոր տարվա հարցն է: Ինչպես հայտնի է, տարբեր ժողովուրդների տարբեր ամանոր են ունեցել: Ներկայումս մեր օգտագործած ամանորը՝ հունվարի 1-ը, հռոմեական է, որը ժամանակին ընդունել են շատ ժողովուրդներ, այդ թվում նաև հայերը:



Աստղաբաշխը երկնակամարն ուսումնասիրելիս:

Տոմարական տասմնասիրութուններից երևում է, որ հին հայկական հեթանոսական տարվա ամանորը եղել է գարնան ցիշերահավասարի օրը՝ մարտի 21-ը, որը նվիրված էր հայր աստծուն՝ Արամազդին¹: Այդ օրը ժողովուրդը ուրախութուն

¹ Այս մասին ուշագրավ է Հ. Ն. Ակինյանի «Հայոց եկեղեցական տա-
րին յոթներորդ դարու սկիզբ» վերնագրով հոդվածը, որը տպագրվել է
«Հանդես ամսօրեայ»-ի 1947 թվականի համարներում:

է անելիս եղել փողերի և թմբուկների նվագակցությամբ: Ամանորի տոնը կոչվելիս է եղել տոն «ամենաբեր պտղոց» (Ագաթանգեղոս): Ի դեպ, ամանորը մարտ ամսում տոնվելը երևում է հենց հայկական ամիսների անուկներից. այսպես, քաղոց ամիսը, որը հայկական ամսաթվերում հինգերորդն է, մարտից հետո ընկնում է հուլիս ամսում, ուր իրոք տեղի է ունենում հունձը:

Թե ե՞րբ է սկիզբ առել հայկական տոմարը, դժվար է ասել, աղբյուրները լուսմ են այդ մասին: Խորենացու մի տեղեկությունից գիտենք միայն, որ հայոց Արտաշես թագավորը (189—160 թթ.մ.թ.ա.) հատուկ ուշադրություն է դարձրել մի շարք գիտությունների զարգացման վրա, այդ թվում նաև սոմարական գիտություն վրա:

Տոմարագետներից ոմանց կարծիքով, հեթանոսական հայկական թվարկության սկիզբը կապված է եղել «Հայկ» կոչվող համաստեղություն ծագման հետ և սկիզբ է առել 2494 թվականին մեր թվականությունից առաջ: Պրոֆ. Լ. Սեմյոնովը, անդրադառնալով հին հայկական տոմարի սկզբնավորության հարցին, գրում է. «Երկնակամարի ամենագեղեցիկ համաստեղությունը, որը շատ ուրիշ ազգերի կողմից անվանվում է Օրիոնի համաստեղություն, նվիրված էր հայ առասպելական նախահայր և հերոս Հայկին և այդ համաստեղությունը կոչվում էր «Հայկ»: Այդ համաստեղությունը շատ մոտ էր գտնվում Մեծ Շուն համաստեղությանը, որի գլխավոր աստղը Սիրուսը կամ Սոթիսն է: Եվ եթե առաջին հազարամյակում մեր թվականությունից առաջ Սոթիսի հելիոտիկ ժազումը տեղի էր ունենում հուլիսի 19-ին, ապա նույնը Հայկի համաստեղության համար տեղի էր ունենում օգոստոսի 11-ին»¹:

Ավանդաբար հին հայկական այդ թվականի հետ են կապում Հայկի՝ Բելին սպանելու առասպելը:

Հին հայկական տոմարական տարին նմանվում էր ճիշտ եգիպտականին, որը բաղկացած էր 13 ամիսներից՝ 12-ը 30-ական օրով, իսկ մեկը, վերջին ամիսը՝ 5 օրով (վերջին հավելյալ 5 օրը հունիսը կոչում էին «էպագոմեն»): Ամսաթվերի այսպիսի հաշվումն անհամեմատ ավելի պարզ էր, քան ներկայիս գործածական հոմեականը, որի ամիսները ունեն տարբեր թվով օրեր՝ 28, 29, 30 և 31:

¹ Լ. Սեմյոնով, Հայկական տոմարի մի քանի հարցերի մասին (տես «Հայկական ՍՍԻ Գետ. Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու», հատ. Կ, 1944, էջ 113):

Շատ հետաքրքիր ձևով էին հաշվում նաև նահանջը՝ չորս տարվա ընթացքում 6 ժամերից ստեղծված հավելյալ օրը, որ մենք այժմ ավելացնում ենք փետրվարի վրա և, 28 հաշվելու փոխարեն, հաշվում 29, եզրիպտական տոմարում թողնում էին, որ այդ նահանջի օրերը 1460 թվականի ընթացքում կուտակվեն այնքան, որ կազմեն մի ամբողջ տարի, և ավելամուտ այդ տարին, որը կոչվում էր «աստվածային տարի», «մեծ տարի» կամ «շնական տարի», դուրս էին նետում թվականից:

Հայկական տոմարի պատմության լավագույն մասնագետ պրոֆ. Լ. Սեմյոնովը կարծում է, որ տոմարական նման սխտեմով են առաջնորդվել նաև հայերը: Նրա կարծիքով, հին հայկական հեթանոսական թվականը սկսել է 2494 թվականին մեր ներկա թվականից առաջ, և 1460 տարիների առաջին շրջանը բոլորվել էր 1034 թվականին (մ. թ. ա.): 1460 տարիների երկրորդ շրջանը վերջացել է մեր թվականության 428 թվականին, երբ նահանջ մի տարի ևս դուրս է նետվել: Երրորդ շրջանը վերջացել է 1888 թվականին:

Ուշադրության արժանի է այն, որ անուններ են ունեցել, եզրիպտական տոմարի նման, ոչ միայն առանձին ամիսները, այլև ամիսների 30 օրերը: Հայկական ամիսների օրերի անունները, բարեբախտաբար, հասել են մեզ: Ստորև բերում ենք այդ ցանկը.

1 Արեգ	11 Երևզկան	21 Գրգոռ
2 Հրանդ	12 Անի	22 Կորզի
3 Արամ	13 Պարլսար	23 Ծմակ
4 Մարգար	14 Վանատ	24 Լուսնակ
5 Ահրանք	15 Արամազդ	25 Ցրոն
6 Մազդեղ	16 Մանի	26 Նպատ
7 Աստղիկ	17 Ասակ	27 Վահագն
8 Միհր	18 Մասիս	28 Սևին
9 Զոպաբեր	19 Անահիտ	29 Վարազ
10 Մուրց	20 Արագած	30 Գիշերավար ¹

Ուշադրության արժանի է այն, որ թվարկված ամսանունների մեջ կան հայկական հեթանոսական մեզ հայտնի անունների մեծ

¹ «Հայկական աշխարհ» օրաթիվ, 1868, էջ 261:

մասը՝ Արամազդ, Վահագն, Աստղիկ, Անահիտ և այլն: Անուններին մի մասը հայկական խոշոր լեռների անուններն են: Հավանական է, հին Հայաստանում ամսօրերից ամեն մեկը նվիրված էր պաշտվող մի աստծու կամ մի սրբության:

Հին հայկական տոմարում իրենց անուններն ունեին նաև օրվա 24 ժամերը: Դրանք են.

Գիշերային ժամերը

Ցերեկային ժամերը

1 Պաւարային	7 Հաւթափեալն	13 Ալցն	19 Շանթակալն
2 Աղջամուղջն	8 Գիսակն	14 Ծայգն	20 Հրակաթն
3 Մթացեալն	9 Լուսաճնն	15 Զօրացեալն	21 Հուրթափեալն
4 Շաղաւտոն	10 Առաւօտն	16 Ճառագայթեալն	22 Քաղանթեալն
5 Կամաւտոն	11 Լուսափայլն	17 Շառաւիղեալն	23 Առափարն
6 Բաւականն	12 Փայլածուն	18 Երկարատեսն	24 Առփողն



Չվարթնոցի արեգակի ժամացույցը, VII դարից:

Այժմ ծանոթանանք հայ մատենագրության մեջ գործածվող թվականներին և նրանց հաշվումներին:

Հայ մատենագրության մեջ գործածվող թվականներից հնագույնը արարչության կոչվող թվականներն են: Ավանդական այս թվականները հայ գրականության մեջ հիշվում են տարբեր անուններով՝ «Թուականութիւն Ադամայ», «Թուական լեւանելոյ Ադամայ ի դրախտէն», «Ժամանակ սկզբանց արարչութեան» և այլն:

Արարչության այս թվականները մի քանի տասնյակ տարբեր հաշվումներ ունեն: Հովհաննես Իմաստասերն իր «Մեկնութիւն տոմարիս Հայկազնեայ» աշխատության մեջ անդրադառնալով թվականների այս ասարելությանը, գտնում է, որ թեպէս շատ տոմարագետներ են զբաղվել արարչության թվականի ճշտումով, սակայն դրանք բոլորն էլ ենթադրություններ են, որովհետեւ Մարդկանցից ոչ ոք կարող է իմանալ արարչության ժամանակը¹:

Հայ մատենագրության մեջ արարչության թվականներից, հիմնականում, գործ են ածվել միայն հինգը՝ կայսերական, լոթանասնից, Շիրակացու, աղեքսանդրյան և հրեական: Կանգ առնենք նրանց վրա առանձին-առանձին և բերենք որոշ օրինակներ.

ԱՐԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՐԱԿԱՆ ԹՎԱԿԱՆ

Այս թվականը կոչվում է նաև Կոստանդնուպոլսի կամ Բյուզանդական: Գործ է ածվել գլխավորապես Բյուզանդական կայսրության մեջ կամ նրա հետ կուլտուրական մոտիկ հարաբարության մեջ գտնվող երկրներում: Այս թվականի սկզբից մինչև մեր ներկա թվականը հաշվվում է 5508 տարի: Տարեմուտն սկսում է սեպտեմբերի 1-ից: Ի դեպ, մինչև 1700 թվականը Ռուսաստանում գործածվող պաշտոնական թվականն այս է եղել և գործածությունից դուրս է հանվել Պյոտր 1-ի՝ 1699 թվականի դեկտեմբերի 13-ի հրովարտակով ու գործածության մեջ դրվել մեր ներկա թվագրությունը²:

Սուրբատի եկեղեցական պատմությունը և Սեղբեստրոսի վարքը Փիլոն Տիրակացին թարգմանել է «Յամի վեց հազարերորդի երկերերորդի չորրորդի կենցաղումս անցաւորի, որպէս ունի ժամանակագրութիւն սուրբ Սոփի աւագ եկեղեցի տիեզերական մայրաքա-

¹ Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1957, էջ 164:

² Ա. В. Черепнин, Русская хронология, М-ва, 1937, էջ 24—33:

դաքին Կոստանդնուպալիսի»¹: Ըստ մեր վերև բերված հաշվի, Թարգմանութլունը կատարված է 696 թվականին (6204—5508—=696):

Դիոնիսիոս Արիսպագացու «Յաղագս եկեղեցական և երկնային քահանայութեան» աշխատութլունը Ստեփանոս Սյունեցին Թարգմանել և մեկնել է «Ի վեց հազարերորդի երկերիւրրորդի քսաներորդի ամի արարածոց աշխարհիս, ըստ յունարէն թուոյ ի չորեքտասաներորդի ընդիկտիսնին, յերկրորդ ամի թագաւորութեանն Փիլիպպոսի...»²: Թարգմանութլունը կատարվել է 712 թվականին (6220—5508=712): Փիլիպոս կայսեր երկրորդ տարին, իրոք, 712-ն է. նա գահակալել է 711 թվականին:

Սեբաստիայի ս. Նշան վանքի №2 ձեռագիրն ընդօրինակված է «...Ի թուիս յաւիտենից, որ է Ադամա(1)՝ ՅՊԻԱ (6821), և ըստ հայկազեան թուականի ԶԿԲ, յամսեանն յուլիսի ժԼ...»³: Ձեռագիրն ընդօրինակվել է 1313 թվականին (6821—5508=1313), որը համապատասխանում է հայկական ԶԿԲ թվականին (762+551—=1313):

ԱՐԱՐՉՈՒԹՅԱՆ ՅՈՒԱՆԱՍՆԻՅ ԹՎԱԿԱՆ

Ըստ յոթանասնից թվահաշվի, արարչութլունից մինչև մեր ներկա թվականի սկիզբը հաշվվում է 5200 տարի, իսկ քրիստոնեական հայկական տոմարով՝ 5198:

Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի №129 ձեռագրի ընդօրինակութլունն ավարտված է Թեոդուպոլսում «... լելիցն Ադամալ ի դրախտէն մինչև առ մեզ հազարաց վեցից և չորից հարիւրից, երեսուն յաւելիալ ամաւք: Իսկ ի ծագմանէ բանին Աստուծոյ՝ հազարի միոյ և երկուց հարիւրից, երեսուն և երկուս յաւելիալ ամաւք, եւ Հայկազնեան տումարիս՝ վեցից հարիւրից եւթանասուն և ինն ամաց...»⁴: Ձեռագիրը զրված է 1230 թվականին (6430—5200=1230): Նա համապատասխանում է հայկական թվականին (679+551=1230) և քրիստոնեական հայկական թվականին (1232—2=1230):

¹ Մ. վրդ. Տեր-Մովսեսյան, Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական պատմութիւն, Վաղարշապատ, 1897, էջ ԺԷ:

² Գարեգին Կաթողիկոս Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 53:

³ Լ. Պաշիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագիր հիշատակարաններ, էջ 96:

⁴ Բ. Սարգիսյան, Ցուցակ ձեռագրաց Մխիթարյանց, հատ. Ա, էջ 872:

Աստվածատուր վարդապետի թողած նամակից երևում է, որ նա Երուսաղեմ առաջնորդ է հրավիրվել «ՁՌ. երրորդի ութ ճ. երրորդի քառասներորդի և վեցերորդի արարածոց ի սկզբանէ աշխարհի, և Ռ. երրորդի ՉՃ. երրորդ և Խ. երրորդ է. երրորդի մարդանալոյն Աստուծոյ և փրկութեան աշխարհի, և Ռ. որդ Դ. որդ չորրորդի արեթական տոմարի և Հայկազեան թուականի բազմեցաք ի գահոյս... Ս. Աթոռոյս»¹: Այս հաշիվով, Աստվածատուր վարդապետը պատրիարքական գահ է բարձրացել 1645 թվականին (6846—5200=1646):

Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի մի ձեռագրում «Պատճառ սահմանաց գրոց» աշխատության թարգմանության թվականն է հիշված. «Յեկանելոյն Ադամայ ի դրախտէն մինչ ի լաւարտումն գրոցս էր թիւ ժամանակիս ՅՇԴ, զի լելանելոյն Ադամայ մինչ ի Քրիստոս էր ՌՃԼԸ, և ի ծննդենէն Քրիստոսի ՌՅԺՁ ամ, իսկ թվին մեծ Հայոց էր ՉԿԳ»²: Եթե այստեղ ուղղելու լինենք գրչական մի սխալ՝ ՅՇԴ-ն՝ ՅՇԺԴ ձևով, ապա բոլոր թվականները կհամապատասխանեն իրար. արարչության թվականը հավասար է 1314-ի (6514—5200=1314): Այս համապատասխանում է հայկական մեծ թվականին՝ ՉԿԳ-ին (763+551=1314): Նկատի ունենալով, որ հիշված քրիստոնեական թվականը հայկական հաշիվով է և պիտի հանենք 2 միավոր, այն ևս կհամապատասխանի արարչության լոթանասնից թվականին (1326—2=1324):

Օհաննես Թմոքվեցի գրիչը Արարատյան նահանգի Սերկելի գյուղում ընդօրինակած «Տոնական»-ի ավարտման թվականն է համարում «...ի թուաբերութեանս հայկազեան տաւմարի ՊՂԱ, և կենար(ար)ին փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌՆԽԴ, և լելանելոյն Ադամայ ի դրախտէն ՅՈՒԽԲ»³: Չեռագրի գրութւյան թվականն է 1442 (6642—5200=1442): Այս թվականը համապատասխանում է հայկական թվականին (891 + 551=1442): Հիշատակարանում զուգահեռ հիշվածը քրիստոնեական թվականն է, ուստի նրանից պետք է հանել 2 միավոր (1444—2=1442):

¹ Ն. Կպիսկ. Պողարյան, Ցուցակ ձեռագրաց Երուսաղեմի, հատ. Բ, էջ 151:

² Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 525:

³ Լ. Խաչիկյան, ԺԾ գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 531:

ԱՐԱՐՋՈՒԹՅԱՆ ԱՂԵՔՍԱՆԴՐՑԱՆ ԹՎԱԿԱՆ

Արարչության Աղեքսանդրյան թվականը կոչվում է նաև «Հինգհարյուրյակ» կամ «Հասլան» թվական այն պատճառով, որ սրա հեղինակը հանդիսացել է Հասս տոմարագետը, որը Աղեքսանդրիայում գումարված տոմարագետների ժողովի հանձնարարությամբ կազմել է 532 տարիների աղյուսակը: Այս թվականով, արարչությունից մինչև մեր ներկա թվականի սկիզբը, հաշվվում է 5423, իսկ քրիստոնեական հայկական թվականը՝ 5425 տարի:

Վենետիկյան Մխիթարյանների № 207 «Ճառընտիր»-ի գրչությունն ավարտված է եղել «...լեյանելոյն Աղամայ ի փառականցաղ գրատունն ամք ՋՌԷՃԿԶ և ի ծնընդենն կենարարին մերոյ ամք ՌԴՃԽԳ»¹: Արարչության թվականն այստեղ հիշված է Աղեքսանդրյան թվականով, ուստի՝ 6766—5425=1341, հետևապես ձեռագիրը գրված է այդ թվականին: Դրան համապատասխանում է քրիստոնեական թվականը՝ 2 թվանշանի հանումով՝ 1343—2=1341:

Բրիտանական թանգարանի հայկական բաժնի № 19 ձեռագիրը գրված է «... լԱղամայ մինչև ցայսր ամք ՅՁԿԷ, իսկ Հայկազեան թվականիս ՋՂԱ, և հոռմայեցոց մեծ թվականին ՌՄՂԴ, և շրջանն, որ է փոքր թվական՝ ՄԼ, ի լերկիրս Բզնունեաց, որ արիմ Խլաթ ասի»²: Այս հիշատակարանը անգլիերեն թարգմանությամբ հրատարակել է հայագետ Կոնիքերը, որը, սակայն, ծանոթ չլինելով թվականների վերծանության սկզբունքին, չի կարողացել վերծանել, ենթադրելով, թե տեքստն աղավաղված է և թվականները չեն համապատասխանում իրար³: Իրականում ոչ մի աղավաղում չկա, այստեղ Արարչության Աղեքսանդրյան թվականն է, ուստի պիտի հանել ոչ թե 5196, այլ 5425 (6967—5425=1542): Հայկական մեծ թվականը՝ 991+551=1542, հոռմեականը՝ 1294+248=1542, հոռմեական փոքր թվականը՝ 230+532+532+248=1542: Բոլոր թվականներն էլ համապատասխանում են իրար, հետևապես, ձեռագիրը գրված է 1542 թվականին:

¹ Հ. Բ. Մարգիսյան, Ցուցակ ձեռագրաց Վենետիկի Մխիթարյանց, հատ. Բ., էջ 174:

² F. C. Conybeare, A catalogue of the armenian manuscripts in the British museum, էջ 34:

³ Նույն տեղը, էջ 35:

Սարգիս գրիչը «Գործք առաքելոց»-ի ձեռագիրն ընդօրինակել է և... ի ժամանակաշար չափոյն հայկազեան ՉԿԳ, և ի կենարար լայտնութենէն աստուծոյ բանին առ մեզ ՌՅԺԶ, և լիանելոյն նախաստեղծիցն ի վայելչական վայրէն մինչև ցայժմ 82 և 1Թ՝, Ձեռագիրը գրված է 1314 թվականին. արարչության 6739—5425==1314, հայկական մեծ թվականի 763+551=1314, քրիստոնեական հայկական՝ 1316—2=1314: Ձեռագիրն, անվիճելի, գրված է մեր ներկա թվարկության 1314-ին:

Ստեփանոս գրիչը «Ճաշոց»-ը Սուրխաթում ընդօրինակել է և ավարտել «Ասքանագեան և Յարեթական տաւմարի ՊԻ, և ըստ նորում շրջանի ՄՁԷ, և ի գալստենէ կենարարին ՌՅՀԳ, և լիլիցն Աղամալ ի դրախտէն 82ԴԶ»¹: Այստեղ հիշված չորս թվականները ևս համապատասխանում են իրար, ձեռագիրը գրված է 1371 թվականին. արարչության աղեքսանդրյան թվականը՝ 6796—5425==1371: Հայկական մեծ թվականով 820+551=1371: Հայկական փոքր թվականով՝ 287+1084=1371: Հայկական քրիստոնեական թվականով՝ 1373—2=1371:

ԱՐԱՐՉՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԱՑՈՒ ԹՎԱԿԱՆ

Շիրակացու հաշվով արարչության սկզբից մինչև մեր ներկա թվականն անցել է 5281, իսկ քրիստոնեական հայկական թվականով՝ 5279 տարի:

Թադեոս գրչի Կաֆայում «Հարանց վարք»-ի ընդօրինակութլունն ավարտված է և... լԱղամալ 82ԺԱ ամի ըստ Անանիա վարդապետին Շիրակացու, և ի ծննդենէ կենարար փրկչին ... ՌՆԼԲ ամի... և թվին հայոց ըստ Աքեթական տումարի ՊՀԹ՝: Ձեռագիրն ընդօրինակված է 1430 թվականին (6711—5281=1430): Այս համապատասխանում է հայկական մեծ թվականի 879-ին (879+551=1430) և հայկական քրիստոնեական թվականի 1432-ին, որից պիտի հանել երկու ավելի տարիները (1432—2=1430):

Արարչության թվականների հաշվումների ժամանակ կարող է մեկ տարվա տարբերություն լինել, նկատի պետք է ունենալ, որ արարչության տարին սկսվում է սեպտեմբեր ամսում:

¹ Լ. Խաչիկյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 101:

² Նույն տեղը, էջ 496:

³ Նույն տեղը, էջ 401:

Բացի վերև հիշված արարչություն հինգ թվականներից, կոն բազմաթիվ արարչություն այլ թվականներ ևս, որոնց վրա մենք կանգ չենք առնում, որովհետև նրանք չեն գործածվել մեր մատենագրության մեջ:

ՀՈՒՄԵԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայ մատենագրության մեջ շատ քիչ գործ են ածվել նաև հոռոմեական թվականները: Այս թվականները հոռոմեական են կոչվում այն պատճառով, որ նրա սկզբնավորությունը, ըստ ավանդության, կապվում է Հռոմ քաղաքի հիմնադրության հետ: Վարրոնի հաշվումներով Հռոմ քաղաքը հիմնադրվել է 753 թվականին մեր ներկա թվականությունից առաջ, և մեր թվականության 753-ին, Փիլիպոս կայսեր չորրորդ տարում, բոլորվել է նրա հազարամյակը և 248 թվականին նոր հազարամյակի սկիզբ դրվել: Հայ մատենագրության մեջ այս թվականը կոչվում է նաև հունական, անշուշտ հոռոմեական իմաստով:

Հռոմեական մեծ թվականը մեր ներկա թվականին վերածելու համար նրա վրա պետք է ավելացնել 247, իսկ հոռոմեական թվականը հայկական մեծ թվականին վերածելու համար՝ պիտի ավելացնել 303 կամ 304. Եթե հայկական թվականն ընդունել է ավելդիր տարին, պիտի գումարել 303, եթե չի ընդունել՝ 304: Բերենք այս թվականի օգտագործման մի քանի փաստեր:

Ստեփանոս Ասողիկն իր պատմությունը վերջացրել է «... ըստ Յունաց թուականին ի Փիլիպոս կայսերէ՝ ամք 205, և ըստ հայերէն չափոյ թուականիս մերոյ՝ ամք ՆՄԳ»¹: Ստեփանոս Ասողիկը, ըստ այդ հաշվի, իր պատմությունը վերջացրել է 1004 թվականին. Հռոմեական 757 թվականի վրա ավելացնելով 247, կստանանք 1004: Հայկական 453 թվականին գումարելով 551, հավասար է դարձյալ 1004-ի:

Ներսես Շնորհալու դավանաբանական բովանդակությամբ մի աշխատության գրչության ժամանակն է.

Ի թիւ եօթանց տանց հարիւրոց,

Կատարեցաւ բանս հաւատոց,

¹ Ստեփանոսի Տարօնեցոյ Առողկան, Գաղտնաբիւն տիեզերական, ՄԳԲ, 1885, էջ 285:

Ի վեց հարեւր թուական Հայոց,
Յինըն հարեւր չորք Հոռոմոց¹:

Աշխատութիւնը գրված է Հայկական թվականի 1151-ին (600 + 551 = 1151): Հոռոմեական 904-ը հավասար է 1151-ի (904 + 247 = 1151): Երկու թվականներն էլ համապատասխանում են իրար:

Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 492 ձեռագիրը, որը բովանդակում է Մխիթար Գոշի Դատաստանագիրքը, գրվել է «... ի թուականութեանս Հայոց ՈւՎ, և շրջանին երթալոյ ի բաց ՃԱ, որ կոչի փոքր, իսկ Հոռոմին Նե:»²: Ձեռագրի գրութեան Հայկական 633 թվականը հավասար է 1184-ի (633 + 551 = 1184): Հայկական փոքր թվականով 101-ը հավասար է դարձյալ 1184-ի (101 + 1083 = 1184): Հոռոմեական թվականներից այստեղ հիշված է փոքրը, որը գտնելու համար, 247-ից բացի, պետք է գումարել 532 տարիների շրջանը ևս. այսպիսով Հոռոմեական 405 փոքր թվականը հավասար կլինի՝ 405 + 532 + 247 = 1184-ի:

Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 5602 ձեռագրում, որն ունի Օրբելյանների ապստամբութեան մասին անչափ արժեքավոր մի հիշատակարան, գրված է «... լամի Ուորդի եւթան առ քսանիւ թուարբութեան Հայկազնեան քրոնիկոնիս, իսկ նորոյ շրջանի իննանի և չորից և ի կենարարին մերոյ ծնընդենէ հազար և հարիւր եւթանասուն և ինն ամացն շրջագալութիւնք: Իսկ Հոռոմմին շրջանի երեք հարիւր իննսուն և ութ էին բովանդակութիւն ամաց»³: Ձեռագիրը գրված է հայկական մեծ թվականի 627 + 551 + 1178, հայկական փոքր թվականի՝ 94 + 1084 = 1178, հոռոմեական փոքր թվականի՝ 398 + 248 + 532 = 1178: Բոլոր թվականները համապատասխանում են իրար. ձեռագիրը գրված է 1178 թվականին:

Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 1971 ձեռագիրն ընդօրինակված է գումարգիր ծածկագրով՝ Հայոց՝ ՌԱՀԱԳԱ ԱԴԱ և ՈՆԻ ԼԱԼԱ, բուն Հոռոմայեցւոց թվականին ՄԱՌ ՄԵՄ ԽԼԱԹ և փոքր ՄԱ ՃԱ ԹԱԺ⁴: Ծածկագիր այս թվականները վերածելով

¹ Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1830, էջ 223—224:

² Գարեգին Կաթողիկոս Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 505:

³ ՀԳՄ ձեռ. № 5602, ք. 270բ:

⁴ ՀԳՄ ձեռ. № 1971, ք. 123ա:

ներկա թվահաշվի, ստացվում է՝ $1000 + 1 + 70 + 1 + 3 + 1 + 1 + 4 + 1 = 1082$ և $600 + 400 + 20 + 30 + 1 + 30 + 1 = 1082$, $1082 + 551 = 1633$: Հոռոմեական թվականով՝ $50 + 1 + 1000 + 200 + 5 + 50 + 40 + 30 + 1 + 9 = 1386$, 1386 -ին գումարենք $247 = 1633$: Հոռոմեական փոքր թվականով՝ $200 + 1 + 100 + 1 + 9 + 1 + 10 = 322$, իսկ այդ հավասար է $322 + 532 + 532 + 247 = 1633$ -ի:

ՀԻՋՐԱՅԻ ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Հիջրայի կամ մուսուլմանական թվականի սկիզբը համարվում է 622 թվականի հուլիսի 16-ը Հուլյան տոմարով, երբ տեղի է ունեցել Մուհամմեդի փախուստը Մեկկայից դեպի Մեդինա: Արաբական տոմարական տարին՝ մաքուր լուսնական տարի է, նա բաղկացած է 12 ամիսներից՝ հաջորդական 29 և 30 օրերով. լի տարին ունի 354 օր, իսկ նահանջը՝ 355 օր: Արեգականային տարին, ինչպես ասել ենք, ունի, կլոր հաշվով, $365\frac{1}{4}$ օր, այսինքն՝ մոտ $11\frac{1}{4}$ օր ավելի լուսնական տարուց, ուստի և մոտ 33 տարվա ընթացքում լուսնական տարին մի տարի առաջ է ընկնում: Տված հիջրայի թվականը մեր ներկա թվականին վերածելու համար գոյություն ունի հաշվելու երկու եղանակ, մեկը՝ պարզ, տված թվականը մոտավոր ձևով գտնելու համար, իսկ մյուսը բարդ՝ ճիշտ թվականը և օրը գտնելու համար¹:

Հաշվելու պարզ եղանակը հետևյալն է. տրված թվականը բաժանում ենք 33-ի վրա՝ իմանալու համար, թե որքան նահանջ տարի է մուտք գործել տվյալ թվականի մեջ, ապա ստացված թիվը գուրս ենք հանում տրված թվականից, հետո մնացած թիվը գումարում Մուհամմեդի փախստյան 622 թվականին: Այսպես օրինակ, մեզ տրված է հիջրայի 1201 թվականը վերածել ներկա թվականի:

1) $1201 : 33 = 36 + 1 = 37$ (մնացորդի դեպքում մեկ տարի ավելացնում ենք):

2) $1201 - 37 = 1164$:

3) $1164 + 622 = 1786$:

Հիջրայի բարդ, բայց ավելի ճիշտ թվականը որոշելու համար

¹ Հիջրայի թվականները մեր ներկա թվականներին վերածած համեմատական ցանկ է հրատարակել ահադեմիկոս Հ. Օրբելին 1940 թվականին «Синхронические таблицы для перевода исторических дат по хиджре на европейское летоисчисление. Խորագրով:

պետք է վերցնել հիշրալի լուսնական 30 տարիների շրջանները, որոնք անփոփոխ կրկնվում են: Յուրաքանչյուր լուսնական շրջան, որը տոմարագիտության մեջ կոչվում է ցիկլ, ունի 10.631 օր: Այնուհետև պետք է պարզել, թե տվյալ թվականը քանի՞ լուսնական ցիկլ է պարունակում իր մեջ, ապա ստացած թիվը բազմապատկել լուսնի ցիկլի վրա և ստացած թիվը բաժանել 364¹/₄-ի վրա:

Հիշրալի թվականի հաշվումների գործն ավելի դյուրացնելու համար, բերում ենք տոմարական վեց աղյուսակներ, որոնք մենք վերցրել ենք դոցենտ Գ. Մամեդբեյլիի «Синхронические таблицы для перехода от лунного летоисчисления к солнечному и обратно», աշխատությունից, որը հրատարակվել է Բաքվում 1949 թվականին:

Ա. ԼՈՒՍՆԱՑԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱ ՑԻԿԼԵՐԻ ՕՐԵՐԻ ԹԻՎԸ

(Սկսած 6-րդ դարի վերջից օրից)

30— 18863	510—188959	990 - 359055
60— 29494	540—199590	1020—369686
90— 40125	570—210221	1050—380317
120— 50756	600—220852	1080—390948
150— 61387	630—231483	1110—401579
180— 72018	660—242114	1140—412210
210— 82649	690—252745	1170—422841
240— 93280	720—263376	1200—433472
270—103911	750—274007	1230—444103
300—114542	780—284638	1260—454734
330—125173	810—295269	1290—465365
360—135804	840—305900	1320—475996
390—146435	870—316531	1350—486627
420—157066	900—327162	1380—497258
450—167697	930—337793	1410—507889
480—178328	960—348424	1440—518520

Բ. ԼՈՒՍՆԱՑԻՆ ՕՐԵՐԻ ԹԻՎԸ 30 ՑԻԿԼԻ ՑՈՒՐԱՔԱՆՉՑՈՒՐ ՏԱՐՎԱ ՍԿՉՐՈՒՄ

1— 0	8—2481	15—4961	22—7442	29— 9922
2— 354	9—2835	16—5315	23—7796	30—10277
3— 709	10—3189	17—5670	24—8150	
4— 1063	11—3544	18—6024	25—8505	
5—1417	12—3898	19—6379	26—8859	
6—1772	13—4252	20—6733	27—9214	
7—2126	14—4607	21—7087	28—9568	

Գ. ԱՄԻՍՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՕՐԵՐԻ ԹԻՎԸ ԸՍՏ ԼՈՒՄՆԱԿԱՆ ՏՈՄԱՐԻ

I Մոհառում 0	II Սաֆար 30	III Ռաբի I 59	IV Ռաբի II 89	V Ջումադա I 118	VI Ջումադա II 148
VII Ռաջաբ 177	VIII Շաբան 207	IX Ռամազան 236	X Շավալ 266	XI Ջուլղադա 295	XII Ջուլիջա 325

Դ. ՕՐԵՐԻ ԹԻՎԸ ԴԱՐԵՐՈՎ

(6-րդ դարից մինչև 22-րդ դարի սկիզբը)

600— 0	1400—292200
700— 36525	1500—328725
800— 73050	1600—365240
900—109575	1700—401764
1000—146100	1800—438288
1100—182625	1900—474812
1200—219150	2000—511337
1300—255675	2100—547861

Ե. ՕՐԵՐԻ ԹԻՎԸ ԸՍՏ ՔԱՌԱՄՅԱԿՆԵՐԻ ՍԿՋԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ

4— 1461	36—13149	68—24837
8— 2922	40—14610	72—26298
12— 4383	44—16071	76—27759
16— 5844	48—17532	80—29220
20— 7305	52—18993	84—30681
24— 8766	56—20454	88—32142
28—10227	60—21915	92—33603
32—11688	64—23376	96—35064

Զ. ՕՐԵՐԻ ԹԻՎԸ ԸՍՏ ՑՈՒՐԱՔԱՆՉՑՈՒՐ ԱՄՍՎԱ ՍԿՋԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ

	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
0	0	31	60	91	121	152	182	213	244	274	305	335
1	366	397	425	456	486	517	547	578	609	639	670	700
2	731	762	790	821	851	882	912	943	974	1004	1035	1065
3	1096	1127	1155	1186	1216	1247	1277	1308	1339	1369	1400	1430

*Բերված աղյուսակներից օգտվելն ամբառն էլ դժվար չէ, մի-
այն անհրաժեշտ է ծանոթ լինել նրա ընդհանուր սկզբունքի հետ:
Ընթացողինք մեզ տրված է պարզելու, թե մեր ներկա թվականով*

ե՞րբ է տեղի ունեցել Հիշրայի 782 թվականի ուսմազան ամսի 19-ին Բաղդադում տեղի ունեցած երկրաշարժը: Մենք կատարում ենք հետևյալ հաշվումները: Նախ պարզում ենք, թե 782 լուսնական տարիները քանի օր են պարունակում.

780 տարին=284. 638 օր (Ա աղյուսակով).

երկրորդ տարին=354 օր (Բ աղյուսակով).

ուսմազանի սկիզբը=236 օր (Գ աղյուսակով).

ամսաթիվը= 19 օր.

285. 247 օր: Ուրեմն՝ հիշրայի 782 թվականի ուսմազանի 19-ը բաղկացած է այդքան օրերից: Ստացված այս թիվն այժմ բաժանում ենք աստղաբաշխական տարվա օրերի վրա.

1300 տարին=255. 675 օր (Դ աղյուսակով).

մնացորդ՝ 29. 572 օր

80 տարին = 29. 220 օր (Ե աղյուսակով).

մնացորդ՝ 352 օր

Հետևապես, հիշրայի տրված թվականը համապատասխանում է ներկա թվականի 1380 թ. դեկտեմբերի 17-ին:

Հարկական ՍՍՌ Գետական Մատենադարանի Փղոսկրյա կոչվող նշանավոր ձեռագիրը գրված է «Յամի թուոյ Հարկազանց ՆԼԸ, և ըստ թուոյ Հոռոմի ՉԽԲ, լիսմայեղական բռնակալութեանն ՅՀԹ»¹: Այստեղ, իսմայելական թվական ասելով, գրիչը նկատի ունի հիշրայի թվականը: Ըստ վերը բերված աղյուսակների, հիշրայի թվականը վերծանվում է.

360 տարին=135.304 օրվա,

19 տարին= 6.370 օրվա,

ընդամենը՝ 142.183 օր:

Արեգականին 900 տարին ունի՝

109.575 օր, որը հանելով 142, 183-ից՝

մնացորդ՝ 32.608 օր:

88 տարին=32.148 օր:

Գմնա՝ 466 օր=1 տարի 4 ամիս:

Այսպիսով՝ 900+88+2=990 թվականին:

¹ Գաբրիելի կաթողիկոս Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 188:

Հիջրայի այս թվականը համապատասխանում է հայկական և հռոմեական թվականներին. հայկականը՝ $438 + 551 = 989$, հռոմեականը՝ $742 + 247 = 989$: Ձեռագիրը գրված է մարտի 22-ից հետո, այլապես պիտի հայկական թվականի վրա գումարենք ոչ թե 551, այլ՝ 552:

ՀԱՅԱԿԱՆ ՄԵՐ ԹՎԱԿԱՆ

Հայկական մեծ թվականի գործածությունը մատինագրություն մեջ շատ մեծ հնություն չունի: Նրա գործածությունն սկսում է VIII դարից: Վերանայման կարիք ունի բանասեր Գարեգին կաթողիկոս Հովսեփյանի կարծիքը՝ հայկական հնագույն թվականի գործածությունն Անիի միջնաբերդի բազիլիկ եկեղեցու հարավային պատի արձանագրությունը համարելու խնդրում, որն ընդունում են իբրև 622 թվականի գործ: Այդ արձանագրությունն ունի հետևյալ բովանդակությունը. «(Ե)ս Աբրահամ վարդապետս շինեցի զեկեղեցիս զայս ի թուականութեանս հա...»¹: Արձանագրության վերջին մասը թերի է:

Իերված արձանագրության վերջին երկու տառերը՝ «ՀԱ» ոչ թե նշանակում են 71, որին պետք է գումարել 551, այլ «Հայոց» բառի առաջին երկու տառերը, ինչպես որ նույն ձևով հիշվում է Թալինի մայր եկեղեցու վրա՝ «Թուականութեան հայոց» կամ Արուճի արձանագրության մեջ՝ «Թուականին հայոց» և այլն²:

Մեզ հասած ամենահին հայկական թվականը պարունակող արձանագրությունը, որի դեմ չի կարելի առարկել, Թալինի մայր եկեղեցու ձախակողմյան սյան վրա Ուխտատուրի թողած արձանագրությունն է՝ 783 թվականին:

Հայկական թվականները, փաստորեն, լայն գործածության մեջ են գրվել IX դարից:

Հայկական թվականը մեր արձանագրությունների և մատենագրության մեջ հիշվում է տարբեր անուններով. «Թուականութիւն Թորգոմեան», «Թիւ Ասքանազեան», «Թուականութիւն Հայկազեան տոհմի», «Թուաբերութիւն Արամեան», «Թուաբերութիւն

¹ Գարեգին վ. Հովսեփյան, Քարտեզ հայ հնագրության (Տես «Շողակաթ», էջ 178):

² Այս կարծիքն ունի նաև պրոֆ. Կ. Հաֆազարյանը (տես նրա «Հայկական գրի սկզբնական տեսակները», էջ 22):

Հայոց տոմարիս», «Թուաբերութիւն, որ Յաբեթեան կոչի» և այլն: Հայկական թվականը մեկ-մեկ կոչվում է նաև «Պոստովային», անշուշտ, նկատի ունենալով հայոց թվականի սկիզբը պարսից Պոստով Անուշիրվանի թագավորութան (531—579 թթ.) ժամանակաշրջանին համընկնելը:

Թվականների սկիզբը, սովորաբար, կապվում է պատմական որևէ կարևոր իրադարձության, քաղաքական աչքի ընկնող անձնավորության հետ: Օրինակ, հռոմեական թվականը, Հռոմի հիմնադրման հետ է կապվում, սելևկյան թվականը՝ Սելևկոսի տարած հաղթանակի, քրիստոնեական թվականը՝ Քրիստոսի ծննդյան, հիջրայի թվականը՝ Մուհամմեդի Մեկկայից Մեդինա փախչելու հետ և այլն: Սակայն Հայկական թվականը կապված չէ նման որևէ դեպքի կամ անձնավորության հետ: Համենայն դեպս, 552 թվականից մեզ՝ նման ոչ մի դեպք հայտնի չէ:

Մենք մեր «Շիրակացու մատենագրություն» մեջ անդրադարձել ենք այդ հարցին և այն կարծիքը հայտնել, որ հայ թվականության սկիզբը կապված է տոմարական մի աղյուսակի հետ, որը կոչվում է «ՇԼԲ» աղյուսակ: Համառոտակի կանգ առնենք այս աղյուսակի վրա, քանի որ, ինչպես հետո կտեսնենք, նրա հետ են կապված ոչ միայն հայոց մեծ, այլև հայոց երկու փոքր թվականները ևս:

Քրիստոնեությունը հայաստան մուտք գործելուց և պաշտոնական կրոն ճանաչվելուց հետո սահմանվում են որոշ տոներ՝ կապված պաշտամունքի հետ: Ինչպես հայտնի է, վաղ քրիստոնեական շրջանում քրիստոնեական բոլոր երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, օգտագործում են լուսնական 19-ամյա շրջանի համար կազմված տոնացույցը: Հետագայում այդ աղյուսակները փոխարինվում են 95-ամյա աղյուսակներով, իսկ 354 թվականից սկսում են օգտագործել տոմարագետ Անդրեաս Բյուզանդացու կազմած 200-ամյա շրջանն ընդգրկող աղյուսակը:

Անդրեաս Բյուզանդացու այդ աղյուսակը վերջացավ 553 թվականին, չկար նրան փոխարինող ճիշտ այլ աղյուսակ, ուստի և տոներն սկսեցին շփոթել: «...Ի ժամանակս թագաւորին Յուստինիանոսի,—գրում է Հակոբ Ղրիմեցին,— եղև լրումն Մ. ամից կարգացն Անդրէասայ, և սկսան շփոթել լրմունք զատկաց և գիրք արուեստական տումարաց»¹:

¹ E. Dulaurier, Recherches sur la chronologie arménienne, Paris, 1859, p. 63:

Տոմարական այս շփոթութիւնը, սակայն, միայն հայերի մոտ չէր, այլ քրիստոնեական բոլոր ժողովուրդներին: Այս խառնաշփոթութիւնը կարգավորելու համար, ինչպես ասել ենք, 561 թվականին Աղեքսանդրիայում հրավիրվում է հայտնի տոմարագետների ժողով՝ էաս Աղեքսանդրացու զլխավորութիւամբ: Աղեքսանդրիայի այս ժողովի մասնակիցները կազմում են 532 տարիների տոնական մի աղյուսակ՝ բաղկացած արեգակնային 28 և լուսնական 19-ամյա շրջանների բազմապատկից: 532 տարիների այս աղյուսակն օգտագործեցին քրիստոնեական բոլոր երկրներում, այդ թիւում նաև Հայաստանում: Բացառութիւն հանդիսացավ միայն Կոստանդնուպոլիսը, ուր իրիտն անունով մեկն այս աղյուսակում որոշ փոփոխութիւններ մտցրեց, որը և հետագայում տեղիք տվեց մեծ վեճերին: Էասի աղյուսակն է, որ նրա ընդգրկած տարիների հաշվով, հայկական թվանշաններով արտահայտված, կոչվեց ՇԼԲ կամ, ավելի կտրրացած թվով, հինգհարյուրյակ (Շ.եակ):

Հարկական «մեծ» թվականն ահա սկիզբ է առնում այս աղյուսակից, որի առաջին տարին սկսում էր 553 թվականով: Այս մասին են վկայում միջնադարյան մեր ականավոր բոլոր մատենագիրները՝ Հովհաննես Կոզեռնը, Հովհաննես Իմաստասերը, Ստեփանոս Ասողիկը, Ստեփանոս Օրբելյանը, Գիրակոս Գանձակեցին, Մխիթար Այրիվանեցին և ուրիշներ:

Շիրակացին VII դարում, Անաստաս Կաթողիկոսի (661—667 թթ.) հանձնարարութիւամբ, հավանական է 665 թվականին, կազմում է հայկական «անշարժ տոմար»-ը, որի պատասխինները, բարեբախտաբար, հասել են մեզ, և մենք այժմ պարզ պատկերացում ունենք նրա մասին:

Շիրակացու կազմած այդ «անշարժ տոմար»-ը, այսինքն՝ տոմարական աղյուսակները, իրականութիւան մեջ, անշարժ չէին. նրանք շարժական էին՝ միայն հարմարեցված բյուզանդական աղյուսակներին: Մենք փաստեր չունենք, որ Շիրակացին Քալկական տոմարի մեջ մտցրած լինի նահանջի սկզբունքը: Հայկական տարին, ինչպես ասել ենք, բաղկացած էր 365 օրից, հաշվի չէր առնվում տարվա մի քառորդ օրը, որը չորս տարվա մեջ մի օր էր կազմում: Այդ մի քառորդ օրը չհաշվելու հետևանքով հայկական տարին չորս տարին մեկ օրով առաջ էր շարժվում: Այդ սկզբունքով էլ կազմել էր Շիրակացին իր ՇԼԲ աղյուսակը՝ մի երեսի վրա տալով բյուզանդական անշարժ աղյուսակները, իսկ մյուս երեսի վրա՝ հայկական շարժականը՝ հարմարեցված անշարժին:

Սակայն Շիրակացին իր ՇԼԲ աղյուսակում հաշվի չէր առել մի կարևոր հանգամանք—**թե թնչ պետք էր անել՝ եթե, չորս տարին մեկ օրով առաջ շարժվելով, հայկական տարին հասներ մինչև այն կետը, երբ գարնանամուտը, որի հետ կապված էին գատկի հաշվումները, կրկնվի:**

Շիրակացու այս աղյուսակներով հարթ ընթացան մինչև 1003 թվականը, իսկ 1004 թվականին, չորսական տարիների օրերի հաշիվը հասավ այն կետին, որ գարնանամուտը կրկնվեց: 1004—
—1007 թվականներին, փաստորեն, մի տարում երկու գարնանամուտ եղավ, մեկը՝ հունվարի 1-ին, իսկ մյուսը՝ դեկտեմբերի վերջին: 1008 թվականից սկսած այլևս անհնար էր տառացի առաջնորդվել Շիրակացու աղյուսակով: Այդ ավելի քան ականք էր այն ժամանակ, քանի որ եկեղեցական տոմարին զուգահեռ, ժողովրդի մոտ գործածություն մեջ էր քաղաքացիական տոմարը, որով տարեմուտն անփոփոխ համարվում էր գարնանամուտը:

Ահա այս փոփոխություններից հետո տոմարական հաշիվները խառնվեցին: Միակ հնարավոր ելքն այն էր, որ հաշվի չառնվեր ՇԼԲ աղյուսակում հայկական ավելամուտ մեկ տարին: Այս խառնակ դրությունը շարունակվեց մինչև ՇԼԲ-ի վերջնալը՝ 1084 թվականը: 1085 թվականին նոր ՇԼԲ կազմեց Հովհաննես Իմաստասերը, որի մասին մենք կխոսենք քիչ հետո:

Տոմարական նեղ մասնագիտական այս հարցերի վրա մենք անհրաժեշտ համարեցինք կանգ առնել, որովհետև այդ ՇԼԲ-ի հետ են կապված հայկական թվականների հաշվումները և գոյություն ունեցող թվական սխալները:

Հայկական մեծ կոչվող թվականի սկիզբը, ինչպես ասացինք, համարվել է 553 թվականը: Ներկա թվականի 553 թիվը՝ հայկական մեծ թվականով 1 թիվն էր, 554-ը՝ երկուսը և այլն: Մեր ներկա թվականի և հայկական մեծ թվականի տարբերությունը ոչ թե 551 էր, այլ 552, ուստի 553 թվականից մինչև 1003 թվականը ներառյալ, հայկական թվականը հաշվելիս պետք է ավելացնել ոչ թե 551, այլ 552:

1004 թվականին մեկ տարով փոփոխվում է նաև հայկական թվականի տարբերությունը մյուս թվականների հարաբերությամբ: Այսպես, ըստ հին հայկական «Պատճեն տոմարի»-ի, հայկական և հռոմեական թվականների տարբերությունը 304 է եղել, իսկ ուշ շրջանի «պատճեն»-ներում՝ 303:

Հայկական մեծ թվականի կապակցութիւնք անհրաժեշտ է հաշվի առնել մի այլ կարևոր հանգամանք, որ շատերն անտես են տանում: Միջնադարյան հայ մատենագրութիւն մեջ գործածված քրիստոնեական թվականը մեր ներկայիս թվականը չէ: Պարզվում է, որ հնում քրիստոնեական թվականի վերաբերյալ գոյութիւն են ունեցել տարբեր հաշվումներ՝ հունական, հռոմեական, ասորական, հայկական և այլն: Հայ տոմարագետների հաշիվներով, Քրիստոսը մեր ներկա թվականից երկու տարի առաջ է ծնվել, ուստի և հայ մատենագրութիւն մեջ, քրիստոնեական թվականը հաշվելիս, եթե, իհարկե, հայ հոռմեական շրջաններից չէ, պետք է հանել 2 միավոր: Բերենք մի քանի փաստեր:

1750	1751	1752	1753	1754	1755	1756	1757	1758	1759	1760	1761	1762	1763	1764	1765	1766	1767	1768	1769	1770	1771	1772	1773	1774	1775	1776	1777	1778	1779	1780	1781	1782	1783	1784	1785	1786	1787	1788	1789	1790	1791	1792	1793	1794	1795	1796	1797	1798	1799	1800
1750	1751	1752	1753	1754	1755	1756	1757	1758	1759	1760	1761	1762	1763	1764	1765	1766	1767	1768	1769	1770	1771	1772	1773	1774	1775	1776	1777	1778	1779	1780	1781	1782	1783	1784	1785	1786	1787	1788	1789	1790	1791	1792	1793	1794	1795	1796	1797	1798	1799	1800

Թվականների զուգահեռ աղյուսակ:

Գրիգոր գրիչը Սուրխաթում մի ձեռագիր է ընդօրինակել՝ «... Ի մարդեղութենէ կենարարին ՌՅՀԳ, և ի Հալոց մեծի թուականիս Պի ամի՞՛: Հայկական Պի թվականը հավասար է 1371-ի (820 + 551 = 1371): Հիշված քրիստոնեական թվականը՝ ՌՅՀԳ (1373), երկու միավորով ավելի է: Պարզ է, որ այստեղ հիշված է քրիստոնեական հայկական թվականը:

Մարկոս գրիչն իր ձեռագրի ընդօրինակութլունն ավարտել է «... ի թուականիս մեծ լԱդամայ վեցհազարերորդի ութհարիւրերորդի քսաներորդի Ջ.երրորդի (8626) ի ծննդենէն Քրիստոսի՝ ՌՆԳ հայոց հաշուի (ընդգծումը մերն է — Ա. Ա.), և ըստ լունաց հաշուի՝ Ռ.երրորդի երեք հարիւրերորդի նըսներորդի երրորդի (1393), և ըստ Ֆրուանգաց հաշուի՝ Ռ.երրորդի երեք հարիւրերորդի նըսներորդի Թ.երրորդի (1399), և ըստ ասորաց՝ Ռ.երրորդի երեքհարիւրերորդի նսուներորդի ութերորդի (1393), և ըստ պատճէն Յարեթական տումարիս հայոց ՊՄ (1401), տանոււէր տարոցն առեծն...»²: Բերված թվականների այս զուգահեռները կարևոր են պարզելու ժամանակագրական այն հաշվումները, որ կատարվելիս են եղել մեզ մոտ միջին դարերում:

Վերծանութլունն սկսենք հայկական թվականից, որովհետև հայ գրիչները օտար թվականների մեջ կարող էին սխալվել, իսկ հայկականի՝ որով նրանք առաջնորդվում էին, դժվար սխալվելիս: Ձեռագրում հիշված հայկական թվականը, որն անվանված է թվական «պատճէն Յարեթական տումարիս», գրված ՊՄ թվականին, մեր ներկա թվականով հավասար կլինի 1401-ի (850 + 551 = 1401): Հիշատակարանում հիշված արարչութլան թվականը՝ Աղեքսանդրյան հաշվով է, ուստի պետք է նրանից հանենք 5425 (8826 — 5425 = 1401):

Այս հիշատակարանում, սակայն, ամենից ուշագրավը քրիստոնեական թվականներն են, առանձնապես այն թվականը, որը համարվում է հալոց թվահաշվի Քրիստոսի ծննդյան թվական: Ուրեմն՝ քրիստոնեական տարբեր հաշվումների շարքում կար և հայկական հաշվում, որը ներկա մեր թվականից 2 տարով ավելի էր, 1401 թվականին՝ 1403 էր:

Հետաքրքիր են այստեղ նաև քրիստոնեական թվականի մյուս հաշվումները, ըստ որի 1401 թվականին, հունների հաշվով,

¹ Լ. Խաչիկյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 481:

² Նույնի, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 19:

1393 թվականն էր, ֆռանկների հաշվով (նկատի ունի հռոմեացիներին)՝ 1399-ը, ասորիների հաշվով՝ 1398-ը: Նշված թվականներից ինչ-որ թյուրիմացութուն կա հռոմեական հաշվի մեջ, որովհետև հռոմեականը հենց մեր ներկա թվականի հաշվումն է և պետք է լիներ 1401:

Ի դեպ, այս հիշատակարանում ճիշտ է հիշված նաև տանուտերը. 1401 թվականին տանուտերը, իրոք, եղել է առյուծը:

Թվականների նման մի զուգահեռ ունի նաև Երուսաղեմի հայոց պատրիարքարանի մի ձեռագիր, որը գրված է՝

«Ի գալստենէ կենարարին»՝ 1383 թվականին,

«Յուբեթական տաւմարի»՝ 830 թվականին,

«Ըստ նորում շրջանի»՝ 297 թվականին,

«Ըստ Յունաց»՝ 1389 թվականին,

«Ըստ Թռանկաց»՝ 1381 թվականին,

«Ըստ Ասորւոց»՝ 1374 թվականին¹:

Բոլոր թվականներն էլ համապատասխանում են իրար. հայկական թվականով՝ $830 + 551 = 1381$, հայկական քրիստոնեական՝ $1383 - 2 = 1381$, հայկական փոքր թվականով՝ $297 + 1084 = 1381$: Այս բոլոր թվականները համապատասխանում են քրիստոնեական հռոմեական, այսինքն՝ մեր ներկա թվականին, որը, հայ իրականութւյան մեջ հայտնի է եղել ֆռանկաց թվական անունով:

Կարելի է հարյուրավոր այլ փաստեր բերել, երբ հայ մատենագրութւյան մեջ օգտագործված քրիստոնեական թվականը ոչ թե մեր ներկա թվականն է, որը հայագետներից շատ շատերին է թյուրիմացութւյան մեջ գցել, այլ՝ քրիստոնեական հայկականը:

Հայ մատենագրութւյան մեջ, սակայն, երբեմն պատահում է, որ գործ են ածում քրիստոնեական հռոմեական թվականը, այսինքն՝ մեր ներկայումս գործածական թվականը: Այդ արվում է, մեծ մասամբ, հռոմեական շրջանների հետ կապված հայ ունիթորների կողմից: Բերենք այս կարգի թվականների օգտագործման մի քանի փաստեր:

Այժմ Վենետիկի Մխիթարյանների սեփականութունը հանդիսացող Իսրայել գրչի ընդօրինակած «Ոսկեփորիկ»-ի ավարտման ժամանակը՝ «...ի թվ. ՉՀԶ, ի Քրիստոսէ՝ ՌԳՃԻԷ, ի Դոմինիկոսէն և ի Ֆրանցիսկոսէ ՃԻՇ տարի է»²: Այստեղ հիշված քրիստոնեա-

¹ Նորայր եպիսկոպոս Գողարյան, Երուսաղեմի ձեռագրաց ցուցակ, հատ. Գ, էջ 130:

² Հ. Բ. Սարգիսյան, Վենետիկի ձեռագրաց ցուցակ, Բ հատ., էջ 698:

կան թվականը, անվիճելի, հոռմեականն է, ուստի հայկականի և քրիստոնեականի տարբերությունը 551 է. քրիստոնեական ՌԳՃԻԷ-ն հավասար է 1327-ի. հայկական ՉՀԶ-ն դարձյալ հավասար է 1327-ի ($776 + 551 = 1327$):

Սերաստիայի ս. Նշանի №2 ձեռագիրը գրված է «Ադամա՝ ՅՊԻԱ, և ըստ հայկական թուականի ՉԿԲ, լամսեանն լուլիս ԺԸ, լաւուր չորեքշաբթի և տանուտէր խոյն»¹: Այստեղ թեպետ չի հիշված կոնկրետ քրիստոնեական թվականը, սակայն արարչության և հայկական թվականների համեմատությունից դժվար չէ տեսնել, որ քրիստոնեական թվականը հաշված է հոռմեական հաշվով. հայկական թվականը հավասար է 1313-ի ($762 + 551 = 1313$): Արարչությանը՝ կալսերականն է, որից պետք է հանել 5508՝ հոռմեական հաշվումով, կմնա 1313: Այդ թվականին տանուտերը խոյն է եղել:

Խվականների վերծանության հետ գործ ունենալիս պետք է հաշվի առնել մի հանգամանք ևս, որ սկսած XVI դարից քրիստոնեական թվականի գործածությունը հալ մատենագրության մեջ փոխվում է. հիմնականում, սկսում են արդեն գործածել հոռմեական հաշվով կազմած քրիստոնեական թվականը, իսկ մեզ մոտիկ ժամանակներում՝ նույնիսկ մոռանում են այն մասին, որ մենք երբեք քրիստոնեական ուրույն թվական ենք ունեցել:

ՀԼՅԿԱԿԱՆ, ՓՈՔՐ ԹՎԱԿԱՆԸ

Ինչպես հայկական առաջին ՇԼԲ աղյուսակներով հայկական մեծ թվականի սկիզբը դրվեց, այնպես էլ երկրորդ ՇԼԲ աղյուսակով՝ հայկական փոքր թվականի:

Հայկական այս նոր թվականը հայտնի է զանազան անուններով՝ «Փոքր թվական», «Սարկավագադիր թվական», «Մտրուկ», «Թուական նորոյ շրջանի» և այլն:

1004—1007 թվականներին հայկական գիշերահավասարը կրկընվելուց հետո, երբ հայկական տոմարական հաշիվները խառնվեցին, նոր ՇԼԲ աղյուսակի բացակայության հետևանքով, հարկադրված եղան հալ թվականի մի տարին հաշվի չառնել խախտված ՇԼԲ-ի աղյուսակներում և այդպես, «կարկատան ձգելով», ինչպես ասում է Հովհաննես Իմաստասերը, մի կերպ, առաջնորդվեցին մինչև աղյուսակների վերջանալը:

¹ Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1923, էջ 70:

Նշված աղյուսակները վերջացան 1085 թվականին: Հովհաննես Իմաստասերը նոր ՇԼԲ աղյուսակում կրկնեց 1085 թվականը: Շարժական տոմարով 1085 թվականին հայկական ամանորը՝ նավասարդի մեկը, ընկնում էր մարտի 1-ին, սակայն Իմաստասերն անմիջապես չջարուռնակեց այդ ամսաթիվը: Նա իր առջև հաստատ սկզբունք էր դրել, հայկական տոմարը դարձնել անշարժ, ուստի և անհրաժեշտ էր սահմանել հայկական ամանորի ճիշտ ամսաթիվը: Նա չուզեց վերցնել հարևան երկրներում՝ Բյուզանդիոնում և Պարսկաստանում գործածական տոմարներից ոչ մեկը՝ ոչ հունվարի 1-ը և ոչ էլ մարտի 31-ը, այլ, ուսումնասիրելով հին հայկական մատենագրութունը, աշխատեց պարզել, թե 5-րդ դարում Մեսրոպ Մաշտոցը և նրա աշակերտները ինչ ամանորով են առաջնորդվել: Նա պարզեց, որ 428 թվականին հայկական ամանորը եղել է օգոստոսի 11-ին, այդ էլ նա ընդունեց ամանոր: Այս մասին հանգամանորեն խոսել է տոմարական աշխատութունների մեջ, որոնք մենք հրատարակել ենք «Հովհաննես Իմաստասերի մատենագրութուն»-ում: Նրա վրա մենք կանգնեցինք առել տեքստի ծանոթագրության մեջ, ուստի չենք ուզում կրկնել¹:

ՇԼԲ աղյուսակի սկզբի տարին, այսինքն՝ 1085 թվականին, վերադիրը «Ա»-ն էր, լոթներյակը՝ «Գ»-ն, տանուտերը՝ «Ծոյ»-ը, տարեգիրը՝ «Վ»-ն, լրումը՝ ապրիլի 13-ին կիրակի օրը:

Հովհաննեսի «անշարժ» այս տոմարը, ինչպես տեսնում ենք, չէր ամփոփվում մեր ներկա տարվա սահմաններում, այլ, սկսելով օգոստոսի 11-ին, անցնում էր դեկտեմբերը և շարունակվում հաջորդ տարին մինչև օգոստոսի 10-ը: Ահա այս է պատճառը, որ փոքր թվականը հաշվելիս պետք է ավելացնել 1083 կամ 1084. եթե տեղի է ունեցել օգոստոսի 11-ից մինչև դեկտեմբերի 31-ը, ավելացվում է 1083, իսկ եթե տեղի է ունեցել հունվարի 1-ից մինչև օգոստոսի 10-ը՝ 1084:

Բերենք Հայկական փոքր թվականի գործածության մի քանի փաստեր: Եղիշեի պատմութունը Կոշա վանքում ընդօրինակվել և ավարտվել է՝ «Ի հայկազեան թուականիս վեցհարիւրերորդի և երկուց տասանց, եզտկաւ միով առաւելեալ, և ըստ նորում շրջանիս միով լոբելինի և երից տասանց և քառից երկուց, և ըստ ծննդեան

¹ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրութունը, էջ 124:

կենարարին ... ՌՃՀՊՁ¹: Հայկական մեծ թվականը հավասար է (621+551) 1172-ի: Քրիստոնեական հայկական թվականը հավասար է (1174-2)=1172: Հայկական փոքր թվականը հավասար է (88+1084)=1172: Ձեռագիրն, ուրեմն, գրված է 1172 թվականի առաջին կեսում (մենք նկատի ունենք 1084 գումարվելու թվահաշիվը):

Ստեփանոս գրիչն իր ընդօրինակած ձեռագիրն ավարտել է ...ի թուարքերու թեանս ասքանազեան և Յարեթական տոմարի ՊԱ, և ըստ նորումս շրջանի ՄԿԹ և ի գալստենէ կենարարին ՌՅԾՊՁ²: Հայկական մեծ թվականը հավասար է՝ (801+551)=1352-ի: Հայկական փոքր թվականը հավասար է (1354-2)=1352-ի: Հայկական փոքր թվականը հավասար է (269+1083)=1352-ի: Այսպիսով, երեք թվականներն էլ համապատասխանում են իրար: Ձեռագիրը գրված է տարվա առաջին կեսում, օգոստոսի 11-ից առաջ, այդ պատճառով ավելացնում ենք 1084:

Հայկ. ՍՍՌ Պետ. Մատենադարանի սեփականությունը հանդիսացող №7547 ձեռագրի ընդօրինակությունն ավարտված է՝ «Յարեթական տաւմարի ի ՊԻԴ, և ըստ նորում շրջանի ի ՄՂԱ, և ի գալստենէ կենարարին ՌՅՀԷ, և լելիցն Ադամալ ի դրախտէն ՅՊՁ³: Հայկական մեծ թվականով ձեռագիրը գրված է՝ 824+551=1375-ի: Քրիստոնեական հայկական թվականով՝ 1377-2=1375-ի: Արարչության թվականը Աղեքսանդրյանն է, ուստի պետք է հանել 5425՝ կլիների դարձյալ 1375 (6800-5425=1375-ի): Հայկական փոքր թվականը հավասար է՝ 291+1084=1375-ի:

Կարելի է բերել բազմաթիվ այլ օրինակներ ևս, բայց, կարծում ենք, բերվածները բավական են նշված թվականները հաշվելու ընդհանուր սկզբունքը պատկերացնելու համար:

Օրինական հարց է առաջանում, թե Հովհաննես Իմաստասերի անշարժ տոմարին գուզընթաց շարունակվեց արդյոք հայկական քաղաքացիական շարժական տոմարը: Այդ հարցին մենք հանգամանորեն անդրադարձել ենք Հովհաննես Իմաստասերի մատենագրություն մեջ և մի շարք օրինակներ բերել շարժական տոմարի գործածություն: Մեր հաշվումներով, 14-րդ դարում հաշված ամսա-

¹ Գարեգին Կաթողիկոս Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 410—411:

² Լ. Խաչիկյան, ՓՊ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 399:

³ Նույն տեղը, էջ 518:

Թվերի կեսից ավելին մեզ հասած և հայտնի տեքստերում գրված են շարժական տոմարով:

Ի դեպ, տոմարական այն բոլոր հաշվումների մեջ, որոնք չեն առաջնորդվել Հովհաննես Իմաստասերի տոմարով և շարունակել են շարժական տոմարի հաշվումները, ավելամուտ մի տարի ունեցան հայկական թվականում 1317 թվականին, որովհետև հայկական ամսաթվերում, նահանջը հաշվի չառնելու հետևանքով, Հայկական թվականը չորս տարին մեկ օրով առաջ անցավ այնքան, որ նավասարդի 1-ը համընկավ հունվարի 1-ին և մի ավելորդ տարի մուտք գործեց հայկական թվականում: Ճիշտ է, շատ քիչ, բայց պատահում են թվականի այս սկզբունքի հաշվումները:

ԱԶԱՐԻԱ ԶՈՒՂԱՅԵՑՈՒ ԹՎԱԿԱՆՆԸ

1616 թվականին վերջացավ «Սարկավագադիր» կամ «Փոքր» կոչվող թվականի առաջին տարում կազմված ՇԼԲ աղյուսակը. անհրաժեշտ էր նոր աղյուսակ կազմել: Այդ գործը ձեռնարկեց տոմարագետ Ազարիա Զուղայեցին. նա կազմեց ՇԼԲ-ի նոր աղյուսակ, որով և սկիզբ դրեց նոր թվականի, որը կազմող հեղինակի անունով էլ կոչվեց Ազարիայի թվական:

Ազարիայի թվականը լայն ընդունելութուն չգտավ Հայաստանում. նա գործածվեց Պարսկաստանի և Հնդկաստանի գաղթավայրերում միայն: Կան հայերեն քիչ թվով տապանաքարեր և ձեռագրեր, որոնք թվագրված են այս թվականով:

Ազարիայի տված թվականը մեր ներկա թվականին վերածելու համար անհրաժեշտ է գումարել 1615 կամ 1616. եթե դեպքը տեղի է ունեցել մարտ ամսի 21-ից առաջ, գումարվում է 1616, իսկ եթե հետո՝ 1615: Պետք է նկատի ունենալ, որ Ազարիան իր տոմարում նոր ամանոր սահմանեց. նա նոր տարին օգոստոսի 11-ից տեղաշարժեց մարտի 21-ը: Բերենք Ազարիայի թվականի գործածման մի քանի փաստեր:

Նոր Զուղայի ս. Լուսավորիչ եկեղեցու գավթի մի տապանաքարի վրա կարդում ենք.

«Այս է տապանս Փանոսի,
Անմեղ մանկան նահատակի,
Կրտսեր որդի Խօջամայի,
Խէլօք տղալ քաղցր և բարի,

Կսկիծ եթող եղբարց սրտի,

Փոքր թիվն ձէ-ի,

Նախալ ամսին մին»¹:

Ազարիայի թվականի ձէ-ն՝ 107-ը հավասար է 1723-ի (107 + 1616=1732), իսկ նախա ամսի մեկը՝ հունիսի 19-ին:

Մեսրոպ Սեթն իր «Հայերը Հնդկաստանում» անգլերեն գրված աշխատության մեջ բերում է Հնդկաստանի Ագրա քաղաքի գերեզմանատանը գտնվող տապանաքարի հետևյալ արձանագրությունը (թարգմանում ենք անգլերենից). «Այս է տապան Սամուելի, որդի Ջոհրաբ բեկի: Վախճանվել է Ազարիայի 159 թվականին»²: Մեսրոպ Սեթը ինչպես միշտ, այստեղ ևս Ազարիայի թվականին գումարում է 1615 և Ջոհրաբ բեկի մահվան թվականը համարում 1774-ը³:

Փիրղալեմյանի հավաքած ձեռագրերի հիշատակարանների անտիպ ժողովածուի մեջ բերված է Ազարիա Ջուղայեցու թվականը պարունակող հետևյալ հիշատակարանը, «(Աւարտեցաւ ընդօրինակութիւն ձեռագրիս) ի թուարերական տումարի ՌձՅ, և ըստ նորում շրջանի՝ ԽԱ, և ի ճգալստենէ կենարարին՝ 1656, և լելիցն Աղամալ՝ 7081, ի հարապետութեանն Յակոբայ»³:

Հայկական մեծ թվականով ՌձՅ-ն հավասար է 1656-ի (1105 + 551=1656), Արարչության թվականը հիշված է աղեքսանդրյան հաշվով, ուստի 7081-ից պետք է հանենք 5425, կմնա 1656: Ջուղայեցու ԽԱ թվականը հավասար է 41+1615=1656: Այսպիսով, ձեռագիրը գրված է, անվիճելի, 1656 թվականին:

Նոր Ջուղան վերակառուցելու նպատակով քաղաքի աչքի ընկնող 26 հալ խոջաներ համատեղ մի պայմանագիր են կնքել Ազարիայի 154 թվականին. «Գրվեցավ թիվն 154 նախալ՝ 15»⁴,— կարդում ենք պայմանագրի վերջում: Ազարիայի 154 թվականը հավասար է մեր ներկա թվականի 1770-ին (1616 + 154=1770), իսկ նախալ 15-ը՝ հուլիսի 3-ին:

1798 թվականին Կալկաթայում տպված էֆիմերտեի մեջ բերված է հոռմեական, հին հայկական, արարչության, հիջրայի և Ազարիայի թվականների զուգահեռ մի ցանկ, ուր առաջին սյունակում ներկա թվականի 1752-ը համաձայնեցված է Ազարիայի 136-ին, հիջրայի 1165-ին, հայկական մեծ թվականի 1201-ին և

¹ Հ. Տեր-Հովհանյանց, Գատմություն նոր Ջուղայու, հատ. Ա, էջ 231:

² Mesrop Seth, Armenians in India, Calcutta, 1937, էջ 127:

³ ՀԳՄ ձեռ. № 4515, էջ 406:

⁴ Հ. Տեր-Հովհանյանց, Գատմություն նոր Ջուղայու, հատ. Ա, էջ 314:

հրեից թվականի 5512-ին¹: Ազարիայի 136 թվականը հավասար է 136+1616=1752: Հայկական մեծ թվականը հավասար է՝ 1201+ +551=1752: Հիշրայի 1165 թվականը դարձյալ հավասար է 1752 թվականին (այս մասին տես առջևում բերված հիշրայի աղյուսակները):

Ազարիա Ջուղայեցին, ի դեպ, փորձել է պարսկական անունները փոխել հայերեն. նա ամիսներին հետևյալ նոր անուններն է տվել.

Ցողաբեր—մարտի 21—ապրիլի 19
 Մաղկավեա—ապրիլի 20—մայիսի 19
 Գետահոս—մայիսի 20—հունիսի 18
 Պողաբեր—հունիսի 19—հուլիսի 18
 Առատահոս—հուլիսի 19—օգոստոսի 17
 Գոհուրքյուն—օգոստոսի 18—սեպտեմբերի 16
 Պողակիթ—սեպտեմբերի 17—հոկտեմբերի 16
 Տերևաթափ—հոկտեմբերի 17—նոյեմբերի 15
 Զյունաբեր—նոյեմբերի 16—դեկտեմբերի 15
 Սառուցյալ—Դեկտեմբերի 16—հունվարի 14
 Հողմաշունչ—հունվարի 15—փետրվարի 13
 Զյունահալ—փետրվարի 14—մարտի 15
 Մանիլալ—մարտի 16—մարտի 20

Տոմարական հաշվումների գործը դյուրացնելու համար, անհրաժեշտ ենք համարում բերել ներկայիս գործածական, հին հայկական և Ազարիայի ամիսների զուգահեռ ցանկը:

Հին հայկական ամիսների անուններն են.

- | | |
|-------------|-------------|
| 1. Նավասարդ | 8. Արեգի |
| 2. Հոռի | 9. Ահեկի |
| 3. Սահմի | 10. Մարերի |
| 4. Տրե | 11. Մարգաց |
| 5. Քաղոց | 12. Հրոտից |
| 6. Արաց | 13. Ավելյաց |
| 7. Մեհեկի | |

¹ Գրգուկ, որ կոչի էֆիմերտե, Կալկաթա, 1798, էջ 91—106:

Մ Ե Կ Ե Կ Ի			Մ Ե Կ Ե Կ Ի			Մ Ե Կ Ե Կ Ի			Մ Ե Կ Ե Կ Ի			Մ Ե Կ Ե Կ Ի			Մ Ե Կ Ե Կ Ի			Մ Ե Կ Ե Կ Ի											
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30
1	7	24	1	9	24	1	2	19	1	5	19	1	7	19	1	7	19	1	7	19	1	7	19	1	7	19	1	7	19
2	8	25	2	10	25	2	9	20	2	6	20	2	8	20	2	8	20	2	8	20	2	8	20	2	8	20	2	8	20
3	9	26	3	11	26	3	10	21	3	7	21	3	9	21	3	9	21	3	9	21	3	9	21	3	9	21	3	9	21
4	10	27	4	12	27	4	11	22	4	8	22	4	10	22	4	10	22	4	10	22	4	10	22	4	10	22	4	10	22
5	11	28	5	13	28	5	12	23	5	9	23	5	11	23	5	11	23	5	11	23	5	11	23	5	11	23	5	11	23
6	12	29	6	14	29	6	13	24	6	10	24	6	12	24	6	12	24	6	12	24	6	12	24	6	12	24	6	12	24
7	13	30	7	15	30	7	14	25	7	11	25	7	13	25	7	13	25	7	13	25	7	13	25	7	13	25	7	13	25
8	14	1	8	16	1	8	15	26	8	12	26	8	14	26	8	14	26	8	14	26	8	14	26	8	14	26	8	14	26
9	15	2	9	17	2	9	16	27	9	13	27	9	15	27	9	15	27	9	15	27	9	15	27	9	15	27	9	15	27
10	16	3	10	18	3	10	17	28	10	14	28	10	16	28	10	16	28	10	16	28	10	16	28	10	16	28	10	16	28
11	17	4	11	19	4	11	18	29	11	15	29	11	17	29	11	17	29	11	17	29	11	17	29	11	17	29	11	17	29
12	18	5	12	20	5	12	19	30	12	16	30	12	18	30	12	18	30	12	18	30	12	18	30	12	18	30	12	18	30
13	19	6	13	21	1	13	20	1	13	17	1	13	19	1	13	19	1	13	19	1	13	19	1	13	19	1	13	19	1
14	20	7	14	22	2	14	21	2	14	18	2	14	20	2	14	20	2	14	20	2	14	20	2	14	20	2	14	20	2
15	21	8	15	23	3	15	22	3	15	19	3	15	21	3	15	21	3	15	21	3	15	21	3	15	21	3	15	21	3
16	22	9	16	24	4	16	23	4	16	20	4	16	22	4	16	22	4	16	22	4	16	22	4	16	22	4	16	22	4
17	23	10	17	25	5	17	24	5	17	21	5	17	23	5	17	23	5	17	23	5	17	23	5	17	23	5	17	23	5
18	24	11	18	26	6	18	25	6	18	22	6	18	24	6	18	24	6	18	24	6	18	24	6	18	24	6	18	24	6
19	25	12	19	27	7	19	26	7	19	23	7	19	25	7	19	25	7	19	25	7	19	25	7	19	25	7	19	25	7
20	26	13	20	28	8	20	27	8	20	24	8	20	26	8	20	26	8	20	26	8	20	26	8	20	26	8	20	26	8
21	27	14	21	29	9	21	28	9	21	25	9	21	27	9	21	27	9	21	27	9	21	27	9	21	27	9	21	27	9
22	28	15	22	30	10	22	29	10	22	26	10	22	28	10	22	28	10	22	28	10	22	28	10	22	28	10	22	28	10
			23	31	11	23	30	11	23	27	11	23	29	11	23	29	11	23	29	11	23	29	11	23	29	11	23	29	11
23	1	16	24	1	12	24	1	12	24	28	12	24	1	13	24	1	13	24	1	13	24	1	13	24	1	13	24	1	13
24	2	17	25	2	13	25	2	13	25	29	13	25	2	14	25	2	14	25	2	14	25	2	14	25	2	14	25	2	14
25	3	18	26	3	14	26	3	14	26	30	14	26	3	15	26	3	15	26	3	15	26	3	15	26	3	15	26	3	15
26	4	19	27	4	15	27	4	15	27	1	15	27	4	16	27	4	16	27	4	16	27	4	16	27	4	16	27	4	16
27	5	20	28	5	16	28	5	16	28	2	16	28	5	17	28	5	17	28	5	17	28	5	17	28	5	17	28	5	17
28	6	21	29	6	17	29	6	17	29	3	17	29	6	18	29	6	18	29	6	18	29	6	18	29	6	18	29	6	18
29	7	22	30	7	18	30	7	18	30	4	18	30	7	19	30	7	19	30	7	19	30	7	19	30	7	19	30	7	19
30	8	23								5	18		8	20		8	20		8	20		8	20		8	20		8	20

Մ Ե Կ Ե Կ Ի 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23

Առաջին հալ տպագրիչներից մեկի՝ Հովհաննես Տերզնեցու՝
Երուսաղեմի պատրիարքին ուղղած նամակի թվականն է հիշված
«Հայոց մեծաց ՌԼԲ ... և մահմետական ՋԼ» թվականին:

Հիշրալի 990 թվականը հավասար կլինի 359.055 օրի:
Արեգակնային 1500 տարիները՝ 328.725 օրի

Կմնա՝ 30.330 օր:

Արեգակնային 80 տարիների համար՝ 22.220 օր.

3 տարվա համար՝ 1.096 օր.

Կմնա՝ 14 օր:

Հետևապես, $1500 + 80 + 3 = 1583$ թվականին: Այդ համապա-
տասխանում է հայկական թվականին՝ $1032 + 551 = 1583$:

Ներկա աղյուսակներն օգտագործելիս պետք է նկատի ունե-
նալ, որ 1582 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև 1590 թվականը
ներառյալ օրերի թիվը պիտի պակասեցվի 10 օրով: Նահանջ դա-
րերի համար՝ 1700, 1800, 1900, 2100, վերջին աղյուսակների
օրերը պետք է ավելացնել մեկ օրով:

ՎՐԱՑ ՔՐՈՆԻԿՈՆԻ ԹՎԱԿԱՆԸ

Վրացերենից հայերեն թարգմանված սկզբնաղբյուրներում՝
մեկ-մեկ հանդիպում ենք վրաց քրոնիկոնի մեծ և փոքր թվական-
ների գործածությանը:

Վրաց քրոնիկոնի մեծ թվականը, մեր ներկա թվականին վե-
րածելու համար, անհրաժեշտ է տված քրոնիկոնի թվականի վրա
ավելացնել 780: Բերենք օրինակներ:

Քրոնիկոնի 343-ին [Դավիթ] Շինարարը Անի քաղաքը խել
է Ալիասալանից և կոտորել նրանց¹: Դեպքը տեղի է ունեցել մեր
ներկա թվականի 1123-ին, քրոնիկոնի 343-ին պետք է ավելացնել
780 ($343 + 780 = 1123$):

«[Գեորգը] գրավեց Անին... քրոնիկոնի երեք հարյուր ութ-
սունին, ձերբակալեց Սալգուխին...»: Դեպքը տեղի է ունեցել մեր
ներկա թվականի 1160-ին ($380 + 780 = 1160$):

Վրաց քրոնիկոնի փոքր թվականը մեր ներկա թվականին
վերածելու համար անհրաժեշտ է 780 թվականի վրա գումարել
տոմարական մի շրջան, այսինքն՝ 532 թվականը ևս:

¹ Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին,
հաս. բ. Երևան, 1946, էջ 37:

² Նույն տեղը, էջ 43:

«Շահ-Իսմայելի որդի Շահ-Քամազն իր հորից հետո թագավոր նստեց քրոնիկոնի 190-ին»¹: Քրոնիկոնի փոքր թվականով 190-ը հավասար է 1502-ի ($190 + 780 + 532 = 1502$):

«Սուլթան Մուրադ խոնթքարի գալը և Երևանի... բերդի գրավումը քրոնիկոնի 325-ին»²: Քրոնիկոնի փոքր թվականով 325-ը հավասար է 1637-ի ($325 + 780 + 532 = 1637$):

ՀՈՐԵԼՅԱՆԻ ԹՎԱԿԱՆ

Հորելյանն ընդգրկում է հիսուն տարվա մի շրջան և հաջ մատենագրության մեջ գործ է ածվել գլխավորապես տոմարական աշխատություններում, հիշատակարանների մեջ:

Ստեփանոս գրիչը Տիգրանակերտում իր ընդօրինակած ձեռագրի թվականի մասին հետևյալ տեղեկությունն է հաղորդում.

«Գծագրեցաւ գիրս սորա
Ի թվականիս մեր Հայկազնեայ
Քսան և մէկ յոթելնեայ
Եւ ութը թիւ լաւել վերայ»³:

Հորելյանն ընդունելով հիսուն տարվա շրջան, ձեռագիրը գրված կլինի 1609 թվականին՝ $21 \times 50 + 8 + 551 = 1609$:

Թորոս գրիչը Կարինում իր ընդօրինակած ձեռագրի թվականը հայտնում է չափածո հետևյալ հիշատակարանում.

«Այս հրաշափառ մեծի տառիս,
Քեզ երանի թէ հանդիպիս...
Հազար, հարիւր, յոթելնիս,
Տասն և հինգ թիւ այլ ի նոյն լեռիս»⁴:

Ձեռագիրը գրված է 1716-ին ($1000 + 100 + 50 + 15 + 551 = 1716$):

Փարիզի ազգային մատենադարանի Հայկական բաժնի № 61 ձեռագիրը գրել է Սասպեկ Կաֆայեցին «... Ի թուականութեանս Հայագուն սեռի և Յարեթական տումարի, քսան և երկու յոթելինի, և միակ եւթն և տասնեկի...»⁵: Քսաներկու հորելյանը հավասար է 1100-ի, նրան եթե գումարենք 17 և հայկական թվականը, հավասար է 1668-ի ($50 \times 22 + 17 + 551 = 1668$):

¹ Լ. Մելիքեթ-Քեզ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. ք, էջ 110:

² Նույն տեղը, էջ 113—114:

³ ՀԳՄ ձեռ. № 9041, Թ. 125ա:

⁴ ՀԳՄ ձեռ. № 8159, Թ. 187բ:

⁵ F. Macler, Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale, էջ 30:

Անթիլիասի Կաթողիկոսարանի № 10 ձեռագրի թվականն է՝
 «Ի թուականիս Հայոց քսան յորելենի,
 Եւ հարիւրերորդի, հնգեակ հնգի,
 Թիւ Արամեան բովանդակի»¹:

Քսան հոգելյանը հավասար է 1000-ի, նրա վրա ավելացրած 100 և «հնգեակ հնգի» ու հայկական թվականը՝ 551, ընդհանուրը կլինի 1676:

ԸՆԳԻԿԵՏԻՈՆԻ ԹՎԱԿԱՆ,

Ընդիկտոնն է կոչվել 15 տարվա մի շրջանը: Նա սկսել է գործածվել մեր թվականության 313 թվականից. առաջին ընդիկտոնը եղել է 313—328 թվականներին, երկրորդը՝ 328—342 թվականներին և այսպես 15 տարի հաջորդաբար շարունակվել: Ընդիկտոնը մեր մատենագրության մեջ օգտագործելիս հիշվում է նաև քանիներորդ ընդիկտոնն է՝ սկսած 313 թվականից, և ընդիկտոնի քանիներորդ տարին է:

Հայկական ՄՍՌ Պետական Մատենադարանի № 906 ձեռագրի ընդօրինակման ժամանակի մասին հիշատակարանում ասված է. «Գրեցաւ աստուածագիծ պատգամս այս ի թուականիս Հայոց, յորում ՆՂԵ Էր ի [ն]դիկտոնին Հոռոմոց, լերեքտասաներորդ ամին, ի թագաւորութեանն Մոնամախա կայսեր, իսկ մեր լուսաւորութեանս եւթն հարիւր և քառասուն և չորս»²: Ձեռագիրը գրվել է 1046 թվականին, հայկական թվականով 495 + 551 = 1046-ին: 1046 թվականին իրոք եղել է ընդիկտոնի 13-րդ տարին: Այդ թվականը համընկել է Կոստանդին Մոնամախի գահակալության տարիներին (նա գահակալել է 1042—1053 թթ.): Լուսավորչի թվականն էլ այստեղ ճիշտ կարող է լինել, եթե հաշվելու լինենք 300 թվականից:

Ընդիկտոնը, տասնհինգ տարիների շրջանի համար, շատ է օգտագործվել հայկական հիշատակարաններում և ծածկագիր թվականների մեջ:

ԲՆՍԵՔԻՍՏՈՆԻ, ՈԼԻՄՊԻԱԳԻ, ԻԴՈՍԻ ԵՎ ՆՈՆՈՍԻ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ

Հալ տոմարական գրականության մեջ և հիշատակարանների ծածկագրերում Բեսեքիստոնը օգտագործվել է 4 տարվա շրջանի համար, ոլիմպիադը նույնպես 4 տարվա, իդոսը՝ 8 տարվա, նոնոսը՝ 5 տարվա:

¹ Անթիլիասի ձեռ. № 10, Թ. 172ա:

² Գ. Կ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 230:

Պրոֆ. Ն. Ադոնցը հրատարակել է ձեռագիր քերականության հետևյալ հիշատակարանը. «Յամի երեսներորդի երկերիւրերորդի յոթելեանի, միոյ բեսեքիստոնի, մին ողիմպիադի ի թուարբերութեան ժամանակի մարդեղութեան փրկչի, նալ և ըստ համարոյ Յարեթագեն տումարի հարիւր երեսուն և երկու իդոսի երկրորդ ամին եղև սկիզբն և լաւարտումն գրի, որ է տոմար և քերական»¹: Ձեռագիրը գրված է 1608 թուականին. 32 հոբելյանը հավասար է 1600-ի, մեկ բեսեքիստոնը՝ 4, մեկ ողիմպիադը՝ 4, ընդամենը՝ 1608 թ.: Նույն հաշիվն է ստացվում նաև հայկական թվականի հաշվով. 132 իդոսը հավասար է 1056-ի, նրան գումարած 551 հավասար է 1607-ի, իսկ սրա՝ երկրորդ տարին կլինի 1608-ը:

ՀՈՒՆՅԱՆ ԵՎ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԱՄՍԱԹՎԵՐԻ ՀԱՇՎՈՒՄԸ

Հայ մատենագրության մեջ Հուլյան և Գրիգորյան՝ գործ են ածվում հին և նոր տոմար անուններով:

Հուլյան տոմարը, ինչպես հայտնի է, մշակել է Սոզիգեն անունով եգիպտացի մի տոմարագետ և պաշտոնապես գործածության մեջ է դրվել 46 թվականին մ. թ. ա.: Այդ տոմարը դարեր շարունակ ընդունված է եղել ոչ միայն Հռոմում, այլև նրա հարեվան մի շարք երկրներում, այդ թվում նաև Հալաոստանում: Ըստ Հուլյան տոմարի, տարին ունի 365 $\frac{1}{4}$ օր, 3 տարին հաշվում են 365 օր, իսկ չորրորդը՝ նահանջը՝ 366 օր (վերջին ավելի մի օրը կազմվում է չորս տարիների $\frac{1}{4}$ օրերից):

Հուլյան այս տոմարը պաշտոնապես ընդունված է եղել քրիստոնեական եկեղեցու կողմից Նիկիայի տիեզերական ժողովում 325 թվականին: Այդ նույն ժողովում գարնանային գիշերահավասարը, որը քրիստոնեական տոները հաշվելու ելման կետն է հանդիսանում, սահմանվել է մարտի 21-ը:

Իրականության մեջ, Սոզիգենի կազմած այդ տոմարը պարունակում էր որոշ սխալ, որովհետև նա, աստղաբաշխական ճիշտ հաշվումներով, պակաս էր 11 րոպե 14 վայրկյան, ուստի և գիշերահավասարը 128 տարվա ընթացքում մի օր առաջ էր տեղի ունենում:

Քրիստոնեական եկեղեցին տոմարական այդ սխալ հաշվումներով առաջնորդվեց մինչև XVI դարը, երբ գիշերահավասարը

¹ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, էջ XXIV:

մարտի 21-ից իջել էր մարտի 11-ը, և նա ետ էր մնացել 10 օրով: Փաստորեն փոխվել էր Նիկիական ժողովում սահմանված կարգը, իսկ դրա հետ նաև՝ տոմարական մյուս բոլոր հաշիվները՝ վերադիրը, յոթներկյակը, ոսկեգիրը և այլն: «Ոսկեգիրը, — ինչպես ծաղրելով ասելիս են եղել այն ժամանակ, — վեր է ածվել արճիճի գրի»:

Ստեղծված տոմարական այս խառնաշփոթությունը կարգավորելու նպատակով, Գրիգորիոս 18-րդ պապը տոմարի մեջ կատարեց որոշ բարեփոխություն՝ ետ մնացած օրերի վրա ավելացնելով 10 օր, 1582 թվականի հոկտեմբերի 4-ը, ուրբաթ, կարգադրեց հաշվել հոկտեմբերի 15, դրանով զարնանամուտը մարտի 11-ից վերադարձրեց մարտի 21-ը: Որոշվեց չորս տարին մեկ անգամ ավելացնել երեք օր: Այդ հաշվով՝

1582—1700՝ 10 օր

1700—1800՝ 11 օր

1800—1900՝ 12 օր

1900—2100՝ 13 օր

Գրիգորիոս պապի տոմարական այս բարեփոխությունն ընդունվեց և գործադրվեց Ֆրանսիայում, Իտալիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում և ուրիշ երկրներում:

Հայ մատենագրության մեջ, ընդհանրապես, առաջնորդվում են հուլյան տոմարով: Բայց մեկ-մեկ պատահում է, երբ հայ ունիթոռները սկսած XVII դարից գործ են ածում Գրիգորյան տոմարը:

Ցանկանալով դյուրացնել ուսումնասիրողների գործը՝ հայ մատենագրության մեջ հանդիպած տոմարական հաշվումները կատարելիս, անհրաժեշտ համարեցինք կազմել տոմարական ստորև բերված տախտակը: Առաջին շարքը՝ ներկայիս թվականն է, երկրորդը՝ հայկական մեծ թվականը, երրորդը՝ տարվա լի կամ նահանջ լինելը, չորրորդը՝ «Տարեգիր»-ը, հինգերորդը՝ «Վերադիր»-ը, վեցերորդը՝ «Շոթներկյակ»-ը, եոթերորդը՝ «Տանուտեք»-ը, ութերորդը՝ հայկական շարժական ամանորը և իններորդը՝ հայկական ամանորը ներկա ամսաթվով: Վերջին աղյուսակը շաբաթացույցն է:

ՏՈՄԱՐԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ

Ներկա թվ.	Հայկ. մեծ. թվ.	Նախնայ	Տարեգիր	Վերադիր	Յւրքները թվ.	Տախտակ	Հայկ. շարժ. ամսեր	Ներկա ամսաթվով
1085	534	—	Վ	2	դ	խոյ	մարտ. 8	փետ. 28
1086	535	—	կ	13	դ	ցուլ	—	—
1087	536	—	է	24	ե	եկամվ.	—	—
1088	537	նահ	ջո	5	դէ	խեց.	—	—
1089	538	—	ի	16	ա	առ.	մարտ.	փետ. 27
1090	539	—	ա	27	բ	կույս	—	—
1091	540	—	շ	8	դ	կշիւ	—	—
1092	541	նահ	ըէ	19	դե	կար.	—	—
1093	542	—	ջ	30	դ	ադ.	մարտ. 10	փետ. 26
1094	543	—	հ	11	է	այծ.	—	—
1095	544	—	դ	22	ա	ջրհ.	—	—
1096	545	նահ	աշ	3	բզ	ձուկ	—	—
1097	546	—	կ	14	դ	խոյ	մարտ. 11	փետ. 25
1098	547	—	է	25	ե	ցուլ	—	—
1099	548	—	մ	6	դ	եկամվ.	—	—
1100	549	նահ	լի	17	էա	խեց.	—	—
1101	550	—	ա	28	բ	առ.	մարտ. 12	փետ. 24
1102	551	—	շ	9	դ	կույս	—	—
1103	552	—	բ	21	դ	կշ.	—	—
1104	553	նահ	աջ	2	եզ	կար.	—	—
1105	554	—	հ	13	է	ադ.	մարտ. 13	փետ. 23
1106	555	—	դ	24	ա	այծ.	—	—
1107	556	—	ա	5	բ	ջրհ.	—	—
1108	557	նահ	հկ	16	դդ	ձուկ	—	—
1109	558	—	փ	27	ե	խոյ	մարտ. 14	փետ. 22
1110	559	—	մ	8	դ	ցուլ	—	—
1111	560	—	լ	19	է	եկամվ.	—	—
1112	561	նահ	բա	30	աբ	խեց.	—	—

Ներկա թվ.	Համար. մեծ. թվ.	Նահանջ	Տարեդիր	Վերադարձ	Յոթնամյակ	Տասնամյակ	Հայկ. շարժ. ամսանոթ	Ներկա ամսաթիվով
1113	562	—	հ	11	դ	առ.	մարտ. 15	փետ. 21
1114	563	—	բ	22	դ	կույս	—	—
1115	564	—	ա	3	ե	կշ.	—	—
1116	565	նահ	խլ	14	դէ	կար.	—	—
1117	566	—	դ	25	ա	ադ.	մարտ. 16	փետ. 20
1118	567	—	ո	6	բ	այժ.	—	—
1119	568	—	թ	17	դ	լրհ.	—	—
1120	569	նահ	սա	28	դե	ձուկ	—	—
1121	570	—	ա	9	դ	խոյ	մարտ. 17	փետ. 19
1122	571	—	ե	21	է	ցուլ	—	—
1123	572	—	չ	2	ա	եկամվ.	—	—
1124	573	նահ	ձհ	13	բդ	խեց.	—	—
1125	574	—	բ	24	դ	առ.	մարտ. 18	փետ. 18
1126	575	—	յ	5	ե	կույս	—	—
1127	576	—	խ	16	դ	կշ.	—	—
1128	577	նահ	ցբ	27	էա	կար.	—	—
1129	578	—	ո	8	բ	ադ.	մարտ. 19	փետ. 17
1130	579	—	թ	19	դ	այժ.	—	—
1131	580	—	ո	30	դ	լրհ.	—	—
1132	581	նահ	յմ	11	եդ	ձուկ	—	—
1133	582	—	ե	22	է	խոյ	մարտ. 20	փետ. 16
1134	583	—	չ	3	ա	ցուլ	—	—
1135	584	—	ձ	14	բ	եկամվ.	—	—
1136	585	նահ	բա	25	դդ	խեց.	—	—
1137	586	—	յ	6	ե	առ.	մարտ. 21	փետ. 15
1138	587	—	խ	17	դ	կույս	—	—
1139	588	—	ց	28	է	կշ.	—	—
1140	589	նահ	դձ	9	աբ	կար.	—	—

Ներկա թվ.	Հայկ. մեծ. թվ.	Նահանջ	Տարեգիր	Վերադիր	Յոթնորոշակ	Տասնուներ	Հայկ. շաբթ. ամսանոթ	Ներկա ամսաթվով
1141	590	—	թ	21	դ	ադ.	ժաբդ. 22	փետ. 14
1142	591	—	ւ	2	դ	այծ.	—	—
1143	592	—	ծ	13	ե	ջբհ.	—	—
1144	593	նահ	դե	24	դէ	ձուկ	—	—
1145	594	—	չ	5	ւ	խոյ	ժաբդ. 23	փետ. 13
1146	595	—	ժ	16	բ	ցուչ	—	—
1147	596	—	զ	27	դ	եկազ.	—	—
1148	597	նահ	նյ	8	դե	խեց.	—	—
1149	598	—	խ	19	դ	առ.	ժաբդ. 24	փետ. 12
1150	599	—	ւզ	30	է	կույս	—	—
1151	600	—	դ	11	ւ	կշխո	—	—
1152	601	նահ	ժթ	22	բդ	կար.	—	—
1153	602	—	ւ	3	դ	ադ.	ժաբդ. 25	փետ. 11
1154	603	—	ծ	14	ե	այծ.	—	—
1155	604	—	դ	25	դ	ջբհ.	—	—
1156	605	նահ	աչ	6	էա	ձուկ	—	—
1157	606	—	ժ	17	բ	խոյ	ժաբդ. 26	փետ. 10
1158	607	—	զ	28	դ	ցուչ	—	—
1159	608	—	ն	9	դ	եկազ.	—	—
1160	609	նահ	էդ	21	եդ	խեց.	—	—
1161	610	—	ւզ	2	է	առ.	ժանդ. 27	փետ. 9
1162	611	—	դ	13	ւ	կույս	—	—
1163	612	—	դ	24	բ	կշխո	—	—
1164	613	նահ	չն	5	դդ	կար.	—	—
1165	614	—	ծ	16	ե	ադ.	ժաբդ. 28	փետ. 8
1166	615	—	ւ	27	դ	այծ.	—	—
1167	616	—	հ	8	է	ջբհ.	—	—
1168	617	նահ	խծ	19	աբ	ձուկ	—	—

Ներկա թիվ	Համ. ձեռ. թիվ	Նամանիչ	Տարեգիր	Վերագիր	Թոթերյակ	Տանուներ	Հայկ. շարժ. ամսնոր	Ներկա ամսաթիվով
1169	618	—	Վ	30	դ	խոյ	ժարգ. 29	փետ. 7
1170	619	—	Պ	11	դ	ցուլ	—	—
1171	620	—	է	22	ե	եկազ.	—	—
1172	621	նահ	Չպ	3	դէ	խեց.	—	—
1173	622	—	դ	14	ա	առ.	ժարգ. 30	փետ. 6
1174	623	—	դ	25	բ	կույս	—	—
1175	624	—	շ	6	դ	կշիւ	—	—
1176	625	նահ	կծ	17	դե	կար.	—	—
1177	626	—	ւ	28	դ	ազ.	հրոս. 1	փետ. 5
1178	627	—	ւ	9	է	այծ.	—	—
1179	628	—	բ	21	ա	Չբհ.	—	—
1180	629	նահ	ազ	2	բզ	ձուկ	—	—
1181	630	—	կ	13	դ	խոյ	հրոս. 2	փետ. 4
1182	631	—	է	24	ե	ցուլ	—	—
1183	632	—	Չ	5	դ	եկազ.	—	—
1184	633	նահ	լի	16	էա	խեց.	—	—
1185	634	—	ա	27	բ	առ.	հրոս. 3	փետ. 3
1186	635	—	շ	8	դ	կույս	—	—
1187	636	—	բ	19	դ	կշիւ	—	—
1188	637	նահ	աՉ	30	եզ	կար.	—	—
1189	638	—	ւ	11	է	ազ.	հրոս. 4	փետ. 2
1190	639	—	դ	22	ա	այծ.	—	—
1191	640	—	ո	3	բ	Չբհ.	—	—
1192	641	նահ	հկ	14	դդ	ձուկ	—	—
1193	642	—	է	25	ե	խոյ	հրոս. 5	փետ. 1
1194	643	—	ճ	6	դ	ցուլ	—	—
1195	644	—	լ	17	է	եկազ.	—	—
1196	645	նահ	բա	28	աբ	խեց.	—	—

Ներկա թվ.	Հայկ. մեծ. թվ.	Նահանգ	Տարեգիր	Վերագիր	Յնթներյալ	Տառուներ	Հայկ. շարժ. ամսանոր	Ներկա ամսաթվով
1197	646	—	2	9	դ	առ.	հրտա. 6	հունվ. 31
1198	647	—	ը	21	դ	կույտ	—	—
1199	648	—	ռ	2	ե	կշ.	—	—
1200	649	Նահ	մճ	31	զէ	կար.	—	—
1201	650	—	դ	24	ա	աղ.	հրտա. 7	հունվ. 30
1202	651	—	ո	5	բ	այծ.	—	—
1203	652	—	հ	16	դ	ըրհ.	—	—
1204	653	Նահ	քփ	27	դե	ձուկ	—	—
1205	654	—	մ	8	դ	խոյ	հրտա. 8	հունվ. 29
1206	655	—	լ	19	է	ցուլ	—	—
1207	656	—	բ	30	ա	եկամ.	—	—
1208	657	Նահ	ձճ	11	բդ	խեց.	—	—
1209	658	—	ը	22	դ	առ.	հրտա. 9	հունվ. 28
1210	659	—	ռ	3	ե	կույտ	—	—
1211	660	—	խ	14	դ	կշխ	—	—
1212	661	Նահ	եդ	25	էա	կար.	—	—
1213	662	—	ո	6	բ	աղ.	հրտա. 10	հունվ. 27
1214	663	—	թ	17	դ	այծ.	—	—
1215	664	—	ո	28	դ	ըրհ.	—	—
1216	665	Նահ	յմ	9	եդ	ձուկ	—	—
1217	666	—	ե	21	է	խոյ	հրտա. 11	հունվ. 26
1218	667	—	չ	2	ա	ցուլ	—	—
1219	668	—	ձ	13	բ	եկամ.	—	—
1220	669	Նահ	թը	24	դդ	խեց.	—	—
1221	670	—	յ	5	ե	առ.	հրտա. 12	հունվ. 25
1222	671	—	խ	16	դ	կույտ	—	—
1223	672	—	ց	27	է	կշ.	—	—
1224	673	Նահ	չո	8	աբ	կար.	—	—

Ներկա թիվ	Հայկ. մեծ. թիվ	Նախնիք	Տարեգիր	Վերագիր	Ծնթնթիվ	Տառադր	Հայկ. շարժ. ամսանոթ	Ներկա ամսաթիվ
1225	674	—	Բ	19	Գ	ադ.	հրատ. 13	հունվ. 24
1226	675	—	ս	30	դ	այծ.	—	—
1227	676	—	յ	11	ե	ըբհ.	—	—
1228	677	Նահ	դե	22	դե	ձուկ	—	—
1229	678	—	չ	3	ա	խոյ	հրատ. 14	հունվ. 23
1230	679	—	ձ	14	բ	ցուլ	—	—
1231	680	—	բ	25	դ	եկազ.	—	—
1232	681	Նահ	նյ	6	դե	խեց.	—	—
1233	682	—	խ	17	դ	առ.	հրատ. 15	հունվ. 22
1234	683	—	ց	28	ե	կույս	—	—
1235	684	—	դ	9	ա	կշ.	—	—
1236	685	Նահ	ժԲ	21	բդ	կար.	—	—
1237	686	—	ս	2	դ	ադ.	հրատ. 16	հունվ. 21
1238	687	—	ծ	13	ե	այծ.	—	—
1239	688	—	դ	24	դ	ըբհ.	—	—
1240	689	Նահ	պչ	5	էա	ձուկ	—	—
1241	690	—	ժ	16	բ	խոյ	հրատ. 17	հունվ. 20
1242	691	—	զ	27	դ	ցուլ	—	—
1243	692	—	ն	8	դ	եկազ.	—	—
1244	693	Նահ	ծխ	19	եդ	խեց.	—	—
1245	694	—	պ	30	ե	առ.	հրատ. 18	հունվ. 19
1246	695	—	դ	11	ա	կույս	—	—
1247	696	—	ժ	22	բ	կշ.	—	—
1248	697	Նահ	զա	3	դդ	կար.	—	—
1249	698	—	ծ	14	ե	ադ.	հրատ. 19	հունվ. 18
1250	699	—	դ	25	դ	այծ.	—	—
1251	700	—	պ	6	ե	ըբ.	—	—
1252	701	Նահ	խծ	17	աբ	ձուկ	—	—

Ներկա թվ.	Հալվ. ժեծ. թվ.	Նախածո	Տարեգիր	Վերադիր	Յոթնեւերյակ	Տասնուտեր	Հայկ. շարժ. ամսանոր	Ներկա ամսաթվով
1253	702	—	Վ	28	դ	խոյ	հրոտ. 20	հունվ. 17
1254	703	—	ն	9	դ	ցուլ	—	—
1255	704	—	է	21	ե	եկազ.	—	—
1256	705	նախ	ջա	2	դէ	խեց.	—	—
1257	706	—	դ	13	ա	առ.	հրոտ. 21	հունվ. 16
1258	707	—	դ	24	բ	կույս	—	—
1259	708	—	շ	5	դ	կշ.	—	—
1260	709	նախ	կծ	16	դե	կար.	—	—
1261	710	—	ւ	27	դ	ադ.	հրոտ. 22	հունվ. 15
1262	711	—	ճ	8	է	այծ.	—	—
1263	712	—	խ	19	ա	ջրհ.	—	—
1264	713	նախ	ազ	30	բդ	ձուկ	—	—
1265	714	—	կ	11	դ	խոյ	հրոտ. 23	հունվ. 14
1266	715	—	է	22	ե	ցուլ	—	—
1267	716	—	ջ	3	դ	եկազ.	—	—
1268	717	նախ	ճդ	14	էա	խեց	—	—
1269	718	—	դ	25	բ	առ.	հրոտ. 24	հունվ. 13
1270	719	—	շ	6	դ	կույս	—	—
1271	720	—	կ	17	դ	կշ.	—	—
1272	721	նախ	վւ	28	եդ	կար.	—	—
1273	722	—	ճ	9	է	ադ.	հրոտ. 25	հունվ. 12
1274	723	—	խ	21	ա	այծ.	—	—
1275	724	—	ո	2	բ	ջրհ.	—	—
1276	725	նախ	հկ	13	դդ	ձուկ	—	—
1277	726	—	է	24	ե	խոյ	հրոտ. 26	հունվ. 11
1278	727	—	ջ	5	դ	ցուլ	—	—
1279	728	—	լ	16	է	եկազ.	—	—
1280	729	նախ	բա	27	աբ	խեց.	—	—

Ներկա թվ.	Հայկ. մեծ. թվ.	Նահանջ	Տարեգիր	Վերադիր	Թոթյունը յսկ	Տանուտեր	Հայկ. շարժ. ամանոր	Ներկա ամսաթիվով
1281	730	—	չ	8	դ	առ.	հրոտ. 27	հունվ. 10
1282	731	—	ը	19	դ	կույս	—	—
1283	732	—	ռ	30	ե	կշիռ	—	—
1284	733	նահ	մճ	11	դէ	կար.	—	—
1285	734	—	դ	22	ա	աղեղ.	հրոտ. 28	հունվ. 9
1286	735	—	ո	3	բ	այծ.	—	—
1287	736	—	հ	14	դ	ըրհ.	—	—
1288	737	նահ	ըէ	25	դե	ձուկ	—	—
1289	738	—	մ	6	դ	խոյ	հրոտ. 29	հունվ. 8
1290	739	—	լ	17	է	ցուլ	—	—
1291	740	—	բ	28	ա	եկաղ.	—	—
1292	741	նահ	ոՂ	9	բդ	խեց.	—	—
1293	742	—	ը	21	դ	առ.	հրոտ. 30	հունվ. 7
1294	743	—	ռ	2	ե	կույս	—	—
1295	744	—	խ	13	դ	կշ.	—	—
1296	745	նահ	դ	24	էա	կար.	—	—
1297	746	—	ա	5	բ	ադ.	աղեղ. 1	հունվ. 6
1298	747	—	հ	16	դ	այծ.	—	—
1299	748	—	ա	27	դ	ըրհ.	—	—
1300	749	նահ	յմ	8	եդ	ձուկ	—	—
1301	750	—	լ	19	է	խոյ	աղեղ. 2	հունվ. 5
1302	751	—	բ	30	ա	ցուլ	—	—
1303	752	—	ձ	11	բ	եկաղ.	—	—
1304	753	նահ	թը	22	դդ	խեց.	—	—
1305	754	—	դ	3	ե	առ.	աղեղ. 3	հունվ. 4
1306	755	—	խ	14	դ	կույս	—	—
1307	756	—	ե	25	է	կշ.	—	—
1308	757	նահ	չո	6	աբ	կար.	—	—

Ներկա թվ.	Հայկ. մեծ. թվ.	Նահանջ	Տարեգիր	Վերադիր	Յոթնորդակ	Տարևանդ	Հայկ. շարժ. ամսանոթ	Ներկա ամսաթիվ
1309	758	—	Բ	17	դ	ադ.	ադեկ. 4	հունվ. 3
1310	759	—	ւ	28	դ	այժ.	—	—
1311	760	—	յ	9	ե	ջրհ.	—	—
1312	761	նահ	դե	21	դե	ձուկ	—	—
1313	762	—	չ	2	ա	խոյ	ադեկ. 5	հունվ. 2
1314	763	—	ձ	13	բ	ցուլ	—	—
1315	764	—	բ	24	դ	եկամ.	—	—
1316	765	նահ	նյ	5	դե	խեց.	—	—
1317	766	—	խ	16	դ	առ.	նամ. 1	հունվ. 1
1318	767	—	ց	27	ե	կույս	—	—
1319	768	—	դ	8	ա	կշ.	—	—
1320	769	նահ	ժԲ	19	բդ	կար.	—	—
1321	770	—	ւ	30	դ	ադ.	նամ. 2	դեկ. 31
1322	771	—	յ	11	ե	այժ.	—	—
1323	772	—	դ	22	դ	ջրհ.	—	—
1324	773	նահ	պչ	3	էա	ձուկ	—	—
1325	774	—	ձ	14	բ	խոյ	նամ. 3	դեկ. 30
1326	775	—	բ	25	դ	ցուլ	—	—
1327	776	—	ն	6	դ	եկամ.	—	—
1328	777	նահ	ժխ	17	եդ	խեց.	—	—
1329	778	—	ց	28	ե	առ.	նամ. 4	դեկ. 29
1330	779	—	դ	9	ա	կույս	—	—
1331	780	—	ժ	21	բ	կշ.	—	—
1332	781	նահ	զս	2	զդ	կար.	—	—
1333	782	—	ժ	13	ե	ադ.	նամ. 5	դեկ. 28
1334	783	—	դ	24	դ	այժ.	—	—
1335	784	—	պ	5	ե	ջրհ.	—	—
1336	785	նահ	խժ	16	աբ	ձուկ	—	—

Ներկա թիվ.	Հայկ. մեծ. թիվ.	Նահանջ	Տարեգիր	Վերադարձ	Յոթնամյակ	Տարեգիր	Հայկ. շարժ. ամսեր	Ներկա ամսերի
1337	786	—	Վ	27	դ	խոյ	նամ. 6	դեկ. 27
1338	787	—	ն	8	դ	ցուլ	—	—
1339	788	—	է	19	ե	եկամբ.	—	—
1340	789	նահ	ջգ	30	դ է	խեց.	—	—
1341	790	—	դ	11	ա	առ.	նամ. 7	դեկ. 26
1342	791	—	ժ	22	բ	կույս	—	—
1343	792	—	չ	3	դ	կշ.	—	—
1344	793	նահ	կծ	14	դե	կար.	—	—
1345	794	—	դ	25	դ	ադ.	նամ. 8	դեկ. 25
1346	795	—	դ	6	է	այծ.	—	—
1347	796	—	խ	17	ա	ջրհ.	—	—
1348	797	նահ	ազ	28	բդ	ձուկ	—	—
1349	798	—	ն	9	դ	խոյ	նամ. 9	դեկ. 24
1350	799	—	է	21	ե	ցուլ	—	—
1351	800	—	ջ	2	դ	եկամբ.	—	—
1352	801	նահ	հդ	13	էա	խեց.	—	—
1353	802	—	դ	24	բ	առ.	նամ. 10	դեկ. 23
1354	803	—	ջ	5	դ	կույս	—	—
1355	804	—	կ	16	դ	կշ.	—	—
1356	805	նահ	փւ	27	եդ	կար	—	—
1357	806	—	հ	8	է	ադ.	նամ. 11	դեկ. 22
1358	807	—	խ	19	ա	այծ.	—	—
1359	808	—	ա	30	բ	ջրհ.	—	—
1360	809	նահ	հկ	11	դդ	ձուկ	—	—
1361	810	—	է	22	ե	խոյ	նամ. 12	դեկ. 21
1362	811	—	չ	3	դ	ցուլ	—	—
1363	812	—	լ	14	է	եկամբ.	—	—
1364	813	նահ	դդ	25	աբ	խեց.	—	—

Ներկա թվ.	Հարկ. մեծ. թվ.	Նասանջ	Տարեգիր	Վերագիր	Թոթներյակ	Տանուտեր	Հայկ. շաբթ. ամանոր	Ներկա ամսաթիվ
1365	814	—	2	6	դ	առ.	Նազ. 13	դեկ. 20
1366	815	—	4	17	դ	կույս.	—	—
1367	816	—	ա	28	ե	կշ.	—	—
1368	817	նահ	մհ	9	դէ	կար.	—	—
1369	818	—	ի	21	ա	ադ.	Նազ. 14	դեկ. 19
1370	819	—	ս	2	բ	այծ.	—	—
1371	820	—	հ	13	դ	ջրհ.	—	—
1372	821	նահ	էդ	24	դե	ձուկ	—	—
1373	822	—	ղ	5	դ	խոյ	Նազ. 15	դեկ. 18
1374	823	—	լ	16	է	ցուլ	—	—
1375	824	—	բ	27	ա	ազ.	—	—
1376	825	նահ	չս	8	բդ	խեց.	—	—
1377	826	—	ը	19	դ	առ.	Նազ. 16	դեկ. 17
1378	827	—	ա	30	ե	կույս	—	—
1379	828	—	մ	11	դ	կշ.	—	—
1380	829	նահ	դդ	22	էա	կար.	—	—
1381	830	—	ս	3	բ	ադ.	Նազ. 17	դեկ. 16
1382	831	—	հ	14	դ	այծ.	—	—
1383	832	—	ա	25	դ	ջրհ.	—	—
1384	833	նահ	յմ	6	եդ	ձուկ	—	—
1385	834	—	լ	17	է	խոյ	Նազ. 18	դեկ. 15
1386	835	—	բ	28	ա	ցուլ	—	—
1387	836	—	ձ	9	բ	եկամ.	—	—
1388	837	նահ	թբ	21	դդ	խեց.	—	—
1389	838	—	ա	2	ե	առ.	Նազ. 19	դեկ. 14
1390	839	—	ի	13	դ	կույս	—	—
1391	840	—	ե	24	է	կշ.	—	—
1392	841	նահ	չս	5	աբ	կար.	—	—

Ներկա թվ.	Հայկ. հեծ. թվ.	Նահանգ	Տարեկալի	Վերադարձ	Յուրիստիկ	Տարեկալի	Հայկ. շարժ. ամսանոց	Ներկա ամսաթիվ
1333	842	—	Վ	13	Գ	ադ.	նամ. 20	դեկ. 13
1334	843	—	Ս	27	Գ	այծ.	—	—
1395	844	—	յ	8	Է	ըրհ.	—	—
1396	845	նահ	խլ	19	է	ձուկ	—	—
1397	846	—	բ	30	Ս	խոյ	նամ. 21	դեկ. 12
1398	847	—	ձ	11	բ	ցուլ	—	—
1399	848	—	թ	22	Գ	եկամ.	—	—
1400	849	նահ	առ	3	ԳԷ	խեց.	—	—
1401	850	—	խ	14	Գ	առ.	նամ. 22	դեկ. 11
1402	851	—	Է	25	է	կոյս	—	—
1403	852	—	չ	6	Ս	կշ.	—	—
1404	853	նահ	ժթ	17	բԳ	կբ.	—	—
1405	854	—	Ս	28	Գ	ադ.	նամ. 23	դեկ. 10
1406	855	—	յ	9	Է	այծ.	—	—
1407	856	—	Գ	21	Գ	ըրհ.	—	—
1408	857	նահ	աչ	2	էՍ	ձուկ	—	—
1409	858	—	ձ	13	բ	խոյ	նամ. 24	դեկ. 9
1410	859	—	բ	24	Գ	ցուլ	—	—
1411	860	—	ն	5	Գ	եկամ.	—	—
1412	861	նահ	ծխ	16	ԷԳ	խեց.	—	—
1413	862	—	ց	27	է	առ.	նամ. 25	դեկ. 8
1414	863	—	Գ	8	Ս	կույս	—	—
1415	864	—	ժ	19	բ	կշ.	—	—
1416	865	նահ	զՍ	30	ԳԳ	կբ.	—	—
1417	866	—	յ	11	Է	ադ.	նամ. 26	դեկ. 7
1418	867	—	Գ	22	Գ	այծ.	—	—
1419	868	—	ա	3	է	ըրհ.	—	—
1420	869	նահ	դձ	14	աբ	ձուկ	—	—

Ներկա թվ.	Հարկ. մեծ. թվ.	Նահանջ	Տարեգր	Վերադարձ	Յանվարյան	Տանուտեր	Հայկ. շաբթ. ամսանոր	Ներկա ամսաթիվ
1421	870	—	բ	25	դ	խոյ	նազ. 27	դեկ. 6
1422	871	—	ն	6	դ	ցուլ	—	—
1423	872	—	ծ	17	ե	եկազ.	—	—
1424	873	նահ	ւց	28	դէ	խեց.	—	—
1425	874	—	դ	9	ա	առ.	նազ. 28	դեկ. 5
1426	875	—	ժ	21	բ	կույս	—	—
1427	876	—	զ	2	դ	կշ.	—	—
1428	877	նահ	կծ	13	դե	կար.	—	—
1429	878	—	դ	24	դ	ադ.	նազ. 29	դեկ. 4
1430	879	—	ալ	5	է	այծ.	—	—
1431	880	—	խ	16	ա	ջբհ.	—	—
1432	881	նահ	ազ	27	բդ	ձուկ	—	—
1433	882	—	ն	8	դ	խոյ	նազ. 30	դեկ. 3
1434	883	—	է	19	ե	ցուլ	—	—
1435	884	—	ջ	30	դ	եկազ.	—	—
1436	885	նահ	ճդ	11	էա	խեց.	—	—
1437	886	—	ժ	22	բ	առ.	հոռի 1	դեկ. 2
1438	887	—	չ	3	դ	կույս	—	—
1439	888	—	կ	14	դ	կշ.	—	—
1440	889	նահ	էդ	25	եդ	կար.	—	—
1441	890	—	ալ	6	է	ադ.	հոռի 2	դեկ. 1
1442	891	—	խ	17	ա	այծ.	—	—
1443	892	—	ա	28	բ	ջբհ.	—	—
1444	893	նահ	շն	9	դդ	ձուկ	—	—
1445	894	—	է	21	ե	խոյ	հոռի 3	նոյեմ. 30
1446	895	—	ջ	2	դ	ցուլ	—	—
1447	896	—	ճ	13	է	եկազ.	—	—
1448	897	նահ	դդ	24	աբ	խեց.	—	—

Ներկա թի.	Հարկ. մեծ. թի.	Նահանջ	Տարեկեր	Վերադեր	Յոթնեդյակ	Տարեկեր	Հայկ. շարժ. ամսանոր	Ներկա ամսաթիվ
1449		—	2	5	դ	առ.	հոռի 4	Նոյեմ. 29
1450	899	—	4	16	դ	կույս	—	—
1451	900	—	փ	27	ե	42.	—	—
1452	901	նահ	մճ	8	դէ	կար.	—	—
1453	902	—	ի	19	ա	ադ.	հոռի 5	Նոյեմ. 28
1454	903	—	տ	30	բ	այծ.	—	—
1455	904	—	հ	11	դ	զրհ.	—	—
1456	905	նահ	բէ	22	դե	ձուկ	—	—
1457	906	—	ջ	3	դ	խոյ	հոռի 6	Նոյեմ. 27
1458	907	—	լ	14	է	ցուլ	—	—
1459	908	—	դ	25	ա	եկազ.	—	—
1460	909	նահ	ոչ	6	բդ	խեց.	—	—
1461	910	—	կ	17	դ	առ.	հոռի 7	Նոյեմ. 28
1462	911	—	ա	28	ե	կույս	—	—
1463	912	—	մ	9	դ	42.	—	—
1464	913	նահ	լի	21	էա	կար.	—	—
1465	914	—	ո	2	բ	ադ.	հոռի 7	Նոյեմ. 25
1466	915	—	հ	13	դ	այծ.	—	—
1467	916	—	բ	24	դ	զրհ.	—	—
1468	917	նահ	ուջ	5	եզ	ձուկ	—	—
1469	918	—	լ	16	է	խոյ	հոռի 8	Նոյեմ. 24
1470	919	—	բ	27	ա	ցուլ	—	—
1471	920	—	ո	8	բ	եկազ.	—	—
1472	921	նահ	թբ	19	դդ	խեց.	—	—
1473	922	—	ա	30	ե	առ.	հոռի 9	Նոյեմ. 23
1474	923	—	մ	11	դ	կույս	—	—
1475	924	—	ե	22	է	42.	—	—
1476	925	նահ	չո	3	աբ	կար.	—	—

Ներկա թվ.	Հաջ. մեծ. թվ.	Նաստեղ	Տալ. օրեր	Վերադարձ	Յոթնեթյակ	Տասնուներ	Հայկ. շաբաթ. ամսանոր	Ներկա ամսաթիվ
1477	926	—	հ	14	դ	ադ.	հունի 11	նոյեմ. 22
1478	927	—	ա	25	դ	այծ.	—	—
1479	928	—	յ	6	ե	ջրհ.	—	—
1480	929	նահ	խլ	17	դէ	ձուկ	—	—
1481	930	—	բ	28	ա	խոյ	հունի 12	նոյեմ. 21
1482	931	—	ձ	9	բ	ցուլ	—	—
1483	932	—	թ	21	դ	եկավ.	—	—
1484	933	նահ	առ	2	դե	խեց.	—	—
1485	934	—	խ	13	դ	առ.	հունի 13	նոյեմ. 20
1486	935	—	ե	24	է	կույս	—	—
1487	936	—	չ	5	ա	կշ.	—	—
1488	937	նահ	ձհ	16	բդ	կար.	—	—
1489	938	—	ս	27	դ	ադ.	հունի 14	նոյեմ. 19
1490	939	—	յ	8	ե	այծ.	—	—
1491	940	—	խ	19	դ	ջրհ.	—	—
1492	941	նահ	ցբ	30	էա	ձուկ	—	—
1493	942	—	ձ	11	բ	խոյ	հունի 15	նոյեմ. 18
1494	943	—	թ	22	դ	ցուլ	—	—
1495	944	—	ս	3	դ	եկավ.	—	—
1496	945	նահ	ծխ	14	եդ	խեց.	—	—
1497	946	—	ե	25	է	առ.	հունի 16	նոյեմ. 17
1498	947	—	չ	6	ա	կույս	—	—
1499	948	—	ժ	17	բ	կշ.	—	—
1500	949	նահ	վս	28	դդ	կար.	—	—
1501	950	—	յ	9	ե	ադ.	հունի 17	նոյեմ. 16
1502	951	—	դ	21	դ	այծ.	—	—
1503	952	—	ւլ	2	է	ջրհ.	—	—
1504	953	նահ	դձ	13	բա	ձուկ	—	—

Ներկա թվ.	Հայկ. ժեռ. թվ.	Նախնիք	Տարեգիր	Վերադիր	Ծննդնայնի	Տանտեսք	Հայկ. շարժ. ամսնոր	Ներկա ամսաթիվ
1505	954	—	բ	24	դ	խոյ	հոռի 18	նոյեմ. 15
1506	955	—	ն	5	դ	ցուլ	—	—
1507	956	—	ծ	16	ե	եկավ.	—	—
1508	957	Նահ	ւց	27	զէ	խեց.	—	—
1509	958	—	դ	8	ա	առ.	հոռի 19	նոյեմ. 14
1510	959	—	ժ	19	բ	կույս	—	—
1511	960	—	վ	30	դ	կշ.	—	—
1512	961	Նահ	նյ	11	դե	կար.	—	—
1513	962	—	ջ	22	դ	ազ.	հոռի 20	նոյեմ. 13
1514	963	—	ազ	3	է	այծ.	—	—
1515	964	—	դ	14	ա	ջրհ.	—	—
1516	965	Նահ	դբ	25	բդ	ձուկ	—	—
1517	966	—	ն	6	դ	խոյ	հոռի 21	նոյեմ. 12
1518	967	—	ծ	17	ե	ցուլ	—	—
1519	968	—	լ	28	դ	եկավ.	—	—
1520	969	Նահ	ճդ	9	էա	խեց.	—	—
1521	970	—	ժ	21	բ	առ.	հոռի 22	նոյեմ. 11
1522	971	—	վ	2	դ	կույս	—	—
1523	972	—	կ	13	դ	կշ.	—	—
1524	973	Նահ	էդ	24	եզ	կար.	—	—
1525	974	—	ազ	5	է	ազ.	հոռի 23	նոյեմ. 10
1526	975	—	ի	16	ա	այծ.	—	—
1527	976	—	ա	27	բ	ջրհ.	—	—
1528	977	Նահ	շն	8	դդ	ձուկ	—	—
1529	978	—	է	19	ե	խոյ	հոռի 24	նոյեմ. 9
1530	979	—	ջ	30	դ	ցուլ	—	—
1531	980	—	ճ	11	է	եկավ.	—	—
1532	981	Նահ	իծ	22	ար	խեց.	—	—

Ներկա թիվ.	Համկ. յեթ. թիվ.	Նասնանջ	Տարեգիր	Վերադիր	Թոթիներ/ակ	Տասնուներ	Հայկ. շարժ. ամսանոթ	Ներկա ամսաթիվ
1533	982	—	2	3	դ	առ.	հունի 25	նոյեմ. 8
1534	983	—	4	14	դ	կույս	—	—
1535	984	—	5	25	ե	կշ.	—	—
1536	985	նահ	Չդ	6	դէ	կար.	—	—
1537	986	—	ե	17	ա	ադ.	հունի 26	նոյեմ. 7
1538	987	—	ա	28	բ	այծ.	—	—
1539	988	—	2	9	դ	Չբհ.	—	—
1540	989	նահ	բէ	21	դե	ձուկ	—	—
1541	990	—	Չ	2	դ	խոյ	հունի 27	նոյեմ. 6
1542	991	—	ճ	13	է	ցուլ	—	—
1543	992	—	դ	24	ա	եկազ.	—	—
1544	993	նահ	ոչ	5	բդ	խեց.	—	—
1545	994	—	կ	16	դ	առ.	հունի 28	նոյեմ. 5
1546	995	—	փ	27	ե	կույս	—	—
1547	996	—	ճ	8	դ	կշ.	—	—
1548	997	նահ	լի	19	էա	կար	—	—
1549	998	—	ճ	30	բ	ադ.	հունի 29	նոյեմ. 4
1550	999	—	հ	11	դ	այծ.	—	—
1551	1000	—	բ	22	դ	Չբհ.	—	—
1552	1001	նահ	աՉ	3	եզ	ձուկ	—	—
1553	1002	—	լ	14	է	խոյ	հունի 30	նոյեմ. 3
1554	1003	—	դ	25	ա	ցուլ	—	—
1555	1004	—	ո	6	բ	եկազ.	—	—
1556	1005	նահ	հկ	17	դդ	խեց.	—	—
1557	1006	—	ո	28	ե	առ.	սահմի 1	նոյեմ. 2
1558	1007	—	ճ	5	դ	կույս	—	—
1559	1008	—	ե	21	է	կշ.	—	—
1560	1009	նահ	չա	2	աբ	կար.	—	—

Ներկա թիվ.	Հայկ. մեծ. թիվ.	Նահանջ	Տարեգիր	Վերագիր	Յուժնեբերյալ	Տանուսեր	Հայկ. շարժ. ամսանոթ.	Ներկա ամսաթիվ
1561	1010	—	հ	13	դ	ադ.	սահմի 2	նոյեմ. 1
1562	1011	—	ը	24	դ	այծ.	—	—
1563	1012	—	յ	5	ե	ջրհ.	—	—
1564	1013	նահ	իլ	16	դէ	ձուկ	—	—
1565	1014	—	ը	27	ա	խոյ	սահմի 3	հոկտ. 31
1566	1015	—	ո	8	բ	ցուլ	—	—
1567	1016	—	թ	19	դ	եկազ.	—	—
1568	1017	նահ	ու	30	դե	խեց.	—	—
1569	1018	—	մ	11	դ	առ.	սահմի 4	հոկտ. 30
1570	1019	—	ե	22	է	կույս	—	—
1571	1020	—	չ	3	ա	կշ.	—	—
1572	1021	նահ	ձհ	14	բդ	կար.	—	—
1573	1022	—	ա	25	դ	ադ.	սահմի 5	հոկտ. 29
1574	1023	—	յ	6	ե	այծ.	—	—
1575	1024	—	ի	17	դ	ջրհ.	—	—
1576	1025	նահ	ցբ	28	էա	ձուկ	—	—
1577	1026	—	ձ	9	բ	խոյ	սահմի 6	հոկտ. 28
1578	1027	—	թ	2	դ	ցուլ	—	—
1579	1028	—	ա	2	դ	եկազ.	—	—
1580	1029	նահ	ծի	13	եդ	խեց.	—	—
1581	1030	—	ե	24	է	առ.	սահմի 7	հոկտ. 27
1582	1031	—	չ	5	ա	կույս	—	—
1583	1032	—	մ	16	բ	կշ.	—	—
1584	1033	նահ	զա	27	դդ	կար.	—	—
1585	1034	—	յ	8	ե	ադ.	սահմի 8	հոկտ. 26
1586	1035	—	ի	19	դ	այծ.	—	—
1587	1036	—	ւլ	30	է	ջրհ.	—	—
1588	1037	նահ	դձ	11	ար	ձուկ	—	—

Ներկա թիվ.	Հայկ. մեծ. թիվ.	Նախնայ	Տարեգիր	Վերագիր	Յանվարյան	Տարեուտեր	Հայկ. շաբաթ. ամսանոր	Ներկա ամսաթիվ
1589	1038	—	Թ	22	դ	խոյ	սահմի 9	հոկտ. 25
1590	1039	—	ս	3	դ	ցուլ	—	—
1591	1040	—	ծ	14	ե	եկամվ.	—	—
1592	1041	նահ	եդ	25	դէ	խեց.	—	—
1593	1042	—	չ	6	ա	առ.	սահմի 10	հոկտ. 24
1594	1043	—	ժ	17	բ	կույս	—	—
1595	1044	—	զ	28	դ	կշ.	—	—
1596	1045	նահ	նյ	9	դե	կարբ.	—	—
1597	1046	—	դ	21	դ	ադ.	սահմի 11	հոկտ. 23
1598	1047	—	ւզ	2	է	այծ.	—	—
1599	1048	—	դ	13	ա	ջրհ.	—	—
1600	1049	նահ	դբ	24	բդ	ձուկ	—	—
1601	1050	—	ն	5	դ	խոյ	սահմի 12	հոկտ. 22
1602	1051	—	ծ	16	ե	ցուլ	—	—
1603	1052	—	ւ	27	դ	եկամվ.	—	—
1604	1053	նահ	ճդ	8	էա	խեց.	—	—
1605	1054	—	ժ	19	բ	առ.	սահմի 13	հոկտ. 21
1606	1055	—	զ	30	դ	կույս	—	—
1607	1056	—	կ	11	դ	կշ.	—	—
1608	1057	նահ	էդ	22	եդ	կարբ.	—	—
1609	1058	—	ւզ	3	է	ադ.	սահմի 14	հոկտ. 20
1610	1059	—	դ	14	ա	այծ.	—	—
1611	1060	—	դ	25	բ	ջրհ.	—	—
1612	1061	նահ	շն	6	դդ	ձուկ	—	—
1613	1062	—	ծ	17	ե	խոյ	սահմի 15	հոկտ. 19
1614	1063	—	ւ	28	դ	ցուլ	—	—
1615	1064	—	ճ	9	է	եկամվ.	—	—
1616	1065	նահ	իծ	21	աբ	խեց.	—	—

Հին տոմար			0	100	200	300	400	500	600	
			700	800	900	1000	1100	1200	1300	
			1400	1500	1600	1700	1800	1900	2000	
1	29	57	85	զ	ե	դ	գ	բ	ա	է
2	30	58	86	է	զ	ե	դ	գ	բ	ա
3	31	59	87	ա	է	զ	ե	դ	գ	բ
4	32	60	88	զբ	բա	աէ	էզ	զե	եդ	դգ
5	33	61	89	դ	գ	բ	ա	է	զ	ե
6	34	62	90	ե	դ	գ	բ	ա	է	զ
7	35	63	91	զ	ե	դ	գ	բ	ա	է
8	36	64	92	աէ	էզ	զե	եդ	դգ	զբ	բա
9	37	65	93	բ	ա	է	զ	ե	դ	գ
10	38	66	94	գ	բ	ա	է	զ	ե	դ
11	39	67	95	դ	գ	բ	ա	է	զ	ե
12	40	68	96	զե	եդ	դգ	զբ	բա	աէ	էզ
13	41	69	97	է	զ	ե	դ	գ	բ	ա
14	42	70	98	ա	է	զ	ե	դ	գ	բ
15	43	71	99	բ	ա	է	զ	ե	դ	գ
16	44	72		դգ	զբ	բա	աէ	էզ	զե	եդ
17	45	73		ե	դ	գ	բ	ա	է	զ
18	46	74		զ	ե	դ	գ	բ	ա	է
19	47	75		է	զ	ե	դ	գ	բ	ա
20	48	76		բա	աէ	էզ	զե	եդ	դգ	զբ
21	49	77		գ	բ	ա	է	զ	ե	դ
22	50	78		դ	գ	բ	ա	է	զ	ե
23	51	79		ե	դ	գ	բ	ա	է	զ
24	52	80		էզ	զե	եդ	դգ	զբ	բա	աէ
25	53	81		ա	է	զ	ե	դ	գ	բ
26	54	82		բ	ա	է	զ	ե	դ	գ
27	55	83		գ	բ	ա	է	զ	ե	դ
28	56	84		եդ	դգ	զբ	բա	աէ	էզ	զե
Նոր տոմար			—	—	—	—	1500	1600		
			1700	—	1800	—	1900	2000		
			2100	—	2200	—	2300	2400		



ԳԼՈՒԽ ՏԱՍԽՄԵԿԵՐՈՐԴ



ՓԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նուա փափագիր է կոչվել գրութւան այն տեսակը, որը երկու կամ ավելի տառերի միացումից է կազմվել: Հայագիտութւան մեջ այն հայտնի է նաև կապգիր կամ կցագիր անուններով:

Փակագրութիւնը հալ գրականութւան մեջ, համեմատաբար, քիչ է գործածվել: Հին հայկական երկաթագիր ձեւագրերում փակագրերը հանդիպում են միայն տողերի վերջում. երբ նախադասութիւնը կամ բառը վերջանում է լուսանցքի մոտ այնպես, որ մեկ կամ երկու տառի տեղ չի մնում այլևս, այդ դեպքում այդ տառերը չեն փոխադրում հաջորդ տողը, այլ դնում են տողի վերջին տառի վրա կամ ուղղակի կցում նրան: Այդպես են վարվել, օրինակ, 886 թվականին ընդօրինակված Հազարյան ավետարանում: Հաջորդ դարի ձեւագրերում նման օրինակներն ավելի շատ են:

Փակագրութիւնն իր իսկական նշանակութիւամբ ձեւագրերում սկսում են գործածել գլխավորապես XII դարից բոլորգիր բնագրերում: Այստեղ տեղ խնայելու համար իրար են կցում որոշ տառեր: Նման փակագրերի թիվը, սակայն, շատ մեծ չէ: XII—XV դարերի ձեւագրերում գործածական են հետևյալ կապգրերը.

ՏՆ — ՏՆ Մ — Մ

Վ — Վ Ր — Ր

Վ — Վ Կ — Կ

Փակագրութիւնն ամենից շատ գործածվել է վիմագրութիւն մեջ և կնիքների վրա: Նրա առաջացումը տեղ խնայելու պահանջից է բխել. դժվար էր քարերի վրա ընդարձակ տեքստեր փորագրել կամ կնիքի փոքրիկ շրջագծում լրիվ անուններ գրել, ուստի և դիմել են փակագրութիւն:

Վիմագրութիւն մեջ փակագրեր մեզ հանդիպում են VII դարի արձանագրութիւնների մեջ. Կոմիտաս կաթողիկոսի 618 թվականին Նոյսիսի տաճարի վրա թողած արձանագրութիւն մեջ գործ են անում երեք փակագիր՝ ՄԻ, ՄԵ, ՄԻ. Բագավանի 639 թվականի արձանագրութիւն մեջ՝ երկու փակագիր՝ ԻՈ, ՌԱ. Մաստարալի 640 թվականի արձանագրութիւն մեջ՝ չորս փակագիր՝ ՈՍ, ՈԻ, ՊԻ, ԱԻ և այլն: Հետագա դարերում գրված վիմագիր արձանագրութիւնների մեջ փակագրերի թիվն սկսում է շատանալ: Հաճախ մեզ հանդիպում են միջին դարերում գրված այնպիսի արձանագրութիւններ, ուր չկա ոչ մի բառ, որ փակագիր չունենա: Վիմագիր արձանագրութիւն մեջ փակագրերը փաստորեն փոխարինում են գրչագրութիւն մեջ գործածված հապավումներին XII—XVIII դարերում:

Փակագրութիւն մեջ հայկական տառերը հավասար գործածութեամբ հանդես չեն գալիս. կան տառեր, որ շատ են գործածվում, և կան տառեր, որ միայն օժանդակ դեր ունեն կամ ամենեկին չեն գործածվում:

Փակագրութիւն մեջ ամենից հաճախ գործածվողները գլխավորապես այն տառերն են, որոնք սլոնագծեր ունեն: Այդ տառերից կարելի է մատնացույց անել հետևյալները՝ Ա, Մ, Ո, Ռ, Ս, Բ: Սրանց սլոնագծերին են կցվում փակագրվող մյուս տառերը: Փակագրութիւն մեջ օժանդակ դեր ունեն Դ, Ե, Ք, Ի, Խ, Զ, Ն, Պ, Ի, Փ, Գ տառերը: Համեմատաբար քիչ են գործածվում Զ, Լ, Ժ, Լ, Մ, Չ, Ճ, Յ, Շ, Չ, Զ, Զ, Վ տառերը (տես հաջորդ էջը):

Փակագրութիւն զանազան տեսակներ կան: Ամենից շատն այն փակագրերն են, որոնց առաջին տառի աջ սլոնագիծը միանում է հաջորդ տառի ձախ սլոնագծին: Այդ նույն սկզբունքով

միանում է նաև մի տառի սյունագրիժը մյուս տառի թևի հետ: Բերենք այդ կարգի փակագրերից մի քանի նմուշ.

ՆԵ - նե	ՍԻ - սի	ԱՍ - սա	ԻՄ - իմ
ՆԵՅ - նեյ	ԿԱ - կա	ՄԹ - սթ	ՈՐ - որ
ԵԱ - բա	ԱԳ - ադ	ԼՔ - աք	ԱՐ - ար
ԼԳ - ագ	ԵԱ - խա	ԼՓ - ափ	ՃԱ - տա
ԵՍ - իս	ՍԻ - սի	ԳԵ - գե	ՈՍ - ոս

Փակագրության մի այլ խմբում տառերն իրար են կցվում ոչ թե թևերով կամ սյունագծերով, այլ մի տառ նստում է մյուսի ուսին: Այս դեպքում կմախք են ծառայում գլխավորապես Ա՞կամ Ս տառերը, որոնց աջ և ձախ սյունագծերին միացվում են մյուս տառերը: Կցորդ տառերը, սյունագրի ռենցող տառի համեմատությամբ, ավելի փոքր են լինում. նրանց բարձրությունը սյունագրի տառի բարձրության մոտավորապես մեկ երրորդն է հազիվ կազմում: Նման փակագրերից, որպես նմուշ, կարելի է բերել հետևյալները.

Ա՞ - ան	Ա՞ - ատ
Ա՞ - աս	ԿԱ - կա
ՀԱ - հա	ՊԱ - պա
ՅՍ - յս	Ա՞ - ալ

Շատ են գործածական նաև այն փակագրերը, որոնք կազմված են լինում ոչ թե երկու, այլ երեք և ավելի տառերից: Այս դեպքում նույնպես կմախքի դեր են կատարում Ա կամ Ս տառերը, որոնց աջ ու ձախ սյունագծերից միանում են մյուս տառերը: Այս խմբի փակագրերից կարելի է բերել հետևյալ նմուշները (տես հաջորդ էջը):

Վերև հիշված կապգրերի բոլոր խմբերը տեքստերում

Ք - զազ

Ն - ամեն

մ - ժամ

ՆՓ - անխափան

ԵՓ - խափ

ՊԱ - պար

գործածում են, իհարկե, խառն ձևով. կրթման միասնում են երկու տառեր, երբեմն կրեք և ավելի տառնք, իսկ նշանց կողքին գրվում է չփակագրված մի տառ: Փակագրության գործածության ձևի մասին որոշ պատկերացում տալու նպատակով անհրաժեշտ ենք համարում բերել ՀՊՄ-ի № 2961 ձևագրից վախազրված մի փոքրիկ նախադասություն.

մ - մի

ՊԱ - պար

ԲՁ - իթ

ՏԻ - փի

Ա - ար

ԳՆ - գիրք

ԱՆ - մե.

ԱՅ - այս

Ա - ղա

Փակագրված նախադասությունը վերծանվում է. «ՄԽԹԱՐ ՄԵՂԱՊԱՐՏԻ ԳԻՐՍ ԱՅՍ»:

Այն դեպքում, երբ կապգրության մեջ օգտագործվում են հապաված ձևով տերունական բառերը, ապա կապգրության վրա անպայման հապավման նշան են դնում:

Վիմագիր արձանագրությունների մեծ մասի և ձևագիր բընագրերի վերջին «ԱՄԷՆ» բառը սովորաբար կապգրվում է հետևյալ ձևով.

ՆԷ ՆԷ

Վիմագրության մեջ, մանավանդ վաղ միջնադարյան վիմագրերում, բառերը իրարից չեն անջատվում, այդ պատճառով էլ

հաճախ է պատահում, որ մի բառի վերջին տառը կապգրվում է հաջորդ բառի առաջին տառի հետ.

- ԹԱԼԱՄԱ — ի թագաւորաց,
 ԵՍՎԱՆԵՐԷՑ — ես վարդ երէց,
 ՉԱՆԲԱՆՍ — գալս բանս:

Կապգրերը սովորաբար ընթերցվում են ձախից աջ հերթապահութեամբ. նախ սկսում են վերծանել ձախ սյունագծի վերին տառը, ապա սյունագծի տառը և հետո անցնում սյունագծին կցված մյուս տառերին: Սակայն պատահում են փակագրված ալիպիսի սևքստեր, երբ պետք է լինում հակառակը վարվել, այսինքն՝ կարգալ հակառակ ուղղութեամբ՝ աջից ձախ: Այսպես՝

- ԱԵ — «մեր» և ոչ «բմե», ԿԱ — «ակ» և ոչ «կա», ԱԲ — «ար» և ոչ «բա»
 ՆԱ — «ան» և ոչ «նա», ԱԵ — «էս» և ոչ «սէ»:

Փակագրված վիմագրութեան մեջ շփոթութեան տեղիք են տալիս ՈՒ և Ե տառերի փակագրութիւնները: Բիչ է պատահում, որ ՈՒ երկնչյունը վիմագրութեան մեջ գրվի երկու տառով՝ ՈՒ. նա սովորաբար ունենում է մեծատառ Ռ-ի ձևը, միայն նրա աջ սյունագծի ելունը սեպի ձև է ունենում: Ինչ վերաբերում է Ե-ին, ապա նա ինքը կապգրութիւն է Ե և Ի տառերի և մեր այբուբենին է անցել կապգրութեանից Կիլիկյան շրջանում: Փակագրութեան մեջ նա գրվում է փոքր-ինչ տարբեր ձևով՝ Ի-ը վայր հակված է լինում, տառերը միանում են ուղիղ ձևով և կազմում ներկայիս Ա-ը:

Ստորև բերում ենք հայկական վիմագրութեան մեջ գործածված փակագրերի ցանկը, օգտվելով պրոֆ. Կ. Ղաֆաղարյանի «Հայկական գրի հիմնական տեսակները» վերնագրով աշխատութիւնից. նրա վրա մենք կատարել ենք որոշ լրացումներ.

Ն	- ին	Կ	- կս	Ն	- նամ	ՈՐ	- ոմա
Ն	- իս	Հ	- հա	Ն	- նար	ՈՍ	- ոս
Ն	- իր	Ք	- ղԲ	Ն	- նաւ	ՈՎ	- ովի
Ն	- իսր	Շ	- ղե	Ն	- նե	ՈՎ	- ով
Է	- էի	Չ	- ղի	Ն	- նե	Ռ	- որ
Է	- էա	Պ	- մա	Շ	- նև	Տ	- ոց
Ա	- խա	Ս	- ման	Մ	- նի	Ր	- ոք
Ա	- խան	Ր	- մաք	Մ	- նթ	Բ	- ու
Բ	- խի	Ր	- մե	Ն	- նն	Բ	- ու
Բ	- իմ	Ր	- մեր	Ն	- նորոգ	Ր	- ուի
Տ	- տի	Ր	- մէ	Մ	- նի	Ր	- ուն
Ն	- խափ	Ր	- մի	Շ	- նք	Ր	- ուր
Կ	- կա	Ր	- միա	Յ	- յս	Պ	- չս
Կ	- կամաւ	Ր	- միր	Ր	- ոբ	Պ	- պա
Կ	- կամ	Ր	- մի	Բ	- ոգ	Պ	- պագ
Կ	- կամէ	Ր	- մն	Ռ	- ոի	Պ	- պաւ
Կ	- կան	Ր	- նաբ	Ռ	- ող	Պ	- պաւ
Կ	- կն	Ր	- նակ	Ռ	- ողոր	Պ	- պաք

Ա — աբ	ՆԲ — անբ	ԸԲ — բարե	Ե — ես
ԱԳ — ագ	ՆՆ — անն	Ս — գա	ԼԵ — ես
ԱԳՐ — ագր	ԱՌ — առ	ՊԳ — գագ	Ը — եր
ԱԹ — աթ	ԱՆԱ — առա	Չ — գե	ՆԱ — եւան
ԱԲ — աբ	ԱՍ — աս	ՉԷ — գէ	ՉԻ — զի
ԱԽ — ախ	ԱՍՍ — ասս	ՉԷԷ — գէէ	ԷԷ — էի
ԱԿ — ակ	ԱՍՍ — ասս	ՉՍ — գս	ԹԱ — թա
ԱՂ — աղ	ԱՐ — ար	ԳՐ — գոր	ԹԲ — թբ
ԱՃ — աճ	ԱՐԱ — արա	ԳՐԳ — գորգ	ԹՆ — թն
ՆԲ — անբ	ԱՐԳ — արգ	ՆԱ — գա	ԹԲ — թբ
ՆԲԲ — անբբ	ԱՐԴ — արդ	ՉԷ — գե	ԹԼ — թլ
ՆԲԷ — անբէ	ԱՐԻ — արի	ՉԷԷ — գէէ	ԹՎ — թվ
ԱՆԵ — անեն	ԱՐԼ — արլ	ԱՐ — դարի	ԹՎ — թվ
ԱՆԸ — անեն	ԱՐԼՐ — արլր	ՆԱ — դամ	ԺԱՄ — ժամ
ՆԱ — ան	ԱՐԼՐԻ — արլրի	Դ — դո	ԺԱՄԻ — ժամի
ՆԱՆ — անն	ԱՐՄ — արմ	Ե — եւ	ԵՄ — իմ
ՆԱՆԻ — աննի	ԱՐՔ — արք	ՉԻ — դի	ԵՆ — ին
ՆԱՆԻՍ — աննիս	ԱՐՊ — արփ	ԵԿ — եկ	Ի — ին

ՊԵ - պե	ՆԻ - սինէ	ՏԱ - տա
ՊԻ - պի	ՆՍ - սիս	ՏԱԸ - տար
ՊԼ - պլ	ՆԿ - սկ	ՆԷ - տե
ՊՆ - պան	ՆՍ - սն	ՆԸ - տիրա
ՊԻ - պի	ՆՍ - սո	ՆԹ - տն
ՊԱ - պար	ՆԲ - սբ	ՆՊ - տո
ՆԱ - նա	ՎԱ - վա	ՆՏ - տս
ՆԱ - սա	ՎԸ - վր	ՎԼ - տվ
ՆԹ - սթ	ՎՆ - վն	Յ - ցր
ՆԻ - սի	ՎԱ - վար	ՅԲ - քս
ՆՍ - սն	ՆԱ - սո	ՆԸ - րն
ՓԱ - փա	ՓԱ - փար	
ՅԻ - ցի	ՅԻ - ցո	

Կապգրութիան տարատեսակներից են միացյալ կոչված տառերը, որոնք հանդես են գալիս տպագրութիան ժամանակ. մ, ր և վ տառերի աջ թևերը երբ խանգարել են հաջորդ տառերի շարվածքը և մեծ բացատներ ստեղծել, այդ դեպքում հարմար են հա-

մարել երկու տառերը կպցնել իրար և միացած ձուլել: Միացյալ ձուլված նման տառերից հնատիպ գրականության մեջ հանդիպում են հետևյալները.

ՄԻ ՄԵ ՄԻ ՄԹ ՄԿ ՄՆ ՄԷ ՀՆ և այլն:


Այլ ձևով են վարվել հնատիպ գրականության մեջ պոչավոր տառերից հետո շարվող տառերի հետ. եթե նրանք ևս կցեին դեպի աջ հակված պոչիկներին, միացյալ այդ տառերը տգեղ ձև կունենային և կաղավաղվեին, ուստի նրանք իրար հետ ձուլել են աջպես, որ երկրորդ տառը դրվել է պոչիկից վերև, նրա ծոցում: Գրերի այդ տեսակները հալ մատենագրության մեջ կոչվել են ծոցագրեր: Որպես նմուշ կարելի է բերել ծոցագրերի հետևյալ օրինակները.

ՎԷ ՂԸ ՉԸ Թ Թ ԼԷ ԼՐ ՎԽ ՎԻ ԼԵ ՎԿ ՀԽ և այլն:


Հայկական մյուս տեքստերի համեմատությամբ, ամենից շատ փակագրվում են կնիքների տեքստերը: Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի Արխիվային բաժնում պահվում են հազարավոր վավերագրեր XVII—XVIII դարերից, որոնց մեծ մասի վրա կան կնիքներ: Այդ վավերագրերի մեջ կան մեծ թվով ժամանակի հալ քաղաքական, հասարակական և եկեղեցական աչքի ընկնող գործիչների այնպիսի համախոսականներ, որոնք իրենց վրա ունեն տասնյակ կնիքներ: Ի դեպ, կնիքներ են ունեցել անգամ միջակից ցածր համարվող առևտրականները և որակյալ արհեստավորները: Ահա այս կնիքներում շատ քիչ են այնպիսիները, որոնց տերերի անունները փորագրված լինեն կնիքի շրջանակի մեջ առանց փակագրի: Կնիքների տեքստերն ուսումնասիրողների վերծանության գործը հետագայում դյուրացնելու համար, անհրաժեշտ ենք համարում այբուբենական կարգով տալ այն անունները, որոնք հաճախ են հանդիպում կնիքների վրա գրված կապգրերում.

ԱԲԵ	— Աբիսողոմոն	ԱԿ	— Աղասի
ԱԲԸ	— Ալեքսան	ԱԿԲ	— Ասատուր
ԱԲԹ	— Արմէն	ՎԵ	— Ավագ
ԱԲՔ	— Աւետիք	ԳԲ	— Գարրիկ
ԱԲԿ	— Արրահամ	ԳԳ	— Գէորգ
ԱԲԼ	— Առաքել	ԳԾ	— Գէորգ
ԱԲԽ	— Աստուածատուր	ԳԹ	— Գէորգ
ԱԲԿԱ	— Գալուստ	ԱԵՅ	— Եսայի
ԱԲԿԵ	— Դանիէլ	ԱԵԿ	— Երեմիա
ԱԲԿԸ	— Դաւիթ	ԱԵԾ	— Թադէոս
ԱԲԿԹ	— Խաչատուր	ԿԵ	— Կարապետ
ԱԲԿՔ	— Կիրակոս	ԿԸ	— Կարապետ
ԱԲԿԼ	— Կարապետ	ՂԵ	— Ղազար
		ԱԵԿԱ	— Խաչատուր

ԱԿԻ	— Մահտեսի	ՀՅԲ	— Համբարձում
ԱԿԻ	— Մովսէս	ՄԿԱՍ	— Մինաս
ՄԿԻ	— Մկրտիչ	ՔԷԲ	— Միքաէլ
ՅԿԻ	— Յակոբ	ՄԹ	— Մտթեոս
ՅԿԻ	— Յարութիւն	ՄՐԷԸ	— Մարքար
ՅՅԻ	— Յօաննէս	ՄՄ	— Նահապետ
ՅԿՓ	— Յովսէփ	ՊԷԳ	— Պետրոս
ՊԷԿ	— Պետրոս	ՄԳ	— Սարգիս
ԷՔ	— Ռաֆայէլ	ՍԿԻ	— Սահակ
ՍԿԻ	— Սիմէօն	ՊԻԸ	— Պողոս
ՍԹԻ	— Ստեփան	ՍԼԿ	— Սուքիաս
ՔՅԻ	— Վարդապետ	ՏՔՓ	— Ստեփան
ՄԿԻ	— Սահակ	ՓԻՊ	— Փիլիպոս



ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԳ



ՋԱՐԳԱՆԿԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՋԱՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

արդանկարչությունը մանրանկարչության մասն է կազմում: Մանրանկարչություն կամ մինիատուրա են կոչվում ձեռագրերում արված բոլոր կարգի նկարազարդումները՝ զարդանկարները, զարդագրերը, լուսանցազարդությունները և այլն:

Հնում սովորություն է եղել ընդօրինակվող տեքստերն ակնապարար դարձնելու համար զարդանկարել նրանք: Հռոմեացիների մոտ ընդունված էր ժիրանազարդ, ոսկեգիր ձեռագրեր գրելը: Գրիստոնեական շրջանում ձեռագրեր նկարազարդելը սկսվեց IV դարում Սիրիայում, իսկ հետագայում քաղաքացիություն ստացավ Արևելքում և Բյուզանդիայում¹: Հայաստանը ևս այն երկրներից մեկն էր, ուր ընդունված էր ձեռագրերի նկարազարդումը:

Մեզ հասած հայկական ձեռագրերում հանդիպում ենք զարդանկարչության հետևյալ տեսակներին.

«Խորան»-ներ և «կիսախորան»-ներ—դրանք բնագրերի լուրջբով նկարված ճակատազարդ կամարներ են՝ դրված սյուների վրա. եթե սյուները երկարում են ամբողջ էջի երկարությամբ

¹ В. Н. Лазарев, История византийской живописи, М.-ва, 1947, т. I, с. 30:

և ախտոտութիւնք կազմում, ապա նրանք կոչվում են «խորան»-ներ, իսկ եթե երկարում են միայն էջի վերին կես մասի չափով, կոչվում են «կիսախորան»-ներ:

«Լուսանցագարգուքիւն»-ներ — լուսանցքներում նկարված բոլոր տեսակի զարդանկարները, որոնք կազմվում են բուսական, կենդանական և երկրաչափական տարրեր մոտիվներից՝ արմավենիներից (պալմետներից), վարդյակներից (ուզետներից), աստղազարդերից, վրանածակ շենքերից և այլն:

«Զարգագրք» — պարբերութիւնների նկարազարդված բազմածև և բազմագույն սկզբնատառերը, որոնք տարբեր անուններ ունեն. եթե ծաղիկներով են զարդարել գրերը, կոչվում են ծաղկագրք, թռչուններով՝ թռչնագրք; գազաններով՝ գազանագրք, եթե արտակարգ շքեղ են նկարված՝ փառագրք, և այլն:

«Նկար»-ներ — հիմնականում պատահում են ավետարանների մեջ, ուր պատկերվում են Քրիստոսի կյանքի զանազան դրվագներ, որոնք կանոնականացրել է քրիստոնեական եկեղեցին: Բացի այդ, ավետարաններում սովորութիւն է եղել նաև նկարել չորս ավետարանիչներին՝ Մատթեոսի, Մարկոսի, Լուկասի և Հովհաննեսի նկարները: Ավելի ուշ շրջանում պատահում են նկարներ նաև աշխարհիկ թեմաներով. նկարազարդում են «Աղեքսանդրի վարքը», տաղարանները, պատմական ու տոմարական որոշ աշխատութիւններ և այլն:

Գրիչները, ձեռագրերը գրելուց հետո, սովորաբար, սկսում են մանրանկարել: Սակայն ոչ բոլոր դեպքերում գրիչները նաև մանրանկարիչներ են հանդիսանում. հաճախ գրիչը միայն գրում է ձեռագիրը, իսկ մեկ ուրիշը, որը մանրանկարչութիւն մասնագետ է, մանրանկարում է: Մեզ են հասել ձեռագրեր, որոնք գրվել, վերջացվել են գրչի կողմից, իսկ զարդագրերի և զարդանկարների տեղը բաց է թողնվել, որպեսզի այն զարդանկարի մանրանկարիչը: Սակայն պատահել է այնպես, որ ինչ-ինչ պատճառներով ձեռագրերը մնացել են առանց զարդանկարվելու:

Մանրանկարիչները մեզ մոտ կոչվել են զանազան անուններով՝ «ծաղկող», «ծաղկարար», «նողաշ» և այլն:

Մանրանկարչութիւնը կարևոր սկզբնաղբյուր է զարդարվեստի պատմութիւն համար. նա հնարավորութիւն է տալիս պարզելու, թե ինչ նկարներ կամ զարդանկարներ են վրձինվել այս կամ այն մանրանկարչի կողմից, ինչ ճաշակով և վարպետութիւնով են կատարված նրանք, որքան նուրբ է նրանց արվեստը և այլն: Սա-

կայն մանրանկարչությունը միաժամանակ արժեքավոր սկզբնաղբյուր է նաև հասարակության մտավոր կյանքի պատմության ուսումնասիրության համար: Մանրանկարների մեջ արտացոլված են ժամանակակից մարդկանց պատկերացումները, նրանց աշխարհայեացքը, արժեքները և հուզող հարցերը: Մանրանկարներն ունեն նաև ազգագրական մեծ արժեք. մենք մանրանկարներում հանդիպում ենք սոցիալական տարբեր ներկայացուցիչների՝ թագավորից մինչև հասարակ հովիվը և նախրապանը՝ իրենց ինքնատիպ տարածներով, զենքերով կամ գործիքներով:

Հայկական մանրանկարչությունից բավականին հարուստ նյութ է հասել մեզ: Կարելի է ասել, որ հայկական ձեռագրերի մեծ մասն այս կամ այն չափով պարունակում են մանրանկարներ: Ամենից շատ մանրանկարված են, իհարկե, կրոնական-կանոնական կոչվող ձեռագրերը: Թեև սովորություն չի եղել պատմական, փիլիսոփայական և մեկնողական գրականությունը մանրանկարել, բայց կան այս բովանդակությամբ բավականին ձեռագրեր ևս, որոնք նույնպես ունեն լուսանցազարդություններ և զարդագրեր:

Հայ մանրանկարչության ուսումնասիրությամբ զբաղվել են մի շարք անվանի գիտնականներ: Մանրանկարչական առանձին արժեք ներկայացնող ձեռագրեր ուսումնասիրել են ռուս գիտնականներ Ա. Ս. Ուվարովը, Վ. Վ. Ստասովը, ավստրիացի գիտնական Հ. Ստրիգովսկին, Վենետիկի Մխիթարյաններից Ղ. Ալիշանը և ուրիշներ: Հայ մանրանկարչության ուսումնասիրության գործում առանձնապես մեծ վաստակ ունի Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը. նա երկար տարիներ նվիրվել է այդ շնորհակալ գործին և իր մեծարժեք մենագրություններով լուծել հայ արվեստի պատմության հետ կապված կնճռոտ բազմաթիվ հարցեր:

Հայ մանրանկարչության ուսումնասիրության ասպարեզում խոշոր աշխատանքներ են կատարվել վերջին տասնամյակում Սովետական Հայաստանում: Աչքի ընկնող աշխատանքներից պետք է նշել արվեստի պատմության հմուտ մասնագետ Ա. Ն. Սվիրինի «Հին հայաստանի մանրանկարչությունը» խորագրով արժեքավոր ուսումնասիրությունը, որը լույս է տեսել Մոսկվայում 1939 թվականին, ռուսերեն: Հմուտ գիտնականն առաջին անգամ բարձրացրել է հայ մանրանկարչության մի շարք կարևոր հարցեր և մեծ հետաքրքրություն առաջացրել ինչպես հայ, այնպես և ռուս արվեստագետների շրջանում: Հայ մանրանկարչության ասպարեզում մեղմիջան աշխատանք է կատարել և այժմ շարունակում է

կատարել արվեստի հմուտ վարպետ Լ. Ա. Դուռնովոն: Նրա հեղինակությունն է պատկանում հայ ժողովրդին մեծ պատիվ բերող Մանրանկարչության գունատիպ ալբոմը: Բացի այդ, նա մեղվաշան աշխատանք է կատարում նաև երիտասարդ մասնագետներ պատրաստելու ուղղությամբ: Նրա ուսանողներից են երիտասարդ շնորհալի մասնագետներ Լ. Ազարյանը, Ա. Ավետիսյանը և ուրիշներ:

Հայ գաղթավայրերում ևս կան առանձին մասնագետներ, որոնք արժեքավոր աշխատանք են կատարում հայ մանրանկարչության ուսումնասիրության ուղղությամբ: Մենք նկատի ունենք օրիորդ Սիրարիի Տեր-Ներսեսյանին, բանասերին Ա. Յրեմյանին, Հ. Քյուրտյանին և ուրիշներ:

Բարձր գնահատելով կատարված այս մեծ աշխատանքը, սակայն պետք է խոստովանենք, որ մանրանկարչության շատ զբաղողներ, հայ մանրանկարչության շատ վարպետներ դեռ մնում են անհայտության խավարի մեջ, և առաջիկայում մեծ աշխատանք է պետք նրանց բացահայտելու համար: Արդարացի է ռուս գիտնական Ստասովը, երբ գտնում է, որ հայ մանրանկարչությունը մեզ համար մնում է որպես «անծանոթ մի գանձատուն»¹: Առանձնապես անմշակ է մանրանկարչության մեզ հետաքրքրող ճյուղը՝ զարգացրությունը:

Մենք հավակնություն չունենք այստեղ լուծելու հայ մանրանկարչության կնճռոտ հարցերը: Հայ մանրանկարչությունը մեր ներկա աշխատանքում հետաքրքրում է մեզ միայն այն չափով, ինչ չափով նա օգնում է լուսաբանելու հայ գրչության, հատկապես զարդագրերի հետ կապված աղբյուրագիտական որոշ հարցեր:

Հայ մանրանկարչությունը հին պատմություն ունի. նա, կորելի է ասել, այնքան հին է, որքան հին է մեր գրչությունը: VI դարի հայ մատենագիր Վրթանես Քերթոզի մի տեղեկությունից մենք իմանում ենք, որ նկարչությունը, այդ թվում նաև մանրանկարչությունը, սիրված արվեստ է եղել հին Հայաստանում:

Դժբախտաբար, հին հայկական մանրանկարչությունից քիչ նմուշներ են հասել մեզ, որոնք ամբողջական պատկերացում չեն տալիս:

Մեզ հասած ամենահնագույն մանրանկարները հանդիսանում են Փղոսկրյա ավետարանի պատառիկները, որոնք, Ստրժիգովսկու

¹ В. Стасов. Армянские рукописи и их орнаментация (տես, «Журнал МНП». 1886, հուլիս, էջ 133):

կարծիքով, ժամանակակից են կազմին, այսինքն՝ VII դարից են¹, իսկ Լ. Ա. Դուռնովոն ավելի հին է համարում նրանք՝ V—VI դարերի²:

Սակայն հին հայկական մանրանկարչութիւն մասին մենք կարողանում ենք որոշ պատկերացում կազմել X—XI դարերից մեզ հասած մանրանկարչութիւն հիման վրա, քանի որ գրիչները ո՛չ միայն արտագրում էին հին ձեռագրերը, այլև ընդօրինակում հին ձեռագրերում եղած զարդանկարները, ուստի և նրանք պատկերում են իրենց նախորդ շրջանի մանրանկարչութիւնը ևս: Պատահական չէ, որ հայ զարդաքանդակներով զբաղվող մասնագետներից ոմանք նմանություններ են տեսնում X—XI դարերի հայ մանրանկարչութիւն և VI—VII դարերի հայկական հուշարձանների զարդաքանդակների միջև:

X—XI դարերի հայկական մանրանկարների ուշադիր ուսումնասիրությունը, սակայն, մեզ կարող է օգնել պարզելու ո՛չ միայն նախորդ դարերից մեզ չհասած մանրանկարչութիւն պատկերը, այլև մոտավոր ճշտութեամբ որոշելու, թե հայ մանրանկարչութիւն մեջ ինչ տարրեր հայ հեթանոսական արվեստից են մուտք գործել: Այս ուղղությամբ առաջին դրական քայլն արված է Մատենադարանի գիտական աշխատող Ա. Մնացականյանի կողմից «Հայկական զարդարվեստ» խորագրով աշխատության մեջ:

Մեզ հասած հնագույն հայկական մանրանկարչութիւնը պարունակող ամբողջական և թվական ունեցող ձեռագիրը 887 թվականի Լազարյան ձեռագրանի նշանավոր ավետարանն է, որի առջևում վրձինված են մի քանի մանրանկարներ: Սակայն նրանք վարժ մանրանկարչի ստեղծագործություններ չեն և առանձին արժեք չեն ներկայացնում:

Մանրանկարչական բարձր արժեք ունեցող մեզ հասած ամենահին ձեռագիրը՝ Վասպուրականի Գագիկ թագավորի կնոջ՝ Մլքե թագուհու պատվերով 902 թվականին գաղափարված ավետարանն է³, որի խորանները և ավետարանիչների նկարները գունատիպ հրատարակել են Մխիթարյանները:

¹ I. Strzygovsky, Das Etschmiadzin Evangeliar, 1881, էջ 25—53:

² Լ. Ա. Դուռնովո, Հին հայկական մանրանկարչութիւն, Երևան, 1952:

³ «Զարդանկարք Աւետարանի Մլքե թագուհույ, Վենետիկ, 1902:

Հալ մանրանկարչության մյուս մեծարժեք ստեղծագործությունը Հայոց Ն.Լ. Թվականին (ներկայիս 989 թ.) Վայոց Ձորի Նորավանքում մագաղաթի վրա Հովհաննեսի կողմից գրչագրված ավետարանն է:

X դարի մանրանկարված ձեռագրերից են նաև Մեծշենի ավետարանը՝ 909 թվականից, Սանասարյան վարժարանի ավետարանը՝ 986 թվականից և այլն:

Հալ մանրանկարչության պատմությանը զբաղվող գրեթե բոլոր ուսումնասիրողներն այս կամ այն կապակցությամբ անդրադարձել են այս ձեռագրերի պարունակած մանրանկարներին և հիացմունքով խոսել նրանց մասին: Այսպես, ռուս գիտնական Սվիրինը, ուսումնասիրելով Մլքեի և Փղոսկրյա ձեռագրերի մանրանկարները, գտնում է, որ «մատնացույց արված այս երկու կարևոր հուշարձանները պատկանում են հին Հայաստանի գրքի արվեստի փայլուն շրջանին»¹: Եսկ Դուռնովոյի կարծիքով, Փղոսկրյա ավետարանն «իր բացառիկ գեղարվեստական որակով կանգնած է համաշխարհային կուլտուրայի հուշարձանների շարքում»²:

Հալ մանրանկարչության պատմությանը զբաղվող մասնագետներից ոմանք այնքան բարձր արվեստի երախայրիք են համարել նրանք, որ նրանց լայն կիրառումը Հայաստանում չգտնելով, դիտել են որպես օտարներից վերցրած փոխառություններ:

Հին հայկական մանրանկարչությունը համեմատության մեջ դնելով բյուզանդականի և ասորականի հետ, նրանք շեշտը դնում են նմանությունների վրա և եզրակացնում, որ իբր թե X դարի հալ մանրանկարչությունը փոխառություն է բյուզանդական և ասորահրանական մանրանկարչությունից: Այսպես օրինակ, Սվիրինը անհիմն ձեռով գտնում է, որ Փղոսկրյա ավետարանի առաջին թերթերի մանրանկարչությունը «բաց իրենց ոճի, պատկանում են սիրիական արվեստին», Փղոսկրյա ավետարանի մանրանկարներում նկատելի է «ճշլլենիստական բյուզանդական» տարրը և այլն³: Ստացվում է այնպես, որ հին հայկական մանրանկարչությունը, հիմնականում, փոխառություն է ուրիշներից:

¹ А. Н. Свирин, Миниатюра древней Армении, Ереван, 1939, էջ 30:

² А. А. Дурново, Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957, էջ 18:

³ А. Н. Свирин, Миниатюра древней Армении, էջ 31 և 36:

Նախ՝ Հայաստանը, իհարկե, չի նական պարսպով անջատված չի եղել իր հարևաններից, այլ գտնվել է կուլտուրական սերտ փոխհարաբերության մեջ. նա կուլտուրական իր գանձատունը բաց է արել հարևանների առջև, ինչպես և հարևաններից վերցրել է ալն, ինչ մոտիկ է եղել իր սրտին: Ըստ որում, հարևաններից վերցրածը, ինչպես շատ ճիշտ նկատել է Դուռնովը, մշակել է իր «գեղագիտական ունակությունների և իր ժամանակի պահանջների համաձայն»:

Բացի այդ, եղել են մանրանկարչության որոշ սկզբունքներ, որոնք ընդհանուր են եղել քրիստոնեական բոլոր ժողովուրդների համար: Օրինակ, սահմանված է եղել Քրիստոսի կյանքի իլլուստրացիայի ենթարկել միայն որոշ դրվագներ. քրիստոնյա մանրանկարիչը ցանկանում էր այդ, թե ոչ, այս սահմանափակությունից գուրս գալ չէր կարող: Այնպես որ և՛ առաջին, և՛ երկրորդ հանգամանքներն անխուսափելի էին դարձնում նմանությունները:

Սակայն այդ նմանությունները, իհարկե, հիմք չեն տալիս խոսքս խոսքի փոխառության մասին: Այս տեսակետը հիմնովին սխալ է: Նշված հուշարձանների մանրակրկիտ ուսումնասիրությունը մեզ բերում է բոլորովին հակառակ եզրակացության: Այսպես, Ս. Տեր-Ներսիսյանը, Փղոսկրյա ավետարանի առջևի մանրանկարները համեմատության մեջ դնելով Ազթամարի զարդաքանդակների հետ, ապշեցուցիչ նմանություն է տեսնում նրանց մեջ և գտնում, որ նրանք «զուտ տեղական» են¹: Դուռնովը գտնում է, որ Մլքեի ավետարանի «զործող բոլոր անձնավորությունների դեմքերը տիպիկ հայկական են» և ընդհանրապես X—XI դարերում հայկական մանրանկարչությունը «բացահայտ հայկական կնիք ունի իր վրա»²: Հայ մանրանկարչության բազմահմուտ մասնագետ Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը, անդրադառնալով հին հայկական մանրանկարչությանը և համեմատության մեջ դնելով այն կիլիկյան շրջանի մանրանկարչության հետ, հետևյալ եզրակացությունն է եկել. «Եթե մենք ի նկատի ունենանք հայ ձեռագրական արվեստը մինչև ԺԱ դարի վերջերը և մինչև ԺԲ դարի կեսերը, կտեսնենք, որ նորա բնույթը տարբեր է, քան թե այնուհետև երևան եկող երեվույթներն են կիլիկյան շրջանում: Մինչ այդ հայ արվեստի բնույ-

¹ S. Der Nersessian, The date of the initiale Miniatures of the Etschmiadzin Gospel, Chicago, 1933.

² Л. А. Дурново, Краткая история древневосточного живописи, т. 2, 17 и 25:

թը արևելյան է, համեմատ լուր դրացիների՝ Առաջավոր Ասիայի ազգերի և Պարսկաստանի հետ ունեցած փոխազդեցությունն»¹:

X—XI դարերում հայ մանրանկարչության որոշ նմանությունը բյուզանդականի հետ հասկանալի է, եթե նկատի ունենանք, որ այդ դարերում, երբ բյուզանդական գահի վրա բազմում էին ծագումով հայ կայսրներ, բյուզանդիոնում ստեղծվել էր բավականին խոշոր հայկական գաղթավայր, ուր քիչ թիվ չէին կազմում հայ գիտնականները, զինվորականները և արվեստի մարդիկ: Զպետք է մոռանալ, որ երբ անհրաժեշտ եղավ Այա-Սոֆիան վերակառուցել, գործի հրավիրեցին հայ ճարտարապետ Մանվելին²: Բնական է, որ այս իրադրության մեջ հայ վարպետները կարող էին հայ արվեստի որոշ տարրեր տալ բյուզանդականին և որոշ տարրեր վերցնել նրանից: Բոլոր դեպքերում, խոսքը այստեղ կարող է լինել ո՛չ թե ազդեցության, այլ փոխազդեցության մասին:

Երբ խոսվում է հին հայկական մանրանկարչության մասին, աչքաթող չպիտի անել հին հայկական մանրանկարչության այն նմուշները, որոնք ունեն շեշտված արևելյան երանգավորում: Այս խմբի հնագույն նմուշը՝ Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի կրկնագիր Մաշտոցն է, որը գրանցված է № 963-ի տակ: Մաշտոցն ընդօրինակված է XIII դարում, սակայն կազմի կողքերում որպես պահպանակ օգտագործված է հին ձեռագրի մագաղաթյա մի թերթ, որը շատ հին է, համեմատյալ դեպս՝ X դարից առաջ: Մանրանկարված է խորան՝ առանց սյուների: Նա ունի հետևյալ բնորոշ առանձնահատկությունները. խորանի մեջ օգտագործված գույների մեջ գերակշռում են կապույտ և կանաչ գույները: Պորանում, առանձին շրջանակների մեջ, նկարված են պետարանիչներին խորհրդանշող կենդանիները՝ առյուծ, բազե, արծիվ և եզան զլուխ:

Մանրանկարչության այս խմբի նմուշներից է նաև Սահասարյան ավետարանը, որն ընդօրինակված է 986 թվականին: Այս ձեռագրի մանրանկարների վրա կանգ է առել Լ. Ա. Դուռնովոն և համարել այն հայ ժողովրդական, դեմոկրատական մանրանկարչության նախատիպը³:

¹ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, Կոստանդին կաթողիկոսը որպես հայ մանրանկարչության մեծ հովանավորող (Ընդլուծք և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության)՝ պրակ Բ, Նյու-Յորք, 1943, էջ 14):

² К. Л. Оганесян, Зодчий Трдат, Ереван, 1951, էջ 78—100:

³ Л. А. Дурново, Краткая история древнеарм. живописи, էջ 17—18:



Արևելյան ինքնատիպ այդ ձեռագրերի խմբին են պատկանում Տյուրինգների ավետարանը՝ գրված 1113 թվականին, Հայկական ՍՍՈՒ Մատենադարանի ձեռագիրը՝ 1165, 6 թվականից և այլն:

Ավելի ուշ շրջանում մանրանկարչության այս ուղղության փայլուն ներկայացուցիչներից է Իգնատիոս մանրանկարիչը¹, որի ստեղծագործությունը կապված է Արևելյան Հայաստանի գրչության երևալարևոր օջախների՝ Հավուց Թաոի, Բագնայրի և Խծկոնքի հետ: Նրա ստեղծագործության ժամանակաշրջանն ընդգրկում է 1214—1216 թվականները:

Ինչ է բնորոշ մանրանկարչության այս դպրոցի զարդագրչությանը: Այս մանրանկարչական դպրոցի ձեռագրերում, համեմատաբար, զարդագրերը քիչ են գործածվում, նկարում են միայն թագավորների սկզբնատուները կամ կարևոր գլուխների վերնագրերը: Նկարված զարդագրերը խոշոր են, երբեմն մի տառը ձգվում է էջի ամբողջ երկարությամբ: Զարդագրերը կազմված են լինում երկրաչափական և հյուսված քալին գեղեցիկ դրվագներից: Ուղիղ գծում են սյունագծերը և նրանց փաթաթում ճյուղազարդեր՝ մի քանի տեղ խաչաձև հանգուլցներ ստեղծելով: Ըստ որում, սյունագծերի գույնը տարբերվում է փաթաթվող զարդաճյուղերից, զարդաճյուղերին միացնում են փոքրիկ օղակներից կամ կետերից բաղկացած զարդարանքներ: Հնագույն ձեռագրերում սյունագծերը նկարում են սովորաբար տարբեր գույներով, իսկ XII—XIII դարերի ձեռագրերում ներկը հաճախ փոխարինում են ոսկով: Զարդագրերի գծվածքները արտակարգ նրբություն չունեն. նրանք, մեծ մասամբ, կազմված են լինում պարզ և հաստ հյուսվածքից, բայց արտաքին տեսքով անչափ գեղեցիկ են. նրանց պարզությունը և գույների համաչափությունը բացառիկ գրավչություն են տալիս: Տառաձևերում հաճախ երկարում է ո՛չ միայն սյունագիծը, այլև դեպի աջ դարձող թևը, որը մտնում է տեքստի խորքը: Սյունագծի ներքևի ծայրը, ինչպես աջ թևի ծայրերը, վերջանում է դեպի մի կողքը սուր ծայր տվող եռաշերտ տերևաձև զարդերով:

Այս խմբի հնագույն մանրանկարված ձեռագրերը չեն ունենում դեռ ավետարանիչների նկարները. նրանց փոխարեն նկարված է լինում խաչ, հաճախ շատ մեծ, որ զբաղեցնում է մի ամբողջ էջ: Ըստ որում, խաչերը հավասար կողքեր են ունենում,

¹ Ա. Երեմյան, Իգնատիոս մանրանկարիչ արվեստի հիմնական գծերը, (տես «Եջմիածին», 1956, № 111, էջ 36—45):

ինչպես Փղոսկրյա ավետարանի վրա է: Խաչն ամրացնում են բուրգածև մի պատվանդանի, որը զարդարված է լինում: XII դարի ալդ խմբի ձեռագրերում սկսում են արդեն նկարել նաև ավետարանիչներին, մեծ մասամբ, կանգնած վիճակում: Նկարների մեջ դեմքերը նկարում են արևելյան, ավելի ճիշտ՝ տիպիկ հայկական՝ կարճ մորուք, արտահայտիչ աչքեր՝ մեղամաղձուտ արտա-



Գիլիկյան շրջանի մանրանկարչության մի նմուշ:

հայտնությամբ, մուգ պղնձագույն դեմք: Հագուստները նույնպես արևելյան են:

XII—XIII դարերի հայ մանրանկարչության մեջ ուշագրավ է մի ակնառու երևույթ՝ բեկում դեպի զարդանկարչության աշխարհականացումը, որն իրավացիորեն կապվում է Հայաստանում նոր սաղմնավորվող բուրժուական դադափարախոսության հետ: Դուրնովոն՝ մանրանկարչության այդ բեկումը տեսնում է Հաղպատի 1211 թվականին գրված նշանավոր ավետարանի մանրանկարներում, որը վրձինված է Մարգար գրչի կողմից¹: Այսպես օրինակ,

¹ Л. А. Дурново, Краткая история древнеарм. живописи, էջ 30—31,

այդ ավետարանի խորաններից մեկում նկարված է մի մարդ, որը նստել է այգում ծառի տակ և թռչունների դալլալլանքի տակ նըվագում է սազի վրա: Դարձյալ նկարված է խորաններից մեկի կողքին երկու անձնավորություն՝ տեղական հագուստով, նրանցից մեկը շալակել է մի ձուկ, իսկ մյուսը՝ մի սափոր գինի, որոնք, իհարկե, եկեղեցի չէ, որ սանում են, այլ դեպի խնջույք, ուրախություն: Նկարված ավետարանիչները նախկին նիհար, գունատ և մտախոհ հայացքի տեր մարդիկ չեն, նրանց փոխարինում են կտր դեմքերով, կարմրած թշերով և կերած-խմած ուրախ մարդիկ: Այս խմբի ձեռագրերում սկսում են երևալ նաև մերկ տղամարդիկ և կանայք: Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 4185 ձեռագրում, որը դարձյալ ԺԳ դարից է, լուսանցքներում նկարված են եղել մերկ մարդիկ, որոնք հետագա դարերում կտրել են՝ անպատշաճ համարելով թողնել կրոնական աշխատության մեջ: Կտրված մարդկանց մարմնի որոշ մասերը, որոնք մոտիկ են եղել տեքստին, մնացել են և մեզ որոշ պատկերացում են տալիս իրենց նախկին ձևի մասին¹: Այդ ժամանակաշրջանի մի այլ ձեռագրում, որը գրված է Կիլիկիայում, նկարված է երկար վարսերով մի կին, որի մարմնի լեքին մասը մերկ է, իսկ ներքևը ծածկված է կարմիր ծիրանիով²: Վերջապես, 1274 թվականի Օշինի պատկերով (Նյու-Յորքի համալսարանի սեփականությունը հանդիսացող) մի ձեռագիր, որը գրված է XIII դարում, խորաններից մեկի աջ և ձախ կողքերում նկարված են աղամալին մերկություն մարմնով կանգնած երկու կանայք³:

Սաղմնավորվող հայ բուրժուազիայի գաղափարախոսությունն արտահայտող՝ այս բեկումը, սակայն, որակ չստեղծեց, որովհետև մոնղոլների ներխուժումների հետևանքով Հայաստանում տեղի ունեցան լայնպիսի ծանր ցնցումներ, որ Հայաստանի տնտեսական ու կուլտուրական կյանքը դուրս եկավ իր բնականոն ընթացքից:

Հայ մանրանկարչությունն իր զարգացման փալլուն շրջանն ապրեց առանձնապես՝ Կիլիկիայում, որտեղ մանրանկարված ձեռագրերից բավականին թվով հասել են մեզ: Այստեղ հանդես են եկել հանճարեղ նկարիչներ, ծաղկողներ, ոսկողներ և վարպետ գեղագրողներ:

¹ Ա. Մնացականյան, Հայկական զարգարվեստ, էջ 403:

² Նույն տեղը, էջ 458:

³ A. Sakissian. Pages d' Art arménien, Paris, 1940, էջ 9—10, նկ. 2:

Գիլիկիայի հ սյ մանրանկարչությունը, հիմնականում, զարգացել է գիտություն և արվեստի երեք խոշորագույն կենտրոններում՝



Սի էջ 1211 քիականվ մանրանկարչներից:

Դրազարկում, Նոովկլալում և Սկևուլում: Գրչություն կարևոր կենտրոններ են հանդիսացել նաև Գոնեբը և Ակնեբը, սակայն նրանք

ինքնուրույն դեր չեն կատարել և կապված են եղել վերև հիշված գրչության երեք օջախների հետ:


Գիլիկիայի այս երեք կենտրոններից ամեն մեկը չնայած ունեցել է իր յուրահատուկ առանձնահատկությունները, սակայն ներանք տարբեր ուղղություններ չեն ստեղծել, ուստի նրանց մանրանկարչությունը պետք է քննության առնել մեկ ամբողջության մեջ:

Գիլիկիայի հայ մանրանկարչությունը, իհարկե, միանգամից հանդես չի եկել: Գիլիկիայի XII դարի մանրանկարչության մեջ նկատելի է հին Հայաստանի մանրանկարչության ուժեղ ազդեցությունը: Այդ կարգի ձեռագրերից են Գևորգ գրչի Դրագարկում ընդօրինակած ձեռագիրը 1113 թվականին (Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի ձեռ. № 6763), Գրիգոր գրչի՝ Սկևռայում ընդօրինակած ձեռագիրը 1193 թվականին (Վիեննայի Մխիթարյանների հավաքածու, № 125) և ուրիշներ:

Դրությունը փոխվում է XIII դարում, հատկապես XIII դարի երկրորդ կեսում: Ձեռագրերի պատվիրատուներն այժմ հանդես են գալիս Գիլիկիայի արքունիքի և Կաթողիկոսության աչքի ընկնող ներկայացուցիչները՝ թագավորները, կաթողիկոսները, եպիսկոպոսները, իշխանները և այլն, որոնց նիստուկացը, հագուստը և այլն զգալիորեն տարբերվում է բուն Հայաստանի իշխաններից: Նրանք մոտից շփման մեջ էին խաչակիրների, Փոքր Ասիայում հաստատված լատինական իշխանությունների, Իտալիայի և եվրոպական զարգացած իշխանավորների հետ, բարձրացել էր նրանց ճաշակը, ուստի պահանջում էին նոր և բարձր արվեստի գործեր: Ծաղկողներն աշխատում էին ավելի շքեղ, ավելի բազմերանգ նկարել ձեռագրերը՝ օգտագործելով ինչպես հայ հին մանրանկարչության լավագույն մոտիվները, այնպես և արևելյան մանրանկարչությունը, որն առանձին շքեղություն է տալիս հայ մանրանկարչությանը: Ըստ որում, հայ մանրանկարիչները, օտարներից փոխառություններ կատարելիս, չեն կրկնում նույնութամբ, այլ վերամշակում են իրենց ճաշակի համաձայն: Գրքի գեղանկարչությունը Գիլիկիայում հասնում է բարձրագույն կատարելության:

Գիլիկիայում հանդես եկող ականավոր մանրանկարիչներից են Կոստանդինը, Կևորգը, Գրիգորը (XII դարում), Կիրակոսը, Հովհաննեսը (XIII դարի երկրորդ կեսում), հայ մանրանկարչության հանճարեղ վարպետներ Թորոս Ռոսլինը (XIII դարի 50—70-ական

թվականներին)¹, Մարզիս Պիծակը² (XIV դար) և ուրիշներ: Կիլիկիայի հալ մանրանկարչությունն ունի մի շարք բնորոշ առանձնահատկություններ, որոնք դժվար չէ ճանաչել առաջին իսկ հալացքից: Կիլիկիայի մանրանկարչության մեջ նախ խորանները կորցնում են իրենց նախկին դերը և դառնում ավորական շրջանակներ՝ զարդանկարներ տեղավորելու համար: Խորանների վրա սկսում են նկարիչ ավեստարանների սիմվոլիկ չորս գլուխները կամ



Մարզիս Պիծակի զարդագրերից:

վանագան կենդանիներ: Խորանների ֆոնը նկարում էն մեծ մասամբ ոսկուց: Խորանի վերին մասում նկարում են կրոնական, թատերական կամ կրկեսային ամբողջ տեսարաններ: Մարզկանց մարմինների առանձին մասերը նկարում են համաչափ: Շարժումները տրվում են բացառիկ վարպետությամբ: Դեմքերի նախ-

¹ Ա. Երեմյան, Մանրանկարիչ Քորոս Թոսլին, («Էջմիածին», 1958, № 1, էջ 42—48, № 2, էջ 22—34):

² Նույնը, Մանրանկարիչ Մարզիս Պիծակ («Էջմիածին», 1953, № 9, էջ 45—50, № 10, էջ 30—35, №№ 11—12, էջ 30—40):

Ֆին կանաչավուն գույնը փոխվում է նուրբ մարմնագույնով: Մարգկանց նկարում են մեծ մասամբ առանց մորուքի, սափրված: Մարգիկ նախկին բյուզանդական սրբազրութւան սառած, անհոգի խամահիկները չեն. նրանց դեմքերին նախելով կարելի է անգամ կռահել, թե ինչ ապրումների մեջ են և ալլն:

Կիլիկիայի հալ մանրանկարիչների մոտ, զարգանկարչութւան հետ միասին, զարգանում է նաև զարգագրութւունը: Զարգագրերը, նախկինի համեմատութւամբ, ամենից առաջ՝ սկսում են փոքրանալ և շատանալ: Եթե նախկին հյուսված քալին զարգագրերը մի ձեռագրում պատահում էին մի քանի հատ միայն, այժմ նրանք մի ձեռագրում հարյուրների են հասնում: Առաջին էջի վրա, որին մենք այժմ տիտղոսաթերթ ենք անվանում, նկարում են ոչ թե մեկ տառ, ինչպես առաջ էր, այլ մի ամբողջ տող, իսկ երբեմն՝ ամբողջ էջը գրում են զարգագրերով: Զարգագրութւան մեջ սկսում են գործածել թռչուններ, ծաղիկներ, կենդանիներ, ձուկ, մարդիկ և ալլն: Ըստ որում, զարգագրողները մարդկանց և կենդանիները նկարում են շարժման մեջ: Կանգ առնենք նրանցից մի քանիսի վրա.

Նկարել են գալլի և բազբի գլուխներով երկու հուշկապարիկ (սիրեն) դեմառդեմ և ներքևից միացրել բարակ գծիկով: Աջից նրանց մեջ մտել է մի աղվես և դուռնը մեկնել դեպի աջ կողմի հուշկապարիկի կուրծքը՝ պոչը երկարելով դեպի աջ. ստացվել է «Ա» տառը (Նկ. 1)¹:

Վագր են նկարել ուղղահայաց ձգված դիրքով, պոչը փաթաթած հետևի ոտքերին: Վագրը կուլ է տալիս մի թռչուն, որի կես մասը մտել է վագրի որկորը, իսկ վերին մասը գլխի հետ թուլացած կախ է ընկել ներքև: Նա ձգված, ուղղահայաց դեպի աջ է մեկնել իր առաջին ոտքերը: Եվ այս ներդաշնակ կոմպոզիցիայից ստացվել է «Բ» (Նկ. 2):

Նկարված է մի մարդ կանգնած վիճակում, կրծքից ներքև, մեջքին փաթաթած կապույտ սավան: Մարդը ձեռքով բռնել է դեպի աջ մեկնած մի ծաղիկ: Մարդու գլխարկի վերին ծոպից բռնել է մի թռչուն և կեռվելով՝ իր պոչը միացրել է մարդու մեջքին: Ստացվել է «Գ» (Նկ. 3):

Հետին ոտքերի վրա ձիգ կանգնած է վագրը՝ գլուխը շուռ

¹ Ստորև թվարկված բոլոր զարգագրերը վերցրել ենք Գուանդոյի հրատարակած ալբոմից:

ալած հետև, իսկ առաջին ոտքերը, իրար միացրած, պարզել է դեպի աջ: Ստացվել է «Դ» տառը (նկ. 4):

Ահա ձեզ անչափ բնական՝ և՛ ձեռով, և՛ գուլնով մի աղվես, որը նստել է հետևի ոտքերի վրա և դեպի աջ մեկնել իր երկար պոչը. ստացվել է «Ե» տառը (նկ. 5):

Նույն տառի մի այլ ձևում աղվեսին փոխարինում է կապույտ գուլնով եզը, որը նստել է հետին ոտքերի վրա, պոչը՝ կեռել և բարձրացրել առջևի ոտքերը (նկ. 6):

Նկարել են գլխիվայր վիճակում մի սիրամարգ, որը կուրծքն ու պոչն անքան է կեռել, որ վերևում կազմվել է մի կլոր: Նա կտցով բռնած ունի կանաչ տերև և կարմիր պտուղ ունեցող մի ծաղիկ, որը ձգված է դեպի աջ: Ստացվել է «Զ» (նկ. 7):

Աղվեսը նստել է հետին ոտքերի վրա և պոչը կորուժյամբ երկարել դեպի աջ և ներքև թեքել. մի թռչուն, հավանական է ազգավ, նստել է նրա գլխին և կտցահարում է: Ստացվել է «Ը» (նկ. 8):

Կանգնած է մարդը՝ ձեռքում բռնած օձ, որը մեկնել է դեպի դիմացը կանգնած թռչունի բերանը, որը բաց է արել կտուցը և պատրաստվում է կուլ տալ օձը: Թռչունի պոչի վրա, վայր հակված վիճակում, միացել է ֆանտաստիկ կենդանու բարակ վիզը: Ստացվել է «Թ» (նկ. 9):

Աղյուսի գուլն ունեցող գիշատիչ ինչ-որ կենդանի կանգնել է հետևի ոտքերի վրա և կուլ է տալիս մի թռչուն, որի կեսը գտնվում է արդեն այդ գիշատչի բերանում. թռչունի գլուխը կախ է ընկել դեպի աջ: Մի այլ թռչուն վերևից ներքև է կախվել և դեպի իրեն է ձգում կուլ գնացող թռչունին՝ ցանկանալով ազատել նրան: Ստացվել է «Ի» (նկ. 10):

Նկարել են հպարտ կանգնած մի աքաղաղ, որը, գլուխը վերև բարձրացրած և փոքր-ինչ հետև թեքված, նախում է դեպի աջ, նրա բարակ վիզը բոլորովն է երկարող պոչի հետ և հանգույց կազմել, պոչը թեքվում, ցած է կախվում, կազմելով, «Մ» (նկ. 11):

Չուկ է նկարված առյուծի գլխով՝ դեպի ներքև հակված գիրքով: Մի արագիլ կախ է ընկել ներքև և բռնել է առյուծի գլխից: Ստացվել է «Ծ» (նկ. 12):

Երկու առյուծ, մեկը կարմիր, իսկ մյուսը կապույտ, կանգնած են գլխի վրա դեմ դիմաց, իսկ վերևում փաթաթել իրենց հետևի ոտքերը և պոչերը: Ստացվել է «Ո» տառը (նկ. 13):

«Ո» տառի մի այլ տառաձևում առյուծներին փոխարինում

են երկու սոխակներ, որոնք գլուխները վերև բարձրացրած գալ-
լալլում են: Սոխակների կտուցները վերև թեքված միացնում է մի
գծիկ (Նկ. 14): Մի երրորդ տառածևում սոխակներին փոխարինում
են պոչի վրա կանգնած երկու ձկներ (Նկ. 15):

Նկարված է թռչուն՝ մարդու գլխով՝ միացված մի ծաղկի:
Նրան փաթաթվել է մի օձ, որը ցանկանում է վերև բարձրանալ:
Օձն իր բերանում ունի երկհյուղ ծաղիկ, իսկ վերևում նրան է
կպել թռչունը: Ստացվել է «Յ» (Նկ. 16):

Նկարված է ձգված վիճակում երևակայական մի կենդանի,
որը կանգնել է հետին ոտքերի վրա՝ վարսածև երկար պոչը փա-
թաթելով իրար կպցրած հետին ոտքերին: Այդ կենդանու բաց
երախի մեջ իր գլուխն է մտցրել մի թռչուն՝ կեռած պոչով: Կեն-
դանին առաջին վերև բարձրացրած ոտքերով բռնել է մի գիրք,
իսկ ձախից ունի փետրով թևեր, որոնց բաց է արել: Մանրանը-
կարն արտահայտում է «Ք» տառը (Նկ. 17):

Կարելի է բերել հարյուրավոր նման զարդանկարչության օրի-
նակներ, որոնք նկարված են աննախընթաց գեղեցկութամբ և
երևակայութամբ:

Կիլիկյան այս զարդանկարչությունը իր խորունկ ազդեցու-
թյունն ունեցավ հետագայում հայկական մյուս դպրոցների ման-
րանկարչության վրա: Նրա որոշ տարրերն անցան անգամ տպա-
գրության մեջ:

Կիլիկիայի հայ մանրանկարչության մասին խոսելիս չի կա-
րելի չանդրադառնալ հայ արվեստի պատմության մեջ քաղաքա-
ցիութուն ունեցող սխալ այն տեսակետին, որ իբր թե Կիլի-
կիայի հայ մանրանկարչությունը «արքունական մանրանկարչու-
թյուն» է: Չի կարելի ժխտել, իհարկե, որ այդ մանրանկարչության
մեջ մասնակից են եղել ավատական իշխող շրջանների ներկայա-
ցուցիչները ևս: Չի կարելի աչքաթող անել նաև այն իրողությունը,
որ ինչպես կիլիկյան, այնպես և հայ մյուս մանրանկարչության
ուղղությունների վրա իր կնիքն է դրել հայ պաշտոնական
եկեղեցական թեմատիկ սխեման: Եվ, վերջապես, չպետք է
ժխտել, որ Կիլիկիայում վրձինված հայ մանրանկարչական ձեռա-
գրերի մեծ մասը գրված է ավատական իշխող շրջանների պատ-
վերով. պատվիրատուներ են հանդիսացել Կոստանդին Ա կաթողի-
կոսը, շեթում Ա թագավորը, Սմբատ Գունդստաբլը, շեթում Բ
և ուրիշներ: Սակայն չպիտի շփոթել ձեռագրի պատվիրատուին
ձեռագիրը գրող և նկարող «սե մշակ»-ների հետ, որոնք սեր-

տորեն կապված էին ժողովրդի հետ և նրանից էին քաղում իրենց ստեղծագործութիւն լավագույն տարրերը: Նույն մանրանկարիչը հաճախ երկու տարբեր որակի արտադրութիւն էր տալիս. եթե նա նկարում էր մեծահարուստ մեկի պատվերով, աշխատում էր մեծ քանակութեամբ ոսկի գործածել, ավելի շատ մանրանկարներ նկարել, ավելի մեծ խնամք էր տանում նրանց նկարման ժամանակ, իսկ մյուս դեպքում, երբ նա նկարում էր առանց պատվերի, նկարում էր ավելի պարզ, առանց ոսկի գործածելու, առանց առանձին շքեղութիւն: Տվյալ մանրանկարիչը մի դեպքում, իհարկե, իշխող ավատական մանրանկարչութիւն ներկայացուցիչը չէր, մյուս դեպքում՝ սոցիալական ցածր խավերի:

Մանրանկարչի սոցիալական պատկանելութիւն մասին շատ բնորոշ փաստ է Թորոս գրչի իր պատվիրատուին՝ Հեթում թագավորին ուղղած խոսքը «Եւ ես գիտեմ,—գրում է նա — այս չէ թագաւորական իրք, այլ ոսկեգիր պիտէր և ճարտար գրիչ: Եւ ես շատ պատճառ ունէի, որ խափանէր իմ այս ձեռնարկութեան՝ տկարութիւն, և մութն խրճթիս և հողմն պախարու փոշեխառն փչելով ընդ պատուհանս, և պաղն օդոյս»¹: Թորոս գրիչը, տվյալ ձեռագիրը նկարագարողով Հեթում թագավորի համար, հայ ավատական կուլտուրան չէ, որ զարգացնում էր:

Հայ մանրանկարչութիւն ուշագրավ դպրոցներից է Սյունիքի մանրանկարչութիւնը: Սյունիք ասելով, մենք նկատի ունենք Քանահատի, Գլաձորի, Գնդեանի, Երեբուքի, Հերմոնի վանքի և Տաթևի մանրանկարչութիւնը: Դրանց մեջ առանձնապես կուլտուրայի խոշոր կենտրոն է հանդիսացել Գլաձորը XIV—XV դարերում՝ ներսես Մշեցու, Եսայի Նչեցու, Գրիգոր Տաթևացու և Հովհաննես Որոտնեցու ուսուցչապետութիւն շրջանում: Գլաձորի համալսարանում սովորելու են եկել աշակերտներ ինչպես Արևելյան Հայաստանից, այնպես և հեռավոր Գիլիլիայից, Արևմտյան Հայաստանի զանազան գավառներից: Գլաձորում դասավանդում, աշակերտներին սովորեցնում էին ոչ միայն փրիլիսոփայութիւն, տիեզերագիտութիւն, տոմար, ճարտասանութիւն, աստվածաբանութիւն, գրչութիւն և այլն, այլև սովորեցնում էին աշակերտներին նաև մանրանկարչութիւն:

Սյունիքի դպրոցը ևս օգտագործել է հին հայկական մանրանկարչութիւնը, առանձնապես Նորավանքի ծաղկած շրջանի

¹ Ա. Գ. Աբրահամյան, Հայկական պալեոգրաֆիա, էջ 170:

մանրանկարչությունը, որի ցայտուն նմուշն է Փզոսկրյա ավետարանը: Սակայն XIV—XV դարերի մանրանկարչության վրա էր որոշակի ազդեցությունն է թողել նաև Կիլիկիայի մանրանկարչությունը: Սյունիք սովորելու եկող ուսանողները ոչ միայն գալիս, սովորում էին Սյունյաց դպրոցներում, այլև իրենց իմացությունը և արվեստը բերում էին Սյունիք և մոծում հալ ժողովրդի ստեղծագործական գանձարանը:

Սյունյաց դպրոցը տվել է հալ մանրանկարչության մի շարք փայլուն դեմքեր, որոնց ստեղծագործությունները դեռ կարոտ են մասնագիտական լուրջ ուսումնասիրության: Մենք նկատի ունենք Հովհաննես ծաղկողին՝ Թանահատից (ԺՊ դարի երկրորդ կեսում)¹, Մոմիկին՝ (XIII դարի վերջերը և XIV-ի սկզբները)², Ավագին (XIV դարի առաջին կեսում), Թորոս Տարոնցուն Գլաձորից և ուրիշներ³:

Սյունիքի դպրոցների մանրանկարչությունը չունի, իհարկե, այն բարձր արվեստը, ինչպիսին Կիլիկիայինն է, սակայն Սյունիքի մանրանկարչության մեջ ավելի շատ են ժողովրդական տարրերը, քան Կիլիկիայի: Սյունիքում սովորած և նրա մանրանկարչության ավանդույթին հետևող մանրանկարիչներն ավելի են կապված ժողովրդի հետ: Նրանք իրենց մանրանկարչության մեջ ավելի շատ են գործածում շրջապատի գեղեցկությունները՝ կենդանական և բուսական հարուստ բնությունը: Թռչուններից սիրում են նկարել կաքավը, աքաղաղը, սոխակը, կենդանիներից՝ իրենց ծանոթ ընտանի և վայրի կենդանիները և ծաղիկները: Մարդկանց նկարում են տիպիկ հայկական դեմքերով և մորուքով: Զարգանկարչության մեջ, հիմնականում, օգտագործում են նախկին հյուսվածքային մանրանկարչությունը, սակայն ավելի նրբացրած ձևերով: Լայն տեղ են տալիս թուջնագրերին: Մենք ունենք, օրինակ, Տաթևում 1305

¹ Հ. Քյուրտյան, Հովհաննես Թանատի վանաց («Հասի» հայագիտական տարեգիրք, Բ տարի, Անթիլիաս, 1949—1950 թթ.):

² Մոմիկի մասին տես Ա. Ավետիսյանի հոդվածը «Գլաձորի մանրանկարչական դպրոցի հիմնադիր վարպետ Մոմիկը», որը սպազբված է «Էջմիածին» ամսագրում, 1958, № 8—9:

³ Գլաձորի դպրոցի մասին վերին աստիճանի արժեքավոր ուսումնասիրություններ ունի Գարեգին կաթողիկոս Հովսեփյանն իր «Պաղարկյանք կամ Գողջյանք հայոց պատմության մեջ» աշխատության երկրորդ մասում՝ «Գլաձորի բարձր դպրոցը կամ համալսարանը» վերնագրով (էջ 188—279), ուր վանք է առնում նաև Վայոց Ձորի մանրանկարիչների վրա:



Զարդագրված տիտղոսաբեր:

Թվականի գրված ձեռագիր, ուր տիտղոսաթերթի գրված բոլոր տառերը զարդանկարված են թռչնադրերով:

Բուն Հայաստանի և գաղթավայրերի հալ գրչության նշանավոր դպրոցներից մեկ են հասել մանրանկարված բարձրարժեք

քաղճաթիվ ձեռագրեր, որոնց վրա մենք, զժրախտաբար, հնարավորութիւն չունենք կանգ առնելու: Մանրանկարված ունիկոմներ ունենք Տարոնի, Կարինի, Վանի, Տուրուբերանի, Ղրիմի, Երզնկայի, Ատրպատականի հայ գրչութիւնն զպրոցներէից:

Հայ մանրանկարչական զպրոցներէից ամենից ինքնատիպը Խիզանի զպրոցն է, որից մեծ ժառանգութիւնն է մեզ հասել: Խիզանն ասելով մենք նկատի ունենք ո՛չ միայն Խիզանը, այլ Վանալճի հարավում: և նրա մոտերքում հանդես եկող հայ գրչութիւնն մյուս զպրոցները, օրինակ՝ Վանը, Աղթամարը, Բաղեշը և այլն:

Խիզանի մանրանկարչութիւնն զպրոցի ստեղծագործական շրջանն ընդգրկում է XIV դարից մինչև XVII դարը ներառյալ: Նրա աչքի ընկնող ներկայացուցիչներն են Արիստակես մանրանկարիչը (XIV դարի կեսերին), Ծերուն ծաղկողը (XIV դարի երկրորդ կեսին), Մկրտիչ Նաղաշը (XV դար) և ուրիշներ:

Խիզանի մանրանկարչութիւնն ունի մի շարք բնորոշ առանձնահատկութիւններ, որոնք հնարավորութիւն են տալիս անմիջապես այդ զպրոցի ստեղծագործութիւնները տարբերել հայկական մյուս զպրոցների ստեղծագործութիւններից:

Խիզանի ձեռագրերի խորանները չունեն նախկին ճարտարապետական կառուցվածքը: Նրանց սյուները կամարների հետ միասնում են առանց բարդութիւնների և կազմում զարդանկարչական մի ամբողջական շերտ: Զարդանկարչութիւնն մեջ հանդիպում են գլխավորապես թռչուններ, հատկապես աքաղաղներ, ձկներ և երեւակայական կենդանիներ՝ կիսամարդիկ, կիսաթռչուններ: Զարդանկարչութիւնն մեջ սիրված մոտիվը՝ պարուրած և նախշերն են, որոնք զանազան վարժ գալարումներով կծիկներ են կազմում: Գույների մեջ գերակշռում են աղյուսագույն կարմիրը, գորշ կանաչը և մանիշակագույնը: Ավետարանիչներին նկարում են պարզ խորանների տակ, առանց ճարտարապետական կառուցվածքների: Նրանք նստած են լինում գահավորակի վրա, առջևում ունենալով սեղան՝ գրենական պիտուլքներով: Մարդկանց մարմնի անդամները անհամաչափ են: Դեմքերը զուտ հայկական են: Հիպնոզելու աստիճանի արտահայտիչ են նկարում մարդկանց աչքերը: Մարդիկ հագնում են տեղական հագուստներ և գլուխներին կապում չալմա, որը, ըստ երևութիւն, ժամանակի սովորութիւնն է եղել: Ավետարանիչներին նկարում են տարեց հասակում, սպիտակ մորուքով: Գրելու ժամանակ ավետարանիչները իրենց ծնկների վրա դրած ունեն տախտակներ, որոնց վրա վերից ամրացված է լինում գրանյութը:



Սերուն ծագկոզի ինքնակար:

Անչափ շատ են նկարում ճշուսանցազարդութուններ, որոնց մեջ գերիշխում են պարուրած և դրվագները և սիրենները¹:

Խիզանի մանրանկարչական զպրոցում զարդադրերը անչափ շատ են: Նրանք մեծ մասամբ լինում են երևակայական կենդան-

¹ А. Н. Свирин, Миниатюра древней Армении, էջ 107—116:

նիններից կազմված. կեսը մարդ են նկարում, կեսը թռչուն կամ վերեր թռչուն է, ներքևի մասը ձուկ և այլն: Տառերը նկարում են ուրվագծերով և քիչ չափով ներկված:

Սվիրինի կարծիքով, «Խիզանի գրքի արվեստի դպրոցը ամենից ինքնատիպ և անկախ դպրոցն է»¹ և հետո է կանգնած բյուզանդական կանոնական սխեմայից:

Հայկական մանրանկարչությունը որոշ զարթոնք ապրեց XVII—XVIII դարերում, Նոր Զուղայի հայ գաղթավայրում: Այս գաղութը, ինչպես հայտնի է, հիմնվել էր Շահ Աբասի Պարսկաստան քշած գաղթականներից: Այստեղ XVII դարում հիմնում են գրադարան, տպարան, դպրոց, հավաքում են Հայաստանից և այլ վայրերից բերված՝ ձեռագրերո, ընդդրինակում և զարդանկարում են դրանք: Սկսված շնորհակալ այս աշխատանքը շարունակվում է նաև XVIII դարում:

Նոր Զուղայի դպրոցում աստվածաբանական, փիլիսոփայական, մաթեմատիկական առարկաներից բացի, աշակերտներին սովորեցնում էին նաև մանրանկարչության արվեստը: Նոր Զուղայի հայ մանրանկարչության ականավոր դեմքերից են Հովհաննես Մրքուզը, որը մասնակցել է Ամենափրկիչ վանքի որմանկարների նկարագորգման գործին², իսկ Մինաս Զուղայեցին այնքան մեծ հռչակ էր ձեռք բերել, որ աշխատում էր Շահ Սեֆիի մոտ որպես պալատական նկարիչ: Վերջինս է նկարագորգել էջմիածնի Մայր Տաճարը³: Նոր Զուղայի հայտնի մանրանկարիչներից են Հակոբ Զուղայեցին, որի մանրանկարած ձեռագրերն արտակարգ գեղեցկություն ունեն⁴, Հովնաթան Խաղաշը⁵, որը հայտնի է նաև որպես տաղերգու, Բոգդան Սալթանովը⁶, որի նկարներից մեկն այնքան մեծ հավանություն գտավ ցարական արքունիքում, որ Միխա-

¹ А. Свириин, Миниатюра древней Армении, էջ 107:

² Գ. Առնյան, Հովհաննես վարդապետ Մրքուզ—հեռոր, աստվածաբան և նկարիչ 17-րդ դարից:

³ Գարեգին կաթողիկոս Հովսեփյան, էջմիածնի Մայր Տաճարի նկարագորգումն ու ծաղկագորգումը Փէ—ՓԸ դարերում («Հասկ» հայագիտական տարեգրք, Բ տարի, Անթիլիաս, 1949—1950, էջ 310—346):

⁴ Հայկական ՍՍՏՖ Գեոսական Մատենագրանի ձեռ. № 122:

⁵ Г. Левонян, Овнатаны в истории армянской живописи, Москва, 1939.

⁶ Армяно-русские отношения в XVII веке (сборник материалов под редакцией проф. В. А. Парсамяна, Ереван, 1963, էջ 40):

վիլ Աւեքսեհիչ ցարի հրավերով կանչվեց Մոսկվա և երկար աշխատեց ցարական արքունիքում:

Նոր Զուղայի դպրոցի ստեղծագործությունները հայ մանրանկարչության ամենից շքեղ գործերից են: Նոր Զուղայի մանրանկարչության վարպետներն իրենց ստեղծագործությունների հիմքում ունեցել են հին հայկական, Կլիլիկիայի, Սլունիքի, Խիզանի դպրոցների մանրանկարչությունը և այն հարստացրել իրանական և եվրոպական մոտիվներով: Նրանց մանրանկարները նմանվում են զանազան գույնի և տեսակի ծաղիկներից կազմված գեղեցիկ այնպիսի մի ծաղիկփնջի, որի մեջ հավաքված են բազմաթիվ գույնի ծաղիկներ, սակայն գերակշռողը հայրենի ծաղկանոցից քաղածներն են:

Նոր Զուղայի մանրանկարչությանը հատուկ է արտասովոր շքեղություն, ոսկու և վառվռուն գույների գործածություն: Մեզ են հասել մեծածավալ այնպիսի ձեռագրեր, որոնց մեջ հազարավոր լուսանցազարդություններ, զարդագրեր և նկարներ կան: Ուշագրություն արժանի է այն, որ այդքան շատ մանրանկարների առկայության դեպքում անգամ ծաղկողները գրեթե չեն կրկնում նախորդ էջում կատարածները:

XVII—XVIII դարերում նկատվում է մի նոր երևույթ ևս—հայ մանրանկարիչները դուրս են գալիս կրոնական գրականության շրջանակներից և սկսում են մանրանկարել նաև աշխարհիկ բնույթի աշխատություններ: Ուշագրության արժանի է նաև այն, որ հայ մանրանկարիչները միաժամանակ հանդես են գալիս որպես որմանկարիչներ: Առաքել Դավրիժեցու վկայությամբ, այդ արվեստի ականավոր վարպետներից էին Մինասը և Հակոբջանը, որոնք ծաղկանկարում էին Զուղայի «մեծամեծներ»-ի տներն ու ապարանքները «վայելչակերտ գեղեցկատիպ յօրինուածոյ արհեստիս»¹:

Նոր Զուղայի մանրանկարչական արվեստը լայն տարածում գտավ բուն Հայաստանում և գաղթավայրերում: Էջմիածնում մեզ հայտնի են մի քանի մանրանկարիչների անուններ, որոնք կրկնել են Նոր Զուղայի վարպետներին: Նույնը նկատվում է նաև Կոստանդնուպոլսում, Ղրիմում և այլ վայրերում:

Չպետք է կարծել, որ XVII—XVIII դարերում կամ նրանից առաջ հայ գրչության օջախների կամ առանձին մանրանկարիչների համար պարտադիր է եղել այս կամ այն դպրոցի ստեղծագոր-

¹ Առաքել Դավրիժեցի, Գառմուքիւն Հայոց, Վաղարշապատ, 1896, էջ 410:

ծուծությունը, և նրանք պարտավորված են եղել կուրորեն ընդօրինակել. բոլոր դեպքերում մանրանկարչի նախասիրությունը կախված էր իր անհատական ճաշակից, որը սուր էր գալիս մանրանկարչին, այն էլ ընդօրինակում էր: Ըստ որում, նկարիչները չեն կաղապարվում ազգային նեղ շրջանակների մեջ, այլ դիմում են նաև հարե-վան ժողովուրդների ստեղծագործություններին և օգտվում նրանցից: Նոր շրջանում հայ մանրանկարիչներն արտանկարել են անգամ տպագիր գրքերից: Այսպես, հայտնի է, որ Պիսկատորի Աստվածա-շնչի նկարները լայն ընդունելություն են գտել հայ մանրանկարիչների մոտ, և նրանցից շատերն արտանկարել են իրենց զարգանկարած ձեռագրերում:



ԳՂՈՒՆ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԳ



ԳՐԱՆՑՈՒԹՐ ԵՎ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՑՔՆԵՐԸ

Խտական կարևոր հրամաններ գրելու համար հնում օգտագործել են նաև պղնձի և կապարի թիթեղները: Գրանյութի համար ատաղձ են ծառայել քարն ու փայտը¹: Մեր երկրի նախաբնիկները՝ հեթիթները, գրելու համար օգտագործել են կավը, որից պատրաստել են փոքրիկ սալիկներ, թաց վիճակում փորագրել նըրանց վրա և թրծել: Հեթիթական տասնյակ հազար թրծաղյուսի սալիկներ են հայտաբերված՝ Բողազ-քյուլի և այլ վայրերի հնագիտական պեղումների ժամանակ:

Նգիպտոսում գրանյութի համար օգտագործել են պապիրուսը: Դժվար է ճշտությունը որոշել, թե ե՞րբ է գործածություն մեջ դրվել պապիրուսը: Ոմանք ենթադրում են, որ այդ եղած պիտի լինի «միջին թագավորության» դարաշրջանում (2200—1500 թթ. ս. թ. ա.)²: Նգիպտացիները պապիրուսը պատրաստում էին համանուն բույսից, որն աճում է Նեղոսի ճահճուտներում. հատուկ ասեղներով հանում էին այդ բույսի ծուծը, թրջում, ծեծում և համապատասխան հաստությունը մամլում: Պապիրուսը սովորաբար պատրաստում էին երկար շերտերով, վրան գրում էին վրձինով, ոլորում ու փաթեթ կազմում:

¹ Հին հայ մասենագրության մեջ գրանյութը՝ լինի մագաղաթ թիթեղ, կոչվել է «բարեհա»:

² Չ. Լուկոսկա, Գրի գարգացումը, Երևան, 1955, էջ 60:

Պապիրուսը հալ գրչութիւն մեջ մասսայական գործածութիւն մեջ չի դրվել: Մեզ հայտնի է պապիրուսի միայն մի պատատիկ, որը գրված է հայատառ հունարենով:

Պապիրուսի չափ գրեթե հավասար հնութիւն ունի մագաղաթը (պերգամենտը): Մագաղաթի նախնական հայրենիքը Փոքր Ասիայի առևտրական և կուլտուրական խոշոր կենտրոն Պերգամ քաղաքն է հանդիսացել: Ըստ հունական մի ավանդութիւն, Պերգամի Եվմենիոս երկրորդ թագավորը իբր թե ցանկացել է այնպիսի մատենադարան ստեղծել, որն ավելի հարուստ լինի, քան Աղեքսանդրիայի նշանավոր մատենադարանը: Աղեքսանդրիայի Պտղոմեոս թագավորը, իմանալով այդ և չցանկանալով իր առաջնութիւնը զիջել նրան, արգելել է պապիրուսի արտահանութիւնը իր երկրից: Պերգամի թագավորին դժգոհութիւններից դուրս է հանել Կրատես անունով մի քերական, որը հնարել է մագաղաթը: Պերգամում հայտաբերված մագաղաթը շատ շուտով տարածվել է և Պերգամ քաղաքի անունով էլ կոչվել պերգամենտ:

Մագաղաթը, պապիրուսի համեմատութեամբ, մեծ առավելութիւններ ունի. նա շուտ չի փչանում, կարելի է գրել երկու երեսի վրա, ցանկացած դեպքում կարելի է լվանալ ու նորից գրել և, վերջապես, չի ջարդվում գրքեր կազմելիս:

Հնում մագաղաթ պատրաստել են տնային և վայրի կենդանիների՝ գառան, ոչխարի, այծի, հորթի, նապաստակի, ավանակի և այլ կենդանիների մորթիներից: Աշխարհում հայտնի է նաև մի ձեռագիր, որը գրված է մարդկային կաշվից պատրաստված մագաղաթի վրա: Այդ ձեռագիրն այժմ Լոնդոնի Բրիտանական թանգարանի սեփականութիւնն է հանդիսանում:

Հին Հայաստանում ամենից դործածական գրանցութեք մագաղաթն է հանդիսացել: Նա չի ներմուծվել դրսից, այլ պատրաստվել է տեղում: Այդ մասին մատենագրութիւն մեջ կան բավականին տեղեկութիւններ: Հովհաննես Որոտնեցին 1354 թվականին արտագրած իր ձեռագրի ոտանավոր հիշատակարանում հայտնում է, որ ինքն է իր ձեռքով պատրաստել գրված ձեռագրի մագաղաթը:

«[ևս] Յովհաննէս՝ աշխարհաւ Սիսակէից, գաւառաւ Որոտնէից, զմագաղաթս ձեռամբ իմո[յ] բազկից շինեցի նիւթ պիտոյից»¹:

¹ «Իջմիածին», 1952, № 2, էջ 53:

Հովհաննես Որոտնեցին ոչ միայն ինքն է իր ձեռքով պատրաստել իր գրած ձեռագրի մագաղաթը, այլև այդ արհեստը սովորեցրել է իր աշակերտներին: Այս մասին ուշագրավ է Գրիգոր Տաթևացու հաղորդած հետևյալ տեղեկությունը. «Ձմագաղաթս (ձեռագրի) նոյն ինքն մեծ վարդապետն (Յովհաննէս Որոտնեցի) իւր ձեռքն գործեաց (այսինքն՝ պատրաստեց—Ա. Ա.) և մեզ ուսոյց զսոյն արուեստ»¹:

Գրչութիան խոշոր կենտրոններում գոյություն են ունեցել մագաղաթ պատրաստելու հատուկ արհեստանոցներ: Այդպիսի արհեստանոցներ եղել են Գլաձորի, Տաթևի, Կիլիկիայի և այլ գրչութիան դպրոցներին կից:

Հակական ձեռագրերում պահպանվել են մագաղաթ պատրաստելու եղանակի մասին հատուկ տեղեկանքներ: Այսպես, ՀՊՄ-ի № 1849 ձեռագրում հետևյալն է առաջարկվում մագաղաթ պատրաստելու համար (բերում ենք թարգմանաբար). «Վերցրու որևէ կենդանու մորթի՝ ուլի, վայրի ոչխարի, տնային ոչխարի, ձիու մըտրուկի, նապաստակի, այծյամի, հորթի մորթին և այլն, նրա մազոտ երեսին քսիր լավ մաղած ու ջրի մեջ բացած կրի շաղախ: Եթե մագաղաթը հաստ է, կրի շաղախը խիտ արա, իսկ եթե բարակ՝ ջրալի: Երբ նա հասնի, այսինքն՝ աշ առնի, մազերը քերիր մորթու վրայից, մաքուր լվա և պարանով ձգված կապիր արևի տակ, որ չորանա: Ապա վերցրու քերիչը և քերիր մսի կողմն ափքան, որ միտն ամբողջապես մաքրվի և հարթ երես դառնա: Չորանալուց հետո քերիր նաև մազի կողմը: Այնուհետև մագաղաթին քսելու համար վերցրու ձվի սպիտակուցը և սպիտակ կտավհատը, խառնիր իրար, թող երեք օր մնա, մինչև որ կտավհատը մեղրի նման ծոր տա, ապա քսիր մագաղաթին և քերիչով քերիր» (թ. 156բ)²:

Նրբագույն մագաղաթները, ինչպես երևում է, պատրաստում էին գառան մորթուց: Լավ էր ստացվում մանավանդ սատկած վիճակում ծնված գառան մորթուց պատրաստված մագաղաթը:

Մեծ ծավալ ունեցող ձեռագրերի համար օգտագործում էին խոշոր եղջյուրավոր կենդանիների կաշին: Հայտնի է, որ Մուշի մեծադիր Տոնականը, որը գրվել է 1204 թվականին և իր ծավալով մեզ հասած ամենամեծ ձեռագիրն է Մատենադարանի հավաքա-

¹ Մրվանձայան, Բորոս տղբար, հատ. Բ, էջ 327:

² Ա. Յ. Հարությունյան, Ներկերը և թանաքները հին հայկական ձեռագրերում, Երևան, 1941, էջ 20:

ծուր մեջ (ձեռագրի մեծությունն է 69×51 ստ.), պատրաստված է մոտավորապես 600 հորթի կաշվից: Հաճախ հանդիպում ենք անապիսի մեծածավալ մագաղաթյա ձեռագրերի, որոնց համար հարկավոր է եղել օգտագործել ոչխարի մի ամբողջ հոտ:

Մագաղաթը պատրաստելու համար մորթիները հավաքում էին աստիճանաբար և մշակում: Հնում սովորություն է եղել, որ հավատացյալը, մատաղ անելիս, պետք է մատաղացու անասունի մորթին հանձներ վանքին: Վանքերը հավաքում էին մորթիները ոչ թե վաճառքի հանելու, այլ մագաղաթ պատրաստելու համար:

Շուտով, սակայն, մագաղաթին փոխարինելու է գալիս թուղթը: Թղթի գործածությունը ևս բավականին հին է: Հալտնի է, որ չինացիները մետաքսից և բամբուկից թուղթ էին պատրաստում դեռևս առաջին դարում մեր թվականությունից առաջ¹: Մերձավոր Արևելքում թղթի գործածությունն սկսվում է VII—IX դարերում: Կարսկու կարծիքով, թղթի գործածությունը Ռուսաստան մտավ Արևելքից²: Սլավոնական լեզվով մեզ հասած հնագույն թուղթը XIII դարից է: Արևելքում թղթի պատրաստման համար օգտագործում էին բամբակը:

Մեզ հասած հայերեն հնագույն թղթե ձեռագիրը 971 թվականից է: Ավելի ուշ, XII—XIII դարերում, թուղթն սկսում է ասպարեզից դուրս մղել մագաղաթին: Սակայն ուշ միջնադարում ևս մեկ-մեկ հանդիպում են մագաղաթի վրա գրված կրոնական-կանոնական բովանդակությամբ ձեռագրեր:

Հայաստանում օգտագործվող թուղթը գլխավորապես բերվում էր դրսից: Մերձավոր Արևելքում թղթի պատրաստման հալտնի կենտրոններ էին Թափրիզը և Դամասկոսը: Ավելի ուշ շրջանում թուղթ սկսեցին ներմուծել նաև Եվրոպայից: Եվրոպայից բերված թուղթը կոչվում էր «Ֆրանկի թուղթ»:

Հալ գրիչներն իրենց հիշատակարաններում երբեմն հայտնում են, թե որտեղից են ձեռք բերել իրենց օգտագործած թուղթը: Այսպես, Մատթեոս Մոնոպոնն իր 1417 թվականին գրած հիշատակարանում հայտնում է, որ ձեռագրի պատվիրատու Մանվել քահանան, Երուսաղեմից վերադառնալիս, գնել է «գնիւթ թղթիս ի Դամասկոսէ»³:

¹ Թերթ մը թղթոյ պատմութեան («Բագմավէպ»), 1874, էջ 292—298):

² Карский, Славянская кирилловская палеография, էջ 97:

³ ՀԳՄ ձեռ. № 8089, Բ. 88 ա:

Գրիչների թողած որոշ տեղեկություններից երևում է, որ Դամասկոսի թուղթը, Թավրիզի կամ եվրոպական թղթի համեմատությունամբ, ավելի որակով է եղել: Այսպես, Մարկոս գրիչը խնդրում է իր սխալների և գրի «խոշորոտ» լինելու համար անմեղադիր լինել, որովհետև «քարտեզս (այսինքն՝ թուղթը—Ա. Ա.) փառանգի էր»¹: Այստեղ Ֆրանգի ասելով նկատի ունի եվրոպական թուղթը, և քանի որ եվրոպական թուղթը ցածրորակ էր, ուստի և գրիչը ընթերցողներին ներողամտություն է խնդրում:

Հակոբ Արիմեցին իր հիշատակարաններից մեկում հայտնում է, որ ձմեռ է, չի կարողանում «Դմշխի», այսինքն՝ Դամասկոսի թուղթ ճարել, ուստի և հարկադրված է «Թավրիզի» թղթի վրա գրել, որը, սակայն, հաստ է և ծավալը փոքր: (Արիմեցու այդ հիշատակարանը պարունակող ձեռագիրը գտնվում է Լենինգրադի Արևելագիտության ինստիտուտի Հայկ. Ֆ-ի № 88-ում):

Գնված թուղթը տեղափոխությունների ժամանակ ծալծվում էր, ուստի և անհրաժեշտ էր կոկել: Պետք է ենթադրել, որ այդ բավական աշխատընկալ մի գործ է եղել, որովհետև գրիչները հաճախ են հիշում թուղթ կոկողներին: Թովմա Մեծոփեցին 1410 թվականին իր գրած ձեռագրում խնդրում է հիշել իր եղբորը, Հովհաննես քահանային, որը «բազում աշխատութեամբ, երթեկութեամբ» ճարել է թուղթը և «քրտնաշան աշխատութեամբ կոկեաց զսա»²: Հակոբ գրիչը 1386 թվականին գրած հիշատակարանում խնդրում է հիշել իր երկու աշակերտներին՝ Կարապետին և Մկրտչին, որոնք թուղթը կոկելու և տողատելու վրա մեծ ջանք էին թափել³:

Թուղթ կոկելու համար գոյություն է ունեցել հատուկ գործիք, որը կոչվել է «թղթի կոկիչ»: Սիմոն գրիչը Ավագ վանքում, 1439 թվականին ընդօրինակած ձեռագիրն ընդմիջելով, գրանցել է փոքրիկ հիշատակագրություն այն մասին, որ կոկիչի սրություն պատճառով թուղթը փչացրել է «Ո՛վ եղբայր, անմեղադիր լեր, զի կակիչն սուր էր՝ զթուղթն աւրեաց» (Հ. Հ. Տաշյան, Ցուցակ ձեռագրաց, էջ 50):


Թղթի գործածությունը Հայաստանում տարածվելուց հետո, ըստ երևույթին, սկսել են այն նաև տեղում պատրաստել: Հայտնի է, որ Սիմեոն Երևանցի կաթողիկոսն էջմիածնում 1776 թվա-

¹ ՀԳՄ ձեռ. № 1925, Թ. 220բ:


² ՀԳՄ ձեռ. № 2065, Թ. 300բ:

³ ՀԳՄ ձեռ. № 5707, Թ. 485բ:


կանին թղթի հատուկ գործարան հիմնեց և իր արտադրած թուղթն օգտագործեց տպագրության մեջ¹:



ՋԼԻԷ



Թղթի կոկիչ



Մկրատ



Սնտուկ



Խուկին

Հալ գրչութիւն մեջ օգտագործված գրենական 'պիտույքների ցանկը շատ մեծ է: Գրանյութի մասին որժեքավոր նյութեր պա-

¹ Հ. Աբրահամյան, Թղթի գործարան Հայաստանում (ՀԳՄ-ի շնորհիվ նյութերի ժողովածու), Երևան, 1941, № 1, էջ 61-72):

բունակում են հայկական մանրանկարները: Սովորություն է եղել ավետարանների մեջ նկարել ավետարանիչներին իրենց խցիկներում՝ գրենական պիտուլքների հետ միասին, ուր և կարելի է տեսնել գրենական այն բոլոր պիտուլքները, որոնք գործ են ածել մեր գրիչները: Այս տեսակետից ուշագրավ է ՀՊՄ-ի № 7643 ձեռագիրը, գրված Երզնկայում 1338 թվականին, ուր ծաղկողը՝ Հովհաննեսը, նկարել է ավետարանիչներին իրենց խցիկներում՝ գրենական պիտուլքների հետ, և գրել նրանցից յուրաքանչյուրի անունը: Նկարված են՝ քանոն, թղթի կոկիչ, գրիչ, ձեւիչ, դանակ, կաղամար, գրենական պիտուլքների արկղ, նրա խուփը և մկրատ: Գրենական մյուս պիտուլքներից այլ աղբյուրներից մեզ հայտնի են նաև՝ վարավարը, կարկինը, տողաշարը և ներկերի ամանները:

Նախքան գրենական պիտուլքների մասին առանձին-առանձին խոսելը, մի քանի խոսք ասենք թանաքի մասին: Թանաքը հայ մատենագրության մեջ կոչվել է մելան, որը, անշուշտ, փոխառություն է հունական μελαν բառի՝ սևադեղ իմաստով:

Հայկական մատենագրության մեջ գործ է ածվել գլխավորապես երկու տեսակ թանաք՝ բուսական և երկաթի: Գործածված երկու թանաքներն էլ շատ բարձր որակի են եղել՝ երկար դարերի ընթացքում նրանք պահել են իրենց գույնը: Արևը, ջուրը, օդի խոնավությունը չեն ազդել նրանց վրա: Շատ քիչ կարելի է հանդիպել այնպիսի ձեռագրերի, որոնք գունատված լինեն:

Հայկական ձեռագրերում, բացի սև մելանից, գործ են ածել կարմիր, կանաչ, կապույտ և այլ տեսակի բարձրորակ ներկեր, որոնք հիացմունք են պատճառում դիտողին:

Կարմիր մելանը գործ էին ածում զարդագրության մեջ և գրում էին տեքստերի խորագրերը: Առօրյա գործածության ընթացքում կարմիր մելանով գրելը թագավորների և կաթողիկոսների մենաշնորհն էր. «Թագաւորք կարմիր մելանաւ գրեն զգիրս», — ասում է Ներսես Շնորհալին:

Ներկերից համաշխարհային հռչակ է ունեցել որդան կարմիր ներկը, որը Հայաստանից արտահանվող կարևոր ապրանքներից մեկն է հանդիսացել և ամենուրեք հայտնի է եղել «հայկական ներկ» անունով:

Թանաքը, ինչպես և մյուս բոլոր ներկերը, պատրաստվել են տեղում: Այդ մասին լրագմաթիվ հիշատակություններ կան ձեռագրերում: Կարապետ գրիչը 1424 թվականին գրած հիշատակարանում խնդրում է հիշել Թումա Կաֆայեցուն, որն զկարմիր և

գսև թանաքն ի լամենայն ժամս պատրաստեաց» (ՀԳՄ ձեռ. № 8173, թ. 340 ա):

«Գիրք արհեստից» և ալքիմիական բովանդակությամբ ժողովածուները պարունակում են զանազան տեսակի թանաքներ պատրաստելու մասին դեղատոմսեր: Բերենք դրանցից մեկը, որը վերաբերում է սև թանաք պատրաստելուն (տալիս ենք թարգմանաբար). «Վերցրու կանաչ գիտորը, կտրատիր և լցրու մի խեցե ամանի մեջ: Քիչ ձեթ ավելացրու վրան: Դիր կրակի վրա և եփիր այնպես, որ չալրվի: Փայտով խառնիր մինչև սևանա: Վերցրու և լցրու մի թասի մեջ և իր չափով նուան կեղև ավելացրու վրան: Լավ եփիր: Արջասպ լցրու վրան, թող պարզի և գրիր»¹: Նշված ժողովածուն պարունակում է այլևայլ գուլնի և տեսակի թանաքներ պատրաստելու բազմաթիվ այլ ցուցատոմսեր ևս:

Մեզ է հասել XVIII դարի ականավոր հայ առևտրականներից մեկի՝ Եղիաս Մուշեղի «Գիրք արհեստից» աշխատությունը, որը գրվել է 1720 թվականին: Այդ աշխատությունը պարունակում է ոսկու, արծաթի և զանազան գուլնի թանաքների պատրաստելու և գործածելու մասին հատուկ ցուցատոմսեր: Այդտեղ կան նաև գաղտնագրության համար հատուկ թանաքների ցուցատոմսեր: Գաղտնագրության թանաքի ցուցատոմսերից մեկում ասվում է (բերում ենք թարգմանաբար). «Վերցրու նաշաղիր և լցրու ջրի մեջ, թող լուծվի. այդ գրով գրիր թղթի վրա: Չորանալիս բռնիր մեղմ կրակի վրա. լավ տաքանալուց հետո գիրը կսևանա, և դու կկարդաս»²: Մի այլ ոեցեպտում՝ «Վասն գաղտ գրելոյ ոչ ոք կարդալ» վերնագրով, նա հանձնարարում է. «Վերցրու սառը լեղին և խառնիր ջրի հետ. այս գրով ինչ որ գրես թղթի վրա, անհետանում է: Իսկ երբ ցանկանում ես կարդալ, այս՝ գրված գրությունը թրջիր ջրում, գիրը կերևա: Բայց թուղթը ջրի մեջ ձգելիս երկար չպահես, այլ քիչ թող ջրի մեջ և թրջվելիս անմիջապես հանիր»³:

Թանաքը պահվում էր հատուկ ամանի մեջ, որը կոչվում էր կաղամար: Կաղամարը լինում էր մետաղից, ապակուց, փայտից կամ թրծված կավից: Հնում, սակայն, կաղամար էր կոչվում ո՛չ միայն թանաքամանը, այլև այն տուփը, որի մեջ դնում էին թա-

¹ Ա. Հարուսթյունյան, Թանաքներ և ներկեր, էջ 19:

² ГАФКЭ, ф. Сношения России с Арменией, 1724, г. № 5, թերթ 12:

³ Նույն տեղը, էջ 13:

նաքամանը և գրիչները: Միջին դարերում նոտարներն այդ գրչատուփերն ամրացնում էին գոտիներին և այդպես շրջում:

Հակոբ անունով մի գրիչ Սպահանում 1654 թվականին գրենական պիտուլքների մասին գրած շատ հետաքրքիր մի տաղում կաղամարին նվիրել է հետևյալ քառյակը.

«Եւ արդ ասեմ անօթ գրիս,
Նախ և լառաջ կաղամարիս,
Որ լինքն ունի սե թանաքիս,
Նա կու գրէ որչափ կամիս»¹:

Հնում ձեռագիրը գրելու համար որպես գրիչ օգտագործում էին երկաթե ձողիկները: Ոմանք ենթադրում են, որ այդ ձողիկներով գրելու պատճառով է, որ հին հայկական գրերը կոչվել են երկաթագիր: Անհավանական չէ, որ հայերը գրչի այս տեսակը ժառանգած լինեն իրենց նախաքնիկներից, մասնավորապես հեթիթներից, որոնք իրենց գրութույնները մետաղյա գրչաձողերով էին փորագրում կավե աղյուսների վրա: Հնում ոչ միայն հայերը, այլև Արևելքի շատ ժողովուրդներ երկաթե գրիչներ էին գործածում: («Գրել գրչաւ երկաթաւ»—Յոբ, ԺԹ 24):

Միջին դարերում երկաթե գրիչներին փոխարինում են եղեգնյա գրիչները, որոնք հունարեն կոչվում էին *xάλαμος*, այստեղից էլ՝ ղալամ բառը: Պրոկղի «Շաղկապ»-ի մեջ մենք հանդիպում ենք այսպիսի մի դարձվածքի. «Պատճառ գծի գրոյ՝ գրողն, իսկ պատճառակից՝ գրիչ եղէգն»: Ավելի ուշ շրջանում հայ գրչության մեջ սկսում են գործածել նաև սագի փետուրից գրիչներ: Այդ գրիչներով, ինչպես երևում է, շատ գրել չէր կարելի և շուտ-շուտ պիտի նորոգեին նրանց ծալրերը: Գնալով գրչի պատրաստման եղանակը զարգացել է. սկսել են պատրաստել այնպիսի գրիչ-ինքնահոսներ, որոնք շատ թանաք են հավաքում և երկար են գրում: ՀՊՄ-ի № 1380 ձեռագրի գրչի՝ Ստեփանոսի հիշատակագրութույնից երևում է, որ գրիչը մի անգամ թաթախելով 700 տառ է գրել, մոտ մի էջ: Վերջում թանաքը գրչից կաթել է, ասում է գրողը, «թէ չէ այլ կու գրէի» (թ. 229 բ)²:

¹ «Էջմիածին», 1930, № VII—VIII, էջ 86:

² ՀՊՄ-ի աշխատակցուհի Աստղիկ Գեորգյանը պարզել է, որ հայ գրչության մեջ գործ են ածվել գնդիկավոր գրիչ-ինքնահոսները դեռևս 1166 թվականին հոռոկլայում (այդ թվականին գրված ձեռագրում նկարված է ավետարանիչը՝ գնդիկավոր ինքնահոսը ձեռքում գրելիս):

Հակոբ գրիչն իր վերև հիշված տաղում, գրչի մասին, գրում է.

«Երկրորդ՝ ասեմ վասն գրչիս,
Դու ժամէ ժամ է՞ր կու հանգչիս.
Մատունս իմ ոսկոր է և միս,
Մինչ գրեց՝ զայլոացաւ հոգիս»¹:

Գրիչները սովորաբար իրենց մոտ պահում էին սուր զմեղիներ՝ գրչի ծայրերը սրելու համար: Իրանք կոչվում էին «գրչատաշ»-ներ: ՀՊՄ-ի № 212 ձեռագրում նկարված է ավետարանիչը՝ գրչի ծայրը սրելիս:

Գրչատաշը, գրչի ծայրը սրելուց բացի, օգտագործվում էր նաև սխալները քերելու համար: Այդ նկատի ունենալով է, որ Հակոբ գրիչը, գրեական պիտակների մասին իր գրած տաղում գրչատաշի անունից խնդրում է սուր պահել և այլ նպատակի համար չօգտագործել գրչատաշը.

«Երրորդ՝ ասեմ գրչատաշիս,
Որ կու հանէ սխալ գրիս,
Եւ գրչատաշն ասէ ի լիս,
Թէ որ զիս սուր մնալ կամիս,
Մի՛ առաքեր զիս լայլ տեղիս,
Որ այլ զատ կոտոր(եմ) կամ միս»²:


Ձեռագրերը տողում էին տողաշարով: Տողաշար կոչվող այդ գործիքը՝ երկու էջի մեծութիւնով մի շրջանակ էր, որ աջ և ձախ կողմերում, հավասար հեռավորութիւն վրա, բացված ունէր անցքեր, որից ձգվում էին աղիքի բարակ լարեր³: Տողելու ժամանակ մագաղաթը քիչ թացացնում էին և տողաշարը սեղմում վրան. տողաշարի լարերը հավասար հետքեր էին թողնում մագաղաթի վրա: Ռուսական հնագրութիւնի հայտնի մասնագետ Կարսկու կարծիքով, այդ գործիքն ունեցել է հետևյալ ձևը. (տես հաջորդ էջում): Ուշ միջնադարում, երբ գրանյութը, հիմնականում, թուղթն է դառնում, սկսում են տողաշարով միայն նշումներ անել և քանոնով գծել, նկատի ունենալով, որ թուղթը շրի մեջ գցելու դեպքում կարող է փչանալ: Տողաշարին շուտով փոխարինում են փարտա-

¹ «Էջմիածին», 1950, № VII—VIII, էջ 86:

² Նույն տեղը:


³ Գ. Առնյան, Հայ դիրք և սպագրութիւնի արվեստը, էջ 14:

վարը և քանոնը: Փարտավարը՝ էջի մեծութիւնը մի շրջանակ էր, որով սահմանազծում էին տեքստի չորս բոլորը:



Տողատման գործիք:

Փարտավարով և տողաշարով աշխատելիս անգամ, տողերը գծում էին ո՛չ թե մատիտով կամ գրչով, այլ երկաթի կամ ոսկրի սուր գործիքով, որոնք սև գծեր չէին առաջացնում և չէին



Շիրակացու տոմարական բայրակներից մեկը:

կեղտոտում: Այդ գործիքների գծումների հետքերը կարելի է տեսնել անգամ այժմ: Հակոբ գրիչն իր բանաստեղծության մեջ քանոնին և փարտավարին նվիրել է երկուական տող.

«Հինգերորդ՝ ասեմ քանոնիս,
 Որ՝ ճշմարտութեան օրինակիս,
 'Կեցերորդ՝ փարտավարիս,
 Որ կու քաշէ պարիսպ գրիս»¹:

Հակոբ գրիչը գրեական պիտույքների մասին գրած իր տաղում հիշում է փարկալ անունով մի գործիքի: Փարկալը պարսկերեն կարկինի անունն է: Հայ գրչության մեջ կարկինն օգտագործում էին վաղուց: Տոմարական բովանդակությունն ունեցող ձեռագրերում, ուր գծված են լինում տասնյակ բոլորակներ, որոնց գրծագրությունը կատարված է կարկինի միջոցով: Ձեռագրերում մնացել են կարկինի ասեղի ծայրի ծակոտիները (տե՛ս նախորդ էջը):

Ուշագրության արժանի է այն, որ փարկալը օգտագործվել է տողաշարի չափերը որոշելու համար: Հակոբ գրիչը փարկալը հիշել է իր տաղում հենց այդ կապակցությամբ.

«Ութերորդ՝ վասն փարկալիս,
 Որ շինողն է նա տողաշարիս»²:

Եվ, վերջապես, գրեական պիտույքներից էին սաղաֆները՝ խեցեղեղեղ պատրաստած այն փոքրիկ ամանիկները, որոնց մեջ գունավոր թանաքներն էին լցնում: Հակոբ գրիչն այդ սաղաֆներին նվիրում է հետևյալ քառյակը.

«Չորրորդ՝ ասեմ սաղաֆներիս՝
 Մինն գնչիս, մինն դրմգիս,
 Յորժամ գրեն գլուխ բանիս,
 Նա կու խնդայ սիրտս և հոգիս»³:

Այն ժամանակ օգտագործվող գրեական պիտույքներն իրենց ձևով քիչ էին տարբերվում ներկայումս գործածվող գրեական պիտույքներից:

Հին դարերում, սեղանից բացի, սովորական էր պնակիտ տախտակների գործածությունը:

¹ «Ըջմիածին», 1930, № VII—VIII, էջ 86 (ձեռ. № 16, Թ. 350 ա):

² Նույն տեղում:

³ «Ըջմիածին», 1930, հուլիս—օգոստոս, էջ 86:

Ձեռագրերում ավետարանիչներին նկարում են նստած վիճակում, պնակիտ-տախտակները դրված ծնկներին: Քառակուսի տախտակի երկու անկյունից եռանկյունի ձևով կապված է լինում պարան, որն ամրացվում է առաստաղից: Գրելիս այդ շարժուն սեղաններին տալիս էին համապատասխան թևքություն. նրանք ունեին այն առավելութունը, որ կարելի էր թևքել ցանկացած ուղղությամբ: Տախտակն ունենում էր հատուկ հարմարանք՝ վրան դրված թերթն ամրացնելու համար:

Այս շարժուն տախտակները ամրացվում էին առաստաղից՝ երդիկին մոտիկ, որպեսզի լույս լինի: Սակայն այդ ուներ այն անհարմարութունը, որ երդիկից ոչ միայն լույսն էր թափանցում, այլև անձրևը: Անհիմն չէ Կարապետ գրչի գանգատը. «Ո՛հ, ո՛հ, դայս ոչինչ տունս, զինչ լերդէն կու անկանի՝ թո՛ի զիրս և ապականէ»¹:

Ձեռագրի պատրաստումը փաստորեն կոչեկտիվ աշխատանքի արդյունք էր. մեկը ճարում էր գրանլուծը, մյուսը՝ գրում, երրորդը՝ մանրանկարում, չորրորդը՝ համեմատում քնագրի հետ և ուղղում բաց թողած սխալները, մեկ ուրիշը թուղթն էր կոկում, մյուսը՝ թանաք պատրաստում, հաջորդը կազմում էր, դարբինը կազմի կոճակն էր պատրաստում և այլն: Հիշատակարաններում սովորաբար հիշվում էին ձեռագրի վրա աշխատող բոլոր մարդկանց անունները: Իհարկե, պատահում է, որ այս ամբողջ աշխատանքը կատարում էր և մի անձնավորություն, բայց ձեռագրերի մեծ մասը համատեղ աշխատանքի արդյունք է եղել:

Գրիչների և մանրանկարիչների մասին իր տեղում մենք բավականին խոսել ենք: Այժմ ուզում ենք երկու խոսք ասել կազմարարների մասին:

Դրչության բոլոր մեծ դպրոցներում պահվում էին հատուկ կազմարարներ: Կազմարարի պարտականությունն էր համարակալված պրակներն իրար մոտ բերել, սոսնձել և ամրացնել կազմին:

Կազմը, սովորաբար, պատրաստում էին տախտակից և վրան մուգ դեղնավուն կաշի քաշում: Ձեռագրի երկու երեսներին նրանք զանազան զարդարանքներ էին տպում ճնշումով: Այդ աշխատանքը կոչվում էր «դաշել», իսկ կատարված աշխատանքը՝ «դաշվածք»:

¹ Հելմխածին, 1950, հուլիս—օգոստոս, էջ 85:

Կազմի ներսից, երկու կողմերում, փակցնում էին կտորներ՝ մետաքսից, շալից և կտավից¹: Այդ կտորները մեծ արժեք ունեն պատմագիտութիւն համար, որովհետև մարդկանց հետ գետնի տակ թաղված կտորները փտել, չհնչացել են, իսկ այլ ճանապարհով մաքուր պահված կտորներ քիչ են հասել, և կազմերի ներքին պատերին փակցված այդ կտորներն են, որ մեզ որոշ պատկերացում են տալիս ժամանակի գործվածքների մասին:

Կազմերի ներքին պատերին փակցված կտորներից կան այնպիսիները, որոնք իրենց հնութիւնը և պարունակած զարդարովեստով հատուկ ուշադրութիւն առարկա են հանդիսանում:

Ձեռագրերի կազմողները, եթե այլ անձնավորութիւններ էին, ապա նրանց անուններն անպայման հիշվում են ձեռագրերի հիշատակարաններում: Կազմարար Մատթեոսը ՀՊՄ-ի № 148 ձեռագրում թողած իր հիշատակարանում խնդրում է հիշել իրեն՝ «տերեվաթափ և անպտուղ զկազմող սորա զՄժատթէոս»: Թորոս գրիչը 1318 թվականին իր գրած հիշատակարանում խնդրում է հիշել Սահակ քահանային, որը բախտակից է եղել իրեն Կիպրոս կղզում և կազմել ձեռագիրը²: Այսպիսի հիշատակարաններ շատ կարելի է բերել:

Սակայն ձեռագրերը որքան էլ լավ կազմված լինեին, դարերի ընթացքում, վատ պահպանութիւն հետևանքով, կազմահան էին լինում, քայքայվում: Գրչութիւն դպրոցների կարևոր գործերից մեկն էլ եղել է քայքայված ձեռագրերի նորոգումը, կազմահան եղածները նորից կազմելը: Հայ գրասեր շրջանում այն կարծիքն է գոյութիւն ունեցել, որ քայքայված ձեռագրի նորոգութիւնը մեծագույն բարեբարութիւն է: XVII դարի աչքի ընկնող հալ տաղերգուներից մեկը՝ Վարդան Բաղիշեցին իր թողած մի հիշատակագրութիւն մեջ գտնում է, որ 30—40 ձեռագիր նորոգելիք, քայքայված մասերը վերականգնելը «մեծ է քան զեկեղեցիս շինելն»³:

Քայքայված ձեռագրերի վերականգնման ուղղութիւնը բացառելի մեծ գործ է կատարել Բաղեշի գրչութիւն դպրոցը: Միայն

¹ Տարբեր ժամանակաշրջանները ներկայացնող այդ կտորներից նմուշներ հրատարակեց 1953 թվականին Դուռնովոն՝ «Армянская вабойка» վերնագրով:

² ՀՊՄ, ձեռ. № 242, ք. 392ա:

³ ՀՊՄ, ձեռ. № 2748, ք. 358 բ (հմտ. Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, XIII—XVIII դդ., Երևան, 1956, էջ 396):

XVII դարում, Վարդան Բաղիշեցու ուսուցչապետության շրջանում նշանավոր ծաղկող և կազմող Սահակ Վանեցին կազմել է ավելի քան 70 ձեռագիր¹: Ըստ որում, նրա այդ կազմածների մեջ եղել են արհեստի ունիկումներ, որոնք մեզ են հասել շնորհիվ այդ դպրոցի ձեռագրերի նկատմամբ ցուցաբերած բացառիկ հոգատարություն և փալփալանքի:

Հալ գրիչների մոտ սովորություն է եղել հիշել ոչ միայն ձեռագրերի վրա աշխատող վաստակավոր մարդկանց անունները, այլև բոլոր նրանց, ովքեր փոքր չափով անգամ աշխատանք են թափել ձեռագրի վրա: ՀՊՄ-ի № 4673 ձեռագրի գրիչն իր հիշատակարանում խնդրում է հիշել Հեթումին, որի դուստրը «երեստ զշապկացու կտաւն»: Նույն գրիչը խնդրում է հիշել նաև Աֆինդ երկաթագործին, «որ աշխատեցաւ ի փակ և կոճակ գրոցս»:

Ինչքան ժամանակում էին կարողանում ընդօրինակել մի ձեռագիրը և ի՞նչ արժեքին նրանք: Բարեբախտաբար, հիշատակարաններում այդ մասին որոշ տեղեկություններ մնացել են:

Կարապետ Տյուրիկեցի գրիչը 1331 թվականին ընդօրինակած ձեռագիրն սկսել է օգոստոսի 17-ին և վերջացրել դեկտեմբերի 20-ին²: Ձեռագիրը բաղկացած է 278 թերթից: Յուրաքանչյուր էջի վրա կա, միջին հաշվով, 550 տառանիշ: Կրիչը եթե 123 օրվա ընթացքում վերջացրել է ձեռագրի ընդօրինակությունը, ապա նա յուրաքանչյուր օր, միջին հաշվով, ընդօրինակած պիտի լինի 5 էջ ձեռագիր³:

Ստեփանոս գրիչն իր ձեռագրի ընդօրինակությունն սկսել է 1369 թվականի հունիսի 10-ին և ավարտել նույն թվականի սեպտեմբերի 30-ին⁴: Ձեռագիրը միջին մեծություն ունի՝ յուրաքանչյուր էջի վրա հաշվվում է մինչև 750 տառանիշ: Ձեռագիրը բաղկացած է 468 թերթից, այդ հաշվով, գրիչը օրական ընդօրինակել է 8—9 էջ:

Մխիթար գրիչն իր հիշատակարանում նշում է, որ նա ձեռագիրն ընդօրինակել է 30 օրվա ընթացքում⁵: Ձեռագիրը բաղկացած է 111 թերթից: Գրիչն օրական ընդօրինակել է 6—7 էջ:

¹ Հ. Ն. Ալինյան, Բաղիշի դպրոցը, Վիեննա, 1952, էջ 274—275:

² ՀՊՄ ձեռ. № 149, Թ. 278ա:

³ Նույն հաշիվը կատարել է նաև Լ. Խաչիկյանը (տես ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 244, Ժանոթություն):

⁴ ՀՊՄ ձեռ. № 5883, Թ. 468ա:

⁵ ՀՊՄ ձեռ. № 4171, Թ. 3բ:

Կարելի է բերել այլ օրինակներ ևս: Գրչի հիշատակարանները մեզ մոտավոր պատկերացում են տալիս ձեռագրի ընդօրինակման տեղություն մասին: Գրիչը մի օրվա ընթացքում, միջին հաշվով, կարող էր ընդօրինակել 5—10 էջ՝ նայած էջի մեծությունը: Միջին մեծության ձեռագիրը, այդ հաշվով, կարելի էր ընդօրինակել 3—4 ամսում: Մեծ ձեռագրերը, օրինակ՝ հարանց վարքերը, հայամավուրքները, աստվածաշնչերը և այլն, կարելի էր ընդօրինակել մինչև մեկ տարվա ընթացքում:

Պետք է նկատի ունենալ, որ գրիչներն աշխատում էին մեծ խանդաղատանքով, աշխատում էին ամբողջ օրը և հաճախ նաև գիշերը՝ ճրագի աղոտ լույսի տակ: Պատահում էր, իհարկե, որ գրչի համար ստեղծվում էին անբարենպաստ պայմաններ, և գրիչը հաճախ ստիպված էր լինում ընդմիջել աշխատանքը և այդ պատճառով ձեռագրի ընդօրինակությունը տարիներ շարունակ ձգձգվում էր: Մեզ հայտնի են փաստեր, որ ձեռագրի ընդօրինակությունը տեկել է մինչև լոթ տարի: Մատթեոս գրիչը Անգեղակոթ գյուղաքաղաքում 1378 թվականին գրած ձեռագրի հիշատակարանում հայտնում է, որ այդ ձեռագիրը չլոգնակի սիրով գրեցի ամբս եօթ՝¹:

Հալ ձեռագրական ժողովածուներում կան գրչագրեր, որոնք գրված են ո՛չ թե մեկ, այլ մի քանի գրիչների կողմից: Սկսել է մեկը, բայց չի կարողացել ավարտել այն, մահացել է, և ձեռագիրը թերի է մնացել: Երկրորդն է սկսել և շարունակել, բայց նա էլ չավարտած՝ մահացել է: Եվ միայն երրորդին է հաջողվել ավարտել ձեռագրի ընդօրինակությունը: Այդ կարգի ձեռագրերում շարունակող գրիչներից ամեն մեկը թողել է իր հիշատակարանը:

Հետաքրքիր է պարզել ձեռագրի արժեքն այն ժամանակվա գներով:

Մատենագրությունամբ զբաղվող «գիտակ մարդկանց» համար ընդունված է եղել ասել, որ ձեռագիրն «անգին է», նրա արժեքը դրամական չափանիշով չպիտի չափել: Այդ հասկացողությունը շատ հակիրճ ձևակերպված է Հակոբ գրչի 1386 թվականին գրած չափածո հիշատակարանում.

«...առ լիմարն < գրչագիրը > ոչինչ չարժի,
'Խ առ իմաստունն՝ գինն աշխարհի»²:

¹ ՀԳՄ ձեռ. № 2680, Թ. 369 ա:

² ՀԳՄ ձեռ. № 2178, Թ. 91 բ:

Գրանյութի թանկ գնով ձեռք բերվելու հանգամանքը, գրելու տառապալից աշխատանքը, թուղթ կոկեյլու և կազմելու դժվարությունները և այլն, անդրադարձել են ձեռագրի արժեքի վրա: Ձեռագրերը հին և միջին դարերում անչափ բարձր գին են ունեցել, այնքան բարձր, որ ամեն մի միջին հարստության տեր մարդու համար անգամ դժվար էր սեփական ձեռագիր ունենալ:

XIV—XV դարերում գրված ձեռագրերի հիշատակարանից երևում է, որ միջին մեծություն ունեցող մի ձեռագիրը գնահատվում էր հարյուրից մինչև հազար դահեկան: Արժեքը կախված էր ձեռագրի մեծությունից և զարդանկարված լինելու հանգամանքից:

Էլբեգ անունով մեկն իր 1382 թվականին թողած հիշատակարանում հայտնում է, որ ավետարանն ընկել է Քի ձեռն ալլասեռից ի գերութիւն», և ինքը 100 դահեկան դրամ է տվել ձեռագիրը գերությունից ազատելու համար¹:

Ներսես Տարոնցին ձեռագիր գրել տալու համար Թավրիզում թուղթ է գնել՝ վճարելով 600 դրամ: Ձեռագրի ընդօրինակողներին վճարել է 1500 դրամ: Չհաշված դեռ այլ կարգի ծախսերը, որոնք նույնպես եղել են, ձեռագրի վրա ծախսվել է 2100 դրամ²:

Ջաբարիա միայնակյացը 1361 թվականին ճաշոցը գնել է 800 դրամի³:

Ոլուբեկը 1383 թվականին ճաշոցը գնել է 1000 սպիտակի⁴:

Ամիրբարն 1590 թվականին ավետարանը գնել է 2000 դահեկանի⁵ և այլն:

Դժբախտաբար, մենք չգիտենք այն ժամանակվա դրամի գրանդունակությունը և դժվար է այժմ համեմատել մեր ներկա գների հետ: Բայց մեզ հասել են մեկ-երկու հիշատակարան, ուր ձեռագրերը գնահատված են եղել անասուններով կամ բնամթերքով, որոնցից կարելի է որոշ գաղափար կազմել ձեռագրերի արժեքի մասին:

1668 թվականին ընդօրինակված մի ձեռագիր հիշատակարանից երևում է, որ մի ձեռագիր փոխանակվել է 2 եզան, 2 ձիու և 1 կովի հետ: Հիշատակարանում արդ մասին ասված է. «Դարձեալ լիշեցէք զգնօղ սուրբ աւետարանիս զՄմարգարիտն, որ ետ երկու

¹ ՀԳՄ ձեռ. № 4171, թ. 3 ր:

² Ն. Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 546—547:

³ ՀԳՄ ձեռ. № 7408, թ. 524 ր:

⁴ ՀԳՄ ձեռ. № 4656, թ. 506 ր:

⁵ Հայալանի ցուցակ, էջ 282:

եզ, երկու ձի, կով մի և էառ լիշատակ ի մեր էրիուցս Մեսրոպիս վկայութեամբ ըռայես Խուկասին...»։ (Արթիկի ավետարանը)։

ՀՊՄ-ի № 212 ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Դարձեալ լիշեցէք և աստուած ողորմի ասացէք Մուրատ Բաշխուն և հօրեղբորն Անդրէասին. որ տուին իւրեանց հալալ վաստակոցն կով մի Ե (5) փապասի արժէ, ժ (10) շահի դրամ, Ե (5) քիւլացորեն, ժ (10) փապասի, տուին, ազատեցին յանօրինաց և ի գերութեանց»¹։

Եթե մենք վերցնելու լինենք ամենից ցածր արժեք ունեցող ձեռագիրը, որը փոխարինվել է մեկ կովի և մեկ ձիու հետ, ապա մեր ներկա դրամով այն արժեքը 3000—4000 ուրլի, մի գումար, որով այժմ կարելի է գնել հարյուրավոր գրքեր։

¹ Գ. Հովսեփյանի հիշատակարանների անտիպ ժողովածուից։



ԳԼՈՒԽ ՏԱՄՆՉՈՐՍԵՐՈՐԻ



Մ.ՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՂՃԱՏՈՒՄՆԵՐ

Բրեքնն հալ մատենագրության մեջ մեզ հանդիպում են աղավաղումներ և աղճատումներ: Նրանք լինում են հինգ տեսակի—1) բացահայտ կեղծիքներ, 2) խմբագրական կամ սրբագրական նպատակադրված փոփոխություններ, 3) ընդմիջարկություններ (ինտերպոլյացիա), 4) տեքստի կրճատումներ և 5) գրչական սխալներ:

Բացահայտ կեղծիքը կատարվում է երկու դեպքում—կեղծվում են ձեռագրերի գրչության ժամանակը և գրչի անունը: Ձեռագրի գրչության ժամանակը կեղծելու մի շարք փաստեր են մեզ հայտնի: Բանասիրական լուրջ վիճաբանության առարկա է եղել Երուսաղեմի Հայոց մատենադարանի մի ավետարանի գրության ժամանակը, որ եթե հավատարու լինենք հիշատակարանին, գրված պիտի լինի 602 թվականին: Հիշատակարանում ասված է, «Հյց. թուական ԾԱ... ՁՃԲ.: Գրեցաւ յԱւձի յաւուրս Մուշեղի Գրիգոր երիցէ»¹: Սակայն ձեռագրի հնագրական ուշադիր քննությունը, անվիճելիորեն ցույց է տալիս, որ նրա թվականը կեղծված է. ձեռագիրը գրված պետք է լինի X—XI դարերում:

¹ Տես «Հանգէս ամսօրեայ», 1901, էջ 33—35 (հմտ. Գ. Կ. Հովսեփյանի «Հիշատակարանք ձեռագրաց», էջ 169):

Կեղծված թվականով նման մի ձեռագրի հիշատակարան էլ կա Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում, որը թողել է Սարգիս գրիչը. «Ես Սարգիս անարժան քահանայ,—կարդում ենք այդ հիշատակարանում,—գրեցի զսուրբ աւետարանս ՆժԵ թուականիս թագաւորելոյ ի վերայ մեր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»¹: Բանասեր Ն. Բ. Սարգիսյանը իր ձեռագրաց ցուցակում հրատարակելով այս հիշատակարանը, իրավացի, համարել է այն կեղծիք:

Թվականների կեղծման պատճառը մեծ մասամբ այն է, որ նրանց տերերը ցանկանում են իրենց ձեռագրերին հնութիւն տալ: Այդ կեղծարարները, սակայն, ծանոթ չեն հայ հին մատենագրութեան տարրական օրենքների հետ, չգիտեն, որ V—VII դարերում մեր մատենագրութեան մեջ դեռ գործածական չէր որևէ թվական, և թվականները հաշվվում էին միայն թագավորների և կայսրերների գահակալութեան տարիներով: Այս մասին մենք խոսել ենք առջևում:

Բավականին մեծ թիվ են կազմում ձեռագրի գրչի կամ ստացողի անունների կեղծումները: Միջին դարերում գտնվել են դուրրին ճանապարհով մեծ հուշակ ձեռք բերող գրագողեր, որոնք ձեռագրի հիշատակարանում ջնջել են ձեռագրի վրա տարիներ տքնող գրչի անունը և իրենցը գրել: Ձեռագրերում նման մի շարք փաստեր են հայտնի, բայց բոլոր դեպքերում ոչ հմուտ աչքն անգամ կարող է նկատել այդ կեղծիքը: Հաճախ ջնջված և նոր գրված անվան տակ խոշորացույցով կարելի է կարդալ նախկին գրչի անունը:

Նման կեղծիքն այնքան է տարածված եղել, որ երբեմն գրիչները գրագողութեան առաջն առնելու համար իրենց հիշատակարաններում անեծք են գրել այն մարդկանց հասցեին, որոնք կհամարձակվեն կտրել ձեռագրի հիշատակարանը կամ ջնջել գրիչների անունը: Բրիտանական թանգարանի սեփականութիւնը հանդիսացող հայկական մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «...ինչ մարդ որ լիշատակարանս կտրել և ճնճել կամի, անուն նորա ի գրոյն կենաց ճնճեալ լինի»²:

Հին հայկական մատենագրութեան մեջ կատարված կարևոր

¹ Ն. Բ. Սարգիսյան, Յուզակ ձեռագրաց, հատ. Բ, էջ 1348:

² F. C. Conybeare, A catalogue of the armenian manuscripts in the British museum, էջ 193:

աղճատումները խմբագրական բնույթ ունեն: Այդ առանձնապես մեծ է եղել հին հայկական տեքստերում: Մինչև VII—VIII դարերը հայ քրիստոնեական մատենագրության կողքին պահված է եղել հայ հեթանոսական մատենագրության հնավանդությունը: Մինչև այդ դարերը հայ քրիստոնեական եկեղեցին դեռ չէր ստեղծել ազգային իր ինքնուրույն անխախտ կանոնները, դեռ ամբողջովին չէր բեռնաթափվել հեթանոսական մշակութային ժառանգությունից: Ահա թե ինչու նա բավականին լայնախոհ էր հեթանոսական մտածողության հանդեպ: Դրությունը փոխվում է VII—VIII դարերում, երբ քրիստոնեական եկեղեցին Հայաստանում ստեղծում է իր անշարժ կրոնական դոգմաները և ժամանակակից տեսանկյունով վերանայում հրապարակի վրա եղած գրականությունը և գրաքննության ենթարկում այն: Գրաքննչական այդ ժողովները՝ ընթացքում որոշ աշխատություններ բոլորովին դուրս են հանվում, որոշ աշխատություններ կրճատվում են անճանաչելի աստիճան, իսկ որոշ աշխատություններ՝ խմբագրվում: Տեղեկություններ կան, որ ժամանակի սահմանափակ այդ մտածողության հետևանքով ոչնչացվել են հին հայկական արժեքավոր մի շարք աշխատություններ:

Ձեռագրերի մեջ մեկ-մեկ պատահում են աղանդավորական համարված և արգելված գրականության կամ նրանց հեղինակների ցանկերը: Այսպես, Հայկական ՍՍԻ Պետական Մատենադարանի № 1869 ձեռագրում, որն ընդօրինակված է Անդրեաս գրչի կողմից 1585 թվականին, պարունակվում է արգելված գրականության հետևյալ ցանկը. «Այս են անուանք ժՁ (16) սուտ գրոցն, որ եկեալ [են] ի հերձուածող ասորոցն, և ոչ ի յւղղափառ ասորոցն, իմանայք, որ է այս. Աղամայ կտակն, Ճիռն աւրհնութեան, Փիփիեանն, Գորտոսակն, Կիրակոսակն, Դոսիմոն, Պետրոսի տեսիլն, Դիաթեկն, Աստուածածինն պատմութիւնն, Սեբիոսն, Փիւրհոնացիքն, Մանկութիւն Տեառն, Լուսաւորչին տեսիլքն, զանթագչելի մատեանսն, Գրիգորի և Բարսեղի հարցմունքն, զՄանեայ մեկնութիւնն աւետարանի: Եւ որ հաւատալ նոցայ, նզովի՞՞»¹:

Միջին դարերում ամենից շատ փոփոխում, խմբագրում, տեքստի վրա ավելացնում կամ տեքստից պակասեցնում էին, հիմնականում, պատմագրիտական և մեկնողական գրականությունը: Կրոնական-կանոնական համարվող աշխատությունների փոփոխու-

¹ ՀԳՄ ձեռ. № 1869, Թ. 391 Բ:

թյունը խստիվ արգելվել է օրենքով: Վերջիններիս մեջ սխալներ կատարելը համարվել է աննորթի հանցանք, ուստի և գրիչներն աշխատել են ավելի զգույշ ընդօրինակել և ընդօրինակութունը վերջացնելուց հետո անպայման եղորդել:

1243 թվականի Սսի ազգային-եկեղեցական ժողովն այդ կապակցությամբ հատուկ որոշում է ընդունել՝ կրոնական գրականության ընդօրինակութունը հանձնարարել միայն «արուեստաւոր», «ուղղափառ» և «գիտուն» մարդկանց, որոնց վստահելի լինելը պետք է երաշխավորվի «հեղինակավոր» անձանց կողմից¹:

Ազգավաղումների և աղճատումների շարքում բավականին մեծ թիվ են կազմում տեքստերի կրճատումները:

Տեքստերի կրճատումների փաստեր մենք շատ ունենք: Միջին դարերում Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատութունը կրճատել և սահղծել են Կորյունի համառոտ տեքստը, որը բանասիրության մեջ հայտնի է «Սուտ Կորյուն» անունով: Շիրակացու «Աշխարհացոյց»-ի ընդհանուր տեքստը կրճատել և կազմել են նրա համառոտը, որը հայտնի է «Փոքր» կամ «Աղվեսագրքի» տեքստ անունով: Շիրակացու «Տիեզերագիտութիւն»-ը համառոտել և կազմել են պրոֆ. Բ. Պատկանյանի հրատարակած տեքստը, որը մի քանի անգամ փոքր է, քան վերջերս հայտնի դարձած և հրատարակված տեքստը, և այլն:

Ուշագրավ է Շիրակացու «Տիեզերագիտութեան» մեջ կրճատումներից մեկը. Շիրակացին կանգ է առնում քաղղեական բախտագուշակների այն կարծիքի վրա, որ իբր թե երեխաների ուրաստղի տակ ծնվելու հիման վրա նախապես կարելի է գուշակել, թե երեխան հարուստ պիտի լինի, թե աղքատ, չար պիտի լինի, թե բարի և այլն և սպանիչ քննադատության ենթարկում այն: Այս հարցի քննության կապակցությամբ Շիրակացին շատ սրամտորեն տրամաբանում է, որ եթե փոքրիկ անմեղ երեխայի մեջ աստված չարությունն սկզբից է դնում, ինչո՞ւ են դաստիարակում երեխային, քանի որ դաստիարակությունն անկարող է փոխել երեխայի «աստվածատուր հատկութունը»: Եթե երեխայի չարությունը բնածին է, ինչո՞ւ են դաստարանները պատժում չարություն անողներին, քանի որ չարություն անողը մեղք չունի, այդ նրա հատկությունն է: Եվ, վերջապես, եթե անմեղ երեխայի մեջ աստ-

¹ Գ. Ե. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Բ, Նյու-Յորք, 1943, էջ 12:

ված «ի սկզբանէ» չարութիւնն է դնում, կնշանակի շար է ինքն ստովածը:

Շիրակացու այս հատվածը, որ մի քանի թերթ ծավալ ունի համարել են անպատշաճ և կրճատել համառոտ տեքստում:

Բավականին շատ են ձեռագրական տեքստերի այն աղավաղումները, որոնք կատարվել են գրիչների կամ խմբագրողների կողմից՝ նախկին տեքստերը համառոտելու նպատակով: Այդ, մեծ մասամբ, կատարվել է գրանյութը խնայելու նպատակով: Խմբագրողը, ըստ իր հայեցողության, կրճատում է ընդարձակ տեքստից այն ամենը, ինչ ինքն ավելորդ է համարում: Իսկ երբեմն կրճատում է այնպիսի հատվածներ, որոնք չեն համապատասխանում իր ժամանակի մտածողութիւնը: Բոլոր դեպքերում, նախկին տեքստը ենթարկվում է աղճատման:

Մենք ունենք փաստեր, երբ ընչազուրկ գրիչները, ցանկութիւնն ունենալով որևէ ձեռագիր արտագրել, չեն ունենում անհրաժեշտ քանակութիւնը գրանյութ և հարկադրված են լինում նախագաղափար ձեռագրի տեքստը կրճատել կամ խիտ գրել: XII—XIII դարերից մեզ հասած մի ձեռագրի գրիչ, Ավետիս անունով, ընթերցողներից խնդրում է անմեղադիր լինել՝ խիտ, խառնակ և կրճատ գրելու համար, որովհետև «փափագ ունէի և դրամ ոչ. և ես աղերսելով չեղբարցն զթուխտն և զթանաքն, զգրիչն և զայլն, որ այդչափ եղև»¹:

Ձեռագրական աղճատումների շարքում առանձնապես շատ են ընդմիջարկութիւնները: Տվյալ դեպքում մենք նկատի ունենք տարբերութիւնների վրա հետագա գրիչների կատարած հավելումները, ինչպես և գիտական տեքստերի դժվարահասկանալի հատվածների այն մեկնութիւնները, որոնք տրվում են ձեռագրի լուսանցքներում և հետագա ընդօրինակութիւնների ժամանակ արտագրվում են գրիչների կողմից բնագրերի մեջ ու նրանց օրգանական մասը դառնում:

Վանքերում պահվել են հատուկ ձեռագրեր, այսպես կոչված «քլոթուկ»-ներ, որոնք պահվել են այն նպատակով, որ այնտեղ գրանցվեն տվյալ վանքի հետ կապված բոլոր կարևոր իրադարձութիւնները, կալվածների և կարևոր նվիրատվութիւնների մասին եղած վավերագրերի պատճենները և այլն: Նման «քլոթուկ»-ներից մի քանիսը հասել են մեզ: Այդպիսի ձեռագրերից են Հաղպատի «քլոթուկ»-ը, Հովհաննավանքի «քլոթուկ»-ը և այլն:

¹ Հ. Բ. Սարգիսյան, Ցուցակ ձեռագրաց, հատ. Բ, էջ 756:

Ժամանակագրություններից և տարեգրություններից անչափ մեծ փոփոխության է ենթարկվել Սամվել Անեցու «Ժամանակագրութիւնը» («Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» աշխատությունը): Երբ մենք համեմատում ենք Սամվել Անեցու 1176 թվականի ընդօրինակութունը տվյալ աշխատության ուշ դարերի ընդօրինակությունների հետ, պարզվում է, որ հետագա դարերում գրիչների ավելացրածները մի քանի անգամ ավելի շատ են, քան Անեցու ժամանակակից բնագիրը: Այդ ավելացումներն, իհարկե, անարժեք չեն, հակառակը, նրանք ավելացված են ժամանակակից մարդկանց կողմից և պատմական քիչ արժեք չունեն, քան բնագրերը, բայց անվիճելի է, որ նրանք, ավելագլխով նախնական տեքստի վրա, աղճատել են նախկին բնագիրը: Այդ առանձնապես զգալի է այն աշխատությունների մեջ, որոնց հետ ընդմիջարկություններն այնպես են ձուլվել, որ դժվար է ճանաչել նրանց:

Բոլոր դեպքերում պետք է նկատի ունենալ, որ հին հայ մատենագրերը մեզ հասել են ո՛չ թե հեղինակների բնագրերով (ավտոգրաֆներով), այլ պատճեններով կամ, ինչպես ընդունված է ասել, ընդօրինակություններով: Ներկայիս տպագրության դերը հին և միջին դարերում իրենց վրա են վերցրած եղել մեր գրիչները, որոնք ընդօրինակել, բնագրից ձեռքով պատճենահանել են: Հայ մատենագիրների աշխատությունները մեզ են հասել այդ ընդօրինակություններով: Գրասեր մեկը հանդիպել է հետաքրքիր մի աշխատության, անմիջապես ընդօրինակել է կամ ընդօրինակել ավել ալն: Այդ ընդօրինակությունները հետագայում պատճենահանվել են երրորդ ձեռքի կողմից, նրանից՝ չորրորդ, հինգերորդ և այսպես տարածվել: Իբրևնք գրչական սխալների մի քանի օրինակ:

Շիրակացու «Աշխարհացոյց»-ի մեջ հիշվում է այն մասին, որ Գերմանիայի արևելյան սահմանը տարածվում է «մինչև ցՄարամացոց լեռինսն և ցԴանուր գետ»: Ուշ շրջանում «Աշխարհացոյց»-ի ընդօրինակողներից մեկը, ցանկանալով իր ժամանակակիցներին օգնել հասկանալու, թե որն է Դանուր գետը, տեքստում Դանուր բառից հետո ավելացրել է, «որ է Յոզու ռուսաց»: Այդ ավելացումը, անշուշտ, կատարվել է XIII–XIV դարերում, երբ ոտուսաց Հուզա (Ցաուզա) գետը հանրածանոթ էր դարձել արդեն:

Նույն «Աշխարհացոյց»-ի մեջ Սարմատիայում հիշվում է Խերսոնի թերակղզին: Ընդօրինակող գրիչներից մեկը Խերսոն անունը մեկնել է իր ժամանակի գործածական անունով: «Խերսոն, որ է իմ»:

Խրիմ անունը «Աշխարհացոյց»-ում պարզ է, որ կարող էր

հիշվել միայն այն ժամանակ, երբ այն նվաճվել էր արդեն թաթարների կողմից:

Այս երկու անուններն էլ բանասիրական սուր վեճերի առարկա են դարձել: Սեն-Մարտենը, որ ձեռքի տակ ունեցել է «Աշխարհացոյց»-ի նոր և սխալաշատ ընդօրինակությունը, հենվելով վերև հիշված ընդմիջարկությունների վրա, փորձել է «Աշխարհացոյց»-ի գրություն ժամանակը բերել մինչև X—XI դարերը: Սակայն «Աշխարհացոյց»-ների հնագույն ընդօրինակությունների մեր կատարած ուսումնասիրություններից պարզվում է, որ այդ ընդօրինակություններից ո՛չ մեկը չունեն Սեն-Մարտենին կովան ծառայած աշխարհագրական անուններից որևէ մեկը¹:

Ձևագրական աղճատումներից, սակայն, ամենից շատը՝ գրչական սխալներն են: Կարելի է ասել, որ չկա նույն տեքստի երկու ընդօրինակություն, որ տարբերություններ չունենա: Գրչական տարբերակների մասին պարզ պատկերացում կարելի է կազմել գիտական կամ քննական կոչվող տեքստերից, ուր համեմատության մեջ են գրված լինում նույն աշխատության տարբեր ընդօրինակությունների տարբերակները: Հաճախ այդ տարբերակներն այնքան շատ են լինում, որ ծավալով գերազանցում են բնագրին: Ինչի՞ հետևանք են այդ տարբերակները:

Գրչական սխալների մի մասը հին տեքստերի սխալ վերծանության հետևանքով է: Մեսրոպյան երկաթագրերը, ինչպես գիտենք, բառանշատում չունեն և վերձանդի պարտականությունն է վերձանել՝ անշատելով իրարից բառերը: Այդ գործը դժվարանում է մանավանդ թղթի կամ մագաղաթի խունացած լինելու հետևանքով: Ընդօրինակող գրիչը, որքան էլ տիրապետելիս լինի գրչության արվեստին և գիտենա գրական լեզվի առանձնահատկությունները, այնուամենայնիվ, նրա համար անխուսափելի են սխալները: Բավական է, որ գրիչը բաց թողնի բառանշատման կամ կետադրման մի սխալ, այդ կարող է աղճատել ամբողջ նախադասությունը:

Գրչական կարգի սխալների մի մասը տգետ գրիչների մեղքով է առաջանում: Այդ նկատել են և իրենց հիշատակարաններում նշել գրագետ ընդօրինակողները: Այսպես, Ստեփանոս գրիչը Հովհաննեսի ավետարանի մեկնության հիշատակարանում, որ գրված է

¹ Ա. Արբանամյան, Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի շուրջ, Երևան, 1940, էջ 40:

² ՀԳՄ ձեռ. № 6273 (Փիղղալեմյանի հիշատակարանների ժողովածու), էջ 20:

1117 թվականին, գանգատվում է, որ «...խամար և տգէտ խաւարամած գրագրելոյ այլայլած և թիւրած էր բանքն»¹:

Մի այլ գրիչ, անդրադառնալով տեքստերում տեղ գտած սխալներին, մեղադրում է տգետ ընդօրինակողներին այն բանի համար, որ նրանք «սպականում են» բնագիրը և իրենք, չքմեղանալով, «դիցեն պատճառս ի վերայ թարգմանողին»²:

Տգետ գրչի մեղքով առաջացած այդ աղավաղումները նկատի ունենալով է, որ գրիչները իրենց պատվիրատուին կամ ուշիմ ընթերցողին հավաստիացնում են, որ իրենք ընդօրինակել են ձեռագիրը «ստույգ, ընտիր և լաւ օրինակէ»:

Սակայն լինում են և գրագետ գրիչների համար օրլեկտիվ այնպիսի պատճառներ, որոնք տեղի են տալիս սխալների: Այսպես, օրինակ, Ներսես գրիչը 1257 թվականին իր ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում ընթերցողի ներողամտութիւնն է խնդրում տատերի խոշոր գրելու համար և ավելացնում է, որ բնագրի «գիրն լիզած էր»³, այսինքն՝ մագաղաթի վրա եղած տեքստը սրբվել էր: Կամ Որդանան անունով մի այլ գրիչ իր հիշատակարանում գանգատվում է, որ բնագիրը «եղծած է, փտեալ մագաղաթ է և ոչ կարեմ վերծանել»⁴:

Բերենք նկատված գրչական սխալներից մի քանի նմուշներ⁵.

Ր և գ օ թ ի ն ա կ վ ա ծ է

Պ ե տ ք է լ ի ն ի

(«Աշխարհացոյց»-ից)

«Սարդոնիա... ունի գետս հինգ լերինս դժուարանունս»:

«Սարդոնիա... ունի գետս Ե և լերունս դժուարունս»:

(«Աշխարհացոյց»-ից)

«Ասորիք... ունի...վայրս ընդարձակս և բարիս»:

«Ասորիք... ունի... վայրս ընդարձակս և բերրիս»:

(«Աշխարհացոյց»-ից)

«Երուանդ... որքան շատ տայր շատ ևս ատելի լինէր»:

«Երուանդ... որքան շատ տայր շատ ևս ատելի լինէր»:

(Խորենացուց)

Մաշտոցը Գողթնի աղանդավորներից «զսակաւսն անդարձս լիշխանութիւն հնոցս հալածականս առնէ»:

Մաշտոցը Գողթնի աղանդավորներից «զսակաւսն անդարձս լիշխանութիւն հնոցս հալածականս առնէ»:

¹ ՀԳՄ ձեռ. № 6273 (Փիլղալեմյանի հիշատակարանների ժողովածու), էջ 20:

² ՀԳՄ ձեռ. № 1465, Թ. 12բ:

³ Հ. Բ. Սարգիսյան, Ցուցակ ձեռագրաց, հատ. Ա, էջ 130:

⁴ Նույն տեղը, էջ 162:

⁵ Առաջարկվող ուղղումները վերցրել ենք ինչպես մեր, այնպես և այլ բանասերների ուսումնասիրութիւնից:

(Պորենացուց)

Պարսիկք փախստական զնացեալ ժողովեցան ի մի այր»:

(Հովհան Մամիկոնյանից)

«Հասանէր լառաջագոյն ի դաստակերտն իւր յԼոռոստակն լԱյրարատեան գաւառին ի Վազարշապատ քաղաքն»:

(Կորյունից)

Եւ փախստականսն... տուեալ նոցա տանձս և երիվարս արծակեցին ի Պարսիկս»:

Յուլց տալու համար, թե զբնակչական նման սխալները աղբյուրագիտական ինչ մեծ նշանակութիւն կարող են ունենալ, ուզում ենք կանգ առնել երկու սխալի վրա, որոնք սերտորեն կապված են հայագիտական խոշոր վեճերի հետ:

Շիրակացու «Աշխարհացոյց»-ի նոր ընդօրինակութիւնների մեջ գրիչները սխալմամբ հեղինակ են հիշում Պորենացուն և նրա անունը գրում վերնագրերում: Սակայն «Աշխարհացոյց»-ի ձեռագրերի համեմատական ուսումնասիրութիւնից մենք գիտենք, որ XVII դարից առաջ գրված ընդօրինակութիւնները սովորաբար վերնագրված են լինում «Յաղագս աշխարհագրութեան ստոյգ»: Նոր շրջանում, երբ ավելացնում են Պորենացու անունը, «Աշխարհացոյց»-ի վերնագիրը դառնում է «Յաղագս աշխարհագրութեան ստոյգ Մովսիսի Խորենացու»: Ընդօրինակող գրիչներից մեկի, ամենայն հավանականութիւնով ժերմուս մեղքով, «ստոյգ» բառի վերջից մոռացվում է «գ» տառը, «ստոյգ» գրելու փոխարեն գրում են «ստոյ», որի պատճառով փոխվում է ամբողջ վերնագրի իմաստը և ստույգ Մովսես Պորենացին դառնում է սուտ Պորենացի: Սակայն այդ բովանական չէ. եվրոպացի հայագետների մեջ գտնվում են մարդիկ, որոնք այդ բառի հիման վրա մի ամբողջ տեսութիւն են հորինում, որ իբր թե հայ մատենագրութիւնի մեջ եղել է երկու Պորենացի՝ մեկը ստույգ Պորենացին է, V դարի անձնավորութիւն, իսկ մյուսը՝ սուտ Պորենացին, X դարի հեղինակ:

Հնարավոր նման խաթարումներից ազատվելու համար, կանոնական տեքստերի ընդօրինակութիւնը վերջացնելուց հետո, գրիչները սովորութիւն են ունեցել իրենց արտագրածը համեմատել

Պարսիկք փախստական զնացեալ ժողովեցան ի մի այր»:

«Հասանէր լառաջագոյն ի դաստակերտն իւր, առ ոստանն լԱյրարատեան գաւառին ի Վազարշապատ քաղաքն»:

«Եւ փախստականսն... տուեալ նոցա զանձս և երիվարս արծակեցին ի Պարսիկս»:

բնագրի հետ: Համեմատելու այդ աշխատանքը հալ մատենագրութեան մեջ կոչվել է «դորդել»:

Սամվել գրիչն իր 1413 թվականին ընդօրինակած Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն Կաթողիկէից թղթոյ» աշխատութեան հիշատակարանում խնդրում է հիշել Մատթեոս կուսակրոն քահանային այն բանի համար, որ «զգիրքս դորդեաց և օգնական եղև մեզ բազում անգամ»¹:

Գրիգոր Տաթևացին իր չափածո հիշատակարանում ձեռագրի վրա աշխատող և վաստակ ունեցող մարդկանց շարքում հիշում է ձեռագրի «ուղղիչ»-ին՝

«Եւ համօրէն վաստակողաց,
Ի սրբագիրս աշխատողաց
Որք առաջին և վերջին
Ի կենաց գիրն արձանասցին:

Եւ աշխոյժ մտօք ընթերցողաց
Եւ բարեւէր ունկնդրողաց
Եւ զօրինակն շնորհողաց
Եւ ուղղիչն սխալանաց»²: (ընդգծումը մերն է—
—Ա. Ա.):

Մեզ հայտնի են փաստեր, որ արտագրված ընդօրինակութիւնները բնագրի հետ համեմատվել են ոչ թե մեկ, այլ երկուերեք անգամ: Այսպես, Կարապետ գրիչը իր հիշատակարանում ընդօրինակողից խնդրում է «տգիտաբար չթիւրել» բնագիրը, այլ վարվել իր նման և ուղղել «կրկին և երեքկին»³:

Հայկական բոլոր տեսակի գրերի մեջ կան տառեր, որոնք շատ նման են իրար և ձեռագրի խունացման կամ թանաքի գույնատման ժամանակ շատ շուտ շփոթվում են: Շփոթվող նմանաձև տառերից կարելի է մատնացուլց անել հետևյալները.

Երկաթագիր տեքստերում շփոթվում են.

Տ—Մ	է—ե	է—լ
Գ—Դ	Ձ—Ձ	Ի—Ի
Յ—Յ	Մ—Ժ	Խ—ԻՈ
Ի—Ի	Ո—Ո	Ս—Մ
Ձ—Ձ	Ք—Բ	Ո—Ս

¹ ՀԳՄ ձեռ. № 1317, Թ. 336բ:

² ՀԳՄ ձեռ. № 2072, Թ. 231բ:

³ Հ. Բ. Սարգիսյան, Յուլյակ ձեռագրաց, հատ. Ա, էջ 286:

Բոլորգիր տեքստերում շփոթվում են.

ա—տ	է—ե	ժ—ծ	ռ—ս
բ—թ	զ—զ	կ—հ	վ—զ
գ—դ	սռ—աւ	խ—իս	ք—բ
տ—ու	շ—չ	դ—դ	ո—ա
սց—ալ	չ—լ	յ—ց	բ—բ

Նոտրգիր տեքստերում շփոթվում են.

ս—ո	դ—դ	ծ—ց	ա—ու
ա—տ	մի—փ	խ—իւ	դ—չ
թ—բ	շ—լ	ե—ե	ո—ս
չ—չ	ծ—ծ	շ—շ	դ—զ
յ—ց	վ—զ	պ—սլ	բ—ա

Տեքստային աղճատումներ են կատարվում նաև ձեռագրերը կազմելու ժամանակ: Գրիչները, ինչպես ասել ենք, ձեռագրերը գրում էին պրակներով և նրանց առաջին ու վերջին երեսների վրա համարներ էին դնում: Գիրք կազմողը համարակալված այդ պրակները իրար մոտ է բերում և զետեղում մի կազմի մեջ: Եղել են գրագետ կազմարարներ, որոնք բարեխղճությամբ կատարել են իրենց այդ պարտականությունը, բայց մեկ-մեկ պատահում են նաև անգրագետ կազմարարներ, որոնք խառնել են ձեռագրի պրակները կամ թերթերը և ետ ու առաջ կազմել: Ձեռագրերում հաճախ են պատահում կազմարարի մեղքով առաջացած պրակների և թերթերի հետևառաջություններ:

Լինում են թերթերի շփոթություններ նաև գրագետ մարդկանց ձեռքով: Այդ առանձնապես հաճախ պատահում է քալքալված ձեռագրերը կազմելու ժամանակ: Կազմելուց առաջ թերթերը դասավորող անձնավորությունը սխալ է կատարում, նրա սխալը կազմարարն օրինականացնում է, իսկ մի այլ անձնավորություն, որն ընդօրինակում է խառնված այդ ձեռագրի տեքստը, ծածկում է տեքստի աղճատման բոլոր հետքերը:

Ձեռագրի ուսումնասիրության ընթացքում այս կարգի բոլոր աղավաղումները, փոփոխությունները պետք է հաշվի առնել և ամեն կերպ աշխատել տեքստերի խղճմիտ ուսումնասիրությամբ բացահայտել ձեռագրական խաթարումները և շտկել նրանք:



ԳՂՈՒՆ ՏԱՍՆՆԻՆԳԵՐՈՐԴ



Գ Ր Չ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԿՐԻՉՆԵՐԸ

արերի հնություն ունեցող գրչագիր մատյանները կոչվել են գրչագրեր: Ընդհանրապես, գրչագրեր են կոչվում թղթի կամ մագաղաթի վրա ձեռքով գրված բոլոր տեսակի գրությունները՝ հակառակ մյուս նյութերի վրա գրված գրություններին և նոր ժամանակների տպագրությանը: Գրչագիր բառացի համապատասխանում է եվրոպական „manuscrit“ բառին՝ «հին ձեռագիր» իմաստով:

Գրչագրությունը՝ հին և միջնադարյան Հայաստանում գրչության հիմնական տեսակն է հանդիսացել: Նրանով են գրվել մեր բազմահազար ձեռագրերն ու վավերագրերը:

Գոյություն են ունեցել գրչությամբ գրադպրոց և նրա մեջ մասնագիտացած հատուկ անձինք, որոնք գրել են ձեռագրերը: Նրանք կոչվել են «գրիչներ» («գրիչ» ասելով մենք այժմ հասկանում ենք ծայրը կամ գրչակոթը ծայրի հետ միասին, իսկ հնում «գրիչ» ասելով հասկանում էին այն անձնավորությունը, որը գրում, ընդօրինակում էր ձեռագրերը): «Յիշեսջիք և զիս՝ զանարժան գրիչս», այսինքն՝ գրողիս, խնդրում են նրանք գալիք սերնդից «ողորմիս»-ը հայոց սովորական հիշատակարաններում: Գրիչներին անվանել են նաև «գրագիր», «գծագիր», «գծող», «գրող», «մրող» և այլն:

Հայ մատենագրության ասպարեզում գրագետ մարդկանց ո՛չ մի խավ գուցե անքան մեծ գրական վաստակ չունի, որքան հայ երախտավոր գրիչների խավը: Տպագրության բացակայության պայմաններում նրանք անչափ շնորհակալ գործ են կատարել նոր երկեր ստեղծելու, հին մատենագրական բնագրերն արտագրելու և նրանք կորստից փրկելու գործում: Հաստատապես կարելի է ասել, որ եթե չլինեին միջնադարյան գրիչները, ապա հին հայկական ողջ մատենագրությունը կորած կլիներ մեզ համար:

Գրիչներն իրենց մասնագիտական կրթությունը, մեծ մասամբ, ստացել են գրչության դպրոցներում և, որպես «գրոց աշակերտ»-ներ, աշխատել են կիրառել այն, ինչ սովորել են իրենց վաստակավոր ուսուցիչներից:

Պետք է ասել, որ գրիչների մոտ բացառիկ ակնածանք է գոյություն ունեցել իրենց ուսուցիչների նկատմամբ, նրանք հարգալիր երախտագիտութեամբ են հիշում իրենց դաստիարակներին որպես «հոգևոր ծնող»-ների:

Հին և միջին դարերում գոյություն են ունեցել գրչության հատուկ դպրոցներ, որոնց շուրջն են համախմբված եղել գրիչները: Հայագիտության համար խիստ կարևոր հարց է հայ գրչության օջախների ուսումնասիրությունը: Մենք նկատի ունենք ո՛չ թե նրանց տեղագրությունը պարզելու, նրանց գործունեության ժամանակը որոշելու և բանասիրական նման այլ հարցեր պարզաբանելու նկատառումով, այլ գրչության դպրոցները որպես ստեղծագործական օջախներ՝ իրենց գրչական ավանդություններով, իրենց ներքին կյանքով և հայ մշակույթի ասպարեզում իրենց խաղացած դերով ու խնդիրներով:

Միջնադարյան Հայաստանում գրչության կարևոր դպրոցներից կարելի է թվել հետևյալները. Սյունյաց դպրոցը՝ Բագրատունյաց ժամանակաշրջանում, Տաթևի դպրոցը՝ սկսած XII դարից, Անիի դպրոցը՝ XII—XIII դարերում, Վանականի դպրոցը՝ XII դարում, Հաղպատ-Սանահինի դպրոցը՝ XII—XIII դարերում, Հոռմկլայի, Սվևռայի, Իրազարկի, Ակների և Կիլիկիայի մյուս դպրոցները՝ XII—XIV դարերում, Գլաձորի և Մեծփի դպրոցները՝ XIV—XV դարերում, Երզնկայի և Կարինի դպրոցները՝ XIII—XVII դարերում, Վանի դպրոցը՝ XV—XVII դարերում, Կաֆայի դպրոցը՝ XIV—XVII դարերում, Իաղեջի, Զուղայի, Էջմիածնի և Կոստանդնուպոլսի դպրոցները՝ XVII—XVIII դարերում և այլն:

Այդ դպրոցների շարքում եղել են այնպիսիները, որոնք այն-

պիսի բարձրութեան վրա են գտնվել, որ կոչվել են «Համալսարան», «Երկրորդ Աթենք», «մայրաքաղաք իմաստութեան» և այլն, ինչպիսին է, օրինակ, Գլաձորի համալսարանը:

Միջնադարյան հայ գրիչների բնորոշ հատկութիւններից մեկն է նրանց ծայր աստիճանի աշխատասիրութիւնը և համեստութիւնը: Նրանց համեստութիւնը երբեմն հասնում է ծայրահեղութեան. պատահում են դեպքեր, երբ, հազարավոր էջերից բաղկացած ձեռագրերի ընդօրինակութիւնը վերջացնելուց հետո, գրիչը խուսափում է հաղորդելու իր անունը: Նրանք, ի դեպ, իրենց անունները հիշում են նվաստացուցիչ զանազան մակդիրներով, իրենց անվանելով անհմուտ, փանաք, ապիկար, եղկելի, թերավարժ, անարվեստ, ազազուն, ծուլ, փինաս, մատենադեղև, չքին, սխալագիր, սուտանուն, տխմար, փծուն և այլն: Ծանոթանում ես ձեռագրի հետ. հարյուրավոր, երբեմն էլ հազարավոր թերթից բաղկացած ձեռագիր է գրել, նրա լուրաքանչյուր տառը ոչ թե գրել, այլ գծագրել, նկարել է, չունի գրեթե ոչ մի սխալ, ոչ մի ջնշում, և աֆուսիս՝ բազմատքուն և խնամոտ աշխատանքից հետո իրեն անվանում է ծուլ, անարվեստ, սխալագիր...

Ձեռագրերի հետ գործ ունեցող մասնագետը չի կարող պատկառանքով չվերաբերվել դեպի գրիչները, որոնք մեծագուլն խանդաղատանքով, ճրագի աղոտ, դժգուլն լույսի տակ, ամիսներ, երբեմն տարիներ են աշխատել մի ձեռագրի վրա, համբերութեամբ և խնամքով գրել և ավարտել իրենց ձեռագիրը: Նրանց հատուկ այդ ձգտումը հետևյալ խոսքերով է բանաձևել հայ բազմերախտ գրիչներից մեկը՝ Մխիթար Անեցին.

« [Հ] ասրաթ ունիմ ի լիմ սրտիս,
 Միշտ տագնապիմ վասն այս բանիս,
 Որ մինչ հոգիս է ի մարմնիս,
 Ես տեսանեմ զթամամ գրիսս »¹:

« Թամամ գրիսս »՝ այսինքն՝ գրի ավարտելը, ձեռագրի վերջացնելը:

Հիշատակարաններից մեկում մասնագետ գրիչը համեմատված է վարժ նավավարի հետ. ինչպես նավավարն աշխատում է վարպետորեն տանել և հասցնել նավն իր նշանակված հանգրվանը,

¹ ՀԳՄ ձեռ. № 4420, Թ. 148 բ:

«Նոյնպէս և գրչին՝ ի լետին գիծն», այսինքն՝ մինչև ձեռագրի ավարտումը¹:

Գրիչներին մեծ մասնի համար գրչութիւն արվեստը մասնագիտութիւն է հանդիսացել: Գրչատուփը և կաղամարը կողքից կախած, նրանք գնացել են այնտեղ, ուր աշխատանքի են կանչել իրենց: Այդ միջոցով են ապահովել նրանք իրենց օրվա ապրուստը: Եվ այդ մասնագիտութեամբ նրանք աշխատել են իրենց ամբողջ կյանքի ընթացքում, մինչև խոր ծերութիւն:

Մասնագետ գրիչների նշանավոր դեմքերից է հանդիսացել Հովհաննես Մանկասարենցը, որի գրչական աշխատանքների հաշվետվութիւնը թողել է նրա աշակերտը՝ Զաքարիան:

Հովհաննես Մանկասարենցը, գրում է նա, «ԼԲ (72) տարի՝ ամառն և ձմեռն, գիշերն ու ցերեկ ի գրել եկաց: Որ գրեալ եղև ձեռամբ նորա Խ (40) [խ]այսմաւուրք և տարեգիրք, իսկ փոքր գիրքտետր և աղօթամատոյց, շարակնոց և սաղմոսարան, մաշտոց և գանձատետր՝ Ծ—Կ (50—60) և այլ աւելի, և աւետարանս՝ ԼԲ (32): Եւ զայս Յոհան գլուխս (այսինքն՝ ավետարանի, Հովհաննես ավետարանչի գլուխը—Ա. Ա.) [գրեաց] ի ծերութեան ժամանակիս, որ աչք չէր հայիլ և ձեռն կու դողայր՝ բազում չարչարանօք հազիւ կարաց լաւարել, և այլ չկարաց գրիչ բռնել մինչև ի վախճան, որ հանգեաւ ի Քրիստոս ԶԶ (86) ամաց»²: Փաստորեն, Հովհաննես Մանկասարենցը 72 տարվա ընթացքում ընդօրինակել է այնքան ձեռագրեր, որ նրանցից կարելի է մի ամբողջ գրադարան կազմել:

Մանկասարենցի ուղիով է ընթացել Սարգիս գրիչն Ընկուղագոմից, որի թողած մի հիշատակարանից երևում է, որ նա ևս շատերի նման ողջ կյանքում գրչութիւն արվեստով է զբաղվել: Նույնիսկ զառամլալ հասակում, երբ նրա գրելու մատը չորացել է, նա համառութեամբ, շարունակել է իր գործը. «Գրեցաւ վերջք գրոյս, —գրում է նա,—յաւուր համբարձմանս շատ և անհուն դառնութեամբ և հեծութեամբ, գրչի մատս չորացած է, այնոր համար գիրդ ձագուձու(ս) է, թողութիւն շնորհեցէք. ԽԲ (42) տարի է, որ կու աշխատեմ, բանս (այսինքն՝ ներկա ընդօրինակութիւնը—Ա. Ա.) իմ [սր]տովս չէ, մերն (այսինքն՝ մեր կարողութիւնը—Ա. Ա.) այդչափ [էր]»³:

¹ Մյուրմեյանի Ծրուադեմի ձեռ. ցուցակ, էջ 317:

² ՀԳՄ ձեռ. № 5256, ք. 291բ—292ա:

³ ՀԳՄ ձեռ. № 8423, ք. 171ա:

Շատ ավելի սրտառու է մի այլ ծերունի գրչի թողած հիշատակարանը՝ իր գառամած լինելու, աչքը վատ տեսնելու, ձեռքերը դողալու և գրչի մատը չորացած լինելու մասին. «Բայց գիտեմ,— գրում է նա,— որ գիրդ բազում բազում պակասութիւն կա և անթիւ, թէպէտ որ շատ կայ, մեր կարն այսչափ էր, ձեռս կու դողալր և աչքս բնաւ չէր տեսնուլ. գրչի մատն չորացած էր, միջին մատամբս ծրեցաք: Ո՞հ դարդ իմ, հիմալ, 42 տարի է, որ մեր բանս այս էր, ապա այսօր նման անդէպ չէր եղեալ, խիտ կու ամաչեմ ի ձեզնէ, թողութիւն արարէք»¹:

Նույն ձեռագրում նրա աշակերտ Հունան գրչի թողած մի հիշատակագրութիւննից իմանում ենք, որ իր ուսուցիչը ձեռագրի 22-րդ պրակից հետո դրել է իր 42 տարիների գրչական աշխատանքի վերջակետը. նա մահացել է և թերի ձեռագիրը շարունակել է արտագրել և վերջացրել ինքը Հունանը, որն իր հիշատակագրութիւն մեջ հայտնել է ուսուցչի ողբերգական մահվան և նրա մեծ վաստակների մասին:

Անկյուրիայի Կարմիր վանքի երբեմնի սեփականութիւնը հանդիսացող մի ձեռագրի գրիչը, ցանկանալով հաշվհարդարի բերել իր 30 տարիների գրչական աշխատանքը, հետևյալն է գրել. «ԺԵ (15) ամաց էի, ուսալ գրագրութիւն, մինչև ԽԵ (45) հասալ, Լ(30) տարի կատարեալ գիր գրեցի բազում՝ Ի (20) շարակոն, Գ (3) լալսմաւոր և այլ գիրք, որ համար չի կալ...»²:

Գրիչները մեծ մասամբ հասակ առած, տարեց մարդիկ են եղել, բայց նրանց մեջ պատահում են նաև երիտասարդներ, նույնիսկ՝ պատանի գրիչներ. հայտնի է, որ Թոխաթում գրված գեղեցիկ գրչութիւն մի ձեռագրի ընդօրինակողը 12 տարեկան պատանի է եղել. «...դեռ ևս ԺԲ (12) ամաց գոլով... գրեալ եղև սա ի քաղաքն Թոխաթ»,—կարդում ենք պատանու հիշատակարանում:³

Պատահում են նաև որոշ գրչուհիներ: Պետական Մատենադարանի ձեռագրերից մեզ հայտնի են՝ Հեղինե, Շուշանիկ, Եղիսաբեթ, Մարիամ, Մարգարիտ, Հասմիկ, Բրարիոն և այլ գրչուհիների անունները:

Գրիչներից շատերը գաղափարել են նյութական խեղճութիւն

¹ ՀԳՄ ձեռ. № 4107, Բ. 503 ա:

² Յուցակ ձեռագրաց Կարմիր վանուց Անկյուրիո, Անթիլիսո, 1957, էջ 221:

³ ՀԳՄ ձեռ. № 843, Բ. 25 ա:

մեջ: Քաղցաբացիությունն գտած այն արտահայտությունը, որ մեր գրիչները աշխատել են «մի նշխարքով», «մի կում շրով», ստեղծվել է նրանց համար իրոք գոյություն ունեցող ծանր պայմանների հետևանքով:

Ահա ձեզ բարերուցի մի գրչի իր ձեռագրի լուսանցքում թողած հիշատակագրությունը. «Ձվարդան աղքատս լիշեա 5 տեր իմ և անմեղադիր լեր... այսօր բորբոսած հաց եմ կերել և շրհորի կրաշուր խմել և գրել լեբուսաղեմում բազում վշտով»¹:

Ձմմառի սեփականությունը հանդիսացող 1414 թվականի ընդօրինակության ձեռագրի գրիչը՝ Հովսեփը, ընթերցողներից հետևյալն է խնդրում. «Ո՛ր, աղաչեմ անմեղադիր լերուք խոշորութեան, զի ցամաք կորեկ հաց կերայ և գրեցի, անմեղադիր [լեբուք]»²: Նույն գրիչն իր այդ խնդրանքը կրկնել է նույն ձեռագրի այլ էջում ևս. «Օրն պահք էր և հացն ցամաք կորեկ, աղաչեմ անմեղադիր լեր»³:

Անկյուրիայի Կարմիր վանքի ձեռագրերից մեկի գրիչը աղքատության մասին հետևյալ հիշատակագրությունն է թողել.

«Կերայ գդառնիճն, զի ոչ էր լեղի, քան զաղքատութիւն,

Շալակովս բարձի դաղն, զի ոչ էր ծանր, քան զաղքատութիւն»⁴:

«Դառնիճ»-ը *Lactuca virosa* բույսն է, որ սարսափելի դառն է: Գրչի համոզմունքն այն է, որ աղքատությունը այդ դառնիճից էլ ավելի դառը, ավելի լեղի է:

Ղ. Ալիշանը «Սիսուան»-ի մեջ հրատարակել է մի հիշատակարան, ուր գրիչը վշտով արձանագրել է. «Ձի նիւթս պակաս, թանաքս աւեր և իմ պիտոլքն ոչինչ, բայց միայն ցամաք հաց»:

Խեղճության մեջ է գտնվել իր ժամանակի խոշոր հեղինակություն հանդիսացող աջնպիսի անձնավորություն, ինչպիսին Սաայի Նչեցին է, Գլաձորի դպրոցի հիմնադիրը: Նա իր ընդօրինակած ձեռագրերից մեկում գանգատվում է, որ ձեռագիրը գրել է

¹ Անկյուրիայի ձեռ. ցուցակ, էջ 201:

² Մատենադարան Ձմմառի ձեռագրաց, № 2, թ. 242 ա:

³ Նույն տեղը, թ. 248 բ:

⁴ Անկյուրիայի ձեռ. ցուցակ, էջ 426:

աղքատ սեղանով. «...Դրեցի զսա աղքատ և չքաւոր սեղանով զծառայակիրցսն կերակրելով...»¹: «Մտռայակիրց» ասելով նա նկատի ունի իր աշակերտներին, որոնք օգնել են իրեն ձևագրերի ընդօրինակման ժամանակ:

Պողոս գրիչն իր հիշատակարանում ընթերցողներին ներողամտութիւնն է խնդրում գրի խոշորութիւնն և բաց թողած սխալների համար, որովհետև նա գրել է թշնամու կողմից իր ապրած բնակավայրը շրջապատման մեջ գտնված պահին և կարոտ «մի գդալ» կաթ ու մածնի:

Այսպես, Միմեոն գրիչը (Եկեղյաց գավառից) 1439 թվականին գրած իր հիշատակարանում հետևյալ գանգատն ունի. «Բրոցս տէրն օր մի զմեզ մէկ հացիւ չլիշեց»²:

Մեզ է հասել մի շատ հետաքրքիր բողոք-հիշատակարան, որը գրել է Դրիգոր Ախլցխացին Հերմոնի վանքի միաբանութիւն դեմ՝ իր նկատմամբ ցուցաբերած անբարյացակամ վերաբերմունքի համար: «Ու ամէն[ն],—գանգատվում է նա իր վիճակից,—խուց ունէին, ու ես՝ ոչ, ամէն[ն] հաց ունէին, ու ես՝ ոչ, ու զվանիցս հացն վերայ իւրեանցն բաժանեցին ու ինձ ոչ տվին՝ թէ նայ զարիւպ է. նրայ բաժին մի տէք: Ու ամէնն մոնթ, սպասաւոր ունէին, ու ես՝ ոչ, ու ամէնն սիրելի ունէին, որ հաց ու թաց կու բերէին, ու ինձ՝ ոչ, ու ամէնն կու երթէին ի վարդապետի խուցն, ուտէին ու խմէին, ու ես՝ ոչ, ու վարդապետն զամէն մարդու քաղցր գիտենէր ու զիմն՝ ոչ, ու զամէն մարդ միաբանքն մին մին տանէր ի խուցն ու կերակրէր, ու զիս՝ ոչ, ու զամէն մարդու գոճ ու զանգատ հարցանէր, ու զիմն՝ ոչ, ու զամէն մարդ մխիթարէր, ու զիս՝ ոչ, ու ես...նստեալ էի կու գրէի սոված ու քաղցած ու գնի՝ ոչ: Տնտեսին գնալն մին դիրն (այսինքն՝ մեկ անգամ—Ա. Ա.) երեք օր հաց չկերայ ու ես ուզեցի ոչ: Մի դիրն երկու օր անօթի կացի ու ուզեցի՝ նա հաց տվին ոչ: Ու մին օր մինչև իրիկուն անօթի կացի... ու մենակ մինչ իրիկուն գիր կու գրէի...»³:

Միջնադարյան հայ գրիչների համեստ պայմանները շատ գեղեցիկ պատկերված են Գլաձորի համալսարանի շնորհալի գրիչներից մեկի՝ Մխիթարի, չափածո մի հիշատակարանում, որը տեղավորված է իմաստասիրական բովանդակութիւն ունեցող մի ստվար ձեռագրի վերջում.

¹ ՀՊՄ ձեռ. № 5366, թ. 356բ:

² Տաշյանի ձեռ. ցուցակ, էջ 40—50:

³ Լենինգրադի շանր. գր. № 31, թ. 390ա-բ:

«Տե՛ս թէ քանի՛ աշխատեցալ
 Ես Մխիթար գրիչ սորա.
 Թուղթս անկոկ ու գրիչ չկալ,
 Աւուրքըս ցուրտ ու պարզիկա,
 Հարտախս բարձր ու կրակ չկալ.
 Դո՞ներս¹ չոր ու սպաս չկալ...
 Ես յոթ նեղած և ճար չկալ...»²:

Գրիչների մոտ բազմաթիվ գանգատներ կան նաև աշխատանքի ծանր պայմանների մասին: Նրանք գանգատվում են ցըրտից, ճրագալուլսի պակասութունից և այլն:

Ծերունի Մխիթար Անեցիին՝ նշանավոր ժամանակագիրը, իր չափածո հիշատակարանում գանգատվում է հիվանդության, ձեռքերը դողալու, թանաքի թանձրության, ճանճերի շատության և այլ անպատեհությունների մասին.

Մեծ վտանգի կամ լալս նեղոյս,
 Ձի խիստ լաղթեց ցաւն մարմնոյս:
 Եւ ի ձեռացս ի դողալուս,
 Այլ չեմ կարող տալ շար գրոյս:
 Եւս առաւել ի լալս շողոյս,
 Ու ի թանաքի թանձրանալոյս,
 Եւ մանաւանդ ի լալս քնոյս,
 Չաւր հասարակ մրափելուս,
 Եւ յանիծեալ այս ճանճերուս,
 Ի սնավաստական կենդանուս,
 Որ միշտ նստին ի վերա գրչուս,
 Ծըծեն զթանաքն գրերուս:
 Կելնէ իմ սիրտս այս ոչընչուս,
 Չգիտեմ թէ ի՞նչ առնեմ նզովծնուս...»³:

Ատոմ գրիչը խնդրում է ներողամիտ լինել բաց թողած սխալների համար, որովհետև ձեռք էր, ցուրտ և «ձեռիկն կու՛մըրսէր ի գրե[լն]...»⁴:

¹ «Դո՞ներս» — հացի փշրանքները:

² Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 226:

³ ՀԳՄ ձեռ. № 4429, Թ. 247բ:

⁴ Սարգիսյանի ձեռ. ցուցակ, Բ, 1, շ 846:

Մերունի մի գրիչ խնդրում է անմեղազիր լինել գրի խոշորության համար, քանի որ աչքերը վատ էին տեսնում, նեղվում էր ծխից, բքից և կաթիլքից, ինքն էր վառում թոնիրը և այդ պայմաններում գրում ձեռագիրը. «Գրեալ եղև վերացեալ մարմնով, կուրացեալ աչքով ի ծխէն, ի բքէն, ի կաթիլէն. շոջ մարդ եմ, զթոնիրն իմ վառեր, երեք շահու զփայտն գնել, կարս մեր այս է»¹:

Կարապետ գրիչը գանգատվում է իր տան երգիկից, որից անձրև է թափվում. «Ո՛հ, ո՛հ, զայս ոչինչ տունս, զինչ յերդէն կու անկանի, թո՛ւ ի գիրս և ապականի»²:

Հովհաննես գրիչը գանգատվում է լվից. «Այլ լուն խիստ զահմաթ կու տայր, զի բազում էր խուցս, զի այլ մարդ չկայր ի ներս և ամենին փոխան զիս կերան»³:

Գրիչները, մեծ մասամբ, գրել են խուցերում, ճրագի լույսի տակ, ուստի և հաճախ կարելի է լսել նրանց գանգատը ճրագլույսի վատության մասին:

Սեֆիլ Օհանը 1663 թվականին գրած իր մի ոտանավոր հիշատակարանում հետևյալ գանգատն ունի ճրագի մթության և թղթի վատորակության մասին.

«Ի հազար հարիւր երկու թվին,
Գանգատ ունիմ ճրագի մթին,
Այլ և լետոյ այս խամ թղթին,
Որ չի երթար յետ իմ սրտին...
Աչուերս է բաց, լուսոյ պակաս,
Գրիչը չերթար հետ շար տողին,
Որն է կաղ և որն է կոր,
Թանաք տղգի ի մէջ թղթին»⁴:

Մելիքսեթ գրիչը 1428 թվականին գրած իր հիշատակարանում հայտնում է. «Եթէ լոճ չնստի քեզ գիրս, նա պատճառն աչն է եղբայր, որ ձիթի տակն էր և ճրագնլուս պակաս»⁵:

Գրիչների մոտ գանգատներ կան նաև շատախոս մարդկանցից, որոնք ընդօրինակման ժամանակ խոսել և խանգարել են իրենց:

¹ Լայալանի ձեռ. ցուցակ, էջ 740:

² «Եղմիածին» 1950, № 11—12, էջ 85:

³ «Եղմիածին» 1951, № 10, էջ 83:

⁴ ՀՊՄ ձեռ. № 5623, թ. 224 բ:

⁵ ՀՊՄ ձեռ. № 6050, թ. 82 ա:

Այսպես, Ալեքսիանոս գրիչը 1409 թվականին գրած իր հիշատակարանում խնդրում է ներողամիտ լինել բաց թողած սխալների նկատմամբ, որովհետև «մահդասիս, որ ինձ ընկեր էր, խիստ կաշկաչան էր» (այսինքն՝ հոհուացող էր—Ա. Ա.)¹:

ԲՈՂՈՔՆԵՐ ՊԱՆԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գրիչների սովորական գանգատներից են պանդխտություն մասին արված գանգատները—պանդխտություն երկու ճանապարհով՝ աշխատանք ճարելու և փախուստի: Մեր պանդուխտ հայ գրիչների հիշատակարաններում հուզիչ խոսքեր են արձանագրված ղարիբություն, իրենց դժբախտ վիճակի մասին:

Ներսես գրիչը 1318 թվականին գրած իր հիշատակարանում պատմում է, թե ինչպես, դուրս գալով իր հայրենի գավառից, թափառնակի շրջել է տարաշխարհիկ՝ բաժանված հարազատներից և ազգականներից²:

Գրիգոր գրիչն իր չափածո հիշատակարանի վերջում գրում է.

«Բայց թէ կամիս հարցող լինել,
Չեմ յայ տեղեացս ես բնական,
Ալլ և օտար ի սահմանացս
Եւ անբնակ մոլորական.
Չունեմ զաղարք ի մի տեղի
Եւ ոչ մի աւր հանգրստարան»³:

Գրիգոր Ախլցխացին իրեն դժբախտ է համարում, որովհետև ղարիբ է և խորհուրդ է տալիս ղարիբություն չգնալ. «Աստուծոյ համար, ով որ ղարիբութիւն չէ գնացել, թող ալլ չերթալ...»⁴:

Մխիթար գրիչը ղարիբի իր վիշտը հետևյալ ձևով է արտահայտել. «Յնորեալ և վշտանգեալ [էի] սրտիւք, որ կամք ի դարիպութեան ի դրունս օտարաց, որ հացն լեղի [է] և ջուրն՝ արիւն»⁵:

¹ Խաչիկյան, Բ, էջ 99:

² ՀԳՄ ձեռ. № 356, Թ. 251բ:

³ ՀԳՄ ձեռ. № 2776, Թ. 263ա:

⁴ Խաչիկյան, Բ, էջ 658:

⁵ Լալայանի ձեռ. ցուցակ, էջ 674:

Ավելի հետաքրքիր է Մկրտիչ Լեհացու արտահայտած վիշտը զարիբութեան մասին. «Բայց անմեղադիր լերուք սղալանաց և խոշորութեան գրիս, քանզի զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, որ կիսէն ի վեր խոշորացուցի զգիրն. ալլ ոչ իմ կամաւ, քանզի տնանկութիւն, օտարութիւն և պանդխտութիւն նեղացուց զիս, վասն այդ պատճառին համար շտապեցի զգիրն և խոշորացուցի. զի միտք իմ ցնորեալ էր ի նեղութենէ և ի խեղճութենէ և ի գթոյ ծնողացս, ընտանեաց և հայրենեաց: Քանզի դուք լաւ գիտէք սիրելիք հալըք իմ և եղբայրք, որ պանդխտութիւն ծանր և դիժար ցաւ է, որպէս ասէ թէ՛ լաւ է անկանել ի ձեռս բարբարոսաց, քան թէ յօտարութեան և պանդխտութեան կեայ: Եւ իմաստուն Ուրկար ասէ՝ Բարձի բեռ մի աղիւսս և ոչ էր ծանր, քան զաղքատութիւն և զտնանկութիւն: Եւ զարձեալ միւսս ևս՝ Բարձի արճիճ բեռ մի յուսս և ոչ տեսայ ծանր և դժար, քան զզարիպութիւն և զպանդխտութիւն»¹:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ԵՎ ԿԱԶՄԱՐԱՐԸ

Մի քանի խոսք ձեռագրերի պատվիրատուների մասին:

Ընչազուրկ և իր արհեստի եկամտով ապրող մասնագետ գրիչն իր գոյութիւնը, բնական է, չէր կարող պահպանել, եթե չունենար ձեռագրերը վաճառելու և իրացնելու միջոց: Այստեղ ահա նրան օգնութիւն է գալիս պատվիրատուն՝ այն անձնավորութիւնը, որը պատվիրում է գրել կամ ընդօրինակել այս կամ այն աշխատութիւնը:

Պատվիրատուները մեծ մասամբ հանդիսացել են ունեոր մարդիկ՝ ղեկավար քաղաքական գործիչներ, բարձրաստիճան եկեղեցականներ, ականավոր խոշաներ և այլն: Դրանց մեջ կան թագավորներ, թագուհիներ, կաթողիկոսներ, իշխաններ, եպիսկոպոսներ և մեծահարուստ, մեծանուն անձինք: Ձեռագրերը հնում բազմականին թանկ են արժեցել, և ամեն մեկը չէ, որ ի վիճակի է եղել գնել կամ պատվիրել ցանկացած ձեռագիրը: Բայց, այնուամենայնիւ, մեկ-մեկ պատահում են միջակ հարստութիւն ունեցող գլուղացիներ կամ արհեստավորներ, որոնք հանդես են գալիս որպէս պատվիրատուներ:

¹ Ա. Սյուրմեյան, Երուսաղեմի ցուցակ, 1 հատ. էջ 122:

Ձեռագիր գրելու պատվերը, սովորաբար, ձևակերպվում էր հետևյալ կերպ. պատվիրատուն հանձնարարում էր գրչին գրել իր ցանկացած ձեռագիրը և նկարազարդել այն՝ խոստանալով վճարել համապատասխան գումարը ըստ պայմանավորվածություն: Ձեռագրի ընդօրինակությունը վերջացնելուց հետո գրիչը, պատվիրատուի ցանկություն համաձայն, կազմում է ձեռագրի հիշատակարանը, հիշելով այնտեղ ոչ միայն իրեն՝ պատվիրատուին, այլև նրա կնոջը, որդիներին և մոտիկ ու հեռու այլ բարեկամներին: Հաճախ պատվիրատուի «արյունակից ազգականներ»-ի անուններն ամբողջ էջեր են զբաղեցնում: Ձեռագրի հետագա տերերը ևս անհրաժեշտ են համարում գրել իրենց անունները որպես ստացողների:

Պատահում է ձեռագրի վաճառքի այլ ձև ևս. գրիչն ընդօրինակում է ձեռագիրը վաճառելու համար, առանց նախապես իմանալու, թե ո՞վ է լինելու գնորդը: Այդ դեպքում գրիչը, ձեռագրի ընդօրինակությունը վերջացնելուց հետո, գրում է հիշատակարանի ընդհանուր, կանոնականացված մասը, իսկ պատվիրատուի անվան տեղը բաց թողնում: Ձեռագիրը հանում է շուկա և ալյատեղ, վաճառելու դեպքում, անմիջապես ավելացնում է հիշատակարանի բաց թողած տեղում գրչի պատվիրատուի անունը և հանձնում նրան: Մեզ են հասել մի շարք ձեռագրեր՝ պատվիրատուի անվան տեղը հիշատակարաններում բաց թողնված ձևով, վաճառքից հետո լրացնելու համար, սակայն այնպես է պատահել, որ վաճառքը չի կալացել և հիշատակարաններն այդպես էլ մնացել են թերավարտ:

Նախապես պատվիրած ձեռագրերը, մանավանդ, երբ պատվիրատուները մեծահարուստ մարդիկ են լինում, գրչից պահանջում են ավելի գեղեցիկ գրել և լավ նկարազարդել ձեռագրերը: Այն դեպքում, երբ գրիչը մանրանկարելու և ոսկելու շնորհք չի ունենում, այդ աշխատանքը հանձնարարում են կատարելու մասնագետ մանրանկարչին:

Միջնադարյան Հայաստանում գոյություն է ունեցել լայն տարածված մի սովորություն՝ որն զգալի չափով խթանել է գրչությունը զարգացմանը. այն մարդը, որ երեխա չի ունեցել, իր բարոյական պարտքն է համարել հիշատակ թողնել մի ձեռագիր, որը համարվել է տվյալ ընտանիքի «որդեգիր»-ը, նրա ժառանգորդը:

Հետեմս անունով մի պատվիրատու իր թողած հիշատակարանում հայտնում է, որ ինքը միայնակ էր՝ բաց դաշտի մեջ բուսած թփի նման, դավակ չուներ, ուստի գնել է տվյալ ձեռագիրը:

գիրը 1100 գրամով և իբրև հիշատակ ու «ժառանգորդ դարձրել»¹։ Գոյություն է ունեցել մի այլ սովորություն ևս. ձեռագիր են գրել տվել մահացած մարդու հիշատակը հավերժացնելու նպատակով։

Ձեռագրի պատվիրատուն ընդհանրապես լինում է մի հոգի, բայց կան ձեռագրեր, որոնց պատվիրատուն են հանդիսանում մի խումբ մարդիկ։ Այդպիսիներից է Սուրխաթ քաղաքում գրված նշանավոր «Ճառընտիր»-ը, որը գրված է տասնյակ արհեստավորների և մի մանր առևտրականի պատվերով։ Ձեռագրի հիշատակարանում խնդրվում է հիշել կոշկակար Պարոնշահին, բազազ Կարապետին, ճոն Կիրակոսին, ջուլհակ Թորոսին, բազազ Սարգսին, ոսկերիչ Մելքիսեղեկին, ներկարար Դեորգին, քաթանագործ Մարգարին և շատ ուրիշներին։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿՉԲՆԱԴՅՈՒՐ

Գրիչները, հալ մատենագրության ասպարեզում, ձեռագիր ընդօրինակություններից բացի, կատարել են շնորհակալ մի այլ գործ ևս. նրանք իրենց ընդօրինակած ձեռագրերի բացատներում կամ տեքստերի վերջերում թողել են գրառումներ և հաղորդել անչափ արժեքավոր պատմական տեղեկություններ ձեռագրի արտագրության հանգամանքների, գրության վայրի, պատվիրատուի, ժամանակակից քաղաքական իրադարձությունների և բազմաթիվ այլ հարցերի մասին։ Այդ տեղեկությունները մեզ համար անգնահատելի պատմական աղբյուրներ են, որովհետև գրված են իրադարձություններին ականատես, ականջալուր անձնավորությունների կողմից։ Նրանք երբեմն գրված են այնքան անմիջական և ճշմարտացի, որ նրանց միջոցով ժանոթանում ենք ո՛չ միայն գրած ժամանակաշրջանի իրադարձություններին, այլև հայելու պարզությամբ նրանց մեջ տեսնում ենք մեզնից հարյուրավոր, իսկ երբեմն նաև հազարից ավելի տարիներ առաջ ապրած մարդկանց ներքենաշխարհը՝ նրանց հուլիները, զգացմունքներն ու երազանքները։ Գրիչների այդ գրառումները կոչվում են հիշատակարաններ և հիշատակագրություններ (եթե գրիչն անմիջապես իր կողմից է

¹ Լալայանի ձեռ. ցուցակ, էջ 362։

² ՀՊՄ ձեռ. № 3797 (տարբեր էջերում)։

գրել, այդ կոչվում է ճիշատակարան, իսկ եթե այդ գրված է տարիներ հետո այլ անձնավորության կողմից, նա կոչվում է ճիշատակագրութունն)։

Հալ գրիչներն անհոգ և անվիշտ գրչության ուղի չեն ունեցել, նրանք գրել, ստեղծագործել են կոշմարալին ժանր պայմաններում։ Հիշատակարաններում հաճախ ենք կարդում նրանց գանգատները՝ ժամանակի դառնությունների, դժվարությունների մասին։

Գրիչների վրա առանձնապես ծանր են ազդել Հայաստանում հաճախակի կրկնվող ասպատակությունները, երկրում կատարված հարստահարությունները. նրանք իրենց ուսերի վրա կրել են ժամանակի ողջ ծանրությունը և զգալուն գրչով արձանագրել ժամանակի տառապանքները։

Թերթեղով հազարավոր ձեռագրերի հիշատակարաններ, պետք է ասենք, որ մեր բոլոր ձեռագրերից գրիչների լացի ձայնն է լսվում. ուրախալի՜ ոչ մի խոսք։ Նրանք իրենց ժամանակը համարում են դառը, նեղ, անհանգիստ, տխուր, տարտարոս, անբարի, դժնյա, վշտաշատ, պատուհաս, դառնաշունչ, դժնաբեր, խավարամած և այլն։

Երբեմն կատարվել են այնպիսի ծանր իրադարձություններ, որ ցնցել են գրչի հոգեկան ներաշխարհը, բայց այդ բոլոր չեն կասեցրել նրա եռանդն ու ջանքը, ձեռագրի ընդօրինակության և գրական ստեղծագործական աշխատանքներում։ Ահա ձեզ Կիրակոս Աղբակեցի գրիչը, որն այնքան ուժեղ է ազդվել ժամանակի դառնությունից և չարությունից, որ ձեռքը գողացել է գրելիս՝

«Գրեցաւ ձեռամբ մեղապարտիս,
 Եւ ի ձմերան ժամանակիս.
 Մի՛ մեղադրէք ինձ՝ գրողիս,
 Վասչն խոշոր և սխալ գրիս,
 Զի դողութեամբ ախն էր սրտիս...
 Զի ահն և դողըն պատէր զիս,
 Զեռս դողայր ի վեր[այ] թղթիս»¹։

Այնուհետև գրիչը բնագրի 5 թերթը բաց է թողել, չի տարագրել, պատճառաբանելով, որ «ահ ու վախ էր», թուղթ չէր ճարվում և ամեն ժամ մահ կար։

Պատկերացնելու համար, թե ինչպիսի աննկարագրելի ծանր

¹ ՀԳՄ ձեռ. № 4311, թ. 141 ա։

պայմաններում են գրել, ստեղծագործել մեր գրիչները, ցանկանում ենք մի քանի մեջբերումներ անել գրիչների իրենց իսկ հիշատակարաններից՝ ժամանակի քաղաքական ծանր պայմանների, սրածուխյան, սովի, համաճարակի և բնական պատահարների մասին, որին ենթարկվել են նաև գրիչները:

Հովհաննես գրչի հիշատակարանից երևում է, որ նա այնպես է ահաբեկված եղել 'Դամուրգաշի' նրզնկայում 1338 թվականին կատարած վալրագութուններից, որ ի վիճակի չի եղել շարունակել ձեռագրի ընդօրինակությունը և ընդհատել է այն¹:

Բախտիկ անունով կին պատվիրատուի թողած մի չափածո հիշատակարանից երևում է, որ երկրում ստեղծված է եղել այնպիսի կոշմարային գրություն, որ հայրերն իրենց որդիներին էին ուրացել.

«Յութ հարիւրին կատարեցի,
Ի դառն և ի նեղ ժամանակի,
Որ հալածին բազում յերկրի.
Ոմանք մնացի[ն ի] մէջ թիի,
Ոմանք կերակուրք էլան գալլի,
Սովով անցան շատ մի ոգի,
Հարք ուրացան զիւրեանց որդի,
Ամ իմ կամք չէր, որ ես ծաղկի...»²:

Ըստ Մշո Առաքելոց վանքի ճառընտիրի մեջ 1488 թվականին թողած մի հիշատակագրության, շահ Սեֆին երբ վերցնում է Շամախին, այնտեղ գտնված քրիստոնյա և մահմեդական բնակչությանն ամբողջութամբ սրի է քաշում: Նա գազանարար սպանում է նաև մանկահասակ երեխաներին աննկարագրելի տանջանքով. «...զմանր տղայքն ժողովեալ առ ինքն և դիզեալ ի վերայ միմեանց հինգ և վեց, և ինքն ի վերուստ նիզակաւ անցուցանէր, մինչև ի ներքին տղայն և վերացուցեալ նիզակաւն կանգնէր և տղայքն աղիողորմ թալկանային ոտիւք և ձեռքք ի ծալրս նիզակացն, և նա ծափս հարկանէր ուրախութեամբ և ասէր. Այս է ճըշմարիտ զաղայն» (այսինքն՝ պատիժը—Ա. Ա.)³: Այսպիսի ցնցող իրադարձություն տեսնող գրչի ուղեղը, բնական է, չէր կարող

¹ ՀՊՄ ձեռ. № 7648, Թ. 314-ա:

² Ս. Վ. Տեր-Ավետիսյան, Նկարագրություն Նոր Զուղայի Ամենափրկիչ և այլ վանքերի... հայկական ձեռագրերի, էջ 171 (օգտվել ենք Ստեփանի «Ժ» գրքի հիշատակարաններ-ից, էջ 388):

³ Բ. Սարգիսյանի ձեռ. ցուցակ, Բ, էջ 1150—1160:

չգալթել և դուրս չհանել նրան բնականոն վիճակից: Բայց այնուամենայնիվ, գրիչների երկաթյա կամքը հաղթանակել է, և նրանք շարունակել են իրենց ընդօրինակությունը:

Գրիգոր Խլաթեցին իր չափածո հիշատակարանում, մանրամասն նկարագրելով թշնամու՝ Հայաստանում կատարած վայրագությունները, ամփոփում է հետևյալ տողերով.

«Տապալեցին՝ և յատակեցին,
Անխնայաբար խոցոտեցին,
Չարըս սըրոյ ճարակ տըւին,
Եւ զկանայւրն դերեցին.
Չոմանց զլուխսըն քերթէին,
Հանդերձ հերօքըն խըլէին,
Չալոց ըզշունչսն արգելուին,
Եւ հեղձամահրս խեղղէին,
Որպէս ոչխարըս մորթէին,
Փոկս ի թիկանցըն հանէին,
Չկէսրս հըրով խորովէին,
Եւ ճենճերովքըն ցընծային»¹:

Տեսնելու համար, թե ինչպիսի դառնությունք են ճաշակել մեր վատաբախտ գրիչները ժամանակին քաղաքական խժեղությունները և ինչպիսի զգայուն գրչով արձանագրել այն իրենց հիշատակարաններում, պետք է կարդալ Անդրեաս Եվդոկեցի գրչի 1598 թվականին գրած հիշատակարանի հետևյալ տողերը. «Եթէ սղալ, կամ խոշորագիր, կամ անախորժ մտաց ձերոց գտցի ի սմա, անմեղադիր լերուք... զի է մէջ դառնութեան գրեցի զսալ, այնպիսի դառն և դժուար տանջանք... երբեմն տրտմէի, և երբեմն հառաչէի, էր որ երբեմն լալի, և էր որ ողբալի ըսա անժուժ բնութեանս իմոյ: Արդ, զի՞նչ երկարեցից ազգի ազգի տառապանացս, որ ունէի... բազում վշտօք հասալ ի վերջ գրիս»²:

Մուրազ գրիչն իր 1684 թվականին գրած հիշատակարանում ընթերցողից խնդրում է անմեղադիր լինել տառերի խոշորության համար, որովհետև.

«Հեծելաշարժ եղև մեր աշխարհիս,
Սիրտս պաղ էր հետ տուժարիս»³:

¹ ՀԳՄ ձեռ. № 5798, Թ. 312 ա:

² ՀԳՄ ձեռ. № 1860, Թ. 393 ա:

³ ՀԳՄ ձեռ. № 446, չթ. 1 ա:

Հայկական ՍՍԻՒ Պետական Մատենադարանի № 4472 ձեռագրի գրիչը, խոսելով հիշատակարանի իր տեղում գրված չլինելու մասին, պատճառը համարում է ստեղծված քաղաքական ծանր իրադրութիւնը և սրտում կուտակված վրդովմունքն արտահայտելու համար, ավելացնում է. «Երբ սիրան մաշխուլ լինի (այսինքն՝ զբաղված լինի—Ա. Ա.), աչքնուս պակաս կու հայի. մարդ զմարդոյ ցաւ չգիտէ, կէս գիշերին ժամ կու ձենէ»¹:

Իսրայել գրիչը, թշնամու՝ Հայաստանում կատարած հարստահարութիւնները պատմելուց հետո եզրակացնում է. «...Գերեցին, թալանեցին, որ հալը զորդի կանչէր, իսկ մալը՝ զղուստրն. վա՛յ և եղո՛ւկ ազգիս Հայոց: Ի թիվս Հայոց ՌԻԹ (1580). երանի՛ մեռելին, վա՛յ կենդանոյն»²:

Հաճախ թշնամու վախից գրիչներն ստիպված են լինում ձեռագիրը գրել գաղտնի: Ահա ձեզ Մխիթար գրչի թողած մի հիշատակագրութիւնն այս մասին. «...ի գիշերի և ի տուընջեան թաքնաբար և երկիւղիւ սևագրեցի վասն տառապանաց, աղքատութեանց, որ կայ յերկար ի մարմինս»³:

Հայկական ձեռագրական ժողովածուներում բավականին թիվ են կազմում այն ձեռագրերը, որոնք գրվել են մի քանի տեղերում. սկսել է ձեռագիրը գրել, հանկարծ հարձակվել է թշնամին, փախել է ժողովուրդը, նրա հետ նաև գրիչը և շարունակել ընդօրինակութիւնը նոր վայրում:

Հովհաննես Որոտանեցու աշակերտներից Հակոբ գրիչը 1386 թվականին գրած իր հիշատակարանում պատմում է, թե ինչպես ինքը ձեռագիրը գրել սկսել է Որոտանում, ուր նա գտնվելիս է եղել Որոտանեցու 60 աշակերտների հետ միասին, թշնամին հարձակվել է Որոտանի վրա, և իրենք հարկադրված են եղել փախչել ու երեք տարի շարունակ թափառել Հայաստանի զանազան գավառներում, և նա իր ձեռագիրը գրել, ավարտել է թափառումների ճանապարհին. «Եւ ես ծանրաբեռն մարմնով,—գրում է նա,—վթուղթ և զօրինակ, զգրիչն և զթանաք ի լուս իմ բարձեալ ի հետ գնայի, կարգայի, և որչափ ժամանէի՝ զսուրբ մատեանս գրէի բազում նեղութեամբ և շարչարանօք, զի ուր սկսաւ, անդ ոչ էառ զկատարումն»⁴:

¹ ՀԳՄ ձեռ. № 4472, ք. 632ա—633բ:

² ՀԳՄ ձեռ. № 4173, ք. 95ա:

³ Բ. Սարգիսյանի ձեռ. ցուցակ, Ա հատոր:

⁴ ՀԳՄ ձեռ. № 5707, ք. հատոր:

Մատթեոս գրիչն իր 1469 թվականին գրած հիշատակարանում պատմում է, որ Հասան բեկի զազանություններից սարսափած, թերավարա ձեռագիրը վերցնում է իր հետ և փախչում: «Եւ մեր առեալ զգիրքս,— գրում է նա,— փախէաք ի տեղէ տեղ, և լամենայն ժամ փախուստ և սասանումն գայր և հասանէր ի վերայ մեր...»: (ՀԳՄ ձեռ. № 4515) Մատթեոս գրիչն իր ձեռագիրը վերջացնում է իր փախուստից տարի ու կես հետո Եղվարդում:

Գրիչներն իրենց թողած հիշատակարաններում վրդովմունքով են խոսում ժամանակի ծանր հարկապահանջության մասին, որի դառը պտուղները ճաշակել են և իրենք:

Սարկավազ գրիչը պատմում է, որ 1310 թվականին, Ղարապանտ խանի տիրապետություն շրջանում, հալ ժողովրդի համար այնքան ծանր վիճակ է ստեղծվել, որ մարդիկ, հարկ վճարելու համար, ստիպված են եղել երեխաներին վաճառել. «Բայց զաղէտ և զողբ տարակուսանացս ո՛ր պատմեսցէ, զի ի խիստ և լանհնարին հարկապահանջութենէ ծախեա[լ] լինէին ուստերք և դստերք աշխարհիս մեր, և բազում զեղք և վանորայք աւեր և անհանգիստ...»¹:

1493 թվականի գրած մի ձեռագրի հիշատակագիր հայտնում է, որ սուլթանը մեկ տարում երեք տարվա հարկ վերցրեց և ավերեց երկիրը: Հիշատակարանի վերջում գրիչը անիծում է սուլթանին. «Աստուած զիւր ումրն կարճ անէ՞»:

Գրիչների վրա ծանր ազդեցություն են թողել նաև բնական զանազան պատուհասներից եկած դժբախտությունները:

Միջին դարերում մեծագույն աղետներից էր համաճարակը, որին մեր գրիչները «մահտարածամ» անունն են տալիս: Մարդիկ անզոր են գտնվել հաճախակի կրկնվող համաճարակների տուչև, որն անարգել կատարել է իր առատ հունձը: Նա երբեմն ոչնչացրել է ամբողջ ընտանիքներ, ամալացրել է մարդաշատ գյուղեր և քաղաքներ՝ անմխիթար վշտի մեջ թողնելով կենդանի մնացած հարազատներին: Միջին դարերում մահտարածամ սոսկալի վնասներ է հասցրել ժողովրդին:

Թե ի՞նչ առևելի վնաս է պատճառել մահտարածամը, կարելի է պատկերացնել 1549 թվականի գրած մի հիշատակարանի հետևյալ տողերից. «Ի թվականիս Հայոց ԶՂԸ (1549) ամի,— գրում է

¹ ՀԳՄ ձեռ. № 380, Բ. 311բ:

² ՀԳՄ ձեռ. № 6003, Բ. 226ա:

գրիչը,—որում եղև մահտարածամ աշխարհիս Հայոց և շատ տուն աւիրեցաւ, և շատ ապրանք անտէր մնաց՝ գեհով (այսինքն՝ հոտով—Ա. Ա.) ոչխար մնաց, շատ գութան խափանաւ. քանի՛ հայր առանց որդի մնացին, քանի՛ մայր առանց դստեր և եղբոր մնաց... հենց որ կալով ժամանակին [հասինք], տղայ չկայր, որ զկամն քէր՝¹:

Գրիգոր գրիչը 1431 թվականին Ամիգում տեղի ունեցող մահտարածամի մասին խոսելիս հայտնում է, որ ոչ ոք կարող էր նկարագրել այն ողբը, կսկիծը և հառաչանքը, որ լսվում էր ժողովրդից, իրենց կորցրած հարազատների համար. «...աչք ամենեցուն [եղեն] յաղբերս արտասուաց,—գրում է նա,—լամենայն ուրեք ողբ հառաչանաց և ամենայն տուն կոծս տարակուսանաց, լալումն ողբոց և աղաղակ ալրեաց, կըսկիծ ծերոց և մաղկատումն մանկամեռ մարց, լամենայն լեզուէ վնլ և լամենայն բերանոյ ապաշաւանք»²:

Մեզ է հասել Տիվրիկցի Ներսես անունով մի գրչի մահտարածամի մասին գրած մի հիշատակարան, որից երևում է, որ նա ձեռագիրն ընդօրինակել է դիակների մեջ, մահվան սարսափի տակ. «Արդ, աղաչեմ չմեղադրել սիսլանացս... քանզի տեսանէաք զբազում դիակունս մարդկան մեռեալս առաջի մեր և ցնդէր միտս իմ իբրև զվայրագնաց գազան և հազիւ առ իս ժողովէի լերկիւղէ մահուն, եթէ ոչ ժամանէի յաւարտումն տառիս, քանզի առ մեզ ալլ եհաս ի ցաւոց տարածամ մահուան, ալլ ներողութեամբ աստուծոյ զերծաք»³:

Գրիչներն իրենց մոտիկ հարազատներին կորցրած օրերին անգամ, արցունքն աչքերին շարունակել են ընդօրինակել ձեռագրերը և հուզիչ հիշատակագրութիւններ թողել ձեռագրերի բացատներում: Ահա թե նրանցից վատարախտ մեկը ինչպես է արտահայտում իր վիշտը. «...միշտ շմորեալ էր այս (շփոթված էր—Ա. Ա.), արտասուքս ի դեղրունքն (այսինքն՝ ներկերի հետ—Ա. Ա.) կըլ խառնէր ի տեղոց կսկծու, որ աստուած փոխեցաւ երեք տղայ, որ նման էին ոսկւոյ և մարգարտի: Աչքս չեմ իտակել յարտասուաց. աւնդ եղկելույս, որ զօրն ի բուն ձեռն ի ծնօտիս հայեմ յնփրատէս, ա՛հ հանեմ հոգւոյս»,—գրում է իր երեք երեխաները կորցրած մի գրիչ:

¹ ՀԳՄ ձեռ. № 9222, պատասիկ Ժ:

² ՀԳՄ ձեռ. № 6430, Թ. 301ա:

³ Գ. վ. Սրվանձախան, Թորոս աղբար, II հատ., էջ 307:

Մահտարածամից պակաս վնաս չի պատճառել երկրաշարժը, որի առանձին զեպքերի հիշատակությունը հանդիպում ենք հիշատակարաններում: Ղուլօղլի Երզնկացին, երկրաշարժի ժամանակ թաղելով մորն ու տղային, իր խեղճությունը ողբում է հետևյալ քառյակում.

«Ծն Ղուլօղլի Երզնկացի,
Բեզ ի եղեր խել մի զիան,
Դու ես եղեր խեղճ ու գերի,
Հողն ես դրել մայր ու տղան»¹:

Բնական այս արհավիրքների մասին, կապված Երևանի հետ, հետաքրքիր չափածո հիշատակարան ունի Պետական Մատենադարանի № 2444 ձեռագրի հիշատակագրի գրիչը.

«Ի թիւ հազար հարիւր վաթսուն,
Երկու աւել ի հետ ի նոյն,
Եկաւ մարախ բազում անհուն
Ի քաղաքին Երևանոյն:

Ծաղկեալ յղև երես օդոյն,
Եհեղ երկնից իբրև զձիւն,
Թռաւ իջաւ մէջ արտերուն,
Սկսաւ ուտել իբրև զշուն:

Մահն եկաւ ի նոյն տարին,
Հաւասարեաց ամէն տեղոյն,
Խիստ կոտորեաց մանր ու մեծոյն
Փառս տացուք ի աստուծոյն:

Սույն եկաւ ի նոյն տարին,
Խանն շահի եղաւ գարին,
Սույն փարդեց դաշտ ոլ սարին,
Աստուած փրկէ եկող տարին:

Սույն եկաւ ի նոյն տարին,
Հաց ոլ դարման յախիր արին,
Խոտ չմնաց բնաւ ի սարին,
Էլ չտեսնենք էսպէս տարին»²:

¹ Գ. Վ. Սրվանձայան, Թորոս աղբար, | հատ., էջ 374:

² ՀԳՄ ձեռ. № 2444, ք. 1 ա:

Գրիչները իրենց հիշատակարաններում կանգ են առնում մի այլ աղետի վրա՝ մորեխի, որը հաճախ է երևացել և մեծ վնասներ պատճառել գյուղատնտեսութեանը:

Ձեռագրերում մորեխի մասին եղած հիշատակութիւններից ուշադրութեան արժանի է Սարգիս գրչի հիշատակարանը: Նա գրում է. «Արդ՝ լայամ տարւոջս (այսինքն՝ 1314 թ.) եկն մորեխ սաստիկ ի վերայ երկրի, քանզի ոչ ոք ի մերում ժամանակիս ետես այնպէս և ոչ ի հնումն պատմեցին մեզ այսպէս խստագոյնս, քանզի զտասն աւուր ճանապարհն ի մի աւուրն անցանէր, և ի քառասուն և մէկ աւուրն այնպէս խստագոյն անցաւ, որ լեզու ոչ կարէ պատմել և ոչ կարէ ընդ գրաւ արկանել զանթիւ բազմութիւն մորեխին, քանզի իբր հեծեալքս բազում, որ նրթալ զաւրն և իջեալնին ի գիշերն ամենայն, այսպէս գայր մինչև լիրիկունն և ի վաղիւն, յորժամ շողանար արևն՝ յառնէր. և յորժամ յառնէր, այնպէս՝ էր նմանութիւնն նորա, որպէս սաստիկ ձիւնոյ կամ զանձրևոյ, երթալը և բարձրանաո, որ ոչ ոք կարէր տեսանել զբարձրութիւն նորա, և ի թանձրութենէ նորա փոխէր զգոյնն արեգականն. զոչէր իբրև զգետ, անցանէր իբրև զքամի. և էր աշխարհ ամենայն ի տարակուսանք, լային դառնապէս, ողբային, կոծէին, զմոխիրն ընդ գլխովն արկանէին, ծեծէին զերեսս իւրեանց և ոչ ուստեք եղև փրկութիւն»¹:

ԿՏԱԿ-ՉԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռագրերում երբեմն պատահում են գրիչների կտակ-հանձնարարութիւններ ձեռագրի պահպանման և օգտագործման կարգի մասին, որի հետ ցանկալի է, որ ծանոթ լինեն ձեռագրերի հետ գործ ունեցող մարդիկ:

Գրիչների ցանկութիւնն է ամենից առաջ այն, որ իրենց ժառանգները, բարեկամները կամ այն հաստատութիւնը, որին նվիրարարված է ձեռագիրը, առուժախի առարկա չդարձնեն և գրով չղնեն այն: Հայկական ՍՍՄ Գետական Մատենադարանի № 7446 ձեռագրի գրիչը հետևյալ չափածո հիշատակարանն է թողել.

¹ Խաչիկյան, Ա, էջ 102:

Վ՛րջխանութիւն ոչ ոք չունի
Տալ գրաւական վասն արծաթի,
Կամ վաճառել ընդ քանքարի,
Չի է յազատ ամենայնի՞:

Գրիչների մյուս խնդրանքն է, որ ձեռագիրն օգտագործման չտրվի տգետ մարդկանց, որոնք կտրում են ձեռագրի էջերը, լուսանցքներում խզմզում են, պոկում են մանրանկարներից և կազմերի վրա «խաչ բեկեռելով գթուխիսն ծակեն»²:

Հովհաննես արքանդաբայր 1286 թվականին գրած իր հիշատակարանում խստիվ արգելում է երեխաների ձեռքը ձեռագրեր տալը, քանի որ նրանք «մրոտում» են ձեռագրերը և փչացնում (ԼԶՑ, էջ 108):

Գրիչների մյուս խնդրանքն այն է, որ հատուկ ուշադրութիւն դարձվի ձեռագրի պահպանութիւն վրա՝ շորով բռնեն, կեղտոտ ձեռքով ձեռք չտան, խոնավ տեղ չդնեն, մոմ և ձեթ չկաթեցնեն վրան, հեռու պահեն ցեցերից և այլ միջատներից, թաց մատներով չթերթատեն, չաղտոտեն և այլն:

Հայկական ՄՍՖ Պետական Մատենադարանի № 2394 ձեռագրի գրիչը չափածո հիշատակարանում գրած տաղարանի օգտագործման և պահպանման մասին ընթերցողներին հետևյալ խրատն է տալիս.

Վ՛՛վ սիրելի եղբայր որ էք,
Զայս քեզ խրատ սամ, որ լսես,
Յորժամ ըզտաղս եղանակես՝
Թուղալն թքով չապականես,
Զկողն անողորմ լետ չի պարգես,
Հանց, որ կապին վնաս գործես,
Կամ անգէտին ձեռն դրնես,
Ողբաց մարդկան կոխան շինես:
Զոր տաղ կամիս, որ դու ասես,
Յանկին համարն լառաջքն տես.
Տգիտութլամբ չի չարչարես,
Այլ համարով շուտ գտանես:
Ի սող պաթններն վայր չի ձգես,
Կամ երկու մարդ բռնես քաշես,
Կամ ի վերան գինի վաթես,
Կամ եղ և մոմ կաթեցընես,

¹ ՀԳՄ ձեռ. № 7446, Թ. 1ա:

² Սյուրմեյան, Ցուցակ Եվրոպայի մասնագործներու, հատ. I, էջ 22:

Այլ լոյժ սիրով նախախնամես,
Սրբեալ ձեռք, լաթով բռնես,
Ի հրով, ի ջրով ի գատ պահես,
'Ի ի չորալին դեղի դրնես»¹:

Գրիչները բարոյական պարտք են դրել գալիք սերնդի վրա, որ ձեռագրերն ավար տարվելու դեպքում, նրանց պարտականութիւնն է գնել և ետ վերադարձնել նրանք:

Ստեփանոս գրիչը 1653 թվականին իր գրած ձեռագրի հիշատակարանում ընթերցողներին խրատում է.

«Բան մի խրատ տամ լսեցէք.
Գիրքս ամանաթ ձեզ պահեցէք և կարդացէք,
Գերի երթայ, նա դարձուցեք²,
Գէճ և ի կաթիլ տեղ մի դրէք,
Զմոմս ի վերայ մի թափուցէք,
Թքո՛ւ մատով մի՛ շրջէք,
Եւ լրբութեամբ մի՛ պատուէք.
Թէ պատուած խիք լինեցէք,
Բանիս աւարտ կայ, գիտակցէք,
Մեր կուսէն շատ չձանձրացնէք,
Երկու շորով և շագուսով պակաս չանէք»³:

Պետք է ասել, որ գրիչների այս հանձնարարութիւնը պարտաճանաչութիւյամբ է կատարվել սերունդների կողմից. բազմաթիւ ձեռագրեր են հասել մեզ, որոնք ժամանակին գտնվել են գերութիւյան մեջ և առանձին հոգատար սատարողների կողմից ետ են գնվել և վերադարձվել: Մանչեստրի գրադարանի սեփականութիւնը հանդիսացող հայկական մի ձեռագրի հիշատակագրութիւնից երևում է, որ նա ժամանակին գտնվել է գերութիւյան մեջ, Վահկա գյուղացիք դրամ են հավաքել և ետ են գնել. «Գնեցաք ի գերութենէ գեղով,— գրում են նրանք իրենց հիշատակագրութիւյան մեջ,—մեր հալալ մալովն առաք»⁴:

¹ ՀՊՄ ձեռ. № 2394, թ. 4բ—5ա:

² Ընդգծումը մերն է—Ա. Ա.:

³ Լալայանի ձեռ. ցուցակ. էջ 40:

⁴ Մենք օգտվել ենք Տիրայր արքեպիսկոպոսի «Catalogue of the armenian manuscripts in the sir john Ryolond's Library at Manchester» ձեռագիր աշխատութիւնից. որտ պահվում է Մատենադարանի ձեռագրական բաժնում:

Ուշադրության արժանի է այն, որ միջին դարերում չէին ասում, թե ձեռագիրը ավար տարան կամ ձեռագիրը ավարից ետ վերադարձրին, այլ ձեռագիրը գերի տարան, ձեռագիրը գերութունից ազատեցին. ձեռագիրը մեր նախնիների կողմից դիտվել է որպես սրբություն և նրա նկատմամբ սերնդից սերունդ ցույց է տրվել հատուկ հարգանք ու ակնածանք:

Ձեռագրի գրիչները կողկողագին խնդրում են նաև ձեռագրի սեփականատերից, որ ձեռագրից ընդօրինակել ցանկանալու դեպքում դժվարություններ չհարուցվեն, քանի որ «փակված ձեռագիրը», նրանց կարծիքով, «կուռք է»: Վարդան գրիչը Եղիշեի Վարդանանց պատերազմի ձեռագրի ընդօրինակության հիշատակարանում պատվիրել է. «Բայց եթէ խնդրեսցեն զսա վասն կարդալո կամ ընդօրինակելո, մի՛ խնայեսցեն, վասն զի զսա այսր աղագաւ եմ գրեալ, զի ամենեքեան օգտեսցին»¹:

Հայկական ՄՍՌ Պետական Մատենադարանի № 4687 ձեռագրում՝ գրված մի հիշատակագրությունից երևում է, որ խոջա Մուրադշենը վճարել է «գերի» տարված մի ձեռագրի փրկագինը, «և ազատեաց զգիրքս ի յանօրինաց», ուստի գրիչը խնդրում է հիշել ձեռագրի «ազատարար»-ին²:

Հայկական ՄՍՌ Պետական Մատենադարանի № 5034 ձեռագրի գրիչը հետևյալ խնդրանքն ունի ընթերցողներին:

«Ով սիրելի եղբայր բարի,
Ես եմ չնչին թշուառ գերի,
Գրքովս այլոց մի դարձրի,
Այլ օրինակ տուր կամ գրի»³:

Հայ գրչությամբ զբաղվող մասնագետը պարտավոր է մշտապես հիշել մեր գրիչների կտակ-հանձնարարությունները և մեծագույն խնամքով վարվել օգտագործվող ձեռագրերի հետ:

Պատասխանենք մի հարցի ևս. ի՞նչն է եղել գրիչների՝ նման ձեռնարկության խթանողը, ի՞նչ հեռանկարով են ձեռնարկել նրանք այդպիսի մի ծանր ու չարքաշ աշխատանք:

Այդ հարցի պատասխանը մեզ տալիս է Բյասիլ գրիչը չափածո իր մի հիշատակարանում.

¹ Խաչիկյան, Ա, էջ 70:

² ՀՊՄ ձեռ. № 4687, ք. 1ա:

³ ՀՊՄ ձեռ. № 5034, ք. 229բ:

«Վերծանութեան հետեւէի,
 Նա գրչութեան սէրն ստիպի:
 Քանքար չգոյր զի վարձէի՝
 Մատամբս քանի՛ ես գրէի...»¹:

Այսինքն՝ փող չունեի, որ ուրիշի գրել տալի, և ինքս էի գրում:
 Ձեռագրի գրելու միջոցին գրիչը տարակուսանքի մեջ է ընկնում՝ թե
 ի՞նչ օգուտ կա, վերջին հաշվով, այդ աշխատանքից, չէ՞ որ ինքը
 մահանալու է և ձեռագիրը ուրիշին է մնալու.

«Յայս միջոցի|ն| անձն իմ կոծի,
 Եւ վարանի յամենայնի՝
 Թէ զի՞նչ օգուտ ինձ յայս ջանի,
